

«Ամմահ բագիններն Յայոց» պատմավեպում իրադրությունները ծավալվում են 4-րդ դարում Խոսրով Բ Կոտակ եւ Տիրան Արշակունի թագավորների կառավարման տարիներին:

Բարդ, հակասական շրջան է պայոց պատմության մեջ: Յայոց աշխարհը երկու գերտերությունների՝ Պարսկաստանի եւ Բյուզանդիայի շրջապտույտի մեջ, Մծբինի դաշնադրությունը ու դրան հաջորդող քաղաքական հետեւանքները, նոր հավատքի (քրիստոնեության) Էնթոհոգեբանական, սոցիալական, քաղաքական անդրադարձներով: Վեպում նկարագրված են Խոսրով թագավորի մեծագործությունները՝ Դվինի կառուցումը, Խոսրովակերտ ու Տաճարի Մայրիի անտառների արարումը, Խոսրովին հաջորդում է Տիրան թագավորը: Նրա գահակալությունը ուղեկցվում է աշխարհիկ-հոգեւոր տերերի հակամարտության սաստկացմամբ:

Յոգեւոր պատմիչները խեղաթուրել են Տիրան թագավորի գործերն ու կերպարը, նրան հանիրավի ներկայացրել են որպես դաժան ու կամակոր արքա-բռնակալ մարդ: Ի վերջո հակամարտության է հասնում կրքերի գագաթնակետին, Տիրանը ի շահ գահի սպանել է տալիս Յուսիկ ու Դանիել կաթողիկոսներին:

Խոսրովն ու Տիրանն անկախության ձգտմանը դեմ են ելնում կենտրոնախույզ նախարարները: Նրանց դեմ մղվող պատերազմները ջլատում են գահի ուժերը: Տիրանը Յայոց անկախությունը կապում է արիականության գարթոնքի, հոգու ազատության ու գնոստիկական հանդուրժողականության հետ:

Վեպում տրված է Տիրան թագավորի պատմա-տրամաբանական արդարացումը, որպես հզոր արքայի ու արիական մարդու...

Ամենքի համար նաՅայր Արտավազդ է կամ Յայր: Յաճախ մոռանում են, որ նախարար է հզոր, արիական նահապետ: Յայրը տանու մարդ չէ, այդ են վկայում երկաթյա կազմվածքն ու արեւախանձ դեմքը: Դեռ զորեղ է ծեր զորականը: Նրան չես շփոթի ոչ մի ծերունու հետ, առույգ է, իրանը՝ ուղիղ, հայացքը՝ արծվենի: Յայրը Տրդատ արքայի դաստիարակն է եղել, ապա դաստիարակել է Խոսրով արքային: Արդ, Տիրան գահաժառանգի հետ է, սակայն Տիրանը վաղ այրացավ, նրան զրկեց իրեն դաստիարակելու հաճույքից:

Չի եղել Յայոց պատմության մեջ եզրակացության նման օրինակ դեպք, լինել երկու արքաների դաստիարակ, դրան գումարած՝ գահաժառանգը եւ այդ ամենից հետո լինել առույգ, զորեղ, աննախադեպ է, անմեկնելի:

Ծերությունը հոգու տկարությունից է, հարկ չկա հանձնվել այդ զգացմունքին: Յոգին անմահ է, այդ կյանքն է՝ հոգու կեղեւը, մարդու մեջ ծերանում: Կամք է պետք, տքնանք, ծերությանը չհանձնվելու համար եւ դա ընտրյալների մենաշնորհը չէ: Սոսկական ամեն մարդ ի գորու է դիմադարձ կանգնել ծերությանը, եթե արժանի է հոգու անմահությանը...

Պալատում զագրախոսում են, որ Յայրը քուրմ է եղել, չարախոսում են՝ Նոր Աստծուն չի ընդունում, չեմ իշխում, հասու չեմ, սակայն նրանից վախենում են, նաեւ ակնածում, դա անառարկելի է:

Յայրը չի քծնում ոչ ոքի, ճշմարտախոս է, անգամ չարալեզու: Խոսրով արքան մեծ համարում ունի Յոր մասին:

Երկու մարդ կա երկրում, որ կարող են փոխադարձ սեր ու հարգանք ակնկալել Մարդպետ նախարարից, մեկը Վաչե սպարապետն է, մյուսը՝ Վրթանես կաթողիկոսը: Երկուստեք սիրում են Յորը, նրան համարում ազնվագույններից ազնվագույնը հայերի մեջ: Գիտեն նրա փոթորկահույզ կյանքը, գիտեն, որ Մեծն Տրդատի ու Գրիգոր Լուսավորչի օրերի կենդանի վկան է, նրանց մեծագործությունների մասնակիցը:

... Դաժան ու խռովահույզ այն օրերին նրանք իրենց գործերով վեր ելան ամենքից, հեռու ու մոտ ազգ ու ժողովուրդներից: Վկայցեին նորի, ազնվագույնին Էգտող հայերի առաջնության իրավունքը:

Յռչակվեցին որպես Յայոց Մեծագործ այրեր, զի համընդհանուր աղտեղության, այլասերման մեջ շնչահեղձ լինող հայերին փրկության ճամփա հանեցին: Բռնի, թե կամովին, ինչ փույթ, ոի ողջ ժողովուրդ մկրտեցին Արածանիի ջրերում, դարձի բերեցին:

Առաջինը իրենք դարձի եկան, ծնկեցին խաչի առաջ, երկրպագեցին Յորը, Որդուն եւ Սուրբ Յոգուն... Այսպես ի լուր աշխարհի հայտարարում են եկեղեցվո հայրերը...

Յայրը վկա է բագինների կործանմանն ու լրիստոնեության հաստատմանը, նա թեեւ լավ հիշողություն ունի, սակայն ապրում է Մեծ Յայքի այսօրական հոգսերով:

Խոսրով արքան սովորույթ ունի որեւէ գործ ձեռնարկելիս խորհրդի նստել Յոր հետ: Մարդպետաց տերը իր կարծիքը ասելիս բնավ հավճի չի առնում, որ զրուցակիցը արքան է: Նա ասում է այն, ինչ չի ասի ոչ ոք: Նա հավատարիմ է արիական առաքինություններին ու չի կաշկանդվում արքա-նախարար,

տեր ու ծառա հասկացություններից: Անծանոթ է ևս քծնանքին ու ստրկամտությանը: Ոչ ոչ չի ծրծրադուր, երս ծերունին խոսքն ավարտելուց հետո քթի տակ մոմռացնում է:

- Զեթանոս քրիստոնյա, քրիստոնյա հեթանոս հայեր,- թե ինչ է ուզում ասել հասու չեն:

Մռայլ է այսօր Զայրը, չարահայաց: Նստել է պարսպաքարին, դիտում է Երասխի ջրերը: Մեկ հայացքը վեր է բարձրացնում, նայում Արարատներին, մեկ իջեցնում է, նետում ջրերին: Մեկ հայացքը վեր է վազում գետով, մեկ նետում է աչ ու ախյակ: Փնտրածը հուշերից ծնված վախ է գգուշացնում: Ուրիշների կողմից տեսած, չըմբռնած, թերեւս սովորական երեւոյթ է, սակայն:

- Սակավաջրել է,- մոմռացրեց, մոտ կանչեց պահապան գինվորին:

- Զրամանքդ, տեր իմ:

- Քանի՞ տարեկան ես, որդի,- հարցրեց աչքը ջրերին:

- Երեսուն, տեր իմ:

- Ասել է, թե հասու ես միտքս ըմբռնելու: Դու աչք ածու՞մ ես ջրերին:

- Զարկավ, տեր իմ, պարտականությունս է,- վեր է քաշում ուսերը տարակուսած գինվորը:

- Նայում ես ու չես տեսնում: Ջուրը սակավել է, գույնը փոխվել: Սիրտս վատն է գուշակում: Այդպես եղավ Տրդատի օրերին: Զասու՞ ես խոհերիս:

Չինվորը նայում է գետին, ջրերին, սակայն ինչ է տեսնում ծերունին, անհասկանալի է նրան: Իսկ Զայրը արհավիրք է տեսնում: Գետը, որ դարեր շարունակ կյանք է տալիս շրջապատին, իր մեջ նաեւ սպառնալիք ունի, որին հասու չէ գինվորը:

Յոր խոհերը նախնայաց հետ են... Նրանց բազինները իմաստնության կաճառանցներ էին... Նրանք՝ քրմերը, գլուխ էին հանում ես տեսակ բաներից...

- Գետը կանաչել է, ջրերի մեջ եռք կա,- տնքում է, Աստված մի արասցե կործանվի չարիքը,- մոռանում է գինվորին,- հարկ է հատնել արքային:

Գնում է գահասրահ: Օրորում է գլուխը, ասես կամենում է իրենից վանել ծանր հուշերը, որ գալիս են համառորեն: Նա ունկնդիր է հիշողության ձայներին, որ հաստատուն, ոտնատրոփի պես զարկում են գլխի մեջ: Չէ՛, այդ ոտնատրոփից փրկություն չկա:

Գահասրահի պահապան գինվորները պատիվ տվեցին: Սենեկապետ Վրույրը մոտեցավ հաճոյակատար ժպիտը դեմքին:

- Արքան ունկնդրում է Զաշտենից Դատ իշխանին: Ներող եղիր, Զայր Արտավազդ, սպասիր մի առ ժամ, մինչեւ...

- Սենեկապետ, ու՞մ որդին ես,- թեեւ գիտե Վրույրի հորը: Վերջերս սկսել է գանգատվել հիշողությունից եւ դա անում է ցուցադրաբար, նպատակով՝ նաեւ ծուղակել երիտասարդներին: Եվ վայ այն միամտին, որ ընկավ ծուղակը...

- Իշխան Գարեգին Մանդակունու:

- Զա՛, մտաբերեցի,- ընդհատեց սենեկապետին:

Չէր սիրում սենեկապետին: Սա էլ իր հերթին վախենում է նրանից: Անարժան մարդուկ է Վրույրը, ապրում է մշտական վախը սրտում, քանզի հասկել է, հանիրավի է գրավել սենեկապետի պաշտոնը: Դա խաթարում է քունը, ստիպում սողալ տիրոջ առաջ, միայն թե վերելում մնա...

Գահասրահից դուրս եկավ Դատ Իշխանը, տեսնելով Զորը հոնարհվեց:

- Զույսով եմ քաջառողջ ես, տեր Մարդպետաց:

- Քաջառողջ եմ, որդի,- նայեց ուշադիր,- լսա՞ծ կաս հունը փոխող գետերի մասին,- չսպասեց պատասխանի, ձեռքը թափ տվեց, մտավ գահասրահ:

- Ծերացել է Արտավազդը,- Վրույրը փորձեց մատը քունքի մոտ պտտելու շարժում անել, հանդիպելով իշխանի սաստող հայացքին, կարկամեց:

«Դժոխաց բաժին, դարձյալ սխալվեցի: Սա էլ է հարգում ծեր սատանային»՝ խորհեց սենեկապետը:

- Թույլ տուր, տե՛ր արքա,- խոնարհվեց Զայրը:

Արքան թույլ ժպտաց, ձեռքով նստելու հրավիրեց: Զոր աչքից չվրիպեց արքայի հոգնած տեսքը, աչքերի տակի պարկերը: ավելի քննախույզ նայեց արքային, չէ, չնայեց արքայի ոտքերը, որ չէին հասնում հատակին:

«Չես առաջարկի կարճացնել գահի ոտքերը, կվիրավորվի,- մտովի համեմատեց քիչ առաջ գահասրահից դուրս գնացած իշխանի հետ, տեսավ, արքան վաճաճ էր Դատ իշխանի հետ համեմատած: Սակայն արքային հարկ չկա հսկա լինել: Արքան հարկ է գլուխ ունենա, իսկ ունի՞... Անախորժեց, դառն էին տեսածի ու ցանկանալիի տարբերությունը,- ա՛յ, ինչ ասեմ Վաչեին, եւ՛ բարձրահասակ է, եւ՛ խորագետ: Ցավ է ինձ, որ ծերանում է սպարապետը,- գլուխը թափ տվեց,- ոչինչ դեռ կարող է մրցել երիտասարդների հետ, սակայն տարիներն իրենցն են անում՝ մեկին տկարություն են բերում, մյուսին՝ խելքապակասություն: Իսկ ե՞ս, մի՞թե դուրս եմ մնացել տարիների ազդեցությունից, թերեւս աստվածները մոռացել են ինձ... Չէ, մոռացումը մարդկանց արատն է, աստվածները արատներ չունեն, զի մարդկանց ճակատագրեր են տնօրինում, օրեր չէ...»:

- Մտահոգ ես, տեր Մարդպետաց, ի՞նչ ունես տխրելու,- լսեց արքայի ձայնը:

- Երջանիկ լինելու համար հարկ է մարդ միայն իր անձի մասին խորհի: Ներող եղիր, տեր արքա գուժկան եմ:

- Գուժկա՞ն,- արքան կծկվեց գահին, ավելի փոքրացավ,- Մարդ աստծո, գոնե դու խղճա սանիդ: ամեն ոք իր պարտքն է համարում վատ լուրերով գալ մեզ մոտ:

- Է՛, Խոսրո՞վ, ցավ է ինձ,- ձեռքը թափ տվեց,- սակայն լուրը ստիպողական է, հասու եմ, հոգիդ տակն ու վրա կանի: Այն, ինչ պիտի գուժեմ, միայն տարիներ առաջ տեսածիս շարունակությունն է: Լուսահոգի հայրդ հավատում էր ինձ, պատիր բաներ չեմ խոսում,- հոգևած նստեց գահի առաջ դրված գահավորակին,- ամռանը գետը կանաչել է, ջրի մեջ եռք կա...

- Եվ ինչ տարակուսեց արքան,- մի օր կկանչի, մի օր կգուլալի: Սպասի՛ր, դու սոսյաց անտա՞ռ ես գնացել: Ի՞նչ արհավիրք ես գուշակում: Գիտեմ՝ հոգով հեթանոս ես մնացել,- իսկ մտքում. «ամեն հայ էլ հոգով հեթանոս է: Դժվար է մոռանալ հայ աստվածներին»:

Յոգին, ի հեճուկս բանականության, չի մոռանում Յայ աստվածներին: Յոգին ազատ է ընտրելու, ազատ է հիշելու, մերժելու...

- Քրիստոնյա հեթանոս քրիստոնյա հայեր,- մոմռացրեց Յայրը: Արքան ժպտաց: Նա գիտեր, որ Յայրը այս խոսքերն ասելիս ժամանակ է շահում մտքերը ժողովելու: Արքան լավ էր ճանաչում իր դաստիարակին:

- Եվ ի՞նչ,- կրկնեց արքան:

- Լուսահոգի հորդ ծնունդից տաս տարի առաջ Երասխի ջուրը կանաչեց, ապա գետը հունը փոխեց, ետ քաշվեց քաղաքից: Յիշելն անգամ սահմուկիչ էր...

- Ամեն բան Աստծո ձեռքին է, ի՞նչ կարող ենք անել,- արքան լռեց, սկսեց շոյել մորուքը,- Արդ, ո՞վ կարող է նման բաների մասին խորհել, ավելին՞՝ կանխագուշակել..., -հասկացավ, որ սխալ էր թույլ տվել, սակայն խոսել էր Յոր ներայությամբ, որին հավատում էր, վստահում:

Երեսուն տարուց ավելի է, ինչ հայերը դարձի են եկել, սակայն վախի ու մշտական կասկածանքի մթնոլորտը կա ու թունավորում է կյանքը...

Արքան այդ քայլի մեջ դրել էր Յին ու Նոր կրոնների մեջ գնացած կռվի իր չկայացած բաժինը: Սակայն այդ կռվով հաստատվում էր երկու կրոնների մեջ եղած տարբերությունը, այն այնքան ակնառու էր, նաեւ, ի ցավ, ընդունելի...

- Քրմերը ես տեսակ բաներից գլուխ էին հանում,- Յայրը խոյս տվեց արքայի աղերսական հայացքից, չցանկացավ տեսնել արքայի խնդրանքը, ուզեց սիրտ բացել, թեթևացնել,- սակայն սրանք, այս սեւավորները, հասու չեն բնության գործերին: Սպասի՛ր, Խոսրո՞վ,- ինչպես տարիներ առաջ՝ բարձրացրեց ձեռքը: Արքան ինքնաբերաբար ենթարկվեց,- չէ որ դու էլ ես խորհում քրմերի մասին: Լինենք ողջամիտ, քրմերը հետամուտ էին բնության գործերին, քննում էին կյանքն ու բնությունը, գրում էին թե երբ են վարարելու գետերը, երբ է երաշտ լինելու, երբ է անձրեւ գալու կամ կարկուտ, երբ են ցրտերը ընկնելու, գիտության կաճառանոց էին հեթանոս տաճարները: Իսկ մենք վախենում ենք անգամ հիշել, մի՞թե հեթանոս աստվածները կհանդուրժեին այս ստրկամտությունը: Եթե մի փոքրջանաս, կմտաբերես Դարանաղի Ողյումպի «Մեհենական պատմությունը», այնտեղ շատ ուսանելի բաներ կային:

Նրանք այսօր հալածվող քրմերը, շատ օգտաշատ բաներ գիտեին, քննում էին աստղերն ու նրանց վարքն ու բարքը: Նրանց մեջ կային քննախույզ, իմաստասեր այրեր: Իսկ սրանք ամեն բան դրել են աստծո ուսերին, դյուրին են ապրում... Մարդը մանրացել է, դարձել անպաշտպան, անիմա:

-Յեթանոսությունը տասնյակ դարերի պատմություն ունի, մի մոռացիր այս պարագան, իսկ քրիստոնությունը... Ժամանակ տվեք, մեր հոգեւոր հայրերն էլ իմաստություն կամբարեն, եկեղեցիներն ու վանքերը կդառնան գիտության կաճառանոցներ... Աստված չանի, իմանա վեհափառը, կգայրանա,- իր ասածից նվաստացած զգաց իրեն, գլուխը կախեց,- Տե՛ր Աստված, ինչու՞ այս ամենը պիտի պատահեր իմ գահակալության օրոք,- ասաց, սակայն խոհերը քրմերի հետ էին: «Անժխտելի էր, քրմերը շատ օգտաշատ բաներ գիտեին, քննում էին բնությունն ու կյանքը, իսկ հայրս ու Գրիգոր սուրբը կործանեցին այդ ամենը, նաեւ քրմերի իմաստության կաճառանոցները, տաճարները: Թերեւս մեղավոր էին հայ աստվածներ, որ չզորեցին դիմադիր կանգնել, պարտվեցին: Այն պարտվողի նկատմամբ խղճահարություն է ծնվում, իսկ աստվածները, մի՞թե նրանք էլ կարիք ունեն խղճահարության, պաշտպանության: Աստվածների պարտությունը նրանց երկրպագողների պարտությունն է, որ չզորացրին պաշտպան կանգնել իրենց աստվածներին, սակայն զարմանալի է, որ Յայրը չխոսեց հայարիների մասին, թերեւս չուզեց ինձ մտահոգություն պատճառել... կատարվեց, թերեւս հասյալ էր պահը, երբ հները պիտի հեռանային, միայն թե ամեն հին է, որ պիտի զիջի իր տեղը նորին: Եվ արժանի է ամեն նորը այս օրինակ կործանումների, արժե նորը ստեղծելու համար կործանել հինը... Այս ամենը, արդ, անքննելի է, վեհափառը հետեւում է աջալուրջ, աստված մի արասցե, ինչ-որ մեկը մի բար ասի ի պաշտպանություն հեթանոսության,- հոգոց հանեց,- հանձնենք այս ամենը պատմության դատին, նա կասի իր անաչառ խոսքը»:

- Ծուռով կերեւան աստվածների լրաբերները,- լսեց արքան, ցնցվեց:

- Մար աստծո, այլևս ի՞նչ լրաբերներ, մի՛ վախեցրու,- անձկացավ արքան:
- Այո՛, այո՛, Արամա՛զդ Աստծո լրաբերներները, որոնք սոսկական մահկանացուների կերպ մտած, կգուժեն...
- Բա՛վ է, ի սեր աստծո, լռի՛ր:
- Հայրը ոտքի ելավ, թեթեւակի խոնարհվեց:
- Ողջամբ մնաս, տ՛եր արքա:

... Աշխարհը ցնցվեց... Ամռանը, անամպ երկնքում կայծակներ զարկեցին: Սարսափ տիրեց Այրարատ աշխարհին... Դարբինները շունչները բերաններին հասած զարկեցին կռանները սալերին, արգելք դրեցին Մասյաց վիհից ելնող Արտավազդ հսկային...

Սարսափ էր ընկել Երասխի շամբերը, ի՞նչ պատուհաս է, անմեկնելի բան, տեսնում են ու հասու չեն, անհավատալի է, շամբերից դուրս թռչող առյուծները չեն հոշոտում եղնիկներին, գայլերը մոտ չեն գալիս եղնիկի ձագերին: Երա՞զ է, թե՞ արթմնի հրաշք, թերեւս աստվածները երկնքից իջել են փրկելու մեղքերի մեջ թաղված մարդկանց հոգիները...

Երասխը փախս է տալիս ինքն իրենից, իր հունից, ինչպես կշտացած մանուկը մոր կրծքից, արհավիրք է...

- Երասխը գնաց...
- Յամաքեց, հե՛յ, ի՞նչ է սա...
- Գետն ուրիշ կողմ է գնում, փրկվե՛ք, փրկե՛ք...
- Օրհաս է, Արտավազդ հսկան է դուրս գալիս Մասյաց վիհից: Աշխարհի վերջն է: Ջրիեղեղ է գալիս, տապանի կտորտանք փնտրեք ջրերի մեջ...

- Սա է ձեր Զրիստոսի հավատքը՝ պաշտեք Հորը, Որդուն ու սուրբ Հոգուն: Սա՞ չէր ձեր ուզածը, բագինները կործանեցիք, հայ աստվածներին անարգեցիք, ինչի՞ համար, մոռացաք բնիկ աստվածներին ու օտար աստծուն երկրպագեցիք, մեղա՛, մեղա՛...

Սարսափ էր մոլեգնում ամենուր: Երասխը ամռանը կանաչել ու որոտմունքով անզուսպ, կատաղի նոր հուն էր բացում կրծելով հողի կուրծքը: Հեռանում էր քաղաքից: Հեռանում էր, ինչ էր տանում իր հետ, հարկավ, անեծք ու նախատինք: Ինչ կարող է ակնկալել անառակաբոր դուստրը՝ հարազատ մորից, որ անիծելով անգամ ողբում է կորստյան համար: Ուզում է ետ բերել երախտամոռ զավակին:

Երասխահունը բարակեց քաղաքի շուրջը: Ով գիտե, եկող գարուն ջուր կլցվի այս ջրագուրկ հունը, այս բազմածոթիվ կղզյակները կմնա՞ն, թե՞ կանցնեն ջրի տակ: Մի՞թե այս կղզյակները, որ նախատինքի պես ցցվել են մարդկանց աչքերի առաջ, պատիժ չե՞ն սեփական աստվածներին մոռանալու համար, մի՞թե մեղքերի մեջ թաղված մարդկային հոգիները հասու են այս ամենը հասկանալու:

Մայր գետից կտրված, դալկացած, ինչպես մայրական կրծքից կտրված մանուկ, գետը շուրջբոլորեց քաղաքը, դարձավ ճահիճ, իսկ Երասխը, նոր հուն բացող Երասխը աղմկում էր, խելագարվում՝ իր հետ տանելով քար ու հող, արմատապոկ ծառեր: Գնում էր խելագարված, կատաղության մեջ անզուսպ քանդող, նաեւ նոր հուն բացող, նոր հույսեր ծնող...

Մի քանի օր տեւեց այդ սողոմ-գոմորը, ապա կամաց-կամաց երկիրը խաղաղվեց: Գազանները ետ եկան, մտան շամբերը: Երասխը գնաց նոր հունով, գնաց անպաշտպան թողնելով քաղաքը, թողնելով ճահիճներին գերի:

... Հեթանոս աստվածների պատիժն էր...

... Ո՛վ գիտե, թերեւս նոր Աստծո պատիժն է, զի ամեն քրիստոնյա հայ հոգով հեթանոս է մնացել, անմեկնելի էր...

Հայկը փորում էր ու փորում: Թվում էր՝ այս առվից գատ աշխարհում ոչինչ չկա եւ չի էլ կարող լինել: Այս առվով է չափվում ամեն բան, նաեւ իմաստավորվում է կյանքը:

Արտաշատցիները զուր տքնանք համարեցին առուն, անհույս գործ: Սա աստվածների պատիժն է, զի հայերը մոռացել են իրենց աստվածներին ու ծնկել են հրեա աստծո առաջ: Աստվածահայր Արամազդը գետի հունը փոխեց, ջուրը գնաց, այլևս ի՞նչ այգի, ի՞նչ խաղող, ի՞նչ միրգ ու գինի: Այգիները կչորանան, կդառնան աղուտներ, ու՞ր չկա, այլևս ի՞նչ կյանք:

Այսպիսի պատիժ միայն աստվածները կարող են հղանալ: Ա՛յ, տեսեք որքան խոր պիտի լինի առուն, որ Երասխանհունից ջուրը հասնի այգիները:

Գործը, որ ձեռնարկել էին համայն քաղաքով, հանկարծ անհույս դարձավ: Դեռ որքան պիտի փորեին, թեցին ու հեռացան: Մնաց Հայկը, ասաց ի լուր ամենքի՛ արտաշատցի է, հաստակող արտաշատցի, պիտի փորի: Եթե գործը չհաջողվի, ջուր չհասնի այգիներին, թող առվի մեջ թաղեն: Նայեցին, խղճացին, իբրեւ թե խելքը թոցրել է: Չարհամարիեցին, միայն խղճացին:

Իմաստուն վարվեցին արտաշատցիները, դե, բոլոր խելագարներն էլ աստվածների պաշտպանության տակ են, քանզի, իրոք, խելագարի գործ է, ողջ քաղաքով առու հանել չգորեցին,

վճռել է մենակ առու հանել: Դե արի ու մարդ էակին բանական համարիր: Անպատկառ ու անամոթ արարք, դուք չգորեցիք, ես կգորեմ ու, ի հեճուկս ձեզ, առու կհանեմ:

Այս պահին էլ եկել է հայր Մկրտիչն ու կանգնել է առվի գլխին:

- Մա՛րդ, սուկական, խենթ ու խելառ Յայկ, դեմ մի գնա աստծո գործերին:

Վախեցիր աստծո պատժից...

Արյունը եռ եկավ Յայկի մեջ, մոլեգնեց ատելությամբ այս ալարկոտ, միամիտ հարեւանների, այս քնձոռտ քահանայի, որ մոռացել է քուրմ լինելը: Ատեց աշխարհը, իրեն, այս երախտամոռ գետը, այս այս խաժամուժ քաղաքը, այս առուն կնոջը, երեխաներին, այս անիծյալ կյանքը:

Նստեց առվի մեջ, գլուխն առավ ափերի մեջ: Անհույս, անլույս կյանք էր, ինքն էլ ցեխակուլուլ, գլխին էլ քահանա կանգնած:

- Լա՛ց եղիր, որոյա՛կ, հոգիդ կթեթեւանա: Աստված բարեգութ է: Նա կլսի անմեղ ձայնդ, զի խաբկանք է տիրել հոգուդ: Քո մեջ հառնել է սատանայական արիական հայերի ըմբոստ հոգին,- խաչ քաշեց երեսին,- հնազանդ եղիր աստծուն: Նա քեզ եկեղեցու գիրկը կբերի...

- Կորի՛ր, գնա՛:

Յայկը ձեռքը զցեց բահին:

- Ոչ քուրմ ես, ոչ քահանա: Գնա՛, մեղքի տակ մի գցիր...

Քահանան վաղուց էր քաղաք հասել սակայն Յայկը չէր կարողանում հանգստանալ: Այն, ինչ կատարվում էր նրա հետ, թերեւս շատերի հետ է կատարվել, սակայն ոչ բոլորն են ի զորու եղել ըմբռնելու պահի իմաստը, քանզի այն կյանքի իմաստավորման գերագույն պահն է: Այն, ինչ ասաց քահանան հայարիների մասին, չվիրավորեց նրան: Նա շատ էր լսել հայարիների մասին, հպարտանում էր հայարիներով, բայց քահանան իրեն ըմբոստ համարեց, նաեւ իր արարքը, ասել է, թե, իրոք, ըմբոստ են եղել հոգով հայարիները...

Յայկը հասկանում էր, որ այս առվով ու առվի հետ կռվելով փոխելու է կյանքի իր բաժինը: Դա մարդու պայծառացման պահն էր, երբ մարդ փնտրտուքի մեջ հանկարծ հայտնագործություն է անում ու գտնում է իր տեղը, այդ պահը մեծ լարում է պահանջում:

Այդ վճռորոշ պահին շատերն են վախենում վճիռ դնել, վախենում են սխալվել, անգամ ծիծաղելի դառնալ: Պատրաստ չեն զոհաբերման, պատրաստ չեն իրենք իրենց կոտորելու: Իսկ նա ելել է ինքնահաստատման կռվի, իսկ հասկանալ այդ ամենը դեռ չի կարող, չի կարող հասկանալ հետեւանքները: Նա ուզում է քաղաքին ջուր հասցնել, մնացածը աղոտ է, անմեկնելի: Ա՛յ, քաղաքացիները հրաժարվեցին առու հանել, ինքը մնաց, այո, իրավացի է քահանան, նրա մեջ հառնել է հայարիական հոգին, որ այսօր հալածվում է երկրում, իսկ նրանք՝ հայարիները, հզոր էին մարտում, ճարտար էին արարման մեջ: Ինչու՞ են այդպես հետապնդում հեթանոսներին, մի՞թե բավական չէր Գրիգոր Լուսավորչի աշխարհասասան գործերը, չէ՞ որ նա կործանեց Յայոց Բագինները, ինչու՞, տեր աստված... Որի՞ն, որ աստծուն եմ դիմում, մեղա՛, մեղա՛... Չգաց, որ գղջում չկա, մեղա կանչեց ինքնաբերաբար, սովորույթի համաձայն...

Տեսավ կնոջը, կանգնել էր առվի եզրին:

- Էն պոչատ քահանան քիչ էր, դու էլ եկար գլխիս խրատ կարդաս:

- Քաղցած կլինես, հաց բերեցի, երեխեքն էլ կարոտել են, ե՞րբ ես տուն...

Առվի թեք պատով սահեց ամուսնու մոտ:

- Երեխե՞քը, դու չե՞ս կարոտել,- հեզնեց Յայկը:

- Ա՛յ մարդ, ամոթ է, կլսես, կծիծաղես: Ծիծաղողները շատացել են: Պոչատ քահանան,- նրա դուրը եկել էր ամուսնու ընտրած բառը, հիշեց, ինչպես քահանան վազելիս փեշերը վեր էր բարձրացրել, նմանվել էր իրենց ոտքերի փետուրները թափած հավին,- քաղաքը գլխին է հավաքել, ասում է Յայկը խելքպակասել է:

- Դու Է՞լ ես դդ մտքին, որ առվով ջուր չի գնա,- ուշադրություն չդարձնելով կնոջ վերջին խոսքերին, հարցրեց Յայկը:

Կինը նստեց կողքին, ուսով սեղմվեց նրան:

- Գինի խմիր, ոտքերիդ մեռնեմ, ախր ես առվով...

- Ի՞նչ է, ջուր չի՞ գնա,- առանց զայրույթի նետեց Յայկը, ապա խռովվեց,- կամ առվով ջուր կգա, կամ եստեղ թաղեք:

Կինը ամուսնուն փարվելու փորձ արեց:

- Ժամ չէ, ա՛յ կնիկ, ես առու պիտի հանեմ:

- Ախր հայկ, շահ խոր պիտի լինի:

- Յա, խոր պիտի լինի: Դու գնա, երեխեքին լավ նայիր,- հանկարծ ժպտաց մազ ու մորուքի մեջ կորած աչքերով, ուզեց ասել. «Գնա՛, Աստղի՛կ, սիրելիս»՝ չասաց, սովոր չէր քաղցր խոսքերի:

Թքեց բռան մեջ, վերցրեց բահը:

- Կամ ես, կամ առուն...

Գահասրահում վաղուց այսքան մարդ չէր հավաքվել: Եկել էին հեռավոր գավառներից, եկել էին այնպիսի նախարարներ, որ հարյուր տարին մեկ էին Ոստան գալիս:

Այնքան մարդ էր ժամանել, որ արարողապետը նոր գահավորակներ բերել տվեց: Հավաքվածներից շատերը իրար չէին ճանաչում:

- Որ աշխարհից է, նախարա՞ր է, թե՞ տեղապահ:

Այսքան մարդ չէր հավաքվել անգամ Խոսրով արքայի թագադրմանը, որ Կոստանդ կայսեր հրամանով, մեծ շուքով կատարեց Հռոմաց Անտիոքոս գորավարը: Ամենքն էլ գիտեին, որ կայսրը Խոսրովին թագադրեց Վրթանես կաթողիկոսի խորհրդով: Արարողապետ Արշամը մագաղաթի վրա գրում էր ժամանածների անունները, գավառները: Ահա երկրի չորս բղեշխները՝ Ծովաց բղեշխ Արքեղիանոսը, Գուգարաց բղեշխ Միհրանը, Նոշիրական բղեշխ Վաղարշեն, Աղձնյաց Բակուր բղեշխը, Վաչե Մամիկոնյան սպարապետը, Բզնունյաց տեր Դատաբեն, Մեհենդակ ու Վարազ Ռշտունիները, Վահան ամատունին, Անդովկ Սյունին, Միհրան Որդունին, Մանեճիիր

Այսքան մարդ չէր հավաքվել անգամ Խոսրով արքայի թագադրմանը, որ Կոստանդ կայսեր հրամանով, մեծ շուքով կատարեց Հռոմաց Անտիոքոս գորավարը: Ամենքն էլ գիտեին, որ կայսրը Խոսրովին թագադրեց Վրթանես կաթողիկոսի խորհրդով: Արարողապետ Արշամը մագաղաթի վրա գրում էր ժամանածների անունները, գավառները: Ահա երկրի չորս բղեշխները՝ Ծովաց բղեշխ Արքեղիանոսը, Գուգարաց բղեշխ Միհրանը, Նոշիրական բղեշխ Վաղարշեն, Աղձնյաց Բակուր բղեշխը, Վաչե Մամիկոնյան սպարապետը, Բզնունյաց տեր Դատաբեն, Մեհենդակ ու Վարազ Ռշտունիները, Վահան ամատունին, Անդովկ Սյունին, Միհրան Որդունին, Մանեճիիր Ռշտունին, Կորդվաց Ջոն իշխանը, Ծովքի Մարը, Հաշտենից Դատ իշխաններն ու Բասնյաց Մանուկը, Էլի ու Էլի երեւելի իշխաններ... Չէ, սրանք ամենքը չեն, մեծ է Հայոց գահնամակը, ստույգ է Հայոց գահնամակը դեռ չկա, չի հաստատված արքայի հրովարտակով, սակայն կան նախարարների գահավորակներ: Ամեն նախարար գիտեր իր տեղը, դա գալիս է հեթանոս ժամանակներից: Չէ՛, չես հաշվի, չես հիշի ամենքին, սակայն սրանք են երկրի տերերը, սրանք են ուսել երկրի ճակատագիրը:

- Կոչի՛ր, գալիս են,- արարողապետի ականջին փսփսաց սենեկապետը:

Հնչեցին շեփորները, այն տարածվեց քաղաքի վրա: Մարդիկ իրար նայեցին, հասկացան՝ արքան խորհրդի է նստելու երկրի տերերի հետ:

Ներս մտան թիկնապահները՝ Մախագ Խոռխոռունու գլխավորությամբ:

- Մեծ Հայքի Խոսրով արքա,- բարձր ու հանդիսավոր հնչեց արարողապետի ձայնը,- հնազանդություն ու խոնարհում...

Խոսրով արքան ներս մտավ հանդիսավոր, գլխին յոթփայլական թագ էր, ուսերին՝ ծիրանի թիկնոց:

Հանդիսավոր լինելու համար Խոսրով արքային շատ բան էր պակասում: Իշխանաժողովից իշխանաժողով հավաքված հանդիսավորությունը չբավականացրեց այդ պահին արքա խաղալու: Կարճ հասակով, հսկայատիպ թիկնապահնապահներով շրջապատված, նվաստացած զգաց իրեն, սակայն արքան արքա է...

- Ողջուն՛յն Հայոց մեծաց,- ըբան բարձրացրեց մականը, , նստեց գահին:

Արքայի կողքին մեկ այլգահ էր դրված կաթողիկոսի համար, ասել է, թե հյուժ կարելուր հարց է քննելու իշխանաժողովը,- լիահույս ես, խաղաղ է Մեծ Հայքում, բղեշխություններում, նախարարություններձում,- անկիրք հարցրեց արքան, այնքան անտարբեր, հասկանալի դարձավ, նա գիտեր երկրի վիճակը, քանզի հրավիրելու համար ուղարկում եմ գահերեց բղեշխներին, թագավոր ասպտեին ու սպարապետին:

Դրսում ուրախ, արեւոտ օր էր, համերաշխ՝ արքայի տրամադրությունը:

Արեւը հազիվ էր գենիթ հասել, երբ լսվեց արարողապետի ձայնը.

- Մեծ Հայքի կաթողիկոս Վրթանես,- ներկաները ավելի պատրաստակամությամբ, քան արքայի մուտքի պահին, ոտքի ելան:

Արքան առաջինն առավ վեհափառի աջը, ապա ավագությամբ կարգով մոտեցան մնացածները՝ նախարարները, նշխաններն ու տեղապահները:

- Փա՛ռք, մեր Տիրոջը, որ համերաշխ է պահում Հայոց մեծաց: Տանուտյարք Հայոց աշխարհի, ուրախալի է, որ ժողովուրդը հնազանդությամբ ու հավատքով պաշտում է արարիչ Աստծուն, Որդուն ու Անմահ Հոգուն, որ արարել է ամեն շնչավոր ու անշունչ, կարող է եղծանել ու դարձյալ նորոգել իր ողորմածությունը: Մենք հավատքով ենք լի, զի պաշտում ենք կենդանի Աստծուն, սակայն միշտ չէ, որ մարդիկ հարազատ են Աստծո պատգամներին, դեռ կան խառնակիչ ու պիղծ մարդիկ, որ պաշտում են քարեղեն կուռքեր: Նրանց մասին մարգարեն ասում է. «Քարերի նման կիջնեն խորունկ ջրերի մեջ եւ ուլքեր փայտեղեն քանդակներ են պաշտում, չարաչար կպատժվեն», - խոր շունչ քաշեց, նայեց ծանր հայացքով, ասես հավաքվածների մեջ տեսնում էր այդպիսի մարդկանց, - Տյարք, մի՞թե առաջին Աստծո ու ժողովրդյան չափոսի պատժվեն մեղավորները, մի՞թե կուրացել ենք, չենք տեսնում այս ամենը Աստծո պատիժն է, զգուշացումը,- մատը վեր տնկեց,- զգուշացումը: Մի՞թե դուք աշխարհիկ տերերդ չեք տեսնում կռապաշտներին, չեք պատժում, ինչու՞...:

Գահասրահում մեռելային լռություն իջավ, ասես ցուրտ քամի փչեց: Մարդիկ իրենց կասկածելիներին թվում համարեցին, ավելի քան զարմացած էին այլևս ի՞նչ իշխանաժողով, երբ վեհափառը սկսում է սպառնալիքով: Մի՞թե արքան սրա համար է հրավիրել, եկել են հեռու-հեռավոր գավառներից, բա՛վ է, հոգեւորները նստել գլխներիս: Ինչու՞ արքան հանդուրժում այս անլուր հանդգնությունը: Այդպես խորհում էին, սակայն չէին խոսում: Սպասում էին, սպասում էին արքայի պատասխանին, մի՞թե արքան կուլ կտա հոգեւոր առաջնորդի այս սպառնալիքը: Մի՞թե քրմերը այսչափ կհանդգնեն: Չէ՛, նմանօրինակ բան չեմ հիշում: Քրմերը աջակցում էին արքային, ամրացնում գահը, ստույգ է, լինում էին նաեւ հակամարտության դեպքեր, սակայն ո՞վ է հիշում դրանք, երբ կարիք կա շեշտելու եկեղեցվո հայրերի աշխարհիկ ձգտումները... Չմեղանչեմ ճշմարտությանը, վեհափառը մեծ հարգանք է վայելում, նաեւ ուժ է երկրում, մտերիմ է անգամ կայսեր հետ, սակայն այսչափ անտեսել աշխարհիկ տերերին... Է՛, ամեն բան արքան անում է վեհափառի թելադրանքով: Մի՞թե օրեն է այսչափ կուլ գնալ շնորհակալական զգացմունքին: Չէ՛, հանիրավի է հոգեւոր առաջնորդի գայրույթը:

Ներկաներից շատերը ականատես էին եղել արհավիրքին, մնացածներն էլ ականջալուր էին, սակայն այս ամենը մեկնել այսպես օրպակաս ձեւով ու միտումով, պարսավել Հայոց մեծաց, անսպասելի էր, վիրավորական:

- Տիրոջ պատիժն էր,- ասես ասածը սակավ էր պարսավելու համար աշխարհիկ տերերին, շարունակեց վեհափառը,- անհնազանդները խստագույնս կպաժվեն... Տիրոջ հրամանով Երասխը ետ քաշվեց քաղաքից, որտեղ դեռ շատ կան պիղծ մարդիկ, Տիրոջ պատգամները մոռացած մարդիկ,- զայրալից ոտքի ելան, կանգնեց ծերունական պատկառելի վեհությանը,- այո՛, այո՛, կուրացել ենք ամենքս, նաեւ աշխարհիկ տերերը, զի մարդիկ դեռ պաշտում են արձանները: Տեր Աստված ազդարարում է իր ծառայի բերանով՝ բա՛վ է, այլևս չափոսի հանդուրժենք կռապաշտներին այստեղ, ամենուր... Եթե տքնենք հավատքի համար, Աստված մեզ կապրեցնի: Փա՛ռք Աստծուն, Որդուն ու Անմահ Հոգուն: Ամեն՛:

- Ամեն,- ներկաները խաչակնքեցին, ասել է, թե ընդունեցին սուրբ երրորդությունը: Խաչ հանեցին երեսներին, իսկ ի՞նչ է խաչակնքելը: Ձեռքի հասարակ շարժում ճակատին, կրծքին, աջ ու ահյակ, սակայն հավատամ, խոստովանիմ...

Աստծո զորությունը միակն է, որին ապավինում ենք մենք՝ քրիստոնյաներս: Ուշադիր մեկը թերեւս նկատեր, որ ջերմեռանդությամբ նախարարները տարբերվում էին իրարից: Կային այնպիսիները, որ դեռ քմծծառը աղջատել էր դեմքերը: Հեգեկոտ էր Բակուր բղեշխի դեմքը, անգամ չխաչակնքեց, միայն թեթեւակի խոնարհեց անհասցե, որպես ծիսական պարտականություն կատարելիս: Նրան չէր վախեցնում կաթողիկոսի սպառնալիքը, ոչ էլ անձը: Նա հայացքն ուղղեց արքայի ոտքերին, որոնք հազիվ էին հասնում հատակին: «Մե՛ծ արքա,- խնդմնդաց քթի տակ,- եւ սա պիտի տիրի մեջ՝ տոհմիկ արիական իշխաններիս, որ չենք մոռացել մեր առհավական աստվածներին... Թերեւս այն չեմ խորհում, ինչ հարկ է խորհել: Նա Վարդանդուխտին խլեց ինձանից,- տնքաց բարձրաձայն, մոռացել էր ուր լինելը: Ա՛խ, կին, որդու ի ծնե փառասեր էիր: Արդ, դարձյալ ինձ ես ձգտում... Թերեւս արքա կոչված մարմինդ: Դու պատրաստ ես ամեն պահ սիրո զոհասեղան բարձրանալ, իսկ նա՞... Ի՞նչ են բարբաջում այս օրպակաս ծերերը,- ատելությամբ նայեց կաթողիկոսին,- սպառնում է Աստծո անունից, ի՞նչ է, մեր հայ աստվածները Քրիստոսի՞ն էլ չարժեն... Հայ աստվածները հզոր էին ու անպարտ, նրանք իրենց թույլ չէին տա նվաստացնել, առավել եւս խաչել, մեր հեաթնոս աստվածները կռվում էին վիշապների դեմ, ժայռեր էին ճեղքում, կայծակներ գարկում երկինքն ի վար: Իսկ սրանք, ինդրեմ, ապաշխարեք, թող ձեզ ապտակեն, նվաստացնեն,- հռռռաց ինքն իր մեջ,- չէ՛, ես դեմ եմ ձեր Քրիստոսին: Ես հզոր արիական զորական եմ, իմը բոցամորուս Վահագն է, երկնքի տիրուհիները՝ Անահիտն ու Աստղիկը»:

Այդ պահին էլ խոսեց արքան, պարզ դարձավ հրավերքի պատճառը: Առհավական հուշերը որ քննես, նույնն է եղել, այդ ե՞րբ է եկել, որ արքան ասի. «Բարի եք եկել, տյարք, հրամայեք խրախճանքի

սրահ կամ որսի: Եթե հրավիրել է, մի փորագավ ունի կամ գործ է ուզելու, կամ ոսկի: Իցիվ ասեր, հրավերը ուղարկել է, զի կարոտել է ամենքիս, ուզում է միաբան տեսնել, չէ, արքայից ո՞վ է լավ բան տեսել... Անսպասելի չէր, արքան աստվածահաճ գործ է ձեռնարկել. նոր քաղաքամայր կառուցել: Ասել է, թե թերեւս սորթենք, ցեխ ու քար կրենք, տապակվենք, խորովվենք, մարդ ու ոսկի տանք, մենք էլ լծվենք էշին ու էջը ցեխից հանենք:

- Դվտ բլուրի վրա մի քանի շինություններ կան, Աստծո կամոք այնտեղ նոր քաղաքամայր կկառուցենք,- նայեց նախարարներին, նրանց թթված դեմքերին, հասկացավ, որ իրենով չեն հիացել, որ հանճարեղ իր մտահղացումը նրանց սրտով չէ: Չէ որ սա մեծագործություն է, ինչպես չեն հասկանում...

- Այս ամենը սրվում է եկեղեցվո աջակցությամբ...

Այո, արքան, այստեղ խոսելով իր վճռի մասին, նաեւ՝ իր կամքը թելադրելով, վճռի մեջ դրել էր արքա լինելու գաղափարը, որ այս պահին պետք էր այս մի բուռ մեծամիտ, ամբարտավան, ինքնահավան նախարարներին, որոնց ձեռքով էլ պիտի կառուցի քաղաքը: Սակայն սա նաեւ երկրում արքա լինելու, երկրում գահ ու արքա ունենալու գաղափարն է, առանց որի հայերը հայ չեն կարող լինել ու երկիր ունենալ:

Այս ամենը այսօրական հրամայականից է բխում, նաեւ անժխտելի տրամաբանությունից...

Արքան չնայեց բժեշխներին, հայացք նետեց գահասրահի հեռավոր անկյունը, մի քանի աննշան նախարարների, հայացքը գամեց նրանց:

Արքան ուզեց, որ սրանք դեմ խոսեն, եւ ինքը սաստի այդ նախարարներին, մնացածներին դաս ու սաստում լինի, սակայն այս անշնորհքները չհասկացան արքային, չխոսեցին: Արքայի ցանկությունն էր գոնե մեկ անգամ ոտքը հատակին զարկելն ու գոռալը.

- Մենք ենք Մեծ Յայքի արքան, կա՛մքն է մեր...

Ավաղ, չկայացավ արքա լինելու գաղափարը, արքան չսաստեց ոչ ոքի: Դրա փոխարեն լռությունը գահասրահում շարունակվեց: Մի այնպիսի լռություն, որ համարժեք էր պայթյունի:

Խոսքով արքայի ցանկությունը նորություն չէր, Յայոց արքաներից շատերը քաղաքներ էին կառուցել եւ փառք նրանց: Անմահացել էին պատմության մեջ: Արդ, խոսքով արքայի հերթն է: Նա է անմահության ճամփա եղել, մի տաքուկ տեղ է ուզում գրավել Յայոց պատմության մեջ: Սեւով սպիտակի վրա գրված մի էջ՝ Մեծ Յայքի խոսքով արքան քաղաք կառուցեց...

Ա՛յ, նրա հայրը՝ Մեծն Տրդատ, անմահացավ Գրիգոր Լուսավորչի կողքին, անմահացավ իր մեծագործություններով, իսկ թե ինչ կասեն սերունդները կրոնի գործում նրա ունեցած աջակցության մասին, այն, որ նա նորը արարելու մոլուցքով կործանեց այն ամենը, ինչ կար, այն ամենը, ինչ կերտել էին դարեր՝ դարի համար: Ո՞վ գիտե, եկող սերունդները ինչպես կգնահատեն, կանխծե՞ն, թե՞ կխնկարկեն. պատմությունը անաչառ է, կասի իր խոսքը...

Լռությունը անհարկի երկարեց: Կարգն էր. առաջինը պիտի խոսեին գահերեց բղեշխները, քանզի ամենքից շատ նրանք էին մարդիկ տրամադրելու, նաեւ միջոցներ: Չգիտես ինչու, լռում էր նաեւ կաթողիկոսը: Նա էլ իր հերթին գնում էր նախարարներին: Նա սկսել էր մեծերից: Վեհափառի հայացքը խոսել էր տրամադրում, պարտադրում: Յարկ է խոսեին բղեշխները, սակայն խոսեց սպարապետը: Առանց հիացմունքի անհնար էր նայել ծեր գորավարին: Յուրաքանչյուր ոք Վաչե Մամիկոնյանին նայելիս հասկանում էր՝ ինչ ասել է Յայարիկական ասպետ: Այո, Յայոց ծերունագարդ սպարապետը իր բարձրահասակ, առնական տեսքով, սպիտակ, մինչեւ ուսերն հասնող կիսազանգուր մագերով, արծվեհի քթով հիշեցնում էր հուշ դարձած, սակայն երբեք չմոռացվող առիավական գորականներին...

Ամենքն էլ ուրախացան, քանզի պիտի լիներ մեկը՝ առաջին, որ նրա խոսելու պահին նայեին արքայի դեմքին, վճռեին իրենց ասելիքը: Յարկավ, դյուրին էր հետո խոսելը: Ստացվեց այնպես, որ սպարապետը ոչ միայն մարտում է փրկում, նաեւ այստեղ՝ գահասրահում:

- Տեր արքա, աստվածահաճ գործ ես ձեռնարկել: Նա քաղաքամայրը հարկավ անառիկ պիտի լինի: Այս պահին Յոռմն ու Պարսկաստանը խաղաղություն են պահպանում: Եթե ոչ այսօր, հապա ե՞րբ կառուցել...

Գահասրահում շշուկներ անցան, չհասկացվեց՝ դժգոհում էին, թե՞ հավանություն էին տալիս արքայի ձեռնարկին:

Արքան անհանգիստ շարժեց գահին: Այս անգամ իրո՞ք գայրացավ, մոմաջրեց ինքն իր մեջ. «Սա երեւմունք է ամենքս էլ խաղարկուներ ենք: Մենք էլ արքա ենք խաղում, սրանք՝ նախարարներ: Եղած-չեղածն էլ Մեծ Յայքն է: Սա պետություն չէ, մենք պետություն ենք խաղում միայն: Ի՞նչ պետություն, մի կողմից Յոռմն է ճնշում, մյուս՝ Պարսկաստանը: Ի՞նչ է լինելու սրա վերջը, սակայն սպասեք, մենք ձեզ այնպես զարմացնենք, որ բացբերան մնաք: Արդ, կասեմ անտառների մասին: Սրանք մեզ կոտակ են կոչում, թող իմանան, որ մենք կարող ենք ձգտել ու հասնել մեծագործության: Մենք անտառներ կտնկենք, քաղաք կկառուցենք, կանմահացնենք մեր անունը եւ ոչ սնապարծությունից, այլ Յայաստան աշխարհի համար: Սրանք, այս նախարարները, առյուծակիր, վագրակիր ու վարազակիր

գինանշաններով նախարարները միայն նապաստակներ են... Յա, սպասում են, որ խոսենք: Բա՛վ է, ինչ լռել ենք,- շտկեց ուսերը, թվաց, թե ահարկու տեսք առավ, որ հասակը ահագնացավ, սակայն դա միայն խաբկանք էր: Արքան չզգաց խաբկանքը, նա ոգորումի մեջ էր, ուզում էր տեր ու տնօրեն զգալ իր երկրում...

- Տյա՛րք, որքան խորհում ենք երկրիս վրա, այնքան պարզ է դառնում մեր կարիքները,- ասավ կաթողիկոսի հետաքրքրված հայացքը. «Վեհափառ,- խորհեց խոսքերի արանքում,- դու միայն քաղաքի մասին գիտես, դե՛, զարմացիր, գիտցիր, որ Խոսրով արքայի գլխում էլ դեռ շատ ու շատ խելացի մտքեր կան, որ հասու չեն այստեղ հավաքված հաստագլուխները: Մենք ենք Մեծ Յայքի արքան, մեր կամքն է...»,- Այրարատ աշխարհը, լինելով արքայական տիրույթ, զուրկ է անտառներից,- դադար տվեց: Տեսավ, նախարարները նայում էին հետաքրքրված, զարմացած: Մտքում հռռռաց հավաքվածների վրա,- մենք վճռեց ենք դրել անտառներ տնկել Գառնո բերդից մինչև Դվն բլուր, դեպի Մեծամոր: Իսկ երբ աստծո կամեցողությամբ անտառներ հասակ առնեն, հարյուրավոր երեներ բաց կթողենք անտառներում բազմանալու: Այրարատ աշխարհ կունենա իր անտառները,- լռեց, գոհ էր, քանզի այսօր կարողացավ զարմացնել նախարարներին, ստիպեց հաշվի նստել իր հետ: Թե չէ՝ ինչ արքա, որ նստի Ոստանում, իսկ գավառներում ծվարած նախարարները չխորհեն էլ, որ արքա կա: Իսկ, արդ, թող տքեն, թող իրար միս ուտեն, վիճեն: Նա կտեսնի, թե ով է նվիրված եւ ով ըմբոստ, ով է երկրիգործերից հեռու փախչում:

Արքան կկոցված աչքերով նայում է նախարարներին: Նրա մեջ ինչ-որ մանկական բան է հայտնվել: Ուրախանում է ամենքին զարմացած տեսնելով:

Մեծ գործ է ձեռնարկել Խոսրով արքան: Նա կփրկի Արտաշատ քաղաքը երեկոյան քաղաք լցվող մոծակների ամպերից, իսկ անտառները կհասնեն Դվին: Արքան պատրաստ էր լաց լինելու: Քիչ մնաց ճշար, գտել էր քաղաքի անունը՝ Դվին: Գտել էր անունը պատմությանը հանձնելու միակ միջոցը: Խոսրով արքան կառուցեց Դվին քաղաքը, տնկեց անտառներ, բազմացրեց մեծաբանակ երեներ, շենացրեց երկիրը, կառուցեց բերդեր, պալատներ... Թվաց, թե լսում է պատմություն կողմող մեծության ձայնը...

«Մի՞թե Խոսրովը վճռել է նսեմացնել ինձ ու եկեղեցին, քաղաքը՝ հասկացանք, սակայն անտառները... հայտնագործություն արեց,- Խոսրովը մեծագործության մարմաջ ունի, այն էլ այն պարագայում, երբ առանց ինձ ոչ մի քայլ չի անում... Կամենում է անցնել երանելի հորից՝ Մեծն Տրդատից,- չխկչխկացրեց համրիչը,- չմեղանչեմ ճշմարտության առաջ: Նա ամեն բան անում է իմ խորհրդով, ջերմեռանդ քրիստոնյա է: Չի անում խորհուրդներս: Անտառներն էլ տնկել վճռել է ինձ ապացուցելու, որ ինչ-որ բան արժե... Դե՛, ի՞նչ, նրա իղձերը դեմ չեն եկեղեցուն, ասել է, թե ամեն բան արվում է Աստծո կամքը, թող արարի նաեւ անտառները: Ամեն»:

Այդ պահին արքայի վճռին համակիր ու դիմադիր խոսքեր էին հնչում:

- Քաղաք, անտառներ, Տեր Աստված, շատ չէ՞ արյոք: Յասու չեմ, խորհել է պետք:

- Է՛, ամեն արքա իր էշն է քշում,- ձայնն անցավ շշուկի,- Խոսրով արքան մեր հաշվին դրախտ է միտում ընկնել...

- Տյա՛րք, սակայն խորհե՛ք նաեւ երկրի մասին: Արքան այս ամենը անում է եկրի համար, ոչ իր անձի...

- Սա սկիզբն է չարյաց, սպասեք շուտով մեզ էլ կլծի հանց գրաստներ: Դեռ ինչեր են գալու գլխներիս, սպասեք դեռ մի փոքր...

- Յայ ենք, քանի խաղաղ է, պետք է կառուցենք...

- Արարումը մեր հոգու մեջ է, ինչ եք արմանք-զարմանք կտրել: Իմաստուն է արքայի վճիռը:

- Վեհափառը ինչու՞ է լռում, մի՞թե իրեն չի վերաբերում, ինչու՞ չի ասում իր վեհապետական խոսքը...

- Արքան վճիռ է ընդունել, այլեւս ինչ ազատ կամք, ի՞նչ հոգու ազատություն: Կուզեմ կանեմ, չեմ ուզի՝ չեմ անի, դե՛, փորձիր չաել...

- Ի՞նչ եք օրապակաս, արքան վճիռ է ընդունել, վերջ: Նա Մեծ Յայքի արքան, մենք կամակատարներ ենք, ծառաներ...

Լռեցին, քանզի արքան բարձրացրել էր մականը:

- Յանգի՛ստ, տյա՛րք,- լսվեց արքայի անկիրք ձայնը,- հազարապետը կհաշվի, ամեն նախարար կիմանա, թե արքան գործավոր պիտի ուղարկի Դվին:

Ասել է, թե այս ամենը դատարկ խոսքեր են, թող որքան էլ ուզում են կոկորդ պատռեն իր խոսքի տերն է: Նա իր գործն է առաջ տանում:

Անցանկալի է նախարարների համար արքայի վճիռը, ամեն նախարար իր մարդկանց տերն է, սակայն հարկ է գործավորներին կտրել տուն ու տեղից, ուղարկել Դվին: Ով կուզի իր աչքը հանի:

- Տեր արքա, մենք էլ գործավորների կարիք ունենք, շատ մարդ չենք կարող տալ,- սրահի անկյունից լսվեց մեկի անհամարձակ ձայնը: Կարի կարելորն այն էր, սա չէր բողոքում գործավորներ տալու համար, միայն այն մասին, որ չէր կարող շատ մարդ ուղարկել Դվին: Ի դեպ, այս խոսքերն էլ արժեք

ունեին:

- Սպասենք դեռ, տեր արքա, ի՞նչ ունենք աճապարելու: Դեռ հայտնի չէ՝ խաղա՞ղ կապրենք...

- Իրավացի ես, տեր Դերջանցի,- առաջնին միացավ մեկ ուրիշը,- չհավատանք Շապուհին, ուխտադրուժ մարդ է: Չլինենք մանկամիտ, սպասենք դեռ...

Արքան հանգիստ դուրս էր նայում: Նրա դեմքին ժպիտ կար: Արքային դուր էր գալիս այս վիճակը: Մեկ տարուց ավելի է, ինչ արքա է, սակայն դեռ ոչինչ չի արել, չի ապացուցել արքա լինելը: Արդ, խնդրեմ, տեսեք ինչպես են խառնվել իրար, թե չէ խորհում էին, որ արքա ունեն ու վերջ, իսկ պարտք արքայի հանդեպ՝ ոչինչ... Վերջապես հասկացան, արքան է երկրի տերը:

Ինչպես լինում է անվճռական մարդկանց մոտ, նա դժվարությամբ էր հաղթահարում կաշկանդող արգելքները, ոչ ոք այստեղ հավաքվածներից չի իմանա, թե ինչ արժե արքայի համար այս վճիռը, որքան է զգել-քաշել, քանի-քանի անքուն գիշերներ է անցկացրել: Ար, ոչ ոք չի ասի, որ արքան կոտակ է...

- Տյա՛րք, լսեք ծեր գորականիս,- Հայր Արտավազդը ոտքի ելավ,- հաճո է ինձ արքայի ձեռնարկը: Չարմանում եմ, ինչու՞ եք աճապարարություն անում: Հետ որի՞ են՝ կայսե՞ր, թե՞ Շապուհի: Ի՞նչ է, թշնամի՞ է մտել երկիր: Ի՞նչ արհավիրք է գուժել իշխանաժողովը, ինչու՞ եք խուճապվել: Ամեն արքա, խաղաղ ապրելիս կառուցել է բերդ ու քաղաք, եկեղեցի ու տաճար: Արքայի ձեռնարկը եզակի չէ Հայոց պատմության մեջ: Նախնյաց կարգն է, ավանդը նաեւ՝ խաղաղ ապրելիս կառուցել: Հայ ենք, ասել է թե՛ արարող, երկիրը շենացնող,- դարձավ արքային,- տեր արքա, կյանքը հարատեւում է ծնվողի ճիչով, մեռնողի հառաչով, շինարարի հեւքով, արարման տքնանքով: Նա, ով կառուցում է, հավերժ կապրի եկող սերունդների մեջ: Եւս մեկ պարագա, չմոռանանք, որ Մծբինի դաշնադրությունը առայսօր հավատարիմ են թե Հռոմը, թե Պարսկաստանը,- հանկարծ զայրացավ, բռունցքը վեր բարձրացրեց,- տեր արքա՛, գուգա՛ղ հանել տուր...

Գահասրահում ցնցվեցին, ասես մեկը սառը ջուր լցրեց գլխներին:

- Ի՞նչ գուգազ, մի՞թե պատեհ է, անց կաց, տեր Մարդպետաց: Ինչու՞ հարկադրական, ինչու՞ խառնել երկիրը: Մենք չենք հրաժարվում մարդիկ տալուց,- խոսեց Գուգարաց բղեշխը,- ես մարդիկ կտամ, մթերքներ: Ի՞նչ հարկ կա գուգազի, մի՞ խստացրու, տե՛ր արքա:

- Արդար խոսեց Գուգարաց բղեշխը,- արձագանքեց Նոշիրականի բղեշխը, թերեւս վախեցավ, որ Միհրանի խոսելը ստվեր է զցում իր վրա,- ես նույնպես հոժարակամ մարդիկ կտամ, մթերքներ, միջոցներ... Խստագույնս առաջարկեցիր տեր Մարդպետաց:

- Խիստ է մի փոքր,- խոսեց Կորդովաց տեր Ջոն իշխանը,- սակայն գուգազ հանելու պարագայի վրա հարկ է դեռ խորհել: Հավան եմ գործին, ափսոս, ստիպողական ենք դիմում այդ միջոցին:

Արքան, ոչ պակաս զարմացած, քան մյուսները, նայեց հորը: Նոր միայն հիշեց, որ Հայրը վերջին տեսակցության ժամանակ խոսել էր ինչ-որ խիստ միջոցի մասին: «Լավ միտք հուշեց Հայրը, տեսնենք ինչ դուրս կգա սրանից»: Նայեց սպարապետին, ցանկացավ, որ նա խոսեր, թեեւ ընտրությունը կատարված էր ինքնաբերաբար, նաեւ անսխալ էր:

Արքայի ձեռնարկի մասին խոսել էին երկու բղեշխները, Մարդպետաց ու Կորդովաց տերերը, իսկ ինչու՞ լռում է վեհափառը: Մի՞թե երկրի գործերը չեն հետաքրքրում նրան, հոգեւոր դասին, չէ որ ամեն հարցում խորհուրդ է տալիս: Արդ, լռում է անհարկի:

- Տյա՛րք, ես համամիտ եմ Հայր Արտավազդի՝ հետ: Տարիներով ու իմաստությամբ հարուստ է Մարդպետաց տերը, նա էլ գորական է, քաջ գիտե, որ աղքատ մարդ Այրարատում հավաքելով, կարող ենք հարկ եղած դեպքում զենքի կոչել: Ներքե ձեր սպարապետին, այստեղ խոսք ասվեց Մծբինի դաշնադրության մասին: Կա՞ այստեղ մեկը, որ չի ճանաչում Շապուհին: Արքայից արքայի խոսք սրի ծայրին է: Նա ատամ է սրում Մեծ Հայքի վրա: Մծբինը շատ է նեղում նրան...

- Հռոմը հեռու է, Պարսկաստանը քթներիս տակ, մինչեւ Հռոմից հասնեն օգնության, Շապուհի գորքերը կհայտնվեն Այրարատում, ասաց Ջոն իշխանը,- նրանք կարող են իմ աշխարհի վրայով հարձակվել: Ես առաջինը պիտի ընդունեմ հարվածը...

- Պատիր հյուսեր, Հռոմը գլուխ չի հանում գոթերից, ուր մնաց մեզ օգնի: Իսկ Շապուհի ձեռքերը ազատ են: Նրա գորքերն ամեն պահ...

- Ստույգ չմեկնեցիր խոսքերս, տեր Ռշտունյաց,- զայրացավ Ջոն իշխանը,- Հեռու հեռու է ասելով, չվախեցա Պարսկաստանից, գորական այրեր եք, հարկ է ամեն բան կանխավ խորհել, պատրաստ լինել վատթարագույնի, իսկ գուգազ հանելը,- ամենքի համար, անգամ իր համար հանկարծակի վճիռ դրեց,- հույժ անհարժեշտ է: Եվ հարկ է գուգազ հանել անհապաղ: Այստեղ, Ոստանում, ամենքն էլ կհոժարեն, սակայն հեռանալով Արտաշատից, կմոռանան, թերեւս զլանան կատարելու արքայի հրամանը...

- Ո՞ր իրավամբ ես պարսավում մեզ,- լսվեց ծերունազարդ նախարարներից մեկի ձայնը,- գիտեմ խենթ քաջությունդ, սակայն ո՞ր իրավամբ...

- Հայրենիսիրելու, որպես արիական ասպետ նրա համար կյանքս դնելու իրավամբ,- նույնպես զայրացավ երիտասարդ իշխանը:

Հայտնի չէ ինչով կավարտվեր վեճը, եթե կաթողիկոսի հազը չընդհատեր նրանց:

- Տանուտյարք Հայոց աշխարհի, աստվածահաճ գործ է ձեռնարկել Խոսրով արքան: Նրա տքնանքը կշենացնի երկիրը, բարիք ու բարօրություն կբերի ժողովրդին: Այս ամենը Աստծո կամոք է, զի ամենայն բարօրություն Աստծուց է: Բարօրությունը ինքնագոհ Աստծո ամենագոր էությունն է: Խաչը ապավեն ամենքիս, հրեշտակները աներեւույթ վկա են այս իշխանաժողովին՝ մեզ ապավեն ու օգնական: Հանուն Հոր, Որդվո եւ Հոգվոյն Սրբո: Ամեն,- խաչակնքեց ներկաներին, ծանրաքայլ դուրս գնաց զահասրահից: Եպիսկոպոսները հետեւեցին նրան:

- Գրի՛ր,- արքան դարձավ դպրապետին,- Հրաման մեզանից Մեծ Հայքի բղեշխություններին, նախարարություններին, ամենքին-ամենքին հրաման մեզանից՝ գուգազ հանել...

Սոկրատի բրուտանոցը գտնելու համար հարց ու փորձ անելու հարկ չկա, բավական է գնաս արհեստավորաց թաղ, որ կպած է շահաստանին: Բակերից մեկի դիմաց, որպես մուտք մի մեծ քարանավ է դրած, որից կեսից ավելին կոտրած է, դա է բրուտանոցի մուտքը: Մարդիկ զարմանում են, խորհելով, որ բրուտագործը ցնդածի մեկն է...

Սոկրատը կավոտ, միայն վտավակով, օգնականի ու աշակերտների հետ թեւ-թեւի տված, շուրջպար մտած, շեկ կավի բարդն էին ոտնում: Վարպետը լավ գիտե կավի լեզուն ու բարքը: Եթե կավի մասին հարցնես, կդառնաս նրա աչքի լույսը: Սոկրատը կարող է ժամերով կավի մասին պատմել, այնպես, որ բան ու գործ թողած բրուտագործ կդառնաս: Եթե մի քիչ էլ խմած եղավ, կավը կհամեմատի կնոջ հետ ու Աստված հեռու պահի հեթանոս մտքերից՝ էլ կավն ու կինը մեկ են, որ Արամազդ Աստված իր համար կին է արարել կավից, որ կնոջն ու կավին մի տեսակ պիտի սիրես, մի տեսակ շուռ ու մուռ տաս: Մեկ էլ տեսար խելքը իսպառ թռցրեց, թե շեկ կավը բզունայաց կողմերից բերած կին է, որ նրանք կատվի սովորույթ ունեն, փաղաքշանք են սիրում, հարկ է հունարով մոտենալ, ապա մոռանալով, որ խոսում է կնոջ մասին, ավելացնում է՝ մեկ էլ տեսար ճաք տվեց: Իսկ երբ խոսակիցը հիշեցնում է, որ խոսքը կնոջ մասին է, ծիծաղում է միամիտ մարդու վրա. կնոջն ու կատվին հունարով պիտի մոտենաս... Ավելի լավ է կավի մասին չխոսես, պրծում չի լինի:

Այս պահին կավը նրանց ոտքերի տակ սկսել է պնդանալ, գույնը կանաչին է տալիս, սակայն Սոկրատը գիտե կավի լեզուն, բարքը, եթե հանեցիր ու կավ մնաց ոտքիդ, ասել է, թե կավը հում է:

- Դե՛, ձեզ տեսնեմ, շտապով, շտապով, շտապով, հո՛ւպ, հո՛ւպ, հո՛ւպ,- ոտքերդ համերաշխ վեր ու վար են անում կավի մեջ: Ոտքերի տակից շուրը ճսիսիալով ցայտում է վտակներին:

- Աստված օգնական,- լսվեց ոսկերիչ Հրանտի ձայնը,- թող Վահագնը ուժ տա, պատվով դուրս գաք ցեխից:

- Կավի՛ց,- շտկեց Սոկրատը,- մարդ Աստծո, թե խոսողը ազատ կամ հոգեւոր լիներ, կխորհեի, օրպակաս մարդ է, ցեխն ու կավը իրարից չի ջոկում, ախր արհեստավոր ես... հա, մեր տղա, ես ինչի՞ ես փակել գործանոցդ: Ինչ է, արտաշատցի այրմարդիկ էլ զարդ չե՞ն պատվիրում իրենց լոր ու կաքավ տիկնանց համար:

- Բողոքավոր չեմ, վարպետ Սոկրատ,- ժպտաց, լայն հորանջեց Հրանտը,- հոգնեցի, եկա ժանգաթափ լինելու, կոկորդս չորացել է: Ես շոգից պրծում չկա, հետո էլ մենակ գինի չի խմվի,- հետը բերած գինու կուլան տվեց աշակերտներից մեկին:

- Լսե՛լ ես,- հարցրեց վարպետի օգնականը:

- Ի՞նչը, գուգազի մասի՞ն, հա՛, ականջալուր եմ:

- Ամեն տուն մի գործավոր պիտի տա,- օգնականը ոտքը զարկեց կավին, կավաջուր ցայտեցրեց ոսկերիչի վրա,- ներո՛ղ եղիր:

- Մարդ վարձել չեն արգելել,- քրթմնջաց Սոկրատը,- չես կարող դու աշխատել, մարդ վարձիր քո փոխարեն...

- Ես ոչ արծաթ ունեմ, ոչ աշխատող ձեռք: Ի՞նչ անեմ, գնամ քաղաք կառուցեմ, ախր կավից զատ ոչնչից չեմ հասկանում:

- Է՛, Տիգրան, քանի մեծանում, այնքան օրպակասում ես: Չեմ ուզում, ասա քո ռեխին նայողն ո՞վ է: Գնա՛, աշխատիր ու վերջ, արքայի հրամանն է:

- Զեզ ինչ, մի տուն լիքը երեխա ունես, հասած են, ձեռք են բռնում: Ես ի՞նչ հող տամ գլխիս...

- Ամուսնանալի,- զայրացավ Սոկրատը,- ուշքդ ու միտքդ ես անտերն է: Տնաշեն, թողնեն մինչեւ առավոտ կիսմես: Եղբանը որտե՞ղ է տեղավորվում:

Աշակերտները իրար նայեցին, ուզեցին ծիծաղել, սակայն օրեն չեր վարպետի վրա ծիծաղել:

- Հերի՛ք ոտնեք, Ծատու՛ր, կավը դրեք անիվի վրա, ձեռքով հալսեք:

Աշակերտները կավը դրեցին անիվի վրա: Ծատուրը շուր լցրեց վարպետի ու օգնականի ձեռքերին, ինքը միացավ ընկերներին:

- Նստեք, մի-մի գավաթ գինի խմեք, ճանգերս թափվի: Ա՛յ տղա, հենց գինու անունը տվեցի,

աչքերդ պեծին տվեցին...

- Է՛, վարպետ, ծիծաղում ես: Իմ սրտից արյուն է գնում: Ասում են ամուսնանայի: Ի՞նչ ունեմ, որ կնիկ առնեմ: Է՞ս չի ունեցած,- ցույց տվեց հագի կավոտ վտավակը,- դեռ լավ է, քո մոտ եմ աշխատում, քո աշակերտները որիշների օգնականներից լավ են ապրում, բայց Է՞ս չի վիճակս:

- Գործդ ես է, ի՞նչ ես ուզում: Ի՞նչ խմի,- գավաթը մեկնեց Տիգրանին,- լավ, մի թթվիր, խմի՛ր, սիրտդ կբացվի: Բայց ասեմ ձեզ, լավ գործ է ձեռնարկել արքան: Գետը հեռացավ, էլ մոծակներից պրծում չկա, բա կարիճն ու օձերը: Տնով-տեղով Դվին կերթամ:

«Նազենիկը կգնա՞ Դվին, թե՞ կմնա,- դառնացած խորհեց Զրանտը: Վերջերս նրա ու Նազենիկի մեջ խորթացում էր ծնվել, չէր հասկանում պատճառը,- հարկավ կգնա, էլ ինչ քաղաքամայր առանց Երեւմունքի: Արքան Դվինում Երեւմունքի տուն կկառուցի: Ես էլ... Զանկարծ մի այլ դեմք պատկերացրեց,- չէ, սկսել եմ խելագարվել, սակայն ինչու՞ դեմքը փոխվեց, երբ նաժիշտները դուրս գնացին: Ախր էնպես էր նայում,- վախեցավ ավելին խորհել,- ախր որ այրմարդը չի հասկանա կնոջ հայացքի իմաստը... Չէ, խելագարվում եմ, թագուհին ու՛ր, ոսկերիչն ու՛ր: Ես էսպես խորհելով կառափնարան կհասնեմ...»

- Ա՛յ տղա, Զրանտ, ի՞նչ եղավ: Օրը ցերեկով քնե՞լ ես:

- Զա՛ վարպետ, մտքերի հետ էի,- գիտու թասը քաշեց գլուխը, դառնությունն անցավ խոհերին. «Եղած-չեղածը խաղ էր եւ ոչ ավելի: Կինը, անգամ թագուհին, կին է մնում»:

Աչքը գցեց պատրաստի կարասներին, կահույրներին, թասերին, գավաթներին, ձիթմաններին: Չննեց վրայի զարդանկարները: Թրծվածների վրայի զարդանկարները լավ էին դիտվում, անթիրծները սեւացել էին, տձեւ էին, Զրանտը գիտեր, որ Սոկրատը մեծ մասամբ պատվերով էր աշխատում: Ժամանակին ինքը մի քանի նկարներ է արել նրա համար: Այդ գործով էլ մտերմացել են: Իր օգնությամբ Սոկրատի բրուտանոցի համբավը տարածվել է Այրարատ աշխարհում:

Երեկոյանում էր: Արեւը նստեց Մեծ Մասիսի ուսին: Ձյունները մի պահ կարմրեցին, ապա հանգան, արեւը սահեց լեռան թիկունքն ի վար: Քաղաքը աշխուժով լցվեց: Արդ, շոգից ընդարմացած քաղաքացիները պիտի զբաղվեին իրենց գործերով, սակայն այսօր արտաշատցիները մտահոգ էին, խոսում են եզուզազից, աստվածներից: Մեկ-մեկ նայում են Երասիսի կողմը, գլուխները օրորում:

- Փորում է դեռ, այ հաստակող արտաշատցի,- նայում են չորս կողմ,- այ իսկական արիական հայ, որ հոգով ըմբոստ է,- խորիում են հարգանքով, քանզի իրենցն է, կա մեկը, որ չի վախենում անգամ Աստծո զայրույթից,- կեցցե՛ս, Զայկ եղբայր,- նորից են նայում չորս կողմ,- Աստված մի արասցե իմանան հոգեւորները...

Իշխանաժողովի մասնակիցներն ամենքն էլ գնացել են իրենց աշխարհները, միայն Աղձնյաց Բակուր բղեշխն է դեռ հյուրընկալվում պալատում: Թագուհին իր նաժիշտի Գիսանեի միջոցով խնդրել է սպասել: Թերեւս նաժիշտը զարմացել է, քանզի բղեշխին չի հրամայում, այլ խնդրում է սպասել դեռ: Բակուրը երկընտրանքի առաջ է կանգնած: Մի կողմից արքայի հրամանն է՝ վերադառնալ իրենց աշխարհներն ու կարգավորել գուգազավորներին Դվին ուղարկելու գործը, մյուս կողմից թագուհու խնդրանքը՝ մնալ, սպասել դեռ: Ի՞նչ անել, իսկ սե՞րը... Նրա վիրավորված ինքնասիրությունը բողոքում էր, ժխտում սերը: Չկա՛, չի՛ եղել: Ինչպե՞ս կարելի է մոռանալ... Իսկ եթե Վարդանդուխտը դեռ սիրում է իրեն: Ինչպե՞ս վարվել, չէ՞ որ հավատարմության երդում է տվել արքային: Նա լավ գիտե իրեն, գիտե, որ կատաղության պահին կարող է սպանել անգամ այդ կնոջը, որ միակ սերն է կյանքում: Մեծամիտ չի համարում իրեն Բակուր բղեշխը, սակայն նա արեւորդի է, չի հեռացել հեթանոս աստվածներից: Նրա Աստվածը Վահագն է, նրան է հավատարիմ... Մեկ-մեկ խորհում է, որ ինքը ավելի լավ կգահակալեր, քան այդ կոտակը: Միայն վերջերս է հոգում բուն դրել դավաճանական միտքը: Օ՛, աշխարհ, որ ծուռ ու անկատար ես, ինչու՞ պիտի ժառանգական իրավունքը լինի վճռող ամեն բանում, չէ՞ որ կարելու է երկրի շահը: Եթե արքայազն է, ասել է թե՛ տարիներ անց գլխին թագ պիտի դնի, մեկը հարցնի, ախր թագի տակ գլուխ կա՞, թու՛... Մեկը լինել շուռ տար այդ կարգը:

Վեհափառի մատն է հասել ամեն բանում, քանզի նրան հոսրով արքայի պես արքա է պետք գահին, որ ինքը կառավարի երկիրը: Այդպես էլ արեց, թուլամորթ արքա նստեցրեց գահին, որ ինքը կառավարի երկիրը: Զնուց այդպես է եղել՝ Գրիգոր Լուսավորիչից է գալիս հոգեւորների աշխարհական ձգտումները: Ինչ էլ անուն են դրել՝ Լուսավորիչ: Ի՞նչով լուսավորեց երկիրը, կործանելով պերճաշուք տաճարներն ու բազիլիկները... Քանի հազար մարդ զոհվեց այդ անմիտ պատերազմում: Եվ ինչի՞ համար... Չէ՛, սխալ էր այդ ամենը, Գրիգորն ու Տրդատը կործանման եզրին հասցին Մեծ Զայքը: Պարսիկներին վանեցին մեզանից, պարսիկներին, որ բարեկամ են եղել: Մեր արքաներից շատերը պարթեւ են եղել, ինչպես նաեւ նրանցը: Եվ դրա դիմաց տվեցին Զոռմի բարեկամությունը, կատաղած շան բարեկամությունը: Ի՞նչ եղավ, ինչպե՞ս եղավ, որ մեր աշխարհը բաժանեցին իրենց մեջ: Մի կողմում Զոռմն է, մյուսում՝ Պարսկաստանը, իսկ ու՞ր է Զայաստանը: Ի՞նչ եղավ Մեծն Տիգրանի

երկիրը: Տկարամիտներ, Յոռու մեզ բարիք չի ցանկանա, թեև Շապուհն էլ մի բարի պտուղը չէ, սակայն նա գիտե ուժեղ հարեան ունենալու օգուտներն ու վնասները: Ասեմ ու չկասկածեմ, եթե չլիներ Յոռուի «բարեկամությունը», այնժամ կարելի կլիներ հույս դնել Պարսկաստանի վրա:

- Ի՞նչ կա,- զայրացած նայեց ծառային,- Ի՞նչ ես ծռմամբ կապիկի պես:

- Կին է, տեր իմ, տեսակցություն է խնդրում, չի ասում ով լինելը:

- Ներս հրավիրիր,- ասաց անտարբեր:

«Տեսնեք ինչ է հրամայում Մեծ Հայքի Մեծ տիկինը», - հեզանքով նայեց դեմը կանգնած կնոջը: Սա վերնոցի կնգուղը քաշել էր գլխին, դեմքը չէր երեւում:

- Խոսի՛ր, կին, Ի՞նչ ես ցանկանում:

Կինը դարձավ ծառայի կողմը:

- Դու, Վանես, վնաս՛, թող ձեզ չխանգարեն:

Ծառան դուրս գնաց:

- Ես քեզ լսում եմ, մի չարաշահիր համբերությունս:

Կինը ետ գցե՛ց կնգուղը:

- Վարդանդուխտ, թագուհի՛: Դու, դու խելագարվել ես: Օ՛, աստվածահայր Արամազդ, խելքի բեր այս կնոջը: Ներող եղիր, տիրուհի, ես մի պահ հուշերի գիրկն ընկա, ներիր նվաստ ծառայիդ:

Թագուհին մի կողմ նետեց վերնոցն ու բղջիխի առաջ կանգնեց խելքահան անող գեղեցկությամբ: Ասես Անահիտ աստվածուհին էր երկնքից իջել: Թագուհին բարձրահասակ էր, թեև չափահաս զավակներ ուներ, սակայն դեռ բարեկամ էր: Նրա սեւագիշեր աչքերը մեկ անգամ տեսնողը էլ չէր մոռանա: Աղձնյաց կանայք գեղեցիկ են, իսկ Վարդանդուխտը ծնվել էր Հայոց զարդը դառնալու համար: Նա վեր էր բարձրացել, ցածում թողնելով սիրած երիտասարդին, մոռանալով իրենց սերը, որին անգամ աստվածներն էին նախանձում:

- Ես քոնն եմ, քո Վարդանդուխտը, գրկիր ինձ, ի՛մ Բակուր: Ես միշտ քոնն եմ եղել,- նա ձեռքերը երկարեց բղջիխին: Սա ծնկի իջավ:

- Թագուհի՛, մի՛ մղիր ինձ տիրադավության: Ես ատում եմ Խոսրովին, սակայն երդվել եմ,- լռեց մի պահ, թագուհին ավելի մոտեցավ նրան,- Վարդանդուխտ, ուշքի ե՛կ, հանուն մեր հայ աստվածների, հանուն մեր նախկին սիրո...

- Նախկին,- թագուհին ետ քաշվեց,- այդ երբվանից՞ մեր սերը նախկին դարձավ,- արհամարհանքով նայեց, ոտից գլուխ չափեց բղջիխին,- իսկ ես... Օ՛, իմ Անահիտ աստվածուհի, ես ես սիրելի եմ այս մարդուկին, վախկոտ, արքայի անունը լսելիս կորցրել է արիությունը: Եվ դեռ հորջորջում ես, արիական ասպետ հռչակում քեզ: Արիականք նվիրված էին նաեւ սիրո մեջ, իսկ դու՛, գաճաճ, չխոսես այլևս արիականների մասին, դու՛, դու՛... Եթե ցանկանամ գլխատել կտամ: Օ՛, աստվածուհի, Ի՞նչ հաճույք՝ տեսնել այս առնական գլուխը մարմնից զատված,- եթե թագուհին իմանար, որ մարգարեություն է անում... Եվ եթե աստվածները չկտրեն կյանքի թելը, տարիներ անց նրա մարգարեությունը կկատարվի եւ ավա՛րդ...- Չէ՛, դու իմ Բակուրը չես, արիական էր իմ Բակուրը, Վահագնի բոցն էր իմ Բակուրը, Արամազդի կայծակն էր իմ Բակուրը: Դու միայն նմանակն ես իմ Բակուրի...

- Թագուհի՛...

- Ի՞նչ թագուհի, մի՞թե կարող ես հասկանալ կնոջը, թագուհուն, որ թագը մի կողմ դրել, կեսգիշերին եկել է քեզ մոտ... Իսկ դու՛, գիտե՞ս, շատ ես նման իմ Բակուրին,- շունչը ետ բերեց,- գիտե՞ս, Մեծ Հայքում չկա մի այրմարդ, որ մտովի հետոս պառկած չլինի: Էլ Ի՞նչ այրմարդ, որ չցանկանա գեղեցիկ կնոջը, այն էլ թագուհու...,- հոգնած փլվեց բազմականուն:

Բակուրի կրծքի տակ ինչ-որ բան շարժվեց, ցանկացավ նետվել թագուհու գիրկը, ցանկացավ ներում աղերսել, սակայն չարեց այդ քայլը, քանզի նրա հոգում կասկած ծնվեց: Նա լավ էր ճանաչում այդ կնոջը: Գիտեր խոհերը, գիտեր նրա մարմնի ամեն գիծը, ամեն շարժումը: Նա գիտե, որ Վարդանդուխտը չի սիրում ամուսնուն, ավելին՝ Վարդանդուխտը հեթանոս էր մնացել: Այն, որ թագուհին զոհ է մատուցում հեթանոս աստվածներին, գիտեր, չէր կասկածում: Հիշում էր Վարդանդուխտը ինչույքներից մեկի ժամանակ ասել էր. «Ես կցանկանայի գոնե մի գիշեր Վահագնա սիրուհի դառնալ, այրվել աստվածային սիրով: Ա՛յ, կրակ, ա՛յ սեր ու բոց: Այդպիսի մի գիշերվա համար արժե կյանք տալ»:

Ես քո օգնության կարիքն եմ զգում:

Խնդրատուհի դեմքը հարկ է լինի համեստ, բարի, սակայն թագուհու դեմքը զայրալից էր, վճռական: Բակուրը սարսռաց. «Աստված իմ, որքան է փոխվել Վարդանդուխտը, որքան վճռականություն կա դեմքին, կարող է անգամ մարդ սպանել»:

Դու պիտի օգնես ինձ, թեկուզ հանուն մեր միասին անցկացրած օրերի, ցափ է ինձ, մոռացել եմ մեր սերը,- թագուհին լռեց, ժամանակ տալով բղջիխին բողբոջելու, սակայն սա լուռ էր, նաեւ դառնացած:

Թագուհին կորցրեց հոգու կորովը, թերեւս խաղարկու դարձավ:

- Այդ դեպքում կանես այս ամենը հանուն քո շահի, հանուն քո փառասիրության: Ինչպե՞ս կարող ես կոտակին հանդուրժել գահին, որ քեզանից խլեց քո սերը... Լռեց, մոտեցավ պատուհանին, նայեց մթան մեջ, ասես թաղվեց խավարի մեջ: Դրսում մեղ քամի էր փչում: Շոգից տանջահար քաղաքը արթնացել էր, կենդանացել: Յոգոց հանեց, հիշեց մանկությունը, Տիգրանակերտը, հիշեց Բակուրի հետ անցկացրած սիրո խելահեղ գիշերները: Ետ դարձավ, մոտեցավ բղեշխին: Թագուհու կուրծքը վեր ու վար էր անում ներքին խեղդող, սիրո գրկախառնման մեջ նվաղելու ցանկությամբ:

Բակուրը ոտքի ելավ, հետագայում թերեւս իրեն մեղադրում էր այդ քայլի համար, կյանքը կտար այդ քայլը կատարած չլինելու, որ պատճառ դարձավ բազում դժբախտությունների...

Ձեռքերը պարզեց թագուհուն, սա հառաչեց, նետվեց նրա գիրկը: Յեռու-հեռավոր օրերի հուշերը լցվեցին այս գիշերվա խելահեղության մեջ...

Գիշերվա խոթափեալ ժամն էր, երբ վերգտան իրենց բնական վիճակը, կարողացան հանգիստ խոսել: Յոգնած մարմինները հանգստի կարիք էին զգում, սակայն թագուհին դեռ ասելիք ուներ: Ճիգ գործեց, խոսեց.

- Ես ցանկանում եմ, որ դու գահակալես Մեծ Յայքում:

- Ի՞նչ,- բղեշխը ցնցվեց,- իսկ արքա՞ն, գահաժառանգը,- հարցրեց ինքնաբերաբար:

- Վախեցա՞ր, սակայն այս խենթ ու խելառ հայերի փրկության հուսկ միակ միջոցը արիականության զարթոնքն է, վերադարձը աստվածների պաշտամունքին: «Մի՞թե թագուհին խոհերս է կարդում, ինչպե՞ս իմացավ: Սակայն ինչու՞ դառնալ թագավոր: Եթե Տրդատը լիներ գահին, այդ մասին խորհելն անգամ անմտություն կլիներ, իսկ այս կոտակը... Սակայն այս պահին երկրի փաստացի տերը կաթողիկոսն է, որի հայրը կործանեց հզոր մեր երիկրը, դարձրեց նվաստ հարկատու, ավերեց մեր հավատքի տաճարները... Ափսո՛ւ, զորքերս սակավ են, սպարապետը առաջին իսկ ճակատամարտում կջարդի զորքերս, միակ ելքը Շապուհին դիմելն է...»

Սուտ է, վաղուց է այս մասին խորհել, անգամ վճռել է, չի դիմանա արքայական զորքերի ճնշմանը: Գտել է ելքը՝ Շապուհին դիմելը, խորհել է, որ իր քայլը երկրում կհամարեն դավաճանություն, դա էլ հերքեց: Սա է անմահության ճամփան: Այո՛, անմահության, քանզի մեր առհավական նախնիք գիտեին այդ ճամփան, այո՛, այո՛, իմաստուն էին քրմերը, ոչ նման այս ձեռագրեստ ոսկեպաշտներին, որկրամոլներին, որ անիմա բնության ու մարդկանց գործերին, ամեն ինչ դրել են Աստծո ուսերին...»:

- Ի՞նչ ես խորհում, սիրելիդ իմ Բակուր: Զեզ կօգնի Շապուհը, արքայից արքան,- բղեշխը այս էլ երկրորդ անգամ ցնցվեց,- իսկ երբ Յայոց աստվածների օգնությամբ արքա դառնաս, այնժամ մենք չենք թաքցնի մեր սերը,- թագուհու ժպիտի մեջ ինչ-որ դիվական բան հայտնվեց,- արդ, ըմբռնված եմ եկեղեցիների կործանումը: Ես նրանց ավերակների վրա հեթանոս տաճարներ կկառուցեմ, ու ետ կդառնան անօթեւան մնացած Յայոց աստվածները: Եվ դու՛, ի՛մ Բակուր, կլինես առաջին արիական-հեթանոս արքան, ետ կբերես մեր առհավական նախնյաց փառքը, տիրույթները: Այդ աստվածահաճ ձեռնարկի ճանապարհին մի արգելք կա, մի մարդ՝ վեհափառը,- հայացքը սառեց, Ֆշշացրեց,-նա պիտի մեռնի:

Բակուրը ցնցվեց երրորդ անգամ:

- Թող լինի աստվածների կամքը, նրանք են տնօրինում մեր ճակատագրերը:

Յայկի աչքն ընկավ հողի կոշտին: Նայեց, վախեցավ ձեռք տալ: Յամատարած շեկ կավի մեջ այդ մի կտոր հողը մուգ էր, թերեւս թաց էր...

«Վճռել եմ, չեմ բարձրանա թմբի վրա, չեմ նայի գետին: Երդվել եմ Վահագնի հրաշեկ մորուքով, կմնամ առվի մեջ, մինչեւ ջուրը լցվի, քշի տանի այս անիծյալ աշխարհից»:

Առուն խորն էր, ինքն էլ հատակին կանգնած, չէր տեսնում գետը: Զաղաքում ամենքն էլ գիտեին նրա կռվի մասին, գիտեին՝ երդվել է Վահագնի մորուքով: Արդեն չորս ամսից ավելի է կռիվ է տալիս հող ու քարի հետ, քնում է առվի մեջ: Ոչ մի անգամ առվից դուրս չի եկել: Նրա հաստակողության մասին ամենքն էլ գիտեն, սակայն արհամարհանք չկա, քանզի տեսնում են՝ քառորդ փարսախա առու է հանել: Յեռվից նայես՝ ջրանցք է: Անհավատալի է՝ մի մարդ ջրանցք փորի: Չէ էստեղ Յայոց աստվածների մատն է խառը:

Չգուշավոր չորս կողմ են նայում. «Յեթանոս աստվածներն են աջակցում Յայկին, թե չէ՝ մի մարդ ինչպես կարող է առու հանել, այն էլ այսքան խոր, առու չէ, ջրա՛նցք է, ջրա՛նցք»:

Զաղաքում տեսնում են, արդեն հասել է գետին: Մի քանի անգամ օգնություն առաջարկեցին, մերժեց, հայիոյացեց, վռնդեց: Ներեցին, սիրով նեցեին:

Յայկը չէր տեսնում, մինչեւ գետը մնացել էր մի կանգուն, փորում էր ու փորում: Արտաշատցիները վճռեցին չմիջամտել, թող լինի իր սրտով, ինքն է փորել, թող ինքն էլ վայելի արարման հաճույքը...

Արդ, վախը սրտում կանգնել է մի կտոր հողի առաջ, չի համարձակվում ձեռք տալ, վախենում է խելագարվել: Վախենում է այս բահից, այս առվից, քիչ հեռու խոխոջացող գետից, այս մազակալած,

վայրենակերպ մարդուց, որ ինքն է ու ինքը չէ... Սակայն գուր չէին անցել այս ամիսները: Նա առաջվա Յայկը չէ: Շատ է խորհել կյանքի մասին, գտել է իր տեղը կյանքում: Աշխատում է մինչև ուշ գիշեր, մի կտոր հաց է ուտում ու պառկում է ամպի հատակին, նայում է երկինք: Նա իր համար մի ամբողջ երկնակամար է հայտնաբերել. աստղեր... Աստղեր եղել են մինչ այդ, սակայն ուշք չի դարձրել, այս պահին հայտնագործել է իր համար երկինքը: Նրա հոգում իմաստավորվում է երկինքը, աստղերը: Ասես նրա մեջ հառնել է արիական քննախույզ քուրմի հոգին, որ երկինք է քննում...

Աստղերը կապել է իր կյանքի հետ, այսօրվա ու վաղվա հետ: Հասկացել է, որ նոր կյանք է սկսելու այս ամպից, այստեղ, այս ամպի

մեջ նա թողնելու է նախկին Յայկին, ամեն բանի համար անտարբեր Յայկին, որ մաս չուներ երկրի գործերից: Ամպից մեկ ուրիշ Յայկ է դուրս գալիս, այո՛, այո՛, մեկ ուրիշ, կամքով անկախ, համարձակ: Եվ այդ ամենը նա հասկանում է աղոտ... Չգում է ինչ-որ մեկի օգնությունը, ասես մեկը հուշում է նրան, այնքան համոզված է դրանում, որ ուզում է հարց տալ այդ «մեկին», որ կար ու չկար, նրան թվում էր, որ տեսնում է այնպիսի բաներ, որ կատարվել են շատ ուշատ տարիներ առաջ, երբ ինքը դեռ չէր ծնվել: Այնքան արտառոց էր այդ ամենը, որ գլուխը պտտվում էր... Նա չէր հասկանում, որ նրա համար սկսվել էր Հրաշատեսություն, այստեղից սկսվելու է նոր կյանքը: Նա ասես առաջ է ընկել ժամանակից, տեսնում էր պատերազմներ, իրեն էր տեսնում կռվի մեջ, զարմանք էր կտրում, իրեն էր տեսնում Յայոց զորավարներ կողքին, արքայի կողքին: Գլուխը թափ էր տալիս, որպեսզի չտեսնի այդ պատկերները, սակայն գիշերները այդ պատկերները կրկնվում են ավելի ու ավելի հաճախ, որպեսզի չտեսնի այդ ամենը երեխաների, կնոջ, հարեւանների անուններով աստղեր է ընտրել: Մի գիշեր զարմանալի բան կատարվեց, ինչու՞ զարմանալի, նա այնքան բաներ է տեսել, հարկ չկա զարմանալու, թերեւս խաբկանք էր, աստղերից մեկը տեղը փոխել էր: Սկզբում չհավատաց, ապա վախեցավ, քանզի արքայի աստղն էր: Կարծես իր համար դա կարող էր աղետ գուշակել, թե աղետ, թող արքան հոգ տանի իր ճակատագրի համար, ինքը գործ չունի, սակայն ասես այն «մեկը» հուշում էր, դու շատ ու շատ բաների համար պիտի պատասխան տաս, հոգսեր հոգաս:

«Ինչու՞ է կոշտը մուգ, չէ՛, թա՛ց է... Էն անտեր աստղն էլ տեղը փոխեց: Ախր մեկը լինի, ասի, ի՞նչ ես կանգնել երեխի պես, բա դու այրմարդ չե՞ս, ախր հրաշատեսության պահին դու հզոր զորական ես, իսկ արդ, վախենում ես վերցնել, թա՛ց է, թող թա՛ց լինի,- ճիգ արեց, վերցրեց, թա՛ց էր...»:

- Փա՛ռքդ շատ, Վահագն աստված, հասա է՛... Էն պոչատ սեւավորը վախեցնում էր, թե դեմ մի գնա աստծուն, իսկ ես հենց իսկ Յայոց աստվածների կամքն եմ կատարում, մեր հեթանոս աստվածների:

Վերցրեց լինզը, զարկեց դիմացի պատին, կրծքի բարձրության, լինզը ցցվեց հողի մեջ, կարծր էր հողը, ջուր չկար... Հուսահատությունից ծնկները ծավվեցին, նստեց գետնին: Հողը կարծր էր Աստծո սրտի պես: Գլուխն առավ ափերի մեջ:

- Դեռ հեռու եմ, ո՛չ, չեմ նայի, երդվել եմ,- հանկարծ պարանոցին թացություն զգաց, վեր նայեց, հայիոյեց ծիծեռնակներին, սակայն կաթիլներ զգաց ծոծրակին: Կտրուկ ետ նայեց, լինզի տակից ջուրը կաթիլ-կաթիլ հոսում էր, դեռ չհասած լինզի ծայրին, կաթում ցած: Հասել էր գետին, ուզեց լաց լինել, ամաչեց հզոր զորականից, որ տեսել էր հրաշատեսության պահին, որ ինքն էր... Ուզեց գոռալ, ձայնը դուրս չեկավ:

Այդ պահին արտաշատոցիները, մոռանալով Յայկի արգելքը, վազում էին դեպի առու: Հեռվից այդ մի կանգուն հողի շերտը չէր երեւում: Նրանց աչքերում գետը ուռճացել էր ամպի վրա, ուր որ է կփլվի:

Յայկը դուրս քաշեց լինզը, ջուրը բացված անցքից շիթով զարկեց դեմքին:

- Հասա, շնորհապարտ եմ, ով վիշապաքաղ Վահագն Աստված,- այլևս չէր ուզում լաց լինել, կանգնել էր հպարտ, ջուրը զարկում էր դեմքին, իսկ նա, հպարտ ինչպես աստվածացող արիական, կանգնել էր անսասան, կանգնել էր ճակատագրին դիմադարձ ու չէր սասանում...

- Յայկ, ոտքերիդ մեռնեմ, դու՛րս արի,- լսեց կնոջ ձայնը, երկու բահ կախեցին ամպի եզրից: Բռնեց բահերը, դուրս քաշեցին ամպից: Քիչ մնաց ընկեր գետը: Նայեց ապշահար: Ողջ քաղաքն էր հավաքվել ամպի մոտ:

- Հու՛յ տվեք,- գոռացին ու փլցրեցին մնացած հողի շերտը: Ջուրը պոկվեց խելագար թավով, բանտից ազատված բանտարկյալի պես նետվեց առաջ, գնաց այգիները: Մի քանի արտաշատոցիները իրենց զցեցին ջրի մեջ, հավաքվածների խրախուսական աղաղակների ուղեկցությամբ, հռհռալով, լողալով, գլորվելով, գնացին այգիները:

- Ապրե՛ս, Յայկ եղբայր, դու փրկեցիր մեր քաղաքը...

Յայկը ծնկեց գետի ու ամպի արդեն անհայտացած հողի եզրին, դեմքը դարձրեց Արարատներին.

... Այն «մեկը», հզոր զորականը կողքին էր, որ լինելու էր հետը ողջ կյանքում...

- Շնորհապարտ եմ, Մեծ հայ, մեծ նահապետ,- խաչ չքաշեց դեմքին, ձեռքերը կարկառել էր Մայր Արեւին...

Մի հայ մարդ արիական զարթոնքի դողով բռնված՝ իմաստավորվում էր արարումի իր իրավունքով...

Նազենիկը երկար սպասեց Յրանտին, սպասեց վճիռ դրած:

«Եթե սիրում է, թող ամուսնանա: Ես մի քանի ոսկի ունեմ ետ գցած, Յրանտն էլ ոսկի ձեռքեր ունի, կապրենք... Իսկ մի՞թե սա է սպասելիքը: Ինչպե՞ս կընդունի Երեմուկը մնալու պարագան: Չէ, Յրանտն այդքան չի մանրանա, չի կարող գրկել իրեն Երեմուկից, որ իր կյանքն է, միակ ուրախությունը: Ինքը կաքավիչ չէ, խաղարկու է: Քրիստոսի կրոնը ընդունելուց հետո կաքավելը արգելեցին: Կաքավիչները հեռացան Երեմուկից, շատերը ամուսնացան: Նայես, չես ճանաչի, գիրացել են, երեխաներ ծնել: Ու՞ր մնացին բարակիրան հասակը, ճոճկան իրանը, փոքրիկ, թրթռացող կրծքերը: Երազ էր, անցավ: Դարձել են արտաշատցի կերած-խմած, փայփայած կանայք: Երբ կաքագիչ էին, ի՞նչ թովչանք ունեին, այսօր լացո գալիս է... Նրանք իրենց մեղավոր-անմեղ անկումով հաստատում են այրմարդկանց իրավունքը՝ ինչպես ցանկանան, այդպիսին էլ տեսնեն իրենց կանանց... Սակայն կինը հարկ է հասկանա, հարկ է ամեն առավոտյան կաքավի, ինքն իր համար, որպեսզի չգիրանա, մնա գեղանի: Իսկ այրմարդիկ էլ ամեն երեկո շահաստանից տուն գալիս բեռնավորվում են,, որ հարեւաններն ասեն, թե՛ տեսեք ինչպես է ապրում: Նախկին կաքավիչները այնպիսի կերակուրներ են եփում, յուղը վրան պճաճացնելով, հետո էլ թե՛ գիրացել է: Իսկ ես զուր եմ դժգոհում, ես դեռ բարակիրան եմ, գեղանի: Երբ խաղարան եմ մտնում, այրմարդիկ համրանում են հեշտալից անրջանքից: Ես այդ ամենին հասել եմ ժուժկալությամբ: Ես գիտեմ շարժման նրբագեղությունը, նրա խորունկ գաղտնիքները... Իսկ եթե Յրանտը ի գորու չէ հասկանալու այս ամենը, դեռ չի հասել սրբազան նստարանին նստելու իրավունքին: Գիտեմ, կասեն ամուսնացել է վարձակի հետ, կչարախոսեն... օ՛, իմ աստվածուհի Անահիտ, փրկիր ինձ...»

- Ո՞վ է, Նայեց դռանը:

- Ես եմ, Նազեն, Յրանտը:

Նազենիկը բացեց դուռը, հագիվ խույս տվեց Յրանտի գրկից:

- Նազեն, այլեւս չեմ կարող: Բա՛վ է, գող-գող գամ, արի հարսանիք անենք:

- Համաձայն եմ, միայն անցնի Մեղեան, մինչեւ...

- Գլխիցդ հանիր Երեմուկը: Ուզում ես ծիծաղեն վրաս, ասեն վարձակ եմ առել,- հիմար չլինելով, հիմարություն ասաց երիտասարդը, խմած էր, ապա հասկանալով, որ վիրվաորել է Նազենիկին, կորցրեց գլուխը, փոխանակ ներում խնդրելու, ավելի խոսեց,- Հոռմները գնացել են, ինչպե՞ս եք խաղալու Մաղեան, բան դուրս չի գա: Դուք ի՞նչ, ձեր Մեղեան ի՞նչ...

- Ինչպես խաղացինք բաքոսուհիները, ինչպես խաղացինք մնացածները՝ Վանեի վարքը, կործանված տաճարի քրմուհիները: Այ, կխաղանք Մեղեան, դրանից հետո...

- Ձեր Երեմուկը, ա՛յ, Էստեղ է նստել,- Յրանտը ցույց տվեց կոկորդը:

- Երեմուկին վերջ չկա, նա իմ կյանքն է: Այն, ինչ աստվածային է, վերջ չի ունենա: Յրանտ, Երեմուկը մեր նախնյացից մնացած գեղեցկություն է, նրանց նվիրական սերը, պաշտել են Երեմուկը: Մայրս՝ Նանեն, ասում էր, որ Երեմուկներ եղել են Մեծ Հայքի բոլոր քաղաքներում:

- Դու ի՞նչ է, վարձակ ես մնալու: Մոռացե՞լ ես, կաքավիչները ամենքն էլ ամուսնացել են,- ավելի խորացրեց իրենց մեջ բացվող անդունդը:

- Հրա՛նտ, Հրա՛նտ, ի՞նչ ես խոսում, ես խաղարկու եմ, ոչ կաքավիչ: Ես խաղում եմ մարդկանց, որ մեզ հետ են կամ ապրել են մեզանից առաջ: Յրանտ, ես անկարող եմ թողնել Երեմուկը: Նա է իմ սերն ու կյանքը:

- Կին, կին, դու ինձ չես սիրում...

Նազենիկը լաց եղավ, լաց եղավ աղջնակի պես: Նա, որ հարյուրավոր մարդկանց էր ստիպում արցունք թափել, կամ ծիծաղեցնում՝ լաց եղավ:

Նազենիկը չէր վախենում կորցնել Յրանտին, դա էր զարմանք պատճառում: Խորհում էր. «Եթե կորստյան ցավ չեմ զգում, ասել է թե՛ չկա սեր կոչվածը»:

Երկար ժամանակ նստեցին իրար դիմաց, լռեցին, ասես նրանց միջեւ դագաղ էր դրված: Դրսում քամին էր շնկշնկում այգու ծառերի մեջ, զգլխիչ վարդաբույր էր ներս լցնում, սակայն նրանք չէին առնում բնության բույրերը: Նրանք լռել էին, փակել հոգու դռները...

Այս էլ որերորդ աղավնին զոհ գնաց Արամազդ աստծուն... Թագուհին դաշույնի սովոր շարժումով թքրեց աղավնու գլուխը, թռչունը թփրտաց, արյուն ցողեց աստծո արձանի ոտքերին: Արյունը քամվելու հետ կամաց-կամաց ձգված մկանները թուլացան: Թագուհին մի կող նստեց թռչունի մարմինը:

- Օ՛, Արամազդ, Հայոց աստվածների հայր, որ կայծակներ ես զարկում երկինքն ի վար, վճռում ես մարդկանց ճակատագրերը, պատերազմների ես մղում մարդկանց, նաեւ սեր ու տառապանք տալիս, փրկիր ինձ: Ես անկարող եմ այլեւս այսպես ապրել,- լաց եղավ աղջնակի պես,- Խոսրովի ձեռքի

հայումն իսկ ևողկանք է պատճառում ինձ: Ներիր, մեղանչել եմ քո առաջ, չեմ նվիրվել բազմին: Կուսությունս նվիրեցի Բակուրին: Սիրում եմ նրան: Գթա՛ ինձ, տե՛ր ամենագոր, - հայացքն ուղղեց արձանին, նշաններ փնտրեց աստծո դեմքին: Թվաց, թե արձանը շարժվեց, թե՞ խաբկանք էր, թվաց՝ աստված դժպտաց, թե՞ շարժվեց արձանը... Գոհ մնաց, քանզի արձանի ոտքերին ցողված արյունը մաքրվել էր, ցած էր թափվել: Ասել է թե՛ զոհը ընդունելի է: Որքան կուզեր հեթանոս թագուհիների օրինակով արջառներ մորթել տալ աստծո ոտքերի տակ, տաք արյունով մաքրել մեղքերը, նրանք, որ գործել էր եւ նրանք, որ դեռ պիտի գործեին: Որքան կցանկանար, որ պաշտամունքային ծեսին մասնակցեր Մեծ Հայքի ավագանին ու ինքը՝ Հայոց թագուհին, գոչեր:

- Օ՛, Արամագո, գերագույն աստված Հայոց, ընդունիր զոհերը քո պատվին ու կուրացրու կանացազգեստ Վրթանեսին, այդ օրպակաս ծերունուն, քանզի նա միտում է տեր ու տնօրեն դառնալ երկրում: Շանթահար արա Խոսրովին,- սառեց մեկեն,- աստված իմ, չե՞ որ մայր եմ, քանի կա Տիրանը, Բակուրը արքա չի կարող օծվել,- թվաց, թե գտավ ելքը,- հեռու վանիր նրան Հայաստան աշխարհից, այնքան հեռու, որ չտեսնի Հայոց սահմանները: Ես չեմ ցանկանում որդու մահը: Ո՛չ, ո՛չ, ես օրպակաս պառավ չեմ եւ ոչ կրքից խելագարված հարձ,- հանկարծ սարսռաց, այդ ամենն ասել էր բարձրաձայն: Նայեց չորսբլուրը, օթեւանում մենակ էր աստծո արձանի հետ:

«Իսկ եթե մենակ չե՞մ, թերեւս լրտեսում են: Կաթողիկոսը ամեն տեղ լրտեսներ ունի: Նպատակը կռապաշտներին հայտնաբերելն է, պատժելու կամ դարձի բերելու: Ես բարձրաձայն եմ խոսել, իսկ պալատում պատերը անցքեր, ականջներ ունեն: Եթե լսեն ինձ, վանք կուղարկեն լավագույն դեպքում...,- գլուխը թափ տվեց,- ո՛չ, հազար անգամ ո՛չ: Ես ի գորու եմ կռվելու իմ ու Բակուրի երջանկության համար»: Նետվեց հարեւան սենյակ, ոչ ոք չկար: Այնքան խռովված էր, չնկատեց վարագույրի կողքից երեւացող պատմուճանի դիպակը, որ դարանակալը չէր հասցրել ետ քաշել: Հավատացրեց իրեն, որ հանգստանում է, գնաց գաղտնասենյակ: Ավելի անհանգստացավ, տոթ էր բարձրանում կուրծքն ի վեր, քիչ էր մնում շնչահեղձ լինել: Հանգիստ չէր տալիս այն միտքը, որ իրեն հետեւում են, ինչ-որ մեկի հայացքն էր զգում իր վրա, ծանր շնչառությունը: Խեղդվում էր, խշորհելով, որ վաղուց են իրեն հետեւում, իսկ այսօր այնքան պարզ զգաց դա, որ կորցրեց ինքնատիրապետումը, սակայն կավային կին էր, ստիպեց իրեն զսպել:

Դուրս եկավ գաղտնասենյակից, բազմեց բազմականուն, ծափ զարկեց: Ներս մտան նաժիշտներից Գիսանեն, Գեղուհին ու Հռիփսիմեն:

Թագուհին հագիվ զսպեց իրեն, որ չհարցներ. «Ձեզանից ո՞վ է եղել այս սնեյակում»: Իսկ դա կարող էր զարմանք առաջացնել, քանզի ոչ ոք չգիտեր գաղտնասենյակի մասին, այդպես էր խորհում թագուհին:

- Տիրուհի, թույլ տուր խոսեմ,- ժպտաց Գիսանեն, սպասեց մինչեւ թագուհին նշան կտար: Իսկ սա այնքան էր հուզված, հագիվ գլխով արեց:

Նաժիշտի դեմքին շողոքորթ ժպիտ հայտնվեց:

- Տիրուհի, թույլ տուր խոսեմ,- ժպտաց Գիսանեն, սպասեց մինչեւ թագուհին նշան կտար: Իսկ սա այնքան էր հուզված, հագիվ գլխով արեց:

Նաժիշտի դեմքին շողոքորթ ժպիտ հայտնվեց:

- Տիրուհի, վաղը Երեւմունքում խաղալու են Հռոմաց վարքը՝ Մեղեան: Խաղալու է Նազենիկը:

- Ի՞նչ, այդ ռամկուհին պիտի փոխարինի մեծահամբավ Էդիպային:

- Տիրուհի, վեց ամիս է, ինչ հռոմեացիները հեռացել են: Երեւմունքում միայն մերոնք են խաղում:

Թագուհին վերջնականապես տիրապետեց իրեն:

- Նազենիկը գեղեցիկ աղջիկ է, արդյոք իր գորու է պատկերել Մեղեային: Հետո մերոնք այնքան կոպիտ են, այնքան աղքատ հագնված: Նրանք լավ կիսադան որեւէ զավեշտական խաղ ռամկների կյանքից: Ասում են «Վանեի կյանքը» լավ են խաղացել:

- Նազենիկը Էդիպայից նուրբ է: Նրանից գեղանի կին չկա քաղաքում,- նոր վերցրած նաժիշտն էր, դեռ հասու չէր, թե ինչ կարելի է ասել թագուհու ներկայությամբ: Հարկ է նրան զգուշացնել, որ թագուհին իրեն է համարում ամենագեղանի կինը Արտաշատում եւ ոչ միայն Արտաշատում:

- Գեղանի ասեցիր, 'ու՛, այդ ռամկուհին,- թագուհին խայթող հայացք գցեց նաժիշտի վրա,- նա իրեն խաղարկու է կարծում: Ինչպե՞ս կարելի է նրանց դնել մի նժարի վրա: Էդիպային Հռոմն է պաշտում: Մենք նրան այնպես վարձատրեցինք, որ կարող է հարյուր տարի անհոգ ապրել:

- Տիրուհի, չէի՞ր հրամայի օթոցներ ուղարկել Երեւմունք: Թե չե՞ս կամենա ներկա լինել մերոնց խաղին,- Գիսանեն էր:

- Ինչ կա որ,- ծիծաղեց թագուհին,- եթե խայտառակվեն, ի հեճուկս Արտաշատի խաժամուժի, փակել կտամ այդ անառականոցը:

Ամենքն էլ երկինք են նայում, ասես օրը ցերեկով պոչավոր աստղ է հայտնվել երկնքում: Ախր ի՞նչ են

գտել դատարկ երկնքում:

Նայում են արեւին, սա էլ իր համար առոք-փառոք գնում է երկնականարով: ուզում ես հազար անգամ նայիր, մեկ է՝ ընթացքը չի փոխի: Ասում են՝ մի քանի տարի սրանից առաջ արեւը խավարել է, փառք աստծո, այսօր այդպիսի բան չկա, սակայն արտաշատցիները արեւին են նայում: Տարեցները հիշում են՝ քրմերը գուժում էին արեւի խավարումները, իսկ սրանք, այս վեղարավորները...

Մեկը, որ առավոտից ուզում է մի հատիկ էջը վաճառել, արդեն կես գին է ուզում, աչքն էլ երկինք գցած շտապեցնում է գնորդին: Սա, մի տարոնցի անտեղյակ մարդ, սակարկում է ու սակարկում:

- Ա՛յ տնաշեն, առնելիքդ էջ չէ, ա՛ռ, գնա՛, կյանքս կերար:
- Էդ մեկը հասկացա, դու էն ասա՝ ի՞նչ եք ամենքդ էլ երկինք նայում:
- Է՛, էջ ես առնում, է՛ջ,- ծոր տվեց արտաշատցին,- Եսըր Երեւմունքի օր է:
- Չհասկացա, միտքդ պարզիր, Էդ ի՞նչ բան ա:
- Ա՛յ, ասենք դու մեռել ես...
- Վա՛հ, տնաշեն, բերանդ մարդավարի բաց արա:
- Ասենք մեռել ես ու քեզ Եսպես հասակով մեկ կնկանդ ու երեխեքիդ են ցույց տալիս, ողջ ու առողջ:
- Էդ հո կդիվոտեն:
- Հա՛, իրավունքը բռնն է, կդիվոտեն: Գինը տուր, էջս քեզ ընծա:
- Լավ մարդ ես, աստված վկա, կես գնով տվեցիր, մեկ էլ աստված երկար կյանք տա ասածդ Երեւմունքին, երեւում է լավ բան ա...

Միջօրեին շահաստանը մեկեն դատարկվեց: Օտար երկրներից եկած վաճառականները զարմացած նայում են արտաշատցիներին, իսկ սրանք բռնեցին Երեւմունքի ճամփան: ամեն ոք իր սիրած տեղն ուներ: Այնքան մարդ հավաքվեց, որ նստելու տեղ չմնաց քարե նստիչներին: Սպասում էին արքային ու թագուհուն: Հայացքները վարագույրներին էր, որի հետեւում մի անհայտ, հրաշքներով լի աշխարհ էր: Այստեղ, Երեւմունքում ամեն բան մոռացվում է՝ երեխաներ, կին ու հարեւան, պարտք ու պարտատեր, ամեն-ամեն բան մոռացվում է:

Խաղարանը մի բարձր քարե հարթակ է, կիսաբոլոր, կողքին երկու հարակից փոքրիկ ծածկ-տնակներ կան, դա էլ խաղարկուների համար է, Էնտեղ հագնվում են, կապում իրենց կոթուրները, դնում դիմակներ:

Մի խոսքով Երեւմունք է...

Հանկարծ հանդիսատեսները վեր թռան, թնդած Երեւմունքը:

- Կեցցեն թագավորն ու թագուհին:

Շունչ առան ու նորից.

- Կեցցե՛ գահաժառանգը:

Արքան ու թագուհին նստեցին իրենց օթոցներին:

Առաջին շարքերում մի քանի սեւ վեղարավորներ հայտնվեցին, կաթողիկոսի մարդիկ էին, եկել էին արգելելու կաքավելը, աստված մի արասցե, հանկարծ հանդգնեին... Ախր ինչու՞ են արգելում, ձեզ ի՞նչ վնաս են տալիս, ի՞նչ է քրմերը ձեզանից անիմա էին, որ չէին արգելում կաքավելը... Է՛, մենք ենք մեղավոր, մոռացանք մեր աստվածներին, նրանց հետ էլ՝ բազիսները, տաճարները, Երեւմունքը, Վարդավառը, երգն ու պարը, խաղն ու սերը...

Գահաժառանգ Տիրանը եկել էր Սաթենիկ իշխանուհու հետ: Տիրանուշը, դուստրը, նստել էր մոր մոտ, տկար էր, անտրամադիր:

Տիրանը մռայլ էր, անտրամադիր, քանզի կտրել էին որսից:

Պալատականները նստել էին ավագության կարգով, միայն Հայր Արտավազդն էր նստել հասարակ մարդկանց մեջ, նախարարի համար հարմարավետ օթոց էր դրված: Նրա սպիտակագարդ գլուխը երեւում էր բոլոր կողմերից:

- Թող սկսեն,- դժգոհ ասաց արքան, ինչպես խորհում էր՝ թողել էր պետական գործերը, մասնակից դարձել այս անօգուտ, ռամիկներին վայել զվաճրանքին: Մենեկապետն անցավ շարքերի միջով, գլուխը ներս խցկեց վարագույրի ճեղքից: Դեմքը փոխվեց մեկեն, ու՞ր մնաց սիրալիր ժպիտը, օձը թույն կներարկվեր նրանից, կարիճը թերեւս իրեն ամենաբարի էակը համարեր...

- Արքան սպասում է, խեղկատակներ, սկսեք:

Վարագույրը բացվեց դանդաղ, ծալք-ծալք: Խաղարանը ներկայացնում էր բարձրակամար, սյունազար օթեւան, ուր բազմականիներ էին դրված: Ծեր կին կար խաղարանում: Նրա դիմակը այնքան տգեղ էր, որ ակամայից խաղարկուին էլ այդպիսին էին պատկերացնում:

Ա՛խ, երանի Արգո նավը, որն հաջողակ

Միմպլիզայրի սեւ ժայռերն անցկացավ

Չի մոտենա Կողքիդական ափերին...

«Ինչու՞ լսեցի Տիրանուշին: Ի՞նչ գործ ունեմ սրանց Արգո նավի հետ: Արդ, այս վիուկը աստված չանի երգի կամ պարի: Ինչու՞ եկա: Ովքե՞ր են սրանք, այս երեխաները, հա՛, Մեդեա են խաղում: Հիշեցի,

Եղիպան Է խաղում: Ինչ որ Նազենիկ Է խաղալու: Ռամկուհուն տես, որքան Է հանդգնել: Ինչ օրի հասանք»...

Խաղարանում ինչ-որ հեռվից լսվեց.

Վա՛յ ինձ, ավաղ.

Ախ, որքան տարաբախտ եմ ու թշվառ.

Բյուր մեծագույն հեծեծանքի արժանի եմ ցավերն իմ...

Եվ դուք, եւ դուք խիստ չարաբախտ մոր գավակներ,

Գեթ կործանվեք, չքվեք բնավ դուք ձեր հոր հետ,

Գեթ խորտակվի, ավեր դառնա մեր տունը հիմքերից,

Թող չքանա, ոչնչանա եւ ամբողջ ընտանիքը:

Տիրանը ցնցվեց.

«Այս ձայնը լսել եմ, սակայն հուշեք ինձ, աստվածներ՛ր, որտե՞ղ, խարույկի մոտ արթնանալիս, երբ լսել եմ արթնացող արտույտի ճռվողյունը: Որտե՞ղ եմ լսել...»:

Մենք լսեցինք աղաղակներ: Մենք լսեցինք իրարոց...

«Դարձյալ այդ վիուկի ձայնն Է: Ու՛ր Է, որտե՞ղ Է նա: Օ՛, աստվածներ, մի՞թե մարդ արարածը այդչափ թովիչ ձայն կունենա, իսկ եթե ձայնի տերը տգեղի մեկն Է, քանզի աստվածները երկու երջանկություն մի մարմնի մեջ չեն արարում...»:

Չեւս արարիչ, եւ դու արեւի լույս...

Անկախ իրենից խոհերն ուրիշ հունով գնացին.

«Տեսես ի՞նչ կատմեն վեհափառին: Կասեն արքան, թագուհին ներկա էին Երեւմունքին,- պատկերացրեց վեհափառի գայրալից դեմքը, մեծ հաճույք զգաց, թափ տվեց գլուխը,- ես հորս պես չեմ նվաստանա հոգեւորների առաջ: Այպես սեղմեմ նրանց, որ հիշեն բազինների կործանման օրերը... Լավ Է ռամիկին հնար տամ ապրեն, գիտեմ, օգուտ կա նրանցից...»:

Դարձյալ նույն ձայնն էր, մոռանալով վեհափառին, լսեց.

Ոհ, դու Թերմես ամենագոր, դու Արտեմիս իշխանավոր,

Տեսեք, ինչպես եմ տանջվում ես, չար ամուսնուս հետ...

«Դե, երեւա՛: Ես կխելագարվեմ: Այս ձայնի տերը չի կարող վիուկ լինել: Ա՛յ, դարձյալ պառավն Է, չէ, լավ Է, ձայնը կտրեց, արդ, երգչախումբն Է...»:

Մենք լսեցինք հեծեծանքներ բազմահառաչ,

Ով Մեղեա տանջալից:

Վարագույրը դանդաղ փակվեց: Տիգրանը հոգնատանջ, ասես նժույգով տասը փարսախ սլացել էր քարերի միջով, ետ ընկավ օթոցի մեջ, նայեց արքային, սա խոսում էր թագուհու հետ: Մայրն անտարբեր էր: Տիրանը նկատել էր, որ իշխանաժողովից հետո մայրը կատաղել է, լավ է չմոտենաս՝ կխայթի: Նայեց կնոջը, Սաթենիկը անփոփոխ ժպիտը դեմքին, շոյում էր Տիրանուշի վարսերը: Կնոջ դեմքին երանություն կար:

«Օ՛, աստվածներ՛ր, գոնե մի օր տրտմի, ժպտա: Մի՞թե մի անգամ չի մթնդելու լաց լինի գոնե մի անգամ... Կին կա լացով Է սպանում ամուսնուն, սա էլ ժպտալով: Թու՛, ասես դրախտում արածացող ոչխար լինի»:

- Ինչու՞ եմ ուշանում սրանք,- դարձավ Վրույրին:

- Տեր իմ, զգեստափոխվում եմ:

«Աղբանոցից պալատ սողոսկած ճիճու: Գահին հասա թե չէ, սրան առաջին հերթին կճգմեմ: Շատ եմ սրա նմանները բազմացել պալատում: Ուր նայում ես, միայն քծնանք Է: Մի օր իջա արիեստավորաց թաղ, սրանք ռամիկ եմ, սակայն գիտեն իրենց արժեքը, չեն քծնում: Հա՛, բացվեց», - ուզեց ասել դժոխաց դուռը, սակայն լռեց:

Ահա դուրս եկա ես իմ սենյակից...

«Օ՛, աստվածներ իս,- տնքաց Տիրանը,- ահա թե ինչպիսին ես, Նազենի՛կ, մի՞թե սա խաբկանք չէ... Ես տեսել եմ այս կնոջը: Այո՛, այո՛, տեսել, ստույգ տեղը չեմ հիշում, լեռներու՛մ, թե՞ առվակի մեջ, խայտացող կարմրապուտիկ ձկների հետ: Տեսել եմ եղնիկի կերպ մտած, իսկ նա ողջ կյանքում խույս Է տալիս ինձանից: Թե՞ այն աղջիկն Է, որ երագում ջուր ցողեց դեմքիս, ծիծաղեց ու փախավ: Իսկ ես անհույս փնտրում եմ, երբ նա կողքիս Է եղել...»:

Իսկ այդ պահին խաղարանում այլ անձինք էին հայտնվել: Մեկը արքայի էր նմանվել: Նա էր խոսում.

Քեզ եմ ասում, մռայլապես, ո՛վ վիուկ:

Դու Մեղեա, որ գայրագին սպառնում ես քո ամուսնուն,

Պատվիրում եմ, որ իմ բոլոր երկրներից դու որդոց հետ

Շուտ հեռանաս դեպի աքսոր, այդ Է իմ վճիռը հատուկ...

«Օ՛, ինչպե՞ս կարելի է այդպիսի էակի,- Տիրանը այստեղ Մեղեային ու Նազենիկին նույնացրեց,- ինչպե՞ս կարելի է աքսորել»:

Դրանից հետո Մեղեան ծնկաչոք աղերսում էր խղճալ իրեն, չաքսորել: Կերոնդը անհողող էր, վճիռը անսասան: Նա միայն մի օր զիջեց ու հեռացավ: Տիրանը տարվեց խաղարանում կատարվածով, սկսեց լսել, սակայն բավական էր Ռեդեան խոսեր, իսկույն ամեն բան մոռանում էր:

Հանկարծ անսպասելի միտք խայթեց նրան. «Կարո՞ղ էր այսպես ինքը լքել կնոջն ու զավակներին, թեկուզ Նազենիկի համար...»:

Այդ միտքը իր անլուծելիությամբ այնպես տիրեց նրան, որ սկզբում թվաց հրեշավոր, ապա հնարավոր, քիչ անց՝ դարձյալ անընդունելի: Չէ՞ որ մեր առհավական հայարիների գերագույն եռությունը սերն էր: Սիրում էին ինքնամոռաց, ամեն բան զոհում հանուն սիրո, հանուն աստվածների ու կնոջ սիրո, հաճախ նույնացնում էին աստվածներին կնոջը, երիցս իրավացի էին նրանք, քանզի սիրո պահին մարդ աստվածանում է: Այո՛, մեր հեթանոս աստվածները մարդու մեջ Մարդ-Աստծուն էին տեսնում, աստվածանալու տիեզերական իրավունքը, իսկ սրանք, այս սեւավորները... ձեռքը թափ տվեց:

Կողքից դիտողը կգարմանար՝ տեսնելով նրա դեմքի փոփոխությունները: Սակայն մարդիկ կլանված էին, հափշտակությամբ դիտում էին խաղարանը: Կար մեկը, որ առանց դեմքից ժպիտը վար քաշելու, կողքանց հետեւում էր Տիրանին: Իսկ սա, տարված խաղարանով, չէր տեսնում Սաթենիկ իշխանուհու հայացքը, որ անթարթ հետեւում էր նրան: Եթե Տիրանը հանկարծ տեսներ կնոջ հայացքը, կապշեր, ժպտացող աչքերը թեպետ կարողանում էին թաքցնել մեկ-մեկ խորքում բռնկվող կրակները:

Այդ պահին խոսեց Մեղեան.

Արդյոք հրով տունն հրկիզեմ հարսանեկան.

Թե լուռ, գաղտնի ես ներս խուժեմ անդ ննջարան, դեպի մահիճն

Եվ սրածայր սուրը վարսեմ սրտերի մեջ երկուսի,

Բայց ինձ համար անշուշտ կա անհամար մի հանգամանք.

Ինձ կսպանեն ու կծաղրեն իմ թշնամիք:

Միջոցն է, այդ թունավորել նրանց թույնով:

Տիրանը արվեստի հզոր գրկում էր: Հուզմունքից խեղդվում էր: Մեկ նրա համար Մեղեան Նազենիկն էր, մեկ՝ օտար կին: Ահա Մեղեայի ամուսինը՝ Յագոնը, կրքից խելագար, ցանկանում էր ամուսնանալ Կրոնտի դստեր հետ եւ մեղադրում էր կնոջը: Մեղեայի հորդորները ամուսնուն իր գիրկը վերադարձնելու համար անցնում են ապարդյուն:

Անցնում են ահա երկրորդ, երրորդ պատկերները, անգամ ընդմիջման ժամանակ լռություն էր տիրում: Մարդիկ լրջացել են, ասես Մեղեայի փոխարեն իրենք են կանվել երկընտրանքի առաջ: Այստեղ էր, որ Տիրանը հասկացավ արվեստի ուժը, խաղարկուները կախարդել էին մարդկանց, կտրել այսօրականից, սեփական հոգսերից, հաղորդակից դարձրել ուրիշ մարդկանց վշտերին, մտերիմ ու հարազատ դարձրել կյանքն ապրած, գնացած, հուշ դարձած մարդկանց ճակատագրերին, ստիպել էին մոռանալ ամեն, ամեն բան: Եվ արժեր այս մի պահի մոռացման համար գալ այստեղ, ամեն ոք իրեն մասնակից էր ու պաասխանատու եղեայի ճակատագրին, աննկատ ու անիմա մաքրվում էր սեփական մեղքերից, թերեւս այս պահի ողջ խորհուրդը սա էր:

Դարձյալ բացվում է վարագույրը: Խաղարան է մտնում աթենական թագավոր Էգեուրսը: Այս տեսարանից Տիրանն այնքան հասկացավ, որ Նազենիկը, ո՛չ, ո՛չ Մեղեան, ապաստան է խնդրում, խոստանալով թագավորի համար զավակներ ծնել: Թագավորը խոստանում է, երդվում է արեւով:

Տիրանի ուշքն ու միտքը Նազենիկն էր: Այն փոփոխությունը, որ կատարվել է նրա հետ, ապշեցուցիչ է: Մեղեա-Նազենիկը թափանցիկ շորեր է հագել, այնպես են փոքրիկ կրծքերը թրթռում, որ Տիրանը գլխապտույտ զգաց: Պատրաստ էր երդվել, որ Նազենիկը կույս-անարատ աղջիկ է:

Աստվածներ անգուրթ , ինչու՞ չէի գալիս այստեղ, ինչու՞ չէի տեսել նրան: Ես կարող էի աշխարհի ամենագեղեցիկ կինն ունենալ:

Խոսում է Մեղեան.

Ես կուղարկեմ ստրկուհի ծառաներիցս մեկն ու մեկին,

Եվ կխնդրեմ Յագոնը շուտ գա ինձ մոտ,

Իսկ երբ գա, ես նենգաբար ու շողոքորթ,

Մեղմ ու զիջող կձեւանամ, խոսքեր կասեմ հաճելի,

Կհամոզեմ, որ մեր միջեւ, իմ կարծիքով այսուհետ

Չկա բնավ ոչ դժգոհություն, ոչ այլ կարծիք տարածայն,

Որ հիրավի ամուսնությունն արքայական դստրիկի հետ

Հանուն որի նա ինձ թողեց, հորդորիչ ու բնական,

Ապա նրան ես կխնդրեմ, որ իմ որդոց թողնեն այստեղ,

Բայց դրանով չեմ ուզում զավակներիս հիրավի

Թողնել երկրում թշնամական, ուր թշնամիք իմ ոխերիմ,
Պիտի վիսացած արհամարհեն եւ դառնապես ծաղրեն նրանց:
Այլ միտք ունեմ նրանց ձեռքով նենգորեն ու չարաղետ
Ոչնչացնել ու կործանել թագավորիկի դստրիկին:
Նրանց ձեռքով հարսնացուին եւ կուղարկեմ ընծաներ,
Մի ոսկեղեն շքեղ ձեռագործ, մի բորբ զգեստ
Իմ մանուկները ընծաները հանձնելիս, կաղերսեն,
Որ գեթ իրենք ազատ մասն աքսորից:

Երբ զարդարանքներն ու հագուստները կույսը վերցնի ու հագնի
Կկործանվի նա տանջալից եւ ամեն ոք, ով կդիպչի,
Քանզի ծծված են նվերները թույնով տգեղ ու մահացու:
Այստեղ, ավա՛ղ, ես կարող եմ դադար տալ իմ պատմվածքին
Սարսափում եմ ես այս գործից, որ տակավին
Վճռված է ինձ կատարել, պիտի սպանեմ ես իմ որդոց,
Եվ չի փրկի նրանց մահից ոչ մի ուժ...

Այս բառերից սարսափելի ոռնոց բարձրացավ Երեւմունքում: Արքայական թիկնապահները տեգերը
զարկեցին վահաններին, հանդիսատեսներին ուշքի բերելու համար: Մարդիկ դժկամորեն լռեցին,
սակայն նստեցին լարված: Ախր սա Երեւմունք է, անցած-գնացած դեպքեր մարդկանց կյանքից: Ի՞նչ
ենք խելքներս թռցրել: Սրանք մեր Նազենիկն են, Վանեն, Վարդուհին, Ոստանիկը: Ախր
դիմակավորվել են ու մենք պատրաստ ենք պատառ-պատառ անել նրանց, ինչու՞, ո՞ր մեղքերի համար:

Կրկին լռություն իջավ, ծանր լռություն, որ լինում է մահվան գուժ լսելիս: Խաղարկուները բնավ չէին
վաքխեցել: Նրանք թերեւս սպասում էին նմանօրինակ բռնկման, գոհ էին, քանզի սա վարձն էր իրենց
խաղի, վարպետության, երկար ու երկար օրեր տքնանքի: Նազենիկը շարունակեց.

Երբ լիովին ոչնչացնեմ սերունդն ամբողջ Յագոնի,
Կհեռանամ այս երկրից, որտեղ ավա՛ղ, դժբախտաբար
Ես իմ ձեռքով կտորեցի իմ սիրատենչ զավակներին...

Մնացածը Տիրանի համար անցավ մղձավանջի մեջ, Մեդեայի կողմից զավակների սպանությունը,
Նորահարսի գալարումները: Նրա ականջներում մնացին Յագոնի խոսքերը. «Չեւս հայր, արդյոք լսու՞մ
ես դու, ինչպես, ավա՛ղ, մերժեց նա ինձ

Ինչպես եմ տանջվում դաժան որդեսպանից այս անիծված,
Այս ատելի ու գազազած մայր առյուծից...»

- Ես սիրեցի նրան,- շշնջաց Տիրանը:

Պատմությունը դեռ չէր կնքել նրան երկարակյաց անունով, նա դեռ չէր փառաբանել
Պարսկաստանը իր հաղթանակներով, դեռ չէր խայտառակել ուխտադրությամբ... Դեռ այդ ամենը
պիտի լիներ, սակայն նա, արդ, հզոր ու դաժան տիրակալ է: Նա Պարսկաստանի փառքն ու պատիվը,
նրա խիղճն ու ապագան, աստղերի ընկերն ու երկրի տիրակալը՝ արյաց արքայից արքա է կոչում իրեն
Շապուհը: Օրե՞ն է, որ պարսիկները սեփականել են արիական կոչվելու առանջությունը, ստույգ է՝
արիները արարվել են Յայոց լեռնաշխարհում, տարածվել են աշխարհով մեկ: Նրանք իրենց
մարտակառքերով, երկաթյա սրերով աշխարհին տարել են իրենց առաքինությունները, որ կրոնն է
նաեւ արիական, տիեզերածին Արեւ Աստծո կրոնը...

Ստույգ է, Մագդաոն Շապուհի գահակալության սկզբում մի քանի անհաջողություններ ուղարկեց,
թերեւս փորձելու համար, սակայն, փառք աստծո, ամեն բան կագրավորվեց: Կամ մի հանգամանք՝
Մծբինի դաշնադրությունը, որ ամեն պահ հազարապետը հիշեցնում է: Այս էլ քանի հազարապետ է
փոխել եւ դեռ քանիսին կփոխի, երբ խոսում են պատերազմից, հիշում են Մծբինը:

Այդ անիծյալ քաղաքը, որտեղից պարսից առյուծները հեռացան կախազուլիս, զիջելով Արմենիայի
պես հարուստ երկրի հողերի մեծ մասը Յոմին: Ի՞նչ կարող ես անել, Յոմը այդ պահին հզոր էր, իսկ,
արդ, պահը նպաստավոր է Երանի համար: Մի՞թե ետ չպիտի խլենք Արմենիայի հողերը: Արմենիան
առեւտուր է անում աշխարհի շատ ու շատ երկրների հետ: Առիթ է պետք հարձակվելու համար,
սակայն դեռ հզոր է Յոմը: Կոստանդ կայսրը կարող է մեծ բանակ հանել: Յետաքրծքի բաներ են
կատարվում կայսրությունում: Կայսրը, հզորացնելով Բյուզանդիոն փոքրիկ քաղաքը,
Կոստանդինուպոլիս կոչելով, հռոմեական հարստություններն այնտեղ է տեղափոխում:
Մարգարեություն կլինի, եթե այդ փոքրիկ քաղաքը մեծանալով բաժանվի Յոմից, այ յուղոտ պատառ:
Չէ, հավերժ չի Յոմի հզորությունը: Մեկ էլ տեսար՝ մի տեղից ճաք տվեց: Թերեւս այն սկսվի
Բյուզանդիոնից ու այդ անիծյալ հերաներից, որ նոր աստված արարեցին, դա է պատճառը, որ

արմենները մեզանից հեռացան: Չմեղանչեմ ճշմարտության առաջ, մոգերն ասում են, որ հայերը մեր արիական երեց եղբայրներն են, իսկ, արդ, խաբվել են հաջյալի կողմից...

Ինչ ռամիկներ էին, իսկ, արդ, թեպետ մեզ դա ձեռնտու է... Ո՛չ, նրանք դարձյալ մեզ հետ պիտի լինեն... Նրանք հավատարիմ դաշնակիցներ են, իսկ այսօր թեքվում են Յոմի կողմը:

Նայեց գահի առաջ կանգնած հազարապետին:

- Ի՞նչ լուրեր Արմենիայից, ինչպե՞ս են հավատքի գործերը, հավատալով հավատում են, թե հարկադրաբար, ստիպողական... Կա՞ն դժգոհներ կրոնից, արքայի՞ց, կաթողիկոսի՞ց: Խոսիր, հազարապետ, հարկ է, որ խելացի մտքեր լինեն գլխումդ, թե պաշտոնիդ արժանի գլուխ է:

- Օ՛, տեր իմաստուն, որ կարող ես մթազնել աշխարհի բոլոր իմաստասերներին: Ի՞նչ կարող եմ ես, նվաստս հուշել քեզ: Ես կարող եմ միայն զեկուցել խուզարկուների բերած լուրերը: Արմենիայում խաղաղ է, արքան վճռել է քաղաք կառուցել Դվն բլուրի վրա, որ մի քանի փարսախսի վրա է Արտաշատից:

- Հասու չեմ, չէ որ Արտաշատը անառիկ ու մեծահարուստ քաղաք է, էլ ի՞նչ է ակնկալում Խոսրովը:

- Տեր իմ, Մազդան պատժել է արմեններին,- մեջ ընկավ մոգպետը,- փոխել է գետի հունը: Արմենների մայր քաղաքը մնացել է ճահիճներին գերի...

- Այդպիսի պատիժ միայն Մազդան կարող է մոգոնել: Դա քիչ է արմեններին, դավաճանեցին իրենց Նախնյաց հիշատակին, քիչ էր պատիժը, Մազդան պիտի Մասիսները շուռ տար գլխներին: Տեսել եմ, հսկա լեռ է: Հա՛, ո՞վ կա մեր հավատարիմներից,- զայրացավ, ռունգերը բաց ու խուփ եղան ներքին զսպումից,- մենք, արդ, չենք կարող խախտել անիծյալ Մծբինը, իսկ եթե արմենները ըմբոստանան գահի դեմ, մենք կարող ենք զորքեր մտցնել Արմենիա: Խորհեք այս պարագայի վրա,- ոտքի ելավ, սկսեց քայլել գահասրահում: Նրա միջահասակ, թեթևակի գիրանալ սկսող մարմինը դեռ զորեղ էր: Չուր չէր ամեն օր կատաղի նժույգով մի քանի փարսախս սլանում լեռներում, սրամարտում էր: Որսորդությունը Շապուհին կայտառ էր պահում: Նա դեռ ինքն էր վարում իր բանակները: Նրա զորեղ ձայնից դղրդում էին մարտի դաշտերը: Չէ՛, միտք չունի ծերանալու Պարսկաստանի հզոր տերը:

- Արքայից, կրոնից, դժգոհներ կլինեն: Ինչու՞ միևնույն օրս չեք հոտոտել, գտել,- զայրացավ արքայից արքան, վրա գնաց հազարապետին, սա կուչ եկավ, սակայն նա գիտեր, որքան չէր հարվածելու, սակայն կծկվեց, քանզի գիտեր, որ հզորության հաստատումը դիմացինի վախտ մեջ է,- ի՞նչ կա այդ անիծյալ երկրում: Ո՞վ կարող է դեմ ելնել արքային: Խոսրովը ստրկամիտ մարդ է, նա պատրաստ է լիզել կայսրի գարշապարը, սակայն մի մոռացեք, որ արմենների մեջ կան հպարտ Նախարարներ, զորապետներ, որոնք կարող են ըմբոստանալ Արմենիայի ստորացված այս վիճակի դեմ: Արիմնի զավակ, մի՞թե այս ամենը պարզելու համար խելք չունես: Մեկին թագ խոստացեք, մյուսին՝ հողեր, մյուսին՝ հողեր, մեկ ուրիշին՝ գեղանի կին: Փնտրեք, գտեք, շատ կան այդպիսի մարդիկ, Արմենիայում: Հարկ է Արմենիան հանել Յոմի թաթի տակից: Բա՛վ է, մի քիչ զոռ տվեք գլուխներիդ:

- Թույլ տուր, ով արեգնափայլ տեր:

- Կարճ կապիր, ասա ասելիքդ: Ինչե՞ր ես արել Արմենիայում: Ի՞նչ ուժեր ես գրավել մեր կողմը, ու՞մ ես հեռացրել Յոմից:

- Բակուր բղեշխը դժգոհ է արքայից, քրիստոնյա է միայն առերես, եթե թագ խոստանանք...

- Ի՞նչ մարդ է, կարող է հետայսու մեզ դավել...

- Կարող է, տեր իմ: Հպարտ է, արքային ատում է, պատճառը դեռ չենք պարզել: Գոռոզ է, իրեն բարձր է դասում ամենքից, անգամ արքայից: Արքա է ուզում դառնալ:

- Իրավունք է, թե կարողանա,- կտրուկ ասաց արքայից արքան, մի պահ լռեց,- մենք կօգնենք: Ամեն իշխան այդ երկրում իրեն արքա է կարծում: Ամեն տեղ էլ նույնն է, միայն կան արքաներ, որ կարողանում են սանձահարել այդ իշխաններին: Խոսրովը բաց է թողել սանձերը:

- Արմենները բնույթով հպարտ մարդիկ են...

Արքայից արքան բարձրացրեց ձեռքը՝

- Արմենների հպարտությունը գալիս է նրանց Նախնյաց փառքից: Մենք այդ մասին գիտենք, նրանք մեր հզոր աջակցությանն են արժանացել, արքաներից շատերը պարթև են եղել: Նրանց արքաները Երանում երկրորդ գահին են նստել,- ձեռքով արեց,- շարունակիր:

- Տեր մեր իմաստուն, որ այդքան լավ գիտես մեր հարեաններին, արքային սատարում է կաթողիկոսը: Արքան առանց նրա քայլ չի անում: Արդ երկրում քաղաք են կառուցում, անտառներ են տնկում...

- Անտա՞ռ, ասացիր

: Դա ի՞նչ նոր բան է, հազարապետ:

- Խոսրով արքան անտառներ է տնկում, հետո էլ երեկարե կբազմացնեն որսի համար:

- Խելացի գործ է ձեռնարկել Խոսրովը: Անտառներից մեզ վնաս չկա, եթե զորքեր չի ավելացնում, ոչինչ, թող զբաղվի մանկական խաղերով, վատ չէ:

Հազարապետն ու մոգպետը չհասկացան արքան գովաբանում է Արմենիայի արքային, թե՛ ծաղրում:

- Նայեք, հոտոտեք, փնտրեք իշխաններ, որ իրարից հողեր են խլել, իրահրեք իրար դեմ, մեր անունից գահեր խոստացեք: Թող ըմբոստանան արքայի դեմ, թող դավեն իրար: Թող մրցեն մեր բարի վերաբերմունքին արժանանալու համար, Արմենիայի արքա դառնալու համար: Մենք դեռ չենք կարող խախտել Մծբինը, սակայն գալիս է պահը: Մենք ոտնատակ կտանք այն, կավերենք Արմենիան, Վրաստանն ու Ադվանը: Մեզ կհպատակեցնենք լեռնականներին: Չենք թողնի, որ երկրները մասն Զոմի թաթի տակ,- նայց մոգպետին, ատրուշանի ծխից սեւացած դեմքին, ծիծաղեց մտքում, ուզեց թքել դեմքին, դաստառնակով սրբել: Ուզում են տեսնել մոգպետի դեմքի իսկական գույնը,- գտիր այնպիսի իշխաններ, որ հավատարիմ են մնացել հայոց հին աստվածներին: Մի մոռացեք այս պարզ ճշմարտությունը, ով հավատարիմ է հայոց աստվածներին՝ մեր եղբայրն է... Ինչ սովորեցնեմ ձեզ, երկուսդ էլ օձ եք, խայթեցեք, խառնեք Արմենիան: Այն դարձյալ մերը պիտի լինի...

Եթե Նազենիկը մնացածների նման լիներ, ամեն բան կընթանար հին, արագ մոռացվող սիրային արկածի պես, սակայն նա հասու էր, որ Նազենիկը Նազենիկ է, նրան չես շփոթի մեկ այլ կնոջ հետ, չես վարվի հաճույքի համար... Վճռեց տեսնել Նազենիկին: Նա ի գորու չէր խորհելու հետեւանքների մասին: Թիկնապահները պատշաճ հեռավորություն պահած, գալիս էին հետեւից: Ամենքն էլ հասարակ թիկնոցներով էին:

Տիրանը երկու օր առաջ նույն ճանապարհով եկել էր, Թոռնանը՝ թիկնապահը, ցույց էր տվել Նազենիկի տունը: Մտքերի հետ է Տիրանը, հազար ու մի պատճառ է փնտրում գիշերային այցն արդարացնելու համար: Թակեց դուռը:

- Ո՞վ է այս տարածամիս,- լսվեց Նազենիկի ձայնը:

Տիրանը հարազատ դարձած ձայնի հնչյուններից մի պահ կարկամեց: Նույն ձայնն էր, մի փոքր երգեցիկ, նուրբ ու մեղմ: Տիրանը բազմաթիվ կանայք էր տեսել, գիտեր լավերին, գիտեր նաեւ նրանց, ում մոտ գիշերով են գնում, գողուհի, գնում են սեփական ստվերը ոտնելով: «Ո՞վ է Նազենիկը, ռամկուհի: հետո՞ ինչ, որ շենք ու շնորհք ունի, իսկ ես երկրի ապագա արքան եմ: Չէ՛, խելացի է, որ եկել է գիշերով, հարկ չկա, որ առավոտյան ողջ քաղաքը իմանա իր այցի մասին: Իսկ ի՞նչ ասի Նազենիկին, ասի, որ եկել է սեր մուրալու: Ախր ինքը գահաժառանգ է, մարդ, որի հայացքից իշխանուհիները շառագունում են, պատրաստ են իրենց գիրկը բացել նրա առաջ, սակայն սա Նազենիկն է՝ Մեղեան, կին, որ գերել է ողջ քաղաքը: Նա, որ մի ակնթարթում կարող է դառնալ թագուհի, ապա նաժիշտ կամ կին-մարդասպան, կամ աստվածուհի: Նազենիկը խաղարկու է, սակայն ոչ ծախու կին: Ասում են ոսկերիչ Զրանտը սիրում է նրան, պահանջ է դրել հեռանալու Երեւմունքից, աղջիկը մերժել է, բաժանվել են: Այսօր նրան սեր է առաջարկում գահաժառանգը: Սպասի՛ր, որպես ի՞նչ: Ես քրիստոնյա եմ,- ցնցվեց,- այլեւս ի՞նչ քրիստոնյա, երբ շնանալ եմ ուզում նրա հետ, թու՛, ինչ զգվելի բառ են հնարել հոգեւորները, իսկ ո՞վ ասաց, թե քրիստոնյա եմ: Ես հավատարիմ եմ իմ աստվածներին: Նրանք են ինձ բազում մարտերում փրկել, հզորացրել բազուկս թշնամիների վրա: Եթե հեթանոս լինեի, կարող էի... Սակայն ես կին ունեմ, երեխաներ: Ասել է թե երկրորդ կին չեմ կարող առնել: Իսկ բռնանալ, ոչ, նա Նազենիկն է: Ես չեմ կարող բռնանալ, բռնի տիրել: Թու՛, ի՞նչ հաճույք վայրագությունից: Ես ցանկանում եմ, որ նա սիրի ինձ, ինչպես ես նրան...»:

- Անունս Վռամ է, Վասպուրականից եմ, մոլորվել եմ քաղաքում, տեղ տվեք գիշերելու:

- Վռամ եղբայր, ես միայնակ կին եմ, քեզ չեմ կարող ընդունել հարկիս տակ: Բախիր հարեւանների դռները կամ գնա իջեւանատուն, չես մոլորվի, նախ գնա ձախ, ապա կթեքվես աջ...

Թվում էր, թե ամեն բան ասված է, սակայն գահաժառանգը իջել էր իր դիրքից, հարկավ, ծանր էր այդ քայլը, զիջելը նվաստացուցիչ: Նա արեց այն, ինչ հետո իրեն էլ զարմացրեց:

- Ես գահաժառանգ Տիրանն եմ, Նազենիկ, բաց արա դուռը:

Դռան հետեւում թույլ ճիչ լսվեց, լռություն իջավ: Վերջ, դուռը չի բացվի, ու գահաժառանգը ստորացված կգնա պալատ, սակայն կատարվեց անսպասելին: Դուռը բացվեց անաղմուկ:

- Ներս հրամայի՛ր, տե՛ր իմ,- ասաց Նազենիկը, ճանապարհ տվեց,- արժանի չեմ այսպիսի պատվի, մեծապատիվ հյուրի, եւ ոչ պատրաստ, ներող եղիր:

Տիրանը ապշեց տանը տիրող աղքատությունից, մաքրությունից: Գահաժառանգի ճոխությանը սովոր աչքերը շողվել էին, նա չէր կարող սպասել, այսպիսի աղքատություն տեսնել:

- Եվ այստե՞ղ ապրում է Արտաշատի պարծանք Նազենի՞կը: Ես կհրամայեմ քեզ համար տուն կառուցել, ծառա կուղարկեմ: Զարկ է, որ շքեղ ապրես...

- Եվ դրա համար ի՞նչ պիտի անեմ...

Նազենիկի տունը սառն էր, հայացքը՝ արհամարհական: Տիրանը շնչահեղձ եղավ: Չհասկացավ, որն էր վիրավորական, խոսքե՞րը, թե կնոջ պահվածքը:

«Մի՞թե այս ես եմ, երկրի գահաժառանգը: Մի՞թե ես, որ արիական ասպետ եմ համարում ինձ, այսչափ պիտի նվաստանամ: Ինչպե՞ս կարելի է...»:

- Տեր իմ, ես գոհ եմ իմ վիճակից: Տանը միայն լինում եմ գիշերները: Իմ կյանքը անցնում է երեւմունքում: Ես ապրում եմ մարդկանց ուրախացնելու համար:

- Սակայն քեզ զարդեր են պետք թագուհի խաղալու համար:

- Ես զարդեր ունեմ, ստույգ է, պղնձից են, հեռվից ամեն բան էլ թանկարժեք է թվում, շլացնում է կեղծ փայլով: Ամեն բան հեռվից խաբուսիկ է... Նաեւ մարդը, երբ մոտենում ես, ճանաչում, տեսնում ես, թե որքան անկատար է: Ներող եղիր, տեր իմ, մի՞թե քաղաքում խոսում են, որ պոռնիկ եմ:

Տիրանը ցնցվեց:

- Զեզ ոչ ոք չի ամբաստանում: Ես, ես չգիտեմ ինչու եմ եկել,- անկեղծորեն ասաց Տիրանը,- ես մարտում չեմ վարանում, առաջինն եմ մարտի նետվում թշնամու վրա, դա գիտեն երկրում: Ես կին ու հասուն զավակներ ունեմ: Հարցնում ես, ինչու՞ եմ եկել: Ինչու է գահաժառանգը եկել ռամկուհու տուն եւ մի՞թե ստորացուցիչ չէ ինձ համար, քանզի վաղը կասեն՝ գահաժառանգը ռամկուհի սիրուհի ունի, թեպետ մեր նախնիք սերը գերագույն երջանկություն էին համարում:

- Այո՛, կխոսեն, սակայն ես չեմ դառնա քո սիրուհին: Ես ու Հրանտը պիտի ամուսնանայինք,- Նազենիկը կախեց գլուխը: Հանկարծ պահանջ զգաց սիրտը բացել այս խեղճացած գահաժառանգի առաջ,- Հրանտը պահանջ դրեց թողնել երեւմունքը, մենք բաժանվեցինք...

Որքան էլ Նազենիկը մատնված լիներ տարակուսանքի, անգամ վախի, չէր, չէր կարող չնկատել գահաժառանգի այրական գեղեցկությունը, չէր կարող չզարմանալ գահաժառանգին չսազող համեստության վրա:

«Ինչու՞ է եկել, չէ որ կարող էր պալատ հրավիրել: Ես չէի կարող մերժել: Ինչու՞ է այսչափ համեստ պահում իրեն, չէ որ տարբեր բաներ են խոսում նրա մասին: Նա երկրի ապագա արքան է...»:

Դառը խոհեր էին տիրել նաեւ Տիրանին: Նստել էր աթոռակին, ինքն իր քայլից զարմացած, վիրավորած: Այն, որ Նազենիկը գեղեցիկ է, դեռ չի նշանակում, որ Մեծ Հայքի գահաժառանգը պիտի ծնկի գա նրա առաջ... Այլեւս ինչ գահաժառանգ, երբ պատանու պես կմկմում է, հիմարացած տեսք ունի, թերեւս Նազենիկը մտքում ծիծաղում է, խղճում է նաեւ,- խորհածից զայրացավ,- ի՞նչ, խղճա ռամկուհին, Արշակունյաց գահաժառանգի՞ն, լինելու բան չէ, ես, ես... Դա միայն մի պահ էր, երբ նայեց Նազենիկին, երբ հայացքները հանդիպեցին, այլ բան խորհեց:

- Ես կարող էի հրամայել քեզ պալատ բերեն, ես կարող եմ...

- Այո՛, տեր իմ, դու կարող ես ամեն բան, նաեւ բռնանալ կամքիս վրա, քանզի անպաշտպան կին եմ, սակայն ստիպել սիրել չես կարող:

Տիրանը նորից մռայլվեց:

- Ես քեզ սիրեցի, երբ տեսա խաղարանում: Ես քեզ տեսել եմ բազմաթիվ կանանց մեջ, փնտրել եմ, չգտնելով կատաղել եմ արար աշխարհի դեմ, իսկ դու կողքիս ես եղել: Իցիվ ավելի վաղ հանդիպեինք... գլուխը կախեց,- ես կյանքում առաջին անգամ եմ սիրում... Երբ գալիս էի այստեղ, խորհեցի, որ դու կհամաձայնես դառնալ սիրուհիս, ապա մերժեցի այդ միտքը, ցանկացա, որ լինես անհողդողդ: Զավ լիցի, թող վիրավորվի իմ այրական ու արքայական ինքնասիրությունը: Ես կհեռանամ, սակայն խոստանալ, որ այլեւս չեմ գա, չեմ կարող, ի գորու չեմ: Ես քեզ սիրեցի...

Սպարապետի խոնարհման մեջ այնքան պարզ վեհություն կար, որ արքան ցանկացավ բարձրանալ տեղից նույնպես խոնարհվել, զսպեց իրեն, միայն գլուխ տվեց: Նա մեծ համարում ուներ սպարապետի մասին, մի մարդու, որ կռվել է հոր ժամանակներից սկսած: Նա անմնացորդ նվիրված է գահին, այդ մասին կասկած չունի: Արքան սպարապետին ավելի է հավատում, քան իրեն, քանզի գիտե, որ սպարապետը տարիներով լեցուն, ապրած ու հազար ճակատամարտ տված, նվիրված է գահին, նվիրված է անմնացորդ, ինչպես կարող է նվիրվել հայարիական ասպետը, նահապետը: Համոզված է, սպարապետը երբեք չի լքի իրեն: Նրան սիրում է որդիական սիրով ու չի թաքցնում իր սերը: Արքան հարազատ հորից, Մեծն Տրդատից հայրական սեր չի տեսել: Հայրը խիստ էր բնույթով, որդուն իրենից հեռու էր պահում, թերեւս այդպես էր Արշակունյաց թագավորների ու գահաժառանգների կարգը, ինչեւիցե, մեծացել էր առանց հայրական սիրո: Թերեւս հայրը խորհում էր, որ որդուն սրում են իր դեմ, որ փսփսում են ականջին, որ «բա՛վ է, ինչ Տրդատը թագավորի: Իսկ եթե նա ցանկացել է հոր մահը: Խոսքով արքան միշտ խուսափել է այդ մասին խորհելուց, իսկ, արդ, հասուն տարիքում խորհում է, չի կարող ժխտել, խորհել է հոր մահվան մասին, գահին տիրելու մասին եւ այդ ամենը պահել է հոգում... Այդպես էլ չհասկացավ, թե ինչու է այդ մասին խորհում, անցած-գնացած մեղքերի մասին...

Հիշեց ինչու էր հրավիրել սպարապետին: Հազարապետը ծեր էր, գլուխ չի հանում գործերից:

Արդ, վճռել է գուգազի գործն էլ հանձնարարել սպարապետին: Մտքով էլ չի անցնում, որ սպարապետը կարող է հրաժարվել, քանզի սպարապետին վայել գործ չէ: Նա կառչում է այն մտքից, որ սպարապետը ասել է իշխանաժողովին. «Այսքան մարդ մի տեղ հավաքելով, հարկ եղած դեպքում կարող ենք գնեքի կոչել...»: Նորից հիշելով այդ խոսքերը, ուրախացավ:

- Տեր Մամիկոնեից, գիտեմ՝ տանջանքը շատ է, նաեւ դժվար սպարապետական գործերդ, սակայն մենք այլ ելք չունենք, քո ձեռքն ենք տալիս գուգազի գործը: Անտառտնկման գործը ձախողել են, խանդակներ չեն փորում,- արքան մականը դրեց ծնկներին, սեղմեց երկու ձեռքով:

Սպարապետը տեսավ, ինչպես արքայի ձեռքերի մատնահողերը սպիտակեցին, հասկացավ, արքան զայրացել է, ասելիքը դեռ չի ավարտել:

- Աղձնյաց աշխարհից ոչ մի տնկի չեն ուղարկել, թերանում են անհարկի Գուգարաց տերը, Սյունեցին... Ստույգ տեղեղկություններ կան հազարապետի մոտ: Նրա մարդիկ, հարկավ, կանցնեն քո հրամանի տակ: Զեզ իրավունք մեր անունից՝ պատճել թերացողներին, ավելացնելով տերունական հարկերը: Խնդրանքս է՝ գործից հասկացող մարդիկ գտնել Այրարատում, հակառակ պարագայում՝ գործը տեղից չի շարժվի:

- Հոգվույս պարտք, տեր արքա,- խոնարհվեց սպարապետը:

Արքան զարմացավ, թեպետ մերժում չէր սպասում, սակայն դյուրին գործ չէր սպարապետին ոչ «զորական» գործ հանձնարարել: Ուրախացավ:

- Դու մեզ անկեղծորեն ուրախացրից, տեր Մամիկոնեից,- արքան անկեղծ զրույցի կարիք զգաց այնպիսի բաների մասին, որոնց մասին այլ պայմաններում թերեւս չխոսեր:

Նրա առաջ կանգնած էր Մեծ Հայքի սպարապետը, որին պատմություն կոչվող մեծությունը առաքել էր իրեն սատարելու, իր մեծագործություններին աջակցելու:

- Տեր Մամիկոնեից, մենք թագավորում ենք խաղաղության մեջ, զի կռվի պատրաստ զորքեր ես պահում սահմանների վրա, դրանից գատ զսպիչ հանգամանք է Մծբինը, Հռոմն ու Պարսկաստանը իրար լրտեսելով, իրար դավելով... մի պահ լռեց,- Աստված մի արասցե, միավորվեն ու խժռեն մեզ,- գլուխը թափ տվեց, ասես չէր ցանկանում, սակայն մի ներքին մղում հարկադրում էր խոսել,- ամեն արքա ցանկանում է հետք թողնել պատմության մեջ եւ այս ամենը ոչ մեծամտությունից, այլ իրավունքից: Դա նաեւ պարտականություն է պատմության առաջ: Մեծն Տրդատը եւ Գրիգոր Լուսավորիչը անմահացան իրենց մեծագործություններով: Նրանք ժողովրդին Տիրոջ կրոնին բերեցին: Ստույգ է, այդ ամենը արեցին նաեւ բռնի, սակայն ի՞նչ կարելուր է այդ պարագան, քանզի ժամանակը սպիտողական էր,- մեղմ ժպտաց, խոսեց ավելի մտերիմ տոնով,- Տեր Մամիկոնեից, ականջալուր եմ, դու երանելի ծնողիս հետ ես եղել այդ օրերին, նաեւ մասնակից այդ անօրինակ մեծագործություններին, որոնք ի ցավ մեջ արյունով են ցողված: Դաժան են եղել ժամանակները... Աստծո ու Որդու համար կռիվ ելած հերոսներից քչերն են մնացել: Անցյալը ծածկվում է պատմության ու մոռացման փոշով... Հայրս թերեւս չէր ցանկացել, որ ես՝ տեսնեի այդ սարսափները: Դու մասնակից ես այդ կռիվներին, անկեղծ եղիր: մեզ հետ,- սպասեց, շունչը քաշեց,- Արդյոք չէ՞ս ավստում կատարվածի համար: Ձեր հոգիներում ինչ-որ տեղ,- տեսնելով սպարապետի զարմացած հայացքը, գլուխը կախեց,- հարկավ, մենք միայն քեզ ու Հոր հետ ենք խոսում այդ դեպքերի մասին: Մեկ-մեկ ցանկանում եմ խորհել ձեր փոխարեն, չեմ հասկանում ինչպես եք նայում եկեղեցիներին, խաչին մեր սուրբ... Չէ՞ որ դուք գիտեք ստույգ թիվը զոհերի, կարծյոք, անմեղ զոհերի: Ի՞նչ խորհե՞նք մենք՝ այսօր ապրողներս, սուրբ Գրիգորի ու հորս մասին: Մենք անկեղծ ենք, սպարապետ, դու էլ անկեղծ եղիր:

Սպարապետի դեմքին ոչ մի մկան չշարժվեց, դա բնավ չէր նշանակում, որ հոգում կռիվ չսկսվեց՝ զոհերի, կործանված բազիլների, հոյակերտ տաճարի, գրի ու մատյանների ծաղկած, հոգեհարազատ... Ինչի՞ համար, օրե՞ն էր, որ իր արցունքախառն հուշերը պատմեր արքային: Ինչպես կարելի է զգացածն ու ապրածը պատմել: Այն, ինչ հոգում է, արտաբերելիս կիսեղաթյուրովի: Հոգին ինքն իր մեջ հրաշք է, կատարելություն, լեզվին միայն թոթովանք է հասնում, անկատար ու մեղկ: Արքան այդ ամենը մեծագործություն է համարում, սակայն այն ժամանակ այլ կերպ էր ինչում... Մենք կործանում էինք իրարից արցունք թաքցնելով, պատերազմ էր, վայրագություն, արյան արբեցում... Եվ այդ ամենը անհեթեթություն էր, իսկ, արդ, այդ ամենը մեծագործություն... Զրմական դասը դեմ ելավ նոր աստվածությանը: Դա պատերազմ էր հոգու նորացման, այդ նորացման մեջ բացվող կործանման տանող ճանապարհի, որ մենք չգիտակցելով գնացինք, նորերը, հասու չեն հասկանալու կատարվածն ու գալիքը... Տեր արքա, դու չես կարող ստիպել ինձ անկեղծության, զի չես ասում ինչ կա հոգուդ մեջ, դարձյալ լեզուդ է, որ այլակերպում է ասելիքդ, իսկ հոգիդ ճշում է. «Արդարացի՞ էինք մենք՝ հայերս, որ կործանեցինք մեր հայ աստվածների բազիլները ու ծնկեցինք օտար աստծո առաջ: Ահա հարցերի հարցը այսօր, վաղը, հավիտյանս հափվտենից... Դու հարց ես տալիս արիական ասպետիս, որի համար գերագույն գոյը հայոց գահն է՝ լավ, թե վատ, վա՛հ ու պետություն՝, որն է նաեւ ապրելու, արժանավայել ապրելու կովանը... Դու քաջություն չունեցար այդ հարցը տալու, ինչու՞ ես ինձանից անկեղծություն պահանջում: Զեզ ի՞նչ, թե ես ինչ ունեմ հին ու նոր աստվածների արանքում: Չէ՛, տե՛ր արքա, դու չես կարող հոգիս պեղել, հասու չես հասկանալու...»

- Տեր արքա, ես միայն Տարևո հողերում կործանված բազիլների մասին կպատմեմ, զի նրանք իմ սեփական հողերում են եւ ես՝ կործանման մասնակից ու ականատես,- սպարապետի հայացքը մթնեց, հոնքը կեռվեց աչքի վրա, դառն քմծիծաղ գծագրվեց դեմքին:

Արքան հասկացավ, անկեղծ չլինելով, վիրավորել էր սպարապետին, սակայն ետ կանգնել չէր

ցանկանում, չէր ցանկանում կանգնեցնել սպարապետին:

- Մեր միացյալ գունդը գլխավոր

ում էր Տրդատ Մեծ արքան, երանելի հայրդ: Մենք Գրիգոր Լուսավորչի հետ մտանք Տարևոս հողը, դեմ առանք Գիսանե ու դեմետր աստվածների մեհյաններին: Մեր դեմ ելավ Մեծ քրմապետ Արծանը, մի վեհ ու անձնագոհ մարդ, որդու՝ Դեմետրի հետ: Նրանք, Կուսում գտնվող զորքերը դարանակալ թաքցրեցին այգիներում, իսկ իրենք, վերցնելով չորս հարյուր մարդ, բարձրացան լեռը, որ գտնվում է Կուսառի դիմաց: Մնացին այնտեղ, մինչև այլ վայրերից սատարելու գային քրմական զորքերը: Մեր զորքերը հաջորդ օրը անցնում էին լեռան ստորոտով, սուրբ Գրիգորը իր հետ վերցրել էր մի փոքր զորագունդ, երեք հարյուր հոգի: Մենք մոտեցանք անհոգ ու ապահով երթով, մոտեցանք բլրի գագաթին: Արծանն ու Դեմետրը առաջ գալով հնչեցրին փողերն ու հարձակվեցին մեզ վրա: Հարձակումը հանկարծակի էր, մենք վտանգվեցինք, կարող էին գերել Գրիգոր սրբին: Այդ պատճառով Մոկաց իշխանը ուղեկցեց Գրիգորին, իջան սարից, տեղացիները կամեցան բռնել նրանց, այդ ժամանակ Գրիգորը տիրոջ մասունքները թաքցրեց մի աղբյուրի մոտ, գյուղի դիմաց, նշան արեց: Ապա նժույզները չափ զգած գնացին Ողական: Երբ տեղ հասան, նրանց կրկնակոխ հետևող Կուսառի մարդիկ պաշարեցին ամրոցը: Վիճակը օրհասական դարձավ: Ես, որպես գաղտնուղիներին քաջատեղյակ, դուրս եկա ամրոցից, գնացի Անգեղտան տիրոջ մոտ: Նա անհապաղ չորս հազար ընտիր սուսերամարտիկներ ուղարկեց: Երեք օրում գրավեցինք բազմաթիվ գյուղեր ու բերդեր:

Մեր իշխանները միացյալ զորքերով բարձրացան բլրի գագաթը, տեսան, որ թշնամին ունի չորս հարյուր մարդ, անմիջապես հարձակվեցին, սակայն հայ իշխանները սկսեցին նահանջել, այդ պահին առաջացավ Արծան քրմապետը, նախատեց իշխաններին, ասելով.

- Առաջ եկեք, հավատը կորցրածներ, հայրենի աստվածներին մոռացողներ եւ բարեփոխ Գիսանեի թշնամիներ, չգիտե՞ք, այսօր Մեծ Գիսանեն կռվի է դուրս եկել ձեր դեմ, մատնելով ձեզ մեր ձեռքը:

Նրան պատասխան տվեց Արծրունյաց տերը.

- Եվ դու, որ խրոխտանում ես մեզ վրա, եթե աստվածների համար ես մարտնչում, սուտ է, իսկ եթե երկրի, բոլորովին անմիտ, քանզի այստեղ են Անգեղտան, Սյունյաց տան իշխաններն ու այլ երեւելի պատվավոր մարդիկ, որոնց դու ճանաչում ես,- իսկ Դեմետրը՝ Արծանի որդին, ասաց.

- Լսե՛ք ինձ, հայ իշխաններ, այս քառասուն տարի է, որ ծառայում ենք մեր մեծ աստվածներին եւ հայտնի է նրանց զորությունը, գիտենք, մեհյանների պաշտոնյաների համար նրանք էլ են մարտնչում: Այս կռվում մենք չենք կարող, սակայն լավ է մեռնել մեր աստվածների համար, քան տեսնել ձեր կողմից ապականված: Դրա համար ատեցի կյանքս ու սիրեցի մահը: Իսկ դու, Անգեղտան իշխանն ես, առաջ արի մենամարտենք ես ու դու:

Սպարապետը շունչը ետ բերեց, զգացվում էր, որ տաժանելի դժվար էր հիշողության բեռը:

Արքան լսում էր շունչը պահած: Այդ ամենը նրան թվում էր լավ հորինված հեքիաթ, սակայն պատմում էր ականատեսն ու մասնակիցը, չհավատալ չէր կարող: Նմանօրինակ մի պատում լսել էր հայր Արտավազդից, սակայն նա այս ճակատամարտին չէր մասնակցել, քանզի վիրավոր պառկած էր եղել Ողականում:

- Հնում հայարիական-ասպետական կարգ կար՝ ընդունելի Հայաստան աշխարհում: Հաճախ կռվի էին ելնում զորավարները, անձամբ մենամարտելով: Թերեւս աստվածների մատն էր խառը, զի Արծանի մեջ աճապարանքը հաղթեց զորականի խելամտությանը ու նա տեգով հարվածեց հակառակորդի ազդրին, նրան նժույզից վար բերելու համար, սակայն իշխանն էլ պակաս ռազմիկ չէր:

- Իմացի՛ր, ով Արծան, որ պիտի արձանանաս այսօր, այստեղ,- այս ասելով սրով զարկեց Արծանի պարանոցին, վայր զցեց նրան... Ընկավ մի մարդ, մեծ քրմապետ Արծանը, մի մարդ, մի օժտված էր տիեզերական հրաշատեսությամբ՝ արիականաց ընտրյալների մենաշնորհը, մարդ, որ տեսնում էր անցյալը, գիտեր ու տեսնում էր ապագան: Արծան քրմապետը դիցամերձ էր, կարողանում էր հոգով տեղափոխվել ժամանակի ու տարածության մեջ, հռչակված իմաստասեր էր Հայաստան աշխարհում, մարդ, որ կռվելու պահին գիտեր, որ հասյալ է իր մահվան պահը, գիտեր ինչէ սպասում հայ ազգին...

- Սպասի՛ր, տեր Մամիկոնեից, ի՞նչ հրաշատեսության մասին ես խոսում: Մենք այդ մասին քիչ բան ենք լսել, պարզ իր այս պարագան:

Սպարապետը նայեց անթաքույց հանդիմանությամբ:

- Տեր արքա, դու պիտի լսած լինես, որ հայարիները կարողանում էին մտովի տեղափոխվել ժամանակի մեջ, տեսնել այն ամենը, ինչ եղել էր մեզանից առաջ, նաեւ այն, ինչ պիտի կատարվի մեջ հետ... Դա հրաշատեսություն է, որ հայ աստվածներն օժտում էին ընտրյալներին: Այդպիսի ընտրյալ էր Մեծն քրմապետ Արծանը...

- Ների՛ր, տեր Մամիկոնեից, շարունակիր պատումդ, մնացածների մասին մեկ այլ անգամ կգրուցենք, անչափ հետաքրքիր է, իսկ մենք անիմա ենք այդ ամենին:

- Քրմական զորքերը ետ քաշվեցին: Այնժամ քարեր զցեցին Արծանի վրա, այն բլրացավ: Այդ տեղը անվանվեց Արծան:

Մինչ մենք կռվում էինք, վիշապ քաղաքից հասավ քրմական զորքը: Նրանց միացան Պարխուրի ու

Մեղտի մարդիկ, եկան նաեւ Զաշտյանքից: Ամենքն էլ միասին կազմեցին հինգ հազար չորս հարյուր հիսուն մարդ:

Քրմական գորքերը միացյալ ճնշմամբ կարողացան Զայոց գորքերին փախուստի մատնել, քել գյուղի մոտ, այդ պահին էլ դուրս թափվեցին դարանամուտ գորքերն ու արքանեցին արքայական զինվորներին, սկսեցին անխնա կոտորել: Անգեղտան տերը վճռեց փրկել վիճակը քրմական գորքերի վրա հարձակվել թիկունքից, այդ նպատակով դուրս եկավ մարտի դաշտից ու բարձրացավ բլուր, սակայն նրա շարժումը նկատեց քրմապետի որդին՝ Դեմետրը, հետեւեց նրան: Բլրի գագաթին իրար հետ ճակատեցին, սակայն իջնող երեկուն փրկեց վիճակը, գորքերը ետ քաշվեցին, իսկ առավուտ կռվի վայր հասան հայոց գորքերը: Օգնական գորքեր ստացան նաեւ քրմերը, յոթ հարյուր զինվոր եկավ Տիգրանակերտից:

Այսպիսով քրմական գորքերի թիվը հասավ վեց հազար ինն հարյուր քառասուն հոգու, հայոց իշխաններին՝ ութ հազար հոգու:

Սկզբում արքայական գորքերը նեղում էին քրմերին, սակայն Զաշտենից իշխանը իր ութ հարյուր զինվորներով անցավ քրմերի կողմը:

Այդ ժամանակ Սյունյաց իշխանը դիմեց նրան ու ասաց.

- Այ՛ գայլի ձագ, հիշեցիր հորդ վարքը եւ նորից գիշակերության դարձար,- հակառակորդը պարտք չմնաց:

- Այ՛ արծվի ձագ, որ թեւերովդ ես պարծենում, եթե ընկնես թակարդիս մեջ, ես ցույց կտամ իմ գորությունը:

Սյունյաց իշխանը զարկեց նրան մուրճով, ապա հետամուտ եղավ այնքան, մինչեւ հասավ նրան իննանկյուն վայրում, կտրեց գլուխը, ասելով.

- Կտեսնես քեզ անգղները եւ կիմանան, որ արծիվն է զարկել նապաստակին,- եւ ետ դարձան:

Այդ տեղը կոչվում է Արծվիք:

Այդ պահին Անգեղտան տերը սպանեց Դեմետրին, գլուխը կտրեց ու դրեց մախաղի մեջ: Սարսափելի կոտորած եղավ դրանից հետո, քրմերից սպանվեց հազար երեսուն մարդ: Սյունյաց տերը հնչեցրեց, զի անտեղի էր այլեւս կռիվը, երկուստեք իջեցրեցին զենքերը...

Սպարապետը հոգնած լռեց, ասես նորից էր մասնակցել կռվին: Նա ոչ մի խոսք չասաց իր մասնակցության մասին, հարկ էլ չկար, արքան այդ մասին լսել էր այր Արտավազդից:

Լռել էր նաեւ արքան: Նրա առաջ այդ կռիվներն էին իրենց անհեթեթությամբ, անմեղ զոհերով: Կռվի տեղում արձան է կանգնեցված, որի վրա գրված է. «Այս առաջին պատերազմն էր, գլխավոր քրմապետ Արձանն այստեղ է թաղված: Նրա հետ թաղված են հազար աներեւույթ հոգի: Այս պատերազմը տեղի ունեցավ հանուն Գիսանեի, Գիսանեի կուռքերի ու Քրիստոսի...»:

Երկու աստվածները մարդկանց հոգիներին տիրելու համար կռվում էին իրար հետ ու զոհվում էին մարդիկ, սա առաջին պատերազմն էր հանուն հավատքի, սակայն ոչ վերջինը...

- Այս պատերազմում մենք վկայեցինք նոր աստվածներին պաշտելու մեր իրավունքը, սակայն ի՞նչ գնով... ներող եղիր, տեր արքա, ասեմ եւ ոչ երկնչեմ՝ ծանր մոռացման գնով, ասում ենք մոռացան, արդյո՞ք մոռացել ենք... Տե՛ր արքա, շատ եմ զարկել ու զարկվել, շատ կռիվների եմ մասնակցել, այդ օրերին Մեծ Զայքում կործանվեցինք քսանհինգի չափ բազիններ, վերջինը եղավ Աշտիշատի, Եռամեծար, Եռաստված Աշտիշատը,- սպարապետը խոր շունչ քաշեց, ավելի ստույգ հոգոց հանեց,- կործանվեցին Վահվեհանյան, Ոսկեմայր-Ոսկեծղի Անահիտի ու Աստղիկի բազինները: Դրանք բարձրախոյակ, բարձրասյուն տաճարներ էին, այնպիսիք, որպիսիք թերեւս մարդու միտքը այլեւս չիղանա, մարդկային ձեռքը չգորի կերտել...

Երկար տարիների խոհերը, զայրույթն ու մաղձը դուրս թափվեցին:

Դեպի Գառնի սայլերի երկար շարան է գալիս: Սայլերի վրա առաջին հայացքից անսովոր բեռներ են: Եթե ուշադիր նայես Մեծ Զայքի ճանապարհին, այդպիսի շատ սայլեր կտեսնես:

Անսովոր է բեռը այսօրվա համար, սակայն օրեր անց սովորական է դառնալու հայոց ճանապարհներին: Բեռները կաղնու տարեկան տունկիներ են, դրել են թաց ավազով լքված կողովների մեջ: Տնկիները այնքան շատ են, որ կողովներով են հաշվում: Սայլերի քանակը անցնում է հիսունից, ուղարկել է Գուգարաց բղեշխ Միհրանը: Արմանք, զարմանք են կտրել մարդիկ, չուղարկեց-չուղարկեց ու խնդրեմ՝ հիսուն սայլ: Ամեն սայլի հետ էլ երկու մարդ է դրել: Մեկը խաշար անելու, մյուսը՝ սայլավոր: Շուտով պարզվեց պատճառը, արքան սպարապետին է կարգել գործի գլուխ, այդ ամենն իմացել է Միհրան բղեշխն ու մնացածը՝ խնդրեմ: Արքան կարգադրել է թերացողներին պատճել:

Ու Այրարատ աշխարհի ձգվեցին սայլերի քարավաններ: Ասես ողջ երկիրը տեղահան եղավ, ժողովուրդը բռնկվեց անտառատնկման տենդով: Ամենքն էլ այդ մասին են խոսում, ամեն ոք իր ծառն

Ե ուզում ունենալ այդ անտառներում: Արքայի հանճարեղ մտահղացումը դարձավ ժողովրդյան գործ:

Այս ի՞նչ է կատարվում Հայաստան աշխարհում, գարմանում են հարեւանները, ժողովրդի մի կեսը քաղաք է կառուցում, մյուսը՝ անտառ տնկում: Ա՛յ քեզ խոսրով արքա, այ քեզ «Կոտակ», ահա արքային վայել մեծագործություն: Կեցցե՛ս, խոսրով արքա... Սակայն մենք ենք մեղավոր, հանգիստ ենք թողել, հայերը այդպիսի ժողովուրդ են, հանգիստ մնացին՝ կկառուցեն. բերդ, տուն ու քաղաք... Խելքները խորհում են, որ հայերը սրանով էլ կապրեն, կգոյատևեն, հիմարները՝ չարախոսում են, թող կառուցեն, մենք էլ կկործանենք...

Այդ արարման ոգին Վաչե սպարապետն է: Նա, որ մարտում կարողանում է ոգևորել մարդկանց, իր հետեւից կռվի տանել, արդ, դարձել է շինարար ու տենդային մտքով վարակել է ամենքին:

Ա՛յ, որ ելնես Գեղամա ծովակից, գաս Այրարատ աշխարհ, կշշմես, դեմ կառնես անտառների, ստույգ է, դեռ տունկիներ են շարե-շար, սակայն անտառներ են տեսքով, մատղաշ անտառներ:

Արդեն երկար շարքերով տունկիներ ձգվում են Գառնիից Դվին, ապա Մեծամոր: Չէ, իրոք խենթացել են հայերը, տարվել մեծագործությամբ, որ աստվածներին է վայել... Հայերը խորհրդավոր ժպտում են իրար. «Այդ մեր մեջ հառնել են հայարիները... Մենք հավատարիմ ենք նրանց պատգամին՝ կառուցել, շենացնել երկիրը...»:

Շատ քաղաքներ են կառուցել հայոց արքաները, սակայն այս մեկը՝ Դվինը, նման չէ մնացածներին ոչ միայն կառուցման թավոփ, այլև կառուցման ելած մարդկանց միաձույլ կամքով: Սկզբում գուգազ էին հանում, հարկադիր աշխատանքի, բռնի կերպով, հանկարծ հրաշք կատարվեց, ու՞մ կամքով, թերևս աստվածների: Այո՛, այո՛, հայ աստվածների: Սա, այս նոր աստվածը կյանքում ոչինչ չի կառուցել, չի աշխատել... Հայ աստվածները ասես ետ են եկել, փույթ չէ, որ պատմության մեջ կգրվի՝ արքան քաղաք կառուցեց, անտառներ տնկեց, իսկ չէ՞ որ կա տողատակի գիրը, որ գրում է անմահ ժողովուրդն հայոց... Աստված մի արասցե, այս խոհերի մասին իմանան հոգեւորները, այս ամենն ի վերուստ է թելադրված, եւ պիտի լիներ, այս թելադրանքը Արեւի՝ տիեզերածին Աստծո կամքով է:

Անտառներին անուն ո՞վ կնքեց, այդպես էլ անհայտ մնաց: Այն, որ ձգվում էր Դվինից Արտաշատի կողմերը, դեպի Տիկնուհի, կոչվեց Տաճար Մայրի, մյուսը, դեպի Գառնի, կոչվեց Խոսրովակերտ:

Այդ գործի գլուխը սպարապետն է: Նա գարմանալի հատկություն ունի, կարողանում է իրեն անհրաժեշտ մարդիկ գտնել: Նա իրեն արժանի մի տասնյակ օգնականներ է գտել, վարակել է սրանց անտառատնկման տենդով: Նրանք, այդ խենթ ու խելառ մարդիկ, ոչինչ չունեն քաղաքից ու անտառներից գատ: Հա՛յկ, հա՛յկ, որ կամովին գնացիր սպարապետի մոտ, ասացիր, որ այգեպան ես, հասկանում ես կաղնու լեզուն, կարող ես աճեցնել, եթե քեզ մի փոքրիկ հատված տան: Սակայն դու չգիտեիր, որ քո առվի՝ հրաշք առվի համբավը հասել էր սպարապետին եւ դու ոչ թե մի անտառահատված ստացար, այլ կարգվեցիր անտառների վերակացուների վերակացու:

Չարմանալի է, չբողոքեցիր, մի՞թե հասու չէիր գործի դժվարությանը, մի՞թե ի գորու ես կարգադրելու հազարավոր մարդկանց: Վերջ ի վերջո սա պատասխանատվություն է երկրի, արքայի, սպարապետի առաջ:

Հոգին, որ տառապել էր առու հանելիս, տանջվել էր հող ու քարի հետ կռիվ տալիս, ասաց. «Գնա՛, անտառ տնկիր»: Եվ այն «մեկը,- դարձյալ հայտնվեց կողքին՝ անտեսանելի ամենքին, եւ շշնջաց. «Գնա»: Ո՞վ կհավատա, որ արքան անտառ տնկեց, դա քո քեզ նմանների գործն է, իսկ որ արքան միտք հղացավ, փա՛ռք նրան: Գնա ու մի երկնչիր, ճակատագիրը քեզ առվից հանեց մեծ ու մեծ գործերի համար: Այո, դարձյալ այն «մեկն» էր կանգնել իր թիկունքին, հորդորում էր, հրամայում՝ գնա, սա քո աստեղային ժամն է, դու մեր ընտրյալն ես, մենք քեզ կսատարենք, մի երկնչիր, քեզ ծանր ու փառապանծ գործեր են սպասում...

Եվ որտեղի՞ց նրա մեջ այսքան ուժ ու եռանդ, ախր սա առու չէ, որ մենակ հող կրծելով փորես ու առաջ գնաս: Սրանք մարդիկ են, որ պիտի աչքդ վրայները պահես, աշխատեցնես: Ա՛յ, բռնել է մեկին, որ թերացել է գործի մեջ:

- Աստված չորացնի բազուկներդ, ինչպես չորացրել ես այս տունկիները: Ախր սա մեր զավակների համար է: Կաղնին հավիտենականության ծառ է, ամոթ քեզ, որ քո ամոթը տալիս ես ծառին: Շտկի՛ր, մարդավարի գործ արա: Արդ, կանգնած է սպարապետի առաջ»:

- Տեր իմ, քանի ցրտերը չեն ընկել, խանդակներ պիտի փորել տանք: Թերանում են տունկիները ուղարկել Սյունիքից, Վասպուրականից, ներող կլինես նաեւ Տայքից, իսկ որ ամենադիմացկունները Տայքի կաղնիներն են, ամենքն էլ գիտեն: «Տես է, չի ուզում վիրավորել, ապրե՛ս Հայկ եղբայր, լավ գիտես գործը: Մարդկանց այնպես է աշխատեցնում, ասես սեփական այգի է զգում,- հիշեց, ինչպես մի քանի իշխան ու սեպուհ էր հեռացրել գործից: Գլուխ չէին հանել: Սա ինչպե՞ս է գլուխ հանում, չեմ հասկանում: Գիր չգիտե, իսկ հաշիվը լավ է պահում, ասում են նշաններ է անում փայտերի վրա: Անսխալ գիտե ով ինչ է անում, որքան տունկիներ են բերել, ովքեր են թերանում: Մարդիկ լսում են նրան, ասես հրամանները արքայից են: Կեցցե՛ս, Հայկ եղբայր,- դադար տվեց խոհերին,- մի՞թե եղբայր կոչեցի ռամիկին: Ես՝ Մամգուհի գարմս, Մեծ Հայքի սպարապետս... Իսկ ինչու՞ ոչ, չէ՞ որ օգնականս է: Առանց նրա ոչինչ չեմ կարող անել... Սպասի՛ր, իսկ ես գլուխ եմ կոտրում գտնելու Հայկի հանելուկ, թե

ինչու են մարդիկ լսում նրան... Այո՛, այո՛, նրա մեջ հայրական հոգի է հառնել անշուշտ, այդպես է: Նա իշխանի չափ իշխանություն ունի ու չի վարանում, չի վախենում, իր գործն է անում... Ասել է թե՛ ծագումը նշանակություն չունի: Գերագույնը մարդու մեջ հոգու ուժն է, որ ընդունում են անվերապահորեն»:

- Դարձավ դպիրին.

- Հայկ եղբայրը կասի նախարարներից ովքեր են թերանում: Ամենքին էլ իմ անունից նամակներ կուղարկես, կգուշացնես, որ խստագույնս կպատժեմ, կավելացնեմ տերունական հարկերը, արքայի հրամանն է: Թերեւս միայն սա օգնի:

Հայկը դուրս եկավ կիսավարտ շենքից, նայեց Դվինի: Սիրտը ուռչեց հպարտությունից՝ ինքը այս ամենի մասնակիցն է:

Դվինը դարձել է հսկա ճամբար: Չորս բուրդը ծուխ էր բռնել, ճաշ էին պատրաստում: Մի քանի նախարարները ուշացրել էին իրենց գործավորների համար մթերքներ ուղարկել, Հայկը կարգադրել էր ամենքին էլ մթերք տալ: Արդ, չի զարմանում իր իրավունքի վրա, սովորել է հրամայել մարդկանց: Նաեւ հասկացել է, որ մարդիկ ձգտում են ուժեղներին, նաեւ հարգում են: Նժույզը քչեց միջնաբերդի կողմը: Այդ նժույզը ընծայել է սպարապետը: Հասկացավ, սպարապետի մոտից դուրս գալիս ինչ-որ անհանգիստ էր: Երկար չփնտրեց պատճառը, հա՛, սպարապետը իրեն եղբայր անվանեց, եւ սա առաջին անգամ չէր: Քաշեց սանձը, նժույզը ծառացավ, խռիւռացրեց: Իսկ եթե սպարապետը առանց խորհելու, հենց այնպես ասաց: Լինելու՞ բան է, Մամիկոնեից տերը իրեն եղբայր... Չէ, հարկ է ստուգել այս սպարազան: Վճռեց գնալ պարզել:

- Հայկ եղբայր, ի՞նչ կա,- սպարապետի թիկնապահն էր՝ Պարգեւը,- էլի՞ գործ ունես, անհանգիստ մարդ, սպասիր, զեկուցեմ: Նամակ է գրում:

Հայկին դրսում թողնելով, ներս գնաց:

- Ներս գնա,- ասաց Պարգեւը, սպարապետի մոտից դուրս գալով:

Հայկը ներս գնա, խոնարհվեց: Միակ բանը, որ չէր կարողանում սովորել: Այնպես էր խոնարհվում, ասես գերան էր ոկլ տվել: Սպարապետի մոտ նրա խոնարհումը ժպիտ էր առաջացնում:

- Տեր Մամիկոնեից, թույլ տուր տուն գնամ, կիսս մի փոքր տկար է: Առավոտյան կլինեմ Գառն կողմերում, այնտեղ թերանում են:

- Գնա՛, Հայկ եղբայր,- ժպտաց սպարապետը,- սպասի՛ր,- ասաց ու մտավ հարեւան սենյակ, այնտեղից դուրս եկավ ձեռքին քսակ,- սա քեզ, գոհ եմ քեզանից, Հայկ եղբայր:

- Տե՛ր իմ, ես վարձս լի ու լի ստանում եմ ,կարիք չունեմ դրամի,- խռովվեց Հայկը:

- Կարի՛ք,- ծիծաղեց սպարապետը,- դրամի կարիք ունի անգամ արքան, այն տարբերությամբ, որ նրան շատ է հարկավոր, քեզ՝ քիչ: Ա՛ռ, Հայկ եղբայր, գնա՛ տուն:- Հնորհապարտ եմ, տեր Մամիկոնեից,- Հայկը չէր կարողանում հանգստանալ, խռովված էր հոգին,- դու ինձ եղբայր կոչեցիր, հայոց սպարապետ: Ես քեզ պարտք մնացի ողջ կյանքում...

- Հարկավ, ականջալուր ես հայարիների մասին,- Հայկը լարվեց,- այո՛, այո՛, մեր առհավական նախնիք կոչվում էին հայարիներ, նրանք ապրում էին, որ աստվածների առաջ ամենքս էլ հավասար ենք,- երկար լռեց, ակնթարթ նայում էր Հայկին, թե ինչեր անցան սպարապետի մոտով, անհայտ մնաց, սթափվեց,- ասում են՝ զինվոր ես հրավիրել, սրամարտել է սովորեցնում քո մարդկանց, թերեւս այս հարցում էլ արդարացի ես: Երկրին սուր բռնողներ են պետք... Ասել ես, թե որքան էլ ազատները հոխորտանան, դարձյալ ռամիկի կողմն են նայելու, ասել ես ռամիկը երկրի աղն ու մաղն է, նաեւ սուրը...

- Ասել եմ, չեմ թաքցնում, քանզի դու իշխանաժողովին ասել էիր, որ այսքան մարդ մի տեղ հավաքելով հարկ եղած դեպքում զենքի կկոչես...

Սպարապետը ուրախ ծիծաղեց:

- Ապրե՛ս, դու դա էլ գիտես,- մռայլվեց,- այո՛, հարկ է պարտաստ լինել: Հայկ եղբայր, շատ ու շատ բաներ կամ խորհելու, հնի ու նորի մասին, սակայն ժամ չէ դեռ...

Նազենիկը վախենում էր, որ այս ամենը երազ է:

- Նանե՛, Նանե՛ մայրիկ,- վերաջապես արտաբերեց, գրկեց ծեր կնոջը,- մայրի՛կ, քեզ ի՞նչ է պատահել, որտե՞ղ էիր:

- Մեռնում եմ, Նազենիկ: Փառք հայ աստվածներին, տեղ հասա: Մեր աստվածները սատարեցին, գնա՛, գնա՛...

Նազենիկը դժվարությամբ մըրդ տուն հասցրեց, պառկեցրեց բազմոցին:

- Մեռնում եմ, հասու չեմ դեռ որքան կապրեմ: Ասելիք ունեմ: Դու չգիտես ճշմարտությունը,- ծեր կինը հագաց,- ես քո մայրը չեմ, ստնտունեմ, դու ռամկուհի չես: Ների՛ր ինձ Գիսանե, այլեւս ժամն է, կասեմ ճշմարտությունը...

- Մայրի՛կ, մայրի՛կ, ինչպե՞ս թա մայրս չես: Ո՞վ է մայրս:

Ծեր կինը ցնցվում էր մահվան դողով, անկապ բառեր շնչում:

- Օ՛, մեծդ Արձան քրմապետ... Գիսանե աստված, Դեմետր, Դեմետր... Գտա հուռուրթը, փնտրում էի հարյուր տարի, փնտրում էի Մասյաց վիհում, գետի մեջ, Բզնունյաց ծովակի խորունկ ջրերի մեջ, ժայռերի արանքում, քարանձավներում, դիակների մեջ, գոհասեղանի տակ, օձի վզից կախված... Ո՞վ Վիշապ քաղաքի սրբազան Դարբասներ... Նազենիկը ոչինչ չունի այս հուռուրթից զատ, ես կասեմ ճշմարտությունը, հասյալ է ժամը...

Նազենիկը հասկացավ, որ մայրը մեռնում է, դուրս նետվեց տանից: Ընչարգել հասավ Սոկրատեսը տուն:

- Սոկրատ հայրիկ, Եսթեր մայրիկ, օգնե՛ք, օգնե՛ք, մայրս մեռնում է...

Սոկրատը շապկանց դուրս եկավ, նրա թիկունքին հայտնվեցին Եսթերը, որդիները, հարսները, աղջիկները: Խառնվեցին իրար:

- Մայրս մեռնում է, օգնե՛ք, օգնե՛ք, փրկե՛ք:

Սոկրատը, Եսթերը, ավագ որդին՝ Գեղամը, մտան Նազենիկեսը տուն: Նանեն տնքում էր: Նազենիկը ջուր տվեց նրան: Նանեն շարժեց գլուխը, չէր կարող խմել:

- Սրանք ովքե՞ր են, - հազիվ ասաց մեռնողը:

- Եսթեր մայրիկն է, Սոկրատը, մեր հարեւաններն են:

- Նանե, Եսթերն եմ: Այ նանե, երեք տարի առաջ գնացիր ու կարծում էիք մեռել ես, ներող եղիր: Բա ես աղջկան մենակ կթողնե՞մ:

- Ես մեռնում եմ, թող Գիսանե աստվածն ինձ ների, ժամն է, կասեմ գաղտնիքը, - աչքերն ոլորվեցին, ձայնը խզվեց, ճիգով, որ զարմանք պատճառեց ներկաներին, ասաց, - երդվեք աստվածներով: Ո՛չ, ո՛չ, երդվեք մեր անմահ հայ հեթանոս աստվածներով, պահել գաղտնիքը, եթե դժեք, նրանք կայրեն ձեր հոգիները: Գաղտնիքը կարող է բացել Նազենիկը միայն:

- Երդվում ենք, - ասացին ամուսինները միասին: Գեղամը ձեռքը դրեց կրծքին:

- Ես Նազենիկի մայրը չեմ, - հատ-հատ ասաց նանեն, - երեք տարի սրանից առաջ ձեր հույսին թողնելով Նազենիկին, գնացի փնտրելու Նազենիկի մոր հուռուրթը: Մեռնում եմ, մի՛ գնա, - տեսնելով, որ Գեղամը ուզում է դուրս գալս - մի՛ գնա, ես հեթանոս եմ, քահանա մի կանչիր: Ինձ իր մոտ կտանի Գիսանե աստվածը: Իմացե՛ք բարի մարդիկ, - ծանր հոգոց հանեց, շունչը ետ բերեց, հեւաց, - Նազենիկը ռամկուհի չէ: Նրա մեջ հոսում է Վիշապ քաղաքի գլխավոր քրմապետ Մեծն Արձանի արյունը: Նա Դեմետրի, քրմապետի որդու դուստրն է: Նազենիկը արիական զարմ է... Ես Նազենիկին փրկեցի կոտորածից, տարա լեռները: Երկար ժամանակ ապրում էիք գազանների հետ: Այդ ժամանակ կորցրեցի հուռուրթը: Իսկ երբ դադարեց այդ արյունալի պատերազմը, եկանք Արտաշատ, - վերջին խոսքերի վրա նանեն ցնցվեց, ձեռքով ինչ-որ շարժում արեց: Եսթերը Նազենիկի ձեռքը դրեց մեռնողի ափի մեջ: Սա բացեց աչքերը:

- Տիրուհի՛, պարանոցիս կախված է մորդ հուռուրթը, որ նշխանության նշան է կրում՝ հզոր արիական նահապետի կնիքն է, պապիդ քրմական կնիքը: Զգույշ եղիր... Թող Գիսանեն սատարի քեզ, տիրուհիս, - ծեր կինը հանգավ, ասես սպասում էր վերջին խոսքերին:

Նազենիկը ցնցվեց, գլուխը պտտվեց, իրեն տեսավ Նանեի կրծքին սեղմված: «Ասել է, թե այդ ամենն երազ չէր եղել, - մշուշի միջով տեսավ հսկա պարիսպներ, սպիտակազգես գեղուհի մի կին, արյան մեջ կորած իրեն էր սողում սալահատակի վրա արյան շերտ թողնելով՝ «Չավակս...», ասես նորից լսեց, ապա բիրտ զինվորի դեմք տեսավ, մկունդը իջավ մոր գլխին, - մայրի՛կ, մայրի՛կ, - հեկեկաց Նազենիկը, - Ես Մեծ քրմապետի թոռնուհին եմ, Դեմետրի դուստրը, ես արիական եմ, իսկ մայրս, ի՞նչ է եղել անունը»:

- Վերցրու, սա քունն է, մայրիկիդ հուռուրթն է, ուշքի եկ, Նազենիկ: Առ, կախիր վզիցդ, - լսեց Եսթերի ձայնը, սթափվեց, - Աստված մի արասցե իմանան սեւավորները: Մենք քո գաղտնիքը կպահենք, թե վախենում ես արի մեր տուն, կգիշերես...

Կինը խոսում էր, սակայն Սոկրատը լռել էր: Թերեւս Եսթերը լավ չէր հասկանում կատարվածը: Մի ակնթարթում Նազենիկը դարձավ իշխանուհի, թերեւս ավելի բարձր, իսկ նրանք աղջկան հասարակ վարձակ են կարծել:

- Ես կմնամ մայրիկի մոտ, - ասաց Նազենիկը:

Խոստանալով առավոտյան հոգալ թաղման գործերը, հարեւանները դուրս գնացին: Եսթերը դուրս գալուց առաջ, գլխաշորով ծածկեց նանեի դեմքը:

Յանկարծ Նազենիկը վախ գգաց, ո՛չ, մեռած կնոջից չէր վախենում, որին մայր էր համարել: Նստեց աթոռակին, գննեց մոր հուռուրթը: Այն մի հրաշք գործ էր, որին անգամ Յրանտը կնախանձեր: Օձի աչքերը փայլում էին, չհասկացավ ինչ քարից էին, մթան մեջ փայլում էին: Օձի վզին ինչ-որ կնիք կար, գրերով: Դա կարող էին կարդալ միայն քրմերը, եթե նրանք չկային այլևս, ո՞վ կկարդա, անիմա մարդիկ, անիմա ժամանակներ, ոչխարային հնազանդությամբ ապրող մարդիկ... Ինքը Մեծ քրմապետի թոռնուհին է, ափսոս, չիմացավ մոր անունը, ինչ գեղանի կին էր, հրաշքեկ վարսերը արնոտ

Էին, սողում էր սալահատակի վրայով, ձեռքերը երկարել էր իրեն... մայրի՛կ, մայրի՛կ,- մոմռացրեց Նազենիկը,- Մա՛յր իմ, ինչպե՞ս են կոչել քեզ, իմ հրաշք գեղեցկուհի մայրիկ... Հորս կոչել են Դեմետր, Դեմետր աստծո անունով, հռչակված է եղել որպես հզոր արիական ասպետ... Նա շատ բաներ էր լսել նանեից արիականց մասին: Այդ մասին պատմելիս ծեր կինը կերպարանափոխվում էր, դառնում հպարտ, անգամ գոռոզ, հայացքում արհամարհանք էր ծնվում. «Ի՞նչ են սրանք մեր համեմատությամբ,- գայրանում էր Նազենիկի վրա, որ ծիծաղում էր մոր վրա, նրա կերպարանափոխության վրա,- ես մի օր կպատմեմ ճշմարտությունը, այնժամ դու կհասկանաս ինչ ասել է արիական գարմ: Դու ծիծաղի՛ր, ծիծաղի՛ր, ափսոս, ժամ չէ, սակայն կգա ժամը, դու շատ ու շատ բաներ կիմանաս...»

Նազենիկը գրույցներ էր լսել Գիսանե աստծո բազմիների մոտ մղված կռիվների մասին: Արդ, ծիգ էր անում վերհիշելու դրանք, չէր կարողանում կենտրոնանալ, հուզված էր: «Դու ռամկուհի չես: Դու արիական գարմ ես», հիշում էր նանեի խոսքերը: Հետո ինչ, որ Մեծ քրմապետի թոռնուհին եմ: Դրանից ինչ կփոխվի,- հարց էր տալիս ինքն իրեն, դեռ այս ամենը աղոտ էր, չէր հասկանում,- սակայն ես չեմ թողնի Երեւմունքը, չեմ հեռանա այնտեղից: Իսկ եթե իմանան հոգեւորները, թերեւս սպանեն ինձ, քանզի Մեծ քրմապետի վերջին շյուղն եմ...»:

Հուռուրթը կախեց պարանոցից, օձի գլուխը կախ ընկավ կրծքերի փոսիկի մեջ, թվաց թե մոր ջերմությունը զգաց: Վերջապես լավ եղավ...

Տիրանը մտամոլոր, անտրամադիր նստել էր մոր դիմաց: Թագուհին էլ իր հերթին մտքերով տարված չէր նկատում որդու լռությունը: Նստել են իրար դիմաց, ասես օտարներ լինեն: Մայր ու որդի այդքան հարազատ, այդքան հեռու: Միակ մարդը, որ խոսում էր, Սաթենիկ իշխանուհին էր: Նրա համար լավ էր, եթե ամուսինը կողքին է, զավակները ողջ ու առողջ են: Լավ է, երբ վարդ է բացվում, թռչուններ են ծվլում: Նա այդ ամենը յուրովի է ընդունում, քանզի խորհում է, որ այդ ամենը կարող էր չլինել, իսկ եթե կա, հենց դա է երջանկությունը: Ա՛յ, Տիրանը վերջերս խուսափում է իրենից, գիշերները անց է կացնում խրախճանքներում, իսկ նա խորհում է, որ աստծո ստեղծած կարգն է, այրմարդիկ ազատ են ժամանց ընտրելու: Կինը պիտի համբերի, զի ասել է սուրբ սեղանի առաջ. «Հնազանդ եմ հրամանովն աստծո»:

- Ինչու՞ են հնում այդքան շատ աստվածներ եղել,- Տիրանը կտրվում է մտքի թելից, զարմացած նայում է դատերը: Խոսակցության սկիզբ չի լսել: «Սա էլ բան գտավ հարցնելու, այ, թե մայրը տար այդ հարցը, սակայն Սաթենիկի համար ամեն բան պարզ է, իսկ Տիրանուշը իմ կտորն է: Երկու երեխաների մայր է, ափսոս դժբախտ կին ու մայր... Խնդրեմ «սուրբ» Գրիգորի ընտանիքի հետ բարեկամության արդյունքը, ես մի դժբախտ ընտանիք եմ ինչի՞ համար, որպեսզի բարեկամություն հաստատեն արքայական ու հայրապետական ընտանիքները... »:

- Երկինքը մեծ էր, դրա համար էլ շատ էին աստվածները,- Տիրանը դժգոհ է իր անիմաստ պատասխանեց:

- Փոքրացա՞վ, ինչ է,- հեզնում է դուստրը:

Հայրն ավելի ուշադիր զննեց դատերը: Ուրիշ կանայք երեխաներ ունենալուց հետո փթթում են, բացվում վարդի պես, սա դալկադեմ է, տկար: «Ա՛խ, հա՛յր, ինչու՞ ստիպեցիր Տիրանուշին հարսնանալու Հուսիկին, ախր նրանից ինչ ամուսին, եկեղեցուց դուրս չի գալիս...»:

- Հա,- գայրացավ Տիրանը,- մեր տիրույթները պակասեցին, երկինքն էլ փոքրացավ մեր գլխին, էլ տեղ չմնաց մեր հայ աստվածներին:

- Տիրանուշ, սիրելիս, Աստված մեկն է, Որդին ու Անմահ Հոգին, իսկ հին աստվածները հեռացել են, ո՞վ ետ կբերի նրանց,- դառը հեզնեց թագուհին:

Տիրանը քմծիծաղ տվեց: Նա գիտեր, մայրը հեթանոս է, թեեւ եկեղեցի է գնում, երեսին խաչ է քաշում, օգնում է աղքատներին: Տիրանին չես խաբի: Նա միակ մարդն է, որ գիտե գաղտնասենյակի մասին, ուր մայրը զոհ է մատուցում հայ աստվածներին:

- Նոր կրոնը բարություն է քարոզում,- դարձյալ թագուհին էր:

- Հապա ինչու՞ Աստված չի արգելում պատերազմները: Ինչու՞ է աչք փակում զոհերի վրա,- համառեց Տիրանուշը:

Թագուհին ճարահատյալ նորից մտավ խոսակցության մեջ:

- Մարդիկ այնքան մեղքեր են գործել, որ աստված պատիժ է ուղարկում: Ամեն մեղքի համար աստված պատժում է: Աստված գերագույն դատավոր է: Մեկի մեղքը շատ է, մյուսինը՝ սակավ: Աստված ամենատես է, նա տեսնում է մարդկանց մեղքերը, պատժում...»

- Մայր թագուհի, ի՞նչ կլիներ, եթե մնայինք հեթանոս...»

Տիրանի հարցը հարց չէր, այլ ծուղակ էր մոր համար: Թագուհին հասկացավ նրան:

- Հայոց աստվածները ռազմասեր էին ու արի: Նրանք չէին խորշում պատերազմներից, չէին

սարսափում հեղելուց: Նրանք մարտի դաշտ էին իջնում մարդկանց հետ: Մի՞թե Վահագնը, որ ռազմի աստվածն էր, քիչ հաղթանակներ էր պարգևել հայերիս: Մի՞թե այն ժամանակ մենք թույլ էինք այսչափ, անպաշտպան,- Տիրանը զգաց, որ զայրանում է,- նսկ, արդ, եթե նորից հեթանոսանանք ու հարենք պարսիկներին, մի՞թե վատ կլինի: Կարելի է նաեւ առանց նրանց, թքած, արիական շունչ կփչենք մեր սրերին, մենք հզորացած մարտի դաշտ կիջնենք... Հարկադրված չենք լինիողորմածություն մուրալու Հռոմից: Կայսրը կարող է ամեն պահ մեզ գրկել կարծեցյալ անկախությունից, իսկ պարսիկները, ի շահ իրենց, կպաշտպանեն մեզ, կպաշտպանեն Հռոմից: Չմոռանանք այն պարագան, որ ժողովուրդը հոգով հեթանոս է մնացել: Մեր հեթանոս կրոնը ռազմասեր հայարիների կրոնն էր, իսկ ի՞նչ են քարոզում սրանք, այս ստորացուցիչ վիճակը, ոչ անկախ ենք, ոչ կախյալ: Այսպես երկու սրերի արանքում...

- Լավ, հանգստացիր: Աստված մի արասցե իմանա վեհափառը, մի խոսիր արիականց մասին: Եկեղեցին արգելում է, վեհափառը կոթգոհի,- Նեղսրտեց առերես, սակայն գոհ էր, քանզի որդին ի օգուտ հեթանոսության էր խոսում: Չկարողացավ զսպել գոհունակ ժպիտը:

- Չի իմանա, վեհափառը մի շաբաթից մեկնում է Աշտիշատ: Դժգոհ է եկեղեցու կառուցումից, թե մեկ այլ բանի, հասու չեմ, սակայն գնալը հաստատ է: Մեկ շաբաթից կմեկնի:

- Բարի է վեհափառի առաքելությունը,- խաչակնքեց թագուհին:

Տիրանը հասցրեց մոր աչքերում կրակներ տեսնել:

«Մայրս ատում է վեհափառին, ինչու՞, մի՞թե այդ անհեթեթության պատճառով իբրեւ սիրում է Բակուր բղեշխին եւ վեհափառը ամբաստանել է նրանց,- սարսուռաց, պատկերացրեց Բակուրի առնական, գեղեցիկ դեմքը: Սակայն չէր որ տարիներ առաջ սիրել են իրար,- չգիտես ինչու հիշեց այդ մասին, սակայն մայրս հզոր արիական զարմ է, մտքով հզոր ու անկախ, նաեւ կամային կին, որ կարող է նաեւ մարտում հերոսանալ: Նա նմանակ է մայր Անահիտ աստվածուհու:

Թագուհին ձեռքը դրեց ճակատին, ապա բողոքեց, որ գլուխը ցավում է: Տիրանը քմծիծաղ տվեց, կնոջ ու դստեր հետ, հարկուպատշաճ հրաժեշտ տվեց նրան, դուրս գնացին օթեւանից: Թագուհին վեր թռավ տեղից: Դաստառնակը կրծոտելով, սկսեց շրջել օթեւանում: «Հասյալ է ժամը հատուցման: Մի զարկով կազատվեմ այդ խելքապակաս ծերանալուց: Վրթանեսը ծանր քարի պես ընկած է Բակուրի ճանապարհին,- չխորհեց կոսրով արքայի մասին, ասես բնավ էլ չկար,- դժվարը Վրթանեսին սպանելն է, դրանից հետո Բակուրը երկաթյա ձեռքերի մեջ կվերցնի երկիրը: Բա՛վ է, ինչ քրիստոնեություն խաղացինք, ամենքս էլ դարձել ենք խաղարկու, հարկ է երկիրը վերադարձնել հեթանոսական կրոնին... Հարկ է պարգել մեկնելու իսկական պատճառը, ստույգ օրը: Դժվար չէ, մեկ ժամից այդ ամենը կիմանամ», ծափ զարկեց, ներս մտավ նաժիշտը:

- Կանչի՛ր Չինավար սեպուհին, շտա՛պ:

Երեկոյան թագուհին ստույգ տեղեկություն ուներ վեհափառի Աշտիշատ մեկնելու պատճառների մասին: Ինչ-որ կրոնական ծիսակատարություն, որի անվանումը անմիջապես մոռացավ: Ոգեւորության առաջին ալիքը իջել էր, եկել էր սթափ խորհելու, գործելու պահը: Նստեց նժույգի առաջ, ձեռքն առաջ փետուրը, ճիգ արեց, զսպելու պահը: Նստեց նժույգի առաջ, ձեռքն առավ փետուրը, ճիգ արեց, զսպելու հոգու խռովքը, սպասեց մի փոքր, ապա գրեց. «Մեծ Հայքի թագուհուց Աղձնյաց Բակուր բղեշխին ողջույն շատ: Մարագաց ամսի Միիր օրը վեհափառը մեկնում է Աշտիշատ: Աստծո նախախնամությունն է, որ դու քո նվիրվածությունը հայտնես նրան ու ստանաս նրա հայրապետական օրհնանքը: Դու քո նվիրատվությունը կապացուցես վեհափառին ու եկեղեցուն: Նա կհասկանա, որ մեզ վատաբանել են, կօգնի մեզ: Թող աճակից լինեն քեզ Տեր Աստված, Որդին ու Ամմահ Հոգին:

Թագուհի Մեծ Հայքի՝ Վարդանդուխտ»:

Ժպտաց: Նա երկակի խաղ էր խաղում: Անգամ ձախողման դեպքում, եթե նամակը ընկներ արքայի ձեռքը, նրան ոչ ոք չէր մեղադրի, ավելին՝ նամակը կապացուցեր նրանց անմեղությունը: Այդպես էլ չհասկացավ, որին էլ ավելի ձգտում, վեհափառի մտկան, թե իրենց անմեղության հռչակմանը: Երկուսն էլ ցանկալի էին: Թագուհին շփեց ձեռքերը:

Բակուրը գլուխ կբերի վեհափառի սպանությունը: Դրանում չէր կասկածում: Բիչ անց ներս մտավ Չինավար սեպուհը, համբուրեց թագուհու պատմունճանի քղանցքը:

- Հռիփսիմե, դու գնա, ասաց թագուհին:

Նաժիշտը դուրս գնաց: Սեպուհը աչքերով ուտում էր թագուհուն, աչքը չէր հեռացնում թագուհու կիսաբաց կրծքերից, մարմարին պարանոցից:

- Տիրուհիս,- հեւաց սեպուհը,- ես կխելագարվեմ, սուրս կվարսեմ սրտիս մեջ, այլևս չեմ կարող սպասել...

- Համբերի՛ր,- թագուհին թովիչ ժպտաց, մոտենալով երիտասարդին, շոյեց այտը,- դու պիտի գնաս Աղձնիք, նամակ կտանես բղեշխին:

- Տիրուհիս, մի՞թե դու... Այդ արջը չի կարող կանանց մոտ անգամ շարժվել- ուր մնաց...

- Լռի՛ր,- Ֆշացրեց թագուհին, այնպես, որ խեղճ սեպուհը, որի եղած-չեղածը միայն գեղեցիկ արտաքինն էր, սառեց,- մենք քեզ մոտ թողեցինք մեր անձին, սակայն զգույշ գլխիդ համար: Նամակ

կտանես բղեշխին: Յարկ է շտապես, ընկուզ դրա համար ստիպված լինես տասը և՛սույգ սպանել, հասկացա՞ր,- զգաց, որ շատ խիստ էր վարվել սիրեկանի հետ, մեղմեց մի փոքր,- իսկ որպես պարգև, երբ վերադառնաս, նորից քեզ մոտ կթողնեմ անձիս: Ահա նամակը:

Սեպուհը վերցրեց նամակը, դուրս գնաց: Թագուհու ժպիտը չէր կարողացել ցրել նրան համակած վախը:

- Թագուհին Չինավար սեպուհին նամակով ուղարկեց Բակուր բղեշխի մոտ,- շուտասելուկի պես վրա տվեց Գիսանեն, համբուրեց Կոռնակի ձեռքը, ավելի ստույգ քիթը մոտեցրեց հոգեւորի ձեռքին, զգվանքով ետ քաշվեց, ուզեց հեռանալ:

- Կեսգիշերին կգաս, խոսելիք ունենք,- մռայլ նետեց Կոռնակը, ավելացրեց՝ թող աստված քեզ բարի աչքով նայի, որոյակ իմ: Ե՞րբ գնաց պալատից, արա՛գ, շան ծիծ կերած, խոսի՛ր:

Գիսանեն սարսռաց, Կոռնակի աչքերը փայլում էին չարագուշակ: Նա երբեք այսպես չէր խոսել հետը:

- Քիչ առաջ դուրս եկավ պալատից, դեռ տուն հասած չի լինի:

- Ապրես, որոյակ,- ոռոռացրեց Կոռնակը, փեշերը հավաքեց, շտապեց կաթողիկոսարան: Նա այնքան նմանվեց սեւ գռավի, որ Գիսանեն պատրաստ էր խաչակնքելու: «Իմ ձեռքից պրծում չկա, հեթանոս շներ,- անգամ շտապանքի մեջ կանգ առավ,- սպասի՛ր, ինչ եմ հեթանոս ու քրիստոնյա ջոկջոկում: Թքել եմ աստծո վրա, նաեւ Արամազդի: Արդ, Չինավարը հեռանում է քաղաքից, իսկ ես աստվածներ եմ ջոկջոկում... Ավանակի գլուխ»:

Առանց ուշադրություն դարձնելու դռան կանգնած դպիրին, ներս մտավ: Կաթողիկոսը մենակ չէր: Նրա մոտ էր Աղբիանոս եպիսկոպոսը:

- Ներող եղիր, վեհափառ տեր, հույժ կարեւոր գործով եմ եկել,- մոմռացրեց Կոռնակը, ծուռ նայեց եպիսկոպոսին: Կաթողիկոսը որսաց նրա հայացքը, ասաց.

- Խոսիր ազատ, ես սրբազանից ոչինչ չեմ թաքցնում:

Թերեւս քիչ անց կաթողիկոսը ափսոսաց այս խոսքերի համար, ամենայն դեպքում խոսքերն ասվել էին:

- Թագուհին Չինավար սեպուհին նամակով ուղարկեց Բակուր բղեշխի մոտ: Ի՞նչ կիրամայես:

- Դու դարձյալ հաստակողություն ես անում, Կոռնակ որոյակ, ի՞նչ ունես երկրի տերերի անձնական գործերի մեջ, ի՞նչ ես քիթը խոթում ամեն տեղ: Աստված կպատժի,- կաթողիկոսը հանկարծակիի էր եկել, եպիսկոպոսի մոտ չքմեղ էր ձեւանում, լռեց մի փոքր,- ես Կոռնակին միջոցներ եմ տրամադրում կռապաշտներին հայտնաբերելու, դարձի բերելու համար: Մեծ գործ է անում: Նա մի քանի մարդ ունի ձեռքի տակ, օգնում են նրան,- խիստ նայեց Կոռնակին, ճարահատյալ վրա բերեց,- բռնի՛ր սեպուհին, նամակը ինձ բեր:

Եպիսկոպոսը ներկա էր, ասել է թե նրան էլ «գործի» մեջ քաշեց: Սկզբում քայլն անմտածված համարեց, քիչ անց, գտավ՝ իրավացի էր, կարելի էր Աղբիանոսի հետ կիսել պատասխանատվության ծանր բեռը:

- Արդար վճռեցիր,- ասաց եպիսկոպոսը, շոյեց մորուքը:

- Վեհափա՛ռ, ականջ դիր նվաստ ծառայիդ,- խորամանկ էր Կոռնակը, գիտեր, որ ծերերը խելքի մոտ կընդունեն ասածը, դա կբարձրացներ նրա վարկը, դրա հետ էլ վարձը: Համեստ տեսք ընդունեց,- քաղաքում բռնելիս աղմուկ կբարձրանա, արքայի մարդիկ կիմանան: Յարկ է սպասել, մինչեւ դուրս գա քաղաքից: Ներող եղեք եւս մեկ պարագա, նամակի բովանդակությունը հայտնի չէ: Եթե մեջը ներող եղեք, սիրո մասին խոսք չկա...,- տեսնելով, որ հետաքրքրված լուսւմ են, ոգեւորվեց,- իսկ եթե նամակի մեջ դավադրության մասին է, ապա մենք ամեն բան կփչացնենք: Գործը անվտանգ ու ապահով կլինի, եթե բռնեմ ճանապարհին...

Հոգեւորները իրար նայեցին:

- Ձայն, ծպտուն էլ չի հանի, իրեն էլ էստեղ կբերեմ: Մարդ չի տեսի:

- Գնա, զգույշ եղիր եւ առանց աղմուկի,- չասաց Աստված քեզ, գիտեր, որ Կոռնակի համար աստված չկա:

Կաթողիկոսը ետ ընկավ գահի մեջ, թուլացրեց լարված մկանները:

Լռեցին, Աղբիանոսը գիտեր, որ կաթողիկոսը մարդիկ ունի, որոնք փնտրում են կռապաշտներին, սակայն մտքով էլ չէր անցնում, որ այդ մարդկանց գլուխն է կանգնած Կոռնակի պես թոկից փախածը:

- Այլ ելք չկա,- ասես պատասխանեց Աղբիանոսի խոհերին,- Կոռնակը կարողանում է հայտնաբերել կռապաշտներին, նվիրված մարդ է...

- Նաեւ անառակ, նաեւ ոսկեպաշտ,- նետեց Աղբիանոսը:

- Սրբազա՛ն, այպիսի գործերի համար ազնիվ մարդ չես վարձի: Կոռնակի մարդիկ հայտնաբերում են կռապաշտներին, իսկ եկեղեցին դարձի է բերում մոլորյալներին: Յարկադրաբար օգնում եմ նրանց,

զի նրանք միջոցներ չունեն: Դու նկատել ես, վերջերս կռապաշտները գլուխ են բարձրացնում, հատկապես Տարոնում, Աղձնիքում, կանխել է պետք...

- Իսկ դու էլ կանխիր,- հեզկեց եպիսկոպոսը, ապա ձեռքը թափ տվեց,- վեհափա՛ռ, սրի հարկադրանք է պետք,- լռեց, աչքերը կլորացած նայեց կաթողիկոսին,- վերջերս ինչ-որ վատ հոտ եմ առնում Որդունիներից ու Մանավազյաններից: Այնտեղ կռապաշտները դարձյալ զոհ են մատուցում Անահիտին, իսկ Տարոն աշխարհում լուրեր են պտտվում, թե Վահագն աստծո արձանը Լուսավորչի օրերին թաքցրել են, մարդիկ ամենուր փնտրում են...

- Կանխել է պետք, սրբազան:

- Այո՛, այո՛,- Աղբիանուր մորուքն առավ ափերի մեջ,- հույժ անհրաժեշտ է:

Այդ պահին Կոռնակը մտավ գինետուն, ուր նրան էին սպասում կասկածելի արտաքինով քսան-քսանիկնգ մարդ:

- Յո չե՞ք սկսել,- Կոռնակը գլխով ցույց տվեց գինու կժերը:

- Չէ, քեզ էինք սպասում, հայր Կոռնակ,- հարգանքով խոսեց մեկը, որի մի աչքը ծածկված էր սեւ լաթով:

- Մի քանի օր ծոմ պիտի պահեք,- ծուռ ժպտաց Կոռնակը,- սրանց դուրս նետեք,- ցույց տվեց մի քանի շինականների:

Գինետան տերը աչքն էլ չթարթեց, երբ Կոռնակի մարդիկ շինականներին վնդեցին գինետնից: Նա սովոր էր Կոռնակի խենթություններին:

- Ականջ դրեք, երեքդ,- ցույց տվեց երեք հոգու,- ճանաչու՞մ եք Չինավար սեպուհին,- սրանք գլխով արեցին,- նրան կսպասեք տան մոտ, ձեռք չեք աս, կգնանք հետը Տափերականի կողմերը, պոչ կպեք,- ցույց տվեց էլի երեք հոգու,- դուք կգնաք Աղձնյաց ճանապարհով: Սեպուհից առաջ կընկնեք, նայեք սեպուհի գլխից մազ չպակասի: Ինձ գիտեք, կաշիներդ կքերթեմ: Ես ու Յարթենը մնացածների հետ կգնանք Տափերականի կողմերը: Սեպուհը կմնա մեր ու ձեր արանքում, հասկացա՞ք: Գործը կանենք մենք մինչև գինետուն հասնելը: Գնացեք, մենք էլ շարժվենք:

Կոռնակը իր հեծյալներով դուրս եկավ քաղաքից: Քիչ անց տանից դուրս եկավ Չինավար սեպուհը, որ այս ամենից անտեղյակ, թագուհու խոստումից ոգեւորված, բռնեց Տափերականի ճամփան: Նրան մի ծառա էր հետեւում: Սեպուհի ուշքն ու միտքը Աղձնիքից ետ գալն էր: Փակում էր աչքերն ու տեսնում երազած պահը: Լողում էր խոստացած երանության մեջ: Չնկատեց, որ երեք հեծյալ էին գալիս հետեւից:

Նա մի քանի անգամ նամակներ էր տարել Աղձնիք, ամեն անգամ Բակուր բղեշխը առատորեն վարձատրել էր: Իսկ թագուհին... ափսոս, չի կարող այդ մասին պատմել ընկերներին: Նա հո հիմար չէ, գիտե, որ բղեշխի ձեռքերը շատ են երկար, մեկ էլ տեսար բռնեց կոկորդից: Իսկ ինչ վերաբերում էր թագուհուն, չէր անհանգստանում, խորհում էր, որ թագուհին մինչև ականջները սիրահարված է իրեն: Այսօրվա դեպքերը, թագուհու տարօրինակ պահվածքը, սպառնալիքը զարմացրել էին նրան...

Անցավ Տափերական կամուրջը, անգամ չնկատեց, որ զինվորները պատիվ տվեցին հարգելով սեպուհական նշանները:

Սկսեց երեկոյանալ, ճանապարհը դատարկվեց, հատ ու կենտ անցորդներ էին պատահում: Յարկ էր գիշերելու տեղ փնտրել, դիմացը շեն կար: Իջեւանատունը քառորդ փարսախի վրա էր: Նրանից երկու հարյուր կանգուն առաջ ընկած հեծյալներ էին գնում: Նրանցից մի քանիսին կարելի էր ազատների տեղ դնել, մնացածների հագուստներից ոչինչ չէր կարելի հասկանալ, սակայն ամենքն էլ ընտիր Նժույզներ ունեին:

Խմբի մեջ քահանա կար, ամեհի Նժույզ էր նստել: Մոտեցավ քահանային, խոնարհվեց, բարի երեկո ցանկացավ:

- Բարին արելիդ, որդյակ,- պատասխանեց քահանան,- շատ սպասեցիք, հեր օրհնած,- ծուռ ժպտաց: Նժույզը կիպ մոտեցրեց սեպուհի Նժույզին, բռնեց սանձից: Չինավարը չհասցրեց դիմադրել, երկու կողմերից կաշկանդեցին նրան, միակ բանը, որ տեսավ, ծառայի չոված աչքերն էին, լսեց ճիչը: Յեծյալներից մեկը սուրը մխրճեց ծառայի կողը: Սեպուհը գլխին ծանր հարված ստացավ, ուշաթափվեց:

- Գորգի մեջ, փաթաթե՛ք,- գոռաց Կոռնակը, ցած թռավ Նժույզից, սեպուհի ծոցից հանեց նամակը, նորից թռավ թամբին:

Նրա մարդիկ սեպուհին փաթաթեցին գորգի մեջ, դրեցին Նժույզներից մեկի թամբին, այնպես, որ տեսնողը կկարծեր, գորգ են տանում:

- Վահե՛, թաղի՛ր ծառային, հասիր մեզ,- հեծյալները քառասմբակ սլացան հասնելու իրենց գլխավորին:

Գիշերվա Գիզակն ժամն էր, ծառան արթնացրեց Աղբիանոսին, հայտնեց, կաթողիկոսը իր մոտ էր հրավիրում:

- Գիշերը տարածամել է, մարդ աստծո,- մոմնացրեց եպիսկոպոսը, նստեց անկողնու մեջ, մեկն հիշեց, հրավերը կապված էր թագուհու «գործի» հետ,- Վրթանեսը ուզում է թագուհու նամակի

ընթացման պատասխանատվությունը կիսել ինձ հետ, ինչ արած:

Մտավ կաթողիկոսի մոտ, բնավ չգարմացավ այնտեղ Կոռնակին ու Չինավարին տեսելով:

- Տես ինչ է գրում հայոց թագուհին իր սիրեցյալին,- նամակը եպիսկոպոսին երկարեց կաթողիկոսը: Սա թաղվեց ընթերցանության մեջ, ավարտեց նամակը, երկար լռեց, նայեց սեպուհին: Կաթողիկոսի համար անսպասելի նամակը մեկնեց Կոռնակին:

- Վերցրու՛, կարդա, իսկ սրան թող դրսում պահեն:

Կոռնակի մարդիկ դուրս տարան սեպուհին:

- Նամակը ինչու՞ տվեցիր Կոռնակին: Նա ի՞նչ գործ ունի նամակի հետ:

- Ես նամակից հասկացա, որ թագուհին անպարտ է... Այդ դեպքում մենք նրան մահացու վիրավորանք ենք հասցրել,- սկսեց քաշքշել մորուքը: Դա անում էր հուզմունքի պահին,- սակայն ինչու՞ է ստել նաժիշտը: Կոռնակը կտոր-կտոր կանի նրան: Թագուհին խորհուրդ է տալիս Բակուրին հանդիպել քեզ Աշտիշատի ճանապարհին, ցրել իրենց մասին եղած մեղադրանքը: Այդ պարագան հաստատում է, որ նրանց մեջ ոչինչ չկա, իսկ դու նրանց մեղադրել ես շնանալու մեջ: Թագուհին կրողոքի կայսրին, իսկ եթե այդ ամենը...

- Ես էլ եմ մատնված տարակուսանքի,- մոմացրեց կաթողիկոսը,- եթե նամակը ճշմարտություն է, ապա ես զրպարտել եմ թագուհուն եւ ինձ երբեք չեմ ների,- նայեց Կոռնակին,- դու, որ սատանայից քառասուն օր առաջ ես ծնվել, ի՞նչ կասես:

Կոռնակը նրան պատասխանեց կկոցված աչքերի նենգ փայլով:

- Վեհափա՛ռ, կինը սատանայից ու ինձանից քառասուն օր առաջ է ծնվել,- բազմանշանակալից ժպտաց: Հոգեւորները խաչակնքեցին,- թույլ տուր շարունակեմ: Կասկածում եմ, Բակուրն ու թագուհին նախօրոք պայմանավորվել են: Այս նամակով միայն քո գնալու մասին է տեղեկացնում: Անձդ վտանգված է, վեհափառ տեր: Բակուրը կսպանի քեզ...

- Լռի՛ր, ստահակ,- գայրացավ կաթողիկոսը,- ի՞նչ ես բարբառում, թշվառակա՛ն:

- Սպասի՛ր, վեհափա՛ռ, մի ընդհատիր նրան: Ես սկսում եմ հասկանալ Կոռնակին: Պարտ եմ խոստովանել, ստահակի գլխում ավելին կա,- քան պետք է սրա նման մեկին,- ծանր հոգոց հանեց,- համամիտ եմ նրա հետ, եթե նամակը ընկնի մեր ձեռքը, թագուհին անպարտ կճանաչվի: Այս նամակը ձեռնտու է նաեւ արքային: Թագուհին անսխալ հաշիվ է արել: Օ՛, տեր Աստված...

- Կասկածներ են միայն, եւ ամեն բան կարող եմ պարզել անձս վտանգելով:

Որքան է այլասերվել հոտդ, տեր Աստված, ավա՛ղ ինձ...

- Եթե իրավացի է Կոռնակը, դու գոհ կդառնաս Բակուրի սրին:

Կոռնակը անհանգիստ շարժում արեց, հոգեւորները նայեցին անհանգիստ:

- Դու մեզանից երիտասարդ ես, ու ես տեսակ գործերի մեջ փորձված: Ի՞նչ ես խորհում, ասա՛:

- Վեհափառ տեր, նա քեզ կսպանի ու,- շունչը ետ բերեց, զգաց, որ այն, ինչ ասելու էր երեքին միացնելու էր համընդհանուր գաղտնիքով,- Կտիրի Մեծ Հայքի գահին կամ Աղձնիքը անկախ կհռչակի,- հոգեւորները ապշահար եղան,- Ես չեմ կասկածում, թագուհին սիրում է Բակուրին: Նա այս անգամ սեպուհին Աղձնիք է ուղարկել առանց հետը զինվոր դնելու, ասել է թե դեմ չէ, որ նամակը ընկնի մեր ձեռքը:

- Հավատում եմ ու չեմ հավատում,- խաչակնքեց կաթողիկոսը,- ի՞նչ օրի հասանք, տե՛ր Աստված, մինչեւ ե՛րբ փորձես մեզ: Ի՞նչ անել,- հարցն ուղղված էր Կոռնակին,- խոսի՛ր, ես ի վիճակի չեմ, միտքս թանձրացել է:

- Գտնում եմ, որ նամակը պիտի տեղ հասնի: Հրաման տուր վեհափառ սեպուհին անվսաս տեղ հասցնեմ: Նրա գլխից մազ էլ չի պակասի:

- Իսկ եթե սեպուհը այս ամենի մասին պատմի բղեշխին կամ ետ գալուց մեզ մատնի թագուհուն,- Աղբիանոսին թվաց, թե Կոռնակին դեմ տվեց պատին:

Կոռնակը քմծիծաղ տվեց:

- Սեպուհին կասենք,- Կոռնակը իրեն բարձրացրեց կաթողիկոսի ու եպիսկոպոսի հետ մի հանցակցության, որից նրա մազերը բիզ-բիզ էին կանգնում, սակայն նա իրեն լավ էր տիրապետում,- որ մենք տեղյակ ենք թագուհու սիրեկանը լինելու պարագային, եթե մեզ մատնի, այդ մասին կիմանա արքան...

- Օ՛, տեր Աստված, ի՞նչ է անում մեզ հետ այդ վարձակը,- գայրացավ վեհափառը,- այդ կատաղած կինը կկործանի երկիրը:

- Վախենում եմ սեպուհը այս ամենը պատմի բղեշխին...

- Հի՛ պատմի,- ծիծաղեց Կոռնակը,- Բակուրն ավելի խանդոտ է, քան արքան...

- Դու՛, որդյա՛կ, դժոխք կընկնես,- նորից գայրացավ վեհափառը,- դժոխքի բոլոր տանջանքները սակավ են մեղապարտ հոգիդ տանջելու:

Կոռնակը ուշադրություն չդարձրեց կաթողիկոսի խոսքերին: Նա սեփական կարծիք ուներ դժոխքի մասին:

- Իմ մարդիկ կլինեն սեպուհի հետ: Ես մի լավ կհասկացնեմ նրան, թե ինչ է սպասում նրան մեզ

դավաճանելիս: Սեպուհի մասին լիահույս եմ, սակայն գործին էլի մի մարդ պիտի մասնակցի:

- Ո՞վ,- համարյա միաբերան հարցրեցին կաթողիկոսն ու Աղբիանոսը:

- Վաչե սպարապետը, քանզի իմ մարդիկ սակավ են քեզ պաշտպանելու Բակուրի մարդասպաններից: Սպարապետը միակ մարդն է, որ իմանալով այս մասին գաղտնիք կպահի: Սպարապետը ազնիվ մարդ է, եթե խոսք տա, կպահի խոսքը:

Առավոտյան սկսված մանր անձրեւը չխանգարեց արքային շքախմբի հետ մեկնելու Դվին: Արքայի կառքի հետեւից գալիս էին կաթողիկոսի կառքը, այս անգամ վեհափառը մենակ էր: Նրա կառքի հետեւից գալիս էին հազարապետի ու մնացած պալատականների կառքերը: Անձրեւը ստիպել էր ամենքին էլ կառք նստել: Շքախմբի առջեւից գնում էին թիկնազորի զինվորները, նրանք էլ զրահների վրայից վերնոցներ էին կրում:

Արքայի կառքի կողքով, մեկ առաջ ընկնելով, մեկ ետ մնալով նժույգավորում էր սպարապետը: Նա, ինչպես միշտ, սպառնազեն էր: Ծեր սպարապետը ուշադրություն չէր դարձնում անձրեւին: Արքայի ու թագուհու հրավերքը մերժեց, կառք չնստեց: Նա զգվում էր կառք կոչված այդ անվավոր տնակներից, որոնք,- ինչպես ասում էր, կոչված են փափկասուն մարդկանց ճարպակալելու համար, քանզի կարող են անգամ պառկած ճանապարհորդել:

Արքան վճռել էր դիտել Դվին կառույցները, ապա տեսնել անտառները, ստուգել տունկիները:

Միջօրեին, երբ անձրեւը դադարեց, արեւը դուրս եկավ, հասան Դվին:

Քաղաքը իրենից ներկայացնում էր հսկա բնակավայր: Հարյուրավոր փայտե տնակներ էին կառուցել գործավորների համար:

Հռովից քաղաքը ահագնանում էր միջնաբերդի անավարտ պարսպով: Արդեն սկսել են բարձրացնել պալատի պատերը: Արքան միտք է հղացել ամեն շինության համար մի վարպետ ընտրել, որպեսզի աշխատանքները ավելի արագ գնան, սակայն վարպետներին պարտադրել է խորհրդակցել իրար հետ: Նա անձամբ էր ստուգել ամեն ինչ: Նա արդեն իրեն հմուտ շինարար է համարում: Վաղուց գննել էր պալատի ու միջնաբերդի նկարները, տվել իր համաձայնությունը: Անգամ կաթողիկեի տեղն էր ընտրել: Կաթողիկոսը վստահում էր արքայի ճաշակին ու բարեկարգման շնորհքին:

Կանխավ պատրաստված հարթակների վրայով կառքերը մտան քաղաքի տարածք, կորան շինությունների, հեծանների բազմության մեջ:

Քաղաքը բռնված էր աշխատանքային տենդով, սակայն այստեղ ամեն մարդ իր գործը գիտեր: Արքան կաթողիկոսին առաջնորդեց կաթողիկեի հիմքերի մոտ: Կաթողիկեն այս վիճակում էլ երեւում էր, որպես հսկա շինություն, որի կողքին կաթողիկոսարանի հիմքերն էին: Արդեն հղկվում էին շենքի սյուները: Այնքան շինանյութ, տարբեր գույնի մարմար կար, որ մարդու աչք էր շաղկում:

- Մայր եկեղեցին կլինի բազմանիստ ու շքեղ,- առնելով կաթողիկոսի թելը, ասաց արքան,- մենք հրամայել ենք մարմարապատել հասակը: Արդ, վարպետները հղկում են սալերը: Դժվար գործ է:

- Լիահույս եմ, գեղեցիկ կլինի եկեղեցին: Այն Մեծ Հայքի արքայի արժանի ընծան է եկեղեցուն: Մենք գոհ ենք ու հավան քո ճաշակին:

- Սպասի՛ր դեռ, վեհափառ,- ոգեւորվեց արքան,- մի քանի տարի անց Դվինը կանցնի Արտաշատից: Միջնաբերդը կլինի անառիկ, իսկ այստեղ,- արքան հմուտ շինարարի պես ցույց տվեց առջեւում փռված տարածքը,- կլինեն ավագանու պալատներն ու տները: Նոր Ոստանը կմեծանա այնքան, որ հետագա տարիներին ստիպված կլինեն նոր պարսպաշար քաշել, քանզի տուն կառուցողները քանի գնում շատանում են: Մենք ցանկանում ենք, որ նախարարները տներ ու պալատներ ունենան Դվինում,- դարձավ սպարապետին,- ի՞նչ կասես սպարապետ, որքա՞ն պիտի լինի պարսպի հաստությունը, բարձրությունը:

Սպարապետը, որ մինչ այդ չէր մասնակցում խոսակցությանը, ասաց.

- Պարսպի բարձրությունը հարկ է լինի քսանհինգ- երեսուն կանգուն, լայնքն էլ՝ տասը...

- Շա՞տ չէ լայնքը,- հազարապետն էր:

- Ո՛չ, տեր հազարապետ, թող լայն լինի, չէ որ կառք պիտի շարժվի պարսպի վրայով: Հնար լինի քարանետ սարքեր, մեծ կաթսաներ դնել կուպր ու արծիճ հալելու համար: Հարկ է զինվորները ազատ շարժվեն պարսպի վրա: Ամեն քաղաք կառուցող հարկ է խորհի այն պաշտպանելու համար: Եթե մենք մոռանանք, թշնամին կպիշեցնի, իսկ խանդակը պիտի լայնացնել, թող լինի քսան կանգուն...

- Սպարապետ՛տ, դա գետ է,- արքան էր:

- Այո՛, Ազատ գետը շուռ կտանք քաղաք, այն չորս կողմից կշրջապատի քաղաքը, կդարձնի անառիկ: Չորս դռներ պիտի բացվեն կախովի կամուրջների վրա: Դվինը Մեծ Հայքի քաղաքամայրն է դառնալու, այն մեծ ու անառիկ պիտի լինի:

- Այո, ինչպես միշտ ու ամեն բանում իրավացի ես, տեր Մամիկոնեից: Ի՞նչ կասես միջնաբերդի մասին:

- Միջնաբերդը այնքան մեծ պիտի լինի, որ կարողանա մեծ քանակությամբ գործեր առնի իր մեջ, կարողանա պաշտպանել պալատն ու տիկնունին:

- Մեծ ծախսեր են պահանջվում,- մոմռացրեց հազարապետը, - միջոցներ չեն բավարարում: Հարկադրված ենք նոր հարկեր գանձել՝ նախարարություններից: Սպարապետը իրավացի է, սակայն մի փոքր ավելին է ուզում անել...

- Եղիցի՛,- ժպտաց կաթողիկոսը,- սպարապետը իրավացի է, զի նա է առաջին հերթին պատասխան իալու Աստծո ու ժողովրդյան առաջ: Երկրի պաշտպանությունը նրա ձեռքին է:

Արքան շքախմբով գնաց միջնաբերդ: Կաթողիկոսը վերցրեց սպարապետի թելը:

- Տե՛ր Մամիկոնեից, խոսելիք ունեմ, սակայն ոչ այստեղ: Հույժ կարելոր է քո խորհուրդը: Մեծ պատիվ կանես ծեր հոգեւորիս այցելելով,- հոգոց հանեց,- հապաղումը հղի է վտանգներով:

Սպարապետը ի նշան համաձայնության գլխով արեց:

Նա ցանկանում էր խնդրել արքային ավելացնել գործավորների թիվը, լավ էր հիշում Հայկի խնդրանքը խանդակները փորելու մասին: Հանկարծ հիշեց կաթողիկոսի խնդրանքը. «Ի՞նչ հարց է, որ լուծվելու է առանց արքայի գիտության: Եվ ինչու՞ պիտի ես մասնակցեմ»:

Օրվա մնացած մասը արքայի հետ էր, ցույց էր տալիս միջնաբերդի գաղտնուղիները, հիմքերը, իսկ երբ շքախումբը բռնեց Արտաշատի ճամփան, նա առաջինն էր, որ արագացնում էր երթը, ցանկանալով ժամ առաջ պարզել կաթողիկոսի հրավերքի պատճառը:

Ահա էլ Արտաշատը, արքայի կառքը գնաց պալատ, կաթողիկոսը թեքվեց կաթողիկոսարանի կողմը: Քիչ անց ներս մտավ մի երիտասարդ արեղա, խոր խոնարհվեց սպարապետին, հրավիրեց կաթողիկոսի մոտ: Կաթողիկոսարան գնալիս նրան հետեւում էր թիկնապահ Պարգելը:

- Հույժ կարելոր է ու գաղտնի մեր խոսակցությունը,- սկսեց կաթողիկոսը,- մի օր առաջ թագուհին նամակ է գրել Բակուր բղեշխին: Դու հավանական է ականջալուր ես լուրերին, որ պտտվում են թագուհու անձի շուրջը,- սպարապետը գլխով արեց,- միով բանիվ, նամակը մեր ձեռքն ընկավ,- կաթողիկոսը դժվար էր շնչում, ասես ծանր բեռ էր ուներին:

Սպարապետի նախատիկքով լի հայացքից ազատվելու համար, նամակը նրան մեկնեց:

- Ստիպողական է մեր կռիվը ամեն տեսակ կռապաշտների դեմ ի շահ մեր կրոնի մաքրության, մեր հոտի... տեսելով, որ սպարապետը չի ընթերցում նամակը, Աղբիանոսը շարունակեց,- Տե՛ր Մամիկոնեից, մենք այլ ելք չունենինք: Վերջիվերջո պիտի պարզվի այդ կնճռոտ հարցը: Մենք աստծուն կաղոթենք, որ թագուհին անպարտ դուրս գա:

Նամակի ընթերցումից հետո սպարապետը նայեց մռայլ, թափ տվեց գլուխը:

- Նամակի մեկնում կախված է թագուհու նկատմամբ ունեցած վերաբերմունքից, հարգանքից... Նրանք նշանված են եղել, սիրել են իրար,- գայրացավ,- այստեղ խոսվում է այն մասին, որ բղեշխը գա հանդիպի քեզ հետ ու ցրի կասկածները: Չուր եք կարծում, որ միայն ձեզ է տված իրավունքը հոգիները քննելու: Դուք խորհում եք, այո՛, այո՛, կարծում եք թագուհին խորամանկում է, կանխավ պայմանավորվել են բղեշխի հետ: Այս նամակով քեզ բղեշխի ձեռքն է տալիս, ինչի՞ համար,- լռեց: Այն, ինչ ասաց հետեւյալ պահին, ապշեցրեց հոգեւորներին:

- Բակուրը քեզսպանելուց հետո ձեռք կկարկառի Մեծ Հայքի գահին ու այդ գործում կօգնի Շապուհը:, իսկ դա վտանգներով է հղի երկրի համար, եկեղեցու համար, քանզի նա հեթանոս է, իրեն համարում է արիական ասպետ:

Սպարապետը կարճ ու հակիրճ մեկնեց նամակի բովանդակությունը, ավելին, զարմացրեց նրանց.

- Եվ դուք վճռել եք նամակը նամակատարի հետ ուղարկել Աղձնիք, իսկ ինձ հրավիրել եք ձեր անձերը պաշտպանելու համար: Մի՞թե իրավացի չեմ, իսկ ինչո՞վ եք փակելու նամակատարի բերանը, հասու չեմ, քանզի չեմ ճանաչում նրան:

- Դու ամեն բան ստույգ մեկնեցիր: Մեզ մնում է ասել, որ նամակատարը չի խոսի այդ մասին, ձեռնառու չի եւ ոչ անվտանգ նրա համար:

- Ասել է թե Բակուրից ավելի է վախենում, քան արքայից: Վատ չէ, դա թագուհու սխալն է, որ ձեզ հնար է տվել գործելու: Խելացի կին է, սակայն այս գործում սխալ է թույլ տվել: Նամակատարը պիտի լիներ ձեռնապահ մարդ: Արդ, ի՞նչ, պիտի հետաձգե՞ս Աշտիշատ գնալը, թե քեզ իմ զինվորներն են պետք:

Կաթողիկոսը հոգոց հանեց: Սպարապետին անհնար էր խաբել: Փորձով, ապրած կյանքով հարուստ գորականն անմիջապես հասկացավ նրանց, ավելին՝ կռահեց հետեւյալ քայլը:

- Տե՛ր Մամիկոնեից, ամեն բան արվում է ի շահ երկրի ու գահի: Լիափույս ենք, կօգնես մեզ:

Ձմռան բերանը հասած աշնանային անձրեւները հնար չէին տալիս Երեւմունքում խաղալ, իսկ գնալ պալատ Նազենիկը չէր ցանկանում, վախենում էր հանդիպել Տիրանին: Կար նաեւ մի այլ հանգամանք՝ հուռուղիքը: Չէ, նրան չէր խանգարում բարձր ծագումը, արիական զարմ լինելը, սակայն այն, ինչ

ծնվում էր նրա մեջ, սարսափեցնում էր: Լինելով բարի եուրոյամբ՝ չէր ցանկանում ընդունել հոգում ծնվող ատելությունը: Նրա համար նոր ու խորթ էր այդ զգացմունքը: Նա չի ցանկանում խաղալ այն մարդկանց համար, որ սպանեցին պապին, հորն ու մորը: Իսկ չխաղալ, նշանակում է կտրվել Երեւմուքից, բացել գաղտնիքը, ասել, թե ով է ինքը, վախենում էր: Ինչի՞ց էր վախենում, թույլի՞ց, դաշույնի՞ց... Սակայն նա գիտեր նաեւ, որ Գրիգոր սուրբը բացեց դպրանոցներ, ուր քրմերի զավակները դարձի էին գալիս, նոր կրոն էին ուսանում: Իսկ քրմապետ Արծանի թոռնուհին, սուկական հայուհի չէ, ինչպէ՞ս կվարվեն նրա հետ: Վերջապես նա Դեմետրի դուստրն է, որ սպանել է Մոկաց իշխանին: Դա ամենքն էլ գիտեն երկրում: Մի կողմից արիական բարձր ծագումը, մյուս կողմից այս ծանր սպասումը, այս անհայտությունը ծանր քարի պես ճնշում են հոգին: Ի՞նչ անել, մոռանա՞լ հուռութեքը, մոռանալ իր ով լինելը... Ինչպէ՞ս ապրել առաջվա պես, երբ հուռութեքը ջերմացնում է կուրծքը: Ցանկանում է գտնել պապի ու հոր գերեզմաններն ու մի կուշտ լաց լինել, իսկ հետո՞... Իսկ հետո էլ նայում է փոքրիկ դաշույնին, որ փայլեցնելուց հետո հայտնաբերել է օձի գլխի պատկերը: Ի՞նչ կլինի հետո, կկտրի երակն ու կհանգչի մինչեւ առավոտ... Հասկացել էր վերջապես, որ մինչ այդ ուրիշների առաջ չնվաստանալու իր ձգտումը գալիս էր ծագումից: Գիտե՞ր արիականք չէին նվաստան, մահը կգերադասեին նվաստացմանը... Ահա թե ինչու եմ ես հպարտ, իմ մեջ հառնել է հորս ու պապիս արյան հպարտությունը, իսկ ես՝ անիմա, նաեւ անգիտակ, այդ ամենի պատճառը կապել եմ Երեւմուքի հետ...

Դուրս եկավ բակ, ուր վարդի մի քանի թփեր կային: Ուշացած մի վարդ տեսավ, ձեռքը երկարեց, ցնցվեց, ստվեր անցավ կողքով, ետ նետվեց տուն, դուռը փակեց, բարձի տակից հանեց դաշույնը: Դողում էր, վաղուց այդպես չէր վախեցել... «Մի՞թե իմ արիական քույրերը կվախենային,- հանկարծ զարմանալի բան կատարվեց, դողը կտրվեց, հանգստացավ, ուզեց ծիծաղել,- ահա թե ինչ ասել է արիական, այսինքն անվախ, անկախ, հպարտ»:

«Իսկ եթե Տիրանն է,- սարսռաց, անհամեստություն համարեց: Դե, մի անգամ սխալվեց եկավ, իսկ ես... Գերադասեց գողի հանդիպել...»:

Դուռը հագիվ լսելի թակեցին: Նազենիկի շունչը բերանին հասավ: Այդպես անհամարձակ կարող էր միայն նա թակել դուռը, խորհեց Տիրանի մասին, չգիտես ինչու, նրան անհամարձակ համարեց, ինքն էլ զարմացավ: Հասկացավ, որ ձեռք էր բերել սթափ խորհելու ընդունակություն, հարցրեց.

- Ո՞վ է, թե՞ ավազակ ես: Ես աղքատ կին եմ, ոչինչ չունեմ թալանելու: Եթե օթեւան ես ուզում, գնա իջեւանատուն, կամ հարեւանների մոտ...

Խոսում էր, իսկ ներքին ձայնը, որ վերջերս էր ծնվել նրա մեջ, հուշում էր՝

- Տիրանն է, գահաժառանգը սիրում է քեզ...

- Նազենի՛կ, բաց արա, ես եմ՝ Տիրանը:

Նազենիկը մեջքով հենվեց դռանը, ուզում էր փակել դուռը, որ ոչ ոք չէր փորձում կտրել, սակայն այդ դուռը նա արդեն ուզում է իրենից պաշտպանել, իր ձեռքերից, որ մղվում էին սողնակը ետ քաշելու:

Այդպես էլ չհասկացավ, ինչպես բացեց դուռը: Տիրանը ներս մտավ, թըջված էր: Վերնոցից ջուր կաթեց հատակին: Նայեց Նազենիկի ձեռքի դաշույնին, քմծիծաղ տվեց.

- Բարի երեկո, Նազենիկ, դրանով ավազակի ճամփա չես փակի,- նստեց աթոռակին,- ես երկար կռվեցի ինքս ինձ հետ, սակայն չգալ չկարողացա: Զո մասին եմ խորհում օր ու գիշեր: Դու մի անհանգստանա, ես կգնամ, իսկ խոստանալ, որ այլեւս չեմ գա, չեմ կարող: Ես սիրեցի քեզ: Երջանիկ եմ ու դժբախտ: Չէ որ այս աշխարհում մեկը պիտի լինի, որ ես էլ սիրեմ: Սիրում էի մորս: Նա իր ուշացած կրքով ավելի դարձավ ինձ: Ես մնացի մենակ: Կնոջս չեմ սիրում, թեեւ նա ինձ սիրում է, ու նվիրված է հոգով ու մարմնով: Իսկ սրտին չես հրամայի: Մոտ արի, նստիր այս աթոռակին: Եթե հեթանոս լինեի, քեզ պալատ կտանեի, որպես երկրորդ կին, գոնե որպես օրինական կին, իսկ այս կրոնը արգելում է: Մեր նախնիք չէին վախենում սիրելուց,- տեսավ Նազենիկի զարմացած հայացքը, պատճառը չհասկացավ, շարունակեց,- այո՛, այո՛, նրանք ազատ էին նմանօրինակ արգելքներից, քանզի գերագույն երջանկությունը սերն էին համարում...

Վերցրեց Նազենիկի ձեռքը տարավ շրթունքներին: Նազենիկը ձեռքը ետ չքաշեց:

- Ես ռամկուհի եմ...

- Դու հոգով հավասար ես ինձ ու ավելի բարձր:

Տիրանը զգաց աղջկա ձեռքի ցնցումը:

- Քեզ ի՞նչ եղավ, նստիր: Դու դողում ես: Մի կում ջուր կամ գինի քեզ կկազդուրեր,- Նազենիկը նստեց աթոռակին: Տիրանը մռնչաց ու ետ թռավ:

- Դու խոսք ես տվել ոսկերիչին, ընծա ես ընդունել նրանից...

- Լռի՛ր, Տիրան,- այնքան հանգիստ ասաց Նազենիկը, որ գահաժառանգը ապշեց,- սա իմ մոր հուռութեքն է, նանեն տվեց, որին մայր եմ կարծել այսքան տարիներ: Երկու օր առաջ եկավ, նա իմ ստնտուն է եղել, իսկ ես մայր եմ կարծել,- պարանոցից հանեց ու Տիրանին տվեց հուռութեքը:

Տիրանը զարմացած մեկ հուռութեքին էր նայում, մեկ Նազենիկին, վերջապես խոսեց.

- Ո՞վ է քեզ տվել այս հուռութեքը:

- Ասի, չէ՞, նանեն, մայրս: Երկու օր առաջ եկավ, հիվանդ էր: Հարեւաններին՝ Սոկրատի ու Եսթեր մայրիկի ներկայությամբ ասաց, որ սա իմ մոր հուռուքն է: Ես Դեմետրի դուստրն եմ, Արծան քրմապետի թոռնուհին: Ահա իմ գաղտնիքը:

- Եվ դու շոշափել ես սա, զննե՞լ ես,- հարցրեց Տիրանը ավելի քան զարմացած,- դու այն կրել ես կրծքիդ վրա...

- Ի՞նչ կա որ:

- Այն, որ դու կարող էիր մեռնել օձի ըույկից,- քմծիծաղ տվեց Տիրանը, ապա հուռուքը բռնեց ույսի դեմ, սեղմեց օձի դուրս ընկած աչքերը: Նազենիկը ճչաց, օձի գլուխը ցնցվեց, խայթելու շարժում արեց, բացված երախից կապտավուն հեղուկ հոսեց,- սա էլ թույլը: Այսպիսի հուռուքներ կրել են քրմապետերը ու բարձրաստիճան տիկնայք: Սա ամենայն հավանականության Վիշապ քաղաքի Մեծ քրմապետ Արծանի կնիքն է: Կասկած չկա, որ Դեմետրի դուստրն ես: Դու համարյա արքայական ծագում ունես: Դու՛, դու՛, արիական գարմ ես, հայարիական օրիորդ... Սա բավական է, որ հոգեւորները...

- Ես գերադասում եմ ապրել որպես խաղարկու, քան մեռնել որպես իշխանուհի: Ես գաղտնիքս կպահեմ:

- Արքան կարող է համոզել վեհափառին քեզ պալատ վերցնել: Եվ մի մոռացիր, որ պալատում կա մեկը, որ գիտե գաղտնիքդ:

- Ո՞վ,- չհասկացավ Նազենիկը:

- Մեծ Հայքի գահաժառանգը:

- Նա սիրում է ինձ, թե՞ այս ամենը լոկ խոսքեր են: Ասա՛, դու ինձ սիրու՞մ ես,- աղջկա խոսքերում այնքան մտերմություն կար, որ Տիրանը քրտնեց:

Նազենիկը նայում էր հարցական, ինչ-որ նոր բան էր հայտնվել նրա հայացքում: Ամոթխած աչքերի խորքում չարածնի կրակներ կային, որոնցից սիրո հյուլներ էին դուրս թռչում, այրում Տիրանին, այրում էին այրվելով նաեւ:

- Երդվում եմ սիրել քեզ մինչեւ գերեզման: Քո ծագումը չի փոխում իմ վերաբերմունքը,- իսկ մտքում խորհում էր, արքա դառնալիս նրա համար պալատ կառուցել, այնտեղ շքեղ մի Երեւմունքի տուն,- ես այլեւս չեմ կարող,- գլուխն առավ ափերի մեջ, հանկարծ վեր թռավ,- ես ամեն բան կպատմեմ Սաթենիկին, նա վանք կմտնի ու մենք կամուսնանանք:

- Իսկ Երեւմունքը,- Նազենիկը ժպտում էր:

- Հա, Երեւմունքը, գահաժառանգի կինը չի կարող խաղարկու լինել: Սակայն քո գաղտնիքը շատ բան է փոխում: Քո ծագումը կստիպի քեզ այլ կերպ նայել ամեն ինչի վրա, փոխել վերաբերմունքը անգամ Երեւմունքի մասին:

- Ա՛յ, տեսնում ես,- տխրեց Նազենիկը,- գնա՛, լուսանում է:

Տիրանը այդպես էլ չհասկացավ, ինչպես գրկեց Նազենիկին, ինչպես գտավ աղջկա շրթունքները, թերեւս այդ շրթունքները իրենք էին փնտրում, համբուրեց ու թափով ետ քաշվեց:

- Ների՛ր:

Նազենիկը երկու ձեռքով ծածկել էր դեմքը: Տիրանը շփոթված դուրս գնաց: Լուսանում էր: Գլխիկոր քայլեց դեպի նժույգը: Հակասական մտքեր էին տիրել նրան:

Արտաշատի սրտի բաբախյունը շահաստանում է: Այն ամենամեծն է Մեծ Հայքում եւ ոչ միայն մեր երկրում: Ով ասես որ չկա շահաստանում, ինչ լեզվով ասես որ չեն խոսում, ինչ գույնի մարդ ասես որ չկա այստեղ, անգամ գալիս են հեռու-հեռավոր Հնդստանից, ծուռվիզ ուղտերով հասնում են սրբազան Գանգեսի ափերից, հեռու-հեռավոր երկրներից՝ Հռոմից, Պարսկաստանից, Ասորիքից, Նեղաջք քուշանների երկրից, անգամ դեղնադեմերի երկրից՝ Ճենաց աշխարհից էլ վաճառականներ կան:

Այստեղ վաճառականները իրար հասկանում են: Կա մի լեզու, որ հարազատ է ու հասկանալի ամենքին՝ ոսկու լեզուն է:

Շահաստանի մի պատը հենված է արհեստավորաց թաղին, մյուսը քաղաքի պարսպին: Մի քանի շարքերով ապրանքներ են շարած բաց երկնքի տակ՝ մրգեր, բանջարեղեն, չէ՛, չէ՛, սրանք չեն Արտաշատին փառք բերում: Շահաստանի փառքը վաճառատներն են, ուր հավաքվում են հեռու երկրներից եկած վաճառականները, այլազգի վաճառականները Արտաշատում իրենց գործընկերներն ունեն, որոնց մոտ իջեւանում են: Հաճախ էլ իրենց հայ գործընկերոջը մի փոքր շահով տալիս են իրենց ապրանքներն ու ետ են դառնում տուն: Հայաստանից տանում են այնպիսի ապրանքներ, որ վաճառվում են իրենց երկրներում:

Վաճառականները հավատում են իրար: Նրանց խոսքն ու կնիքները արքայական հրովարտականների արժեք ունեն: Նրանք էլ են գրով ու կնիքով պայման դնում, սակայն ամենաբարձր վաճառականի խոսքն է: Եվ որքան էլ ասեն, որ առնող-վաճառողը խարդախ կլինի, դա մի կողմն է, դա վերաբերում է

մանր-մունր մարդկանց, ոչ իսկական վաճառականներին, որ երկրից-երկիր են անցնում, կռվում են ավազակների դեմ, մեռնում են ու հեռանում: Հաճախ նրանք անհայտանում են մի քանի տարով ու մեկ էլ տեսար լուր առան, որ զարկվել է ավազակների դեմ կռվելիս, այ՛ ըեզ հրաշք, այդպես էլ է պատահում, մեկ էլ տեսար՝ այդ զարկվածը հայտնվում է արտաշատցի իր գործընկերոջ մոտ մի հատիկ շապիկով, կիսաքաղց վիրավոր ու այստեղից հեռանում է քարավան կապած:

Արտաշատի փառքը դղրդում է աշխարհով մեկ: Հայ վաճառականներին ճանաչում են հեռու-հեռավոր երկրներում:

Հարուստ երկիր է Մեծ Հայքը: Նրա շահաստանը ձգում է աշխարհի վաճառականներին, այստեղ հանդիպելու, ապրանքներ գնելու, վաճառելու, փոխանակելու են գալիս:

Հարուստ երկիր է Մեծ Հայքը, Սպերում ոսկու հանքեր կան, Ռշտունիքում երկաթ ու կապար: Հայաստանի սրաքարերը լավագույններն են աշխարհում, էլ ինչ ասես որ չկա շահաստանում՝ ապակյա զարդեր, ոսկե զարդեր: Եվ ամենքին ձգում է հայոց Որդան ներծկը, որից ոչ մի տեղ չկա աշխարհում:

Վաճառականների համար ասում են, թե ապրում են ոսկի դիզելու մոլուցքով, չեմ իշխում, կան այդպիսիները, սակայն կան նաեւ այնպիսիները, որ ապրում են նոր աշխարհներ տեսնելու, նոր ուղիներ բացելու, դժվարությունները դիմագրավելու համար: Դրանք վաճառականական դասի ավազներն են, նրանց ընտրանին:

Արտաշատցի Բուրակի բախտը բերել է, նա մի այդպիսի գործընկեր ունի Հնդստանից: Ռամ է անունը, որ երկու տարին մեկ գոհարեղեն է բերում Արտաշատ: Ինքը չի վաճառում, այլ գործը հանձնում է Բուրակին: Հայաստանից տանում է մեծ քանակությամբ Որդան Կարմիր: Ռամը ասում է՝ իրենց երկրում Որդան Կարմիրը մեծ համարում ունի: Արդեն մի տարի է ուշացել է Ռամը: Արդ, Բուրակը մնանկացման շեմին է: Նա մեծ քանակությամբ Որդան Կարմիր է գնել Ռամի համար: Եթե մինչեւ ձմեռ հնդստանցին չգա, սպիտակած կլինի վաճառել ներկը, իսկ Արտաշատում այն գին չունի: Բուրակը խորհում է՝ ստիպված կլինի գնալ աշխատանքի:

Սարսափով է նայում իջեւանատուն գնացող ծառային, ամեն անգամ վերադառնալիս բացասական շարժում է գլուխը, նայում մեղավոր հայացքով: Բուրակը բաց է պահում վաճառատունը, որպեսզի չասեն թե սնանկացել է: Արտաշատցի հռչակավոր գոհարավաճառ Տիգրանից գոհարեղեն է վերցրել, այն չի վաճառում, գինն այնքան է բարձրացել, որ մարդիկ չգնեն: Փորձված վաճառականները հասկացել են նրան, քմծիծաղ են տալիս:

Նա ոչ մեկի հետ չի կիսում խոհերը: Մեկ վճռեց քարավան կապել, գնալ Պնդստան, ապա թողեց այդ միտքը, քանզի կկորչեր ճանապարհին, որովհետեւ նրա հետ չէր ամենագետ Ռամը, որ գիտեր աշխարհի ճանապարհները, ծանոթ վաճառականների, ցեղապետների, արքաների: Արքաներից հրովարտակներ էր վերցնում երկրով անցնելու համար, հարկն էլ քիչ էին վերցնում: Չարմանալի հատկություն ունի Ռամը, կարող է լեզու գտնել ուզածո մարդու հետ, կարող է ստիպել օձին ձեռքերը լիզել: Շատ լեզուներ գիտե Ռամը: Բուրակը երկու տարի ապրեց Հնդստանում, սակայն նրանց լեզուն չսովորեց, սակայն Ռամին բավական եղավ մեկ ձմեռ մնալ Արտաշատում ու նա ազատ խոսում է հայերեն, գիտե հայոց պատմությունը:

Տխուր է Բուրակը, լուր չկա Ռամից, ասես նրա հսկա քարավանը ասեղ լինի խոտի դեզի մեջ: Չէ՛, անհույս է Բուրակի սպասումը... Ամեն բան կորավ, հարկ է ներկը վաճառել ու վաճառականներից մեկի մոտ ջորեպան վարձել: Ամոթից գլուխը կախ քարշ տալ կյանքի մնացած օրերը: Դեռ լավ է, կնոջ մահից հետո չամուսնացավ: Ինքն է ու իր չոր գլուխը: Մի կերպ քարշ կտա Աստծո կողմից տված կյանքի մնացորդը:

Փակեց վաճառատունը, վճռեց մի վերջին անգամ պտույտ տալ շահաստանում, որպես այս ամենի մասնակից, որպես պատվավոր վաճառական:

Անցավ մրգավաճառների մոտով: Խաղողի, դեղձի, տանձի մեծ շեղջակույտեր կային: Վաճառողները այնպես էին գովաբանում իրենց մրգերը, ասես իրոք աշխարհում Հայաստանի խաղողից քաղցրը չկա, որ Հայաստանի նուռը աշխարհի զարդն է: Սրանք վաճառողներ են: Հարգանքով են բարեւում իրեն, իսկ վաղը, անգամ սրանք, երես կթեքեն իրենից, ինչ կարող ես անել: Մոտեցավ Տիգրանի վաճառատանը: Նայես՝ աչքերդ կշաղվեն, սկուտեղի վրա բուռ-բուռ ալմաստ, փիրուզ, հակիկ, մարջան, սարդիոն, սուտակ, հակիկթ, մարգարիտ: Ահա գոհարեղենի զարդը, թագուհին՝ ադամանդը: Սրա մի հատիկով կարելի է շահաստանի կեսը գնել, ահա կարմիր նռնաքարերը: Աստված իմ, ողջ աշխարհն են դատարկել, բերել Արտաշատ: Ինչ ասես որ չկա այստեղ՝ հայկական պողպատիկ սրեր, զրահներ, նիզակներ, աշտներ, նրաններ, նժույգի զարդարուն թամբեր, սանձեր, երասաններ: Հապա զարդերը, այնպիսի բազմազանություն է, որ ամեն նրբանկատ արտաշատցի կինը կիսելագարվի: Դե՛, որ կինը ախ չի քաշի այս հրաշքին նայելիս՝ մատանիներ, ապարանջաններ, թեւկապեր, շղթաներ... Ոսկի՛, ոսկի՛, ամենուր ոսկին է տիրում... Ամեն տեղ Դեղին սատանայի տիրույթներն են: Նրանով է չափվում, նրանով է գնահատվում ամեն բան, ամեն բան, ավա՛ղ...

Բուրակն այսօր իրեն կողմնակի դիտող է համարում: Նրան զարմացնում է պարսիկ վաճառականը, որ ցանկանում է արտաշատցի մի կնոջ ականջողեր վաճառել: Տես, ինչպես է երկինք բարձրացնում վարպետին, ասում է՝ Շապուհ արքայի ոսկերիչն է պատրաստել ականջողերը: Երդվում է Մազդաոյով, երդվում է Զրիստոսով, անգամ Չեսին է հիշում եւ այս ամենը մի զույգ ականջող վաճառելու համար: Յէ՛, այսօր այդ ամենը չի հուզում Բակուրին: Նա կգնա անասնավաճառների շարքը ու մի ամրակազմ ջորի կգնի, վաղը ջորին առաջն արած կգնա քարավանատուն, կասի... Մեկը քաշում է թելից:

- Տե՛ր իմ, տե՛ր իմ...

Բուրակը զարմացած նայում է ծառային: Ծերունու աչքերից արցունքներ են հոսում:

- Ես վաղը ծառա կդառնամ: Ծառան ծառա չի կարող ունենալ: Թորոսին ինչ, նա ծառա է, ծառա էլ կմնա,- աչքերը չովեցին, վախեցավ հավատալ, հասկանալ ծերունուն,- Օ՛, Արամազդ աստված, Զրիստոս ամենագոր: Ես պարտաստ եմ ծնկելու... Թորոս, խոսիր, եկե՛՛լ է:

- Եկել է տեր իմ, ասաց, իմ եղբորն ասա, որ գալիս եմ գրկելու նրան, հետո ինչ-որ Գանգեսի մասին ասաց, չեմ հիշում էլի բաներ...

Բուրակը չէր լսում ծառային, թեև սա վազելով կողքից, ինչ-որ խոսում էր, պատմում: Առանց պատասխանելու ծանոթների բարեկեցիկներին, արագ գնաց վաճառատան կողմը: Չէ՛, ջորեպան չդարձավ գոհարավաճառ Բուրակը: Նա ուզում է պահի թուլության համար մեղադրել ճակատագիր կոչված վարձակին, աստվածներով լի ու դատարկ երկնքին, սակայն...

Հասավ վաճառատուն, թիկունքին նժույզների սմբակածեծ լսեց, ետ նայեց: Սիրտը թունդ առավ: Վաճառատուն էին գալիս երեք հեծյալներ, առաջ ընկած հոյակապ նժույզի նստած գալիս էր Ռամը: Նրա տեսքը զարմանք ու ցավ պատճառեց Բուրակին: Ռամի մի աչքը ծածկված էր սեւ լաթով, որի ծայրերը կորում էին սաղավարտանման փաթեթի տակ: Դեմքը գունատ էր, Ռամը ցած թռավ նժույզից, գրկեց Բուրակին:

- Ներող եղիր, իմ հայ եղբայր, որ այսքան ուշացա: Երդվելով երդվում եմ՝ աճապարել եմ Արտաշատ, սակայն տեսնում ես վիճակ: Երկու քարավան կորցրեցրի, երկու անգամ ընկա ավազակների ձեռքը: Դու հանգիստ եղիր, ինչ-որ պատվիրել ես, բերել եմ,- աչքը զցեց վաճառատանը, տխուր ժպտաց,- գիտեի, սնանկացման շեմին ես: Փա՛ռք աստծո, հասա:

Բուրակը չէր կարող խոսել, հուզվել էր, ինչ-որ դավաճանական բան դեմ էր առել կոկորդին: Միայն կարողացավ ձեռքով հյուրերին ներս հրավիրել: Սրանք ձեռնաափերը դեմքի մոտ իրար մոտեցրեցին, բարեկեցին իրենց ժողովրդի սովորույթով: Թորոսը գինի բերեց, աղանղներ:

- Այսքան տանջվելուց հետո, հարկավ, իրավունք է գինի խոսել,- հայերենին մայրենին խառնելով, ասաց Ռամը,- գիտես, ուրակ եղբայր, մեր երկրում էլ գինիներ շատ կան, տարբեր գույնի ու համի, սակայն ես միշտ կարոտել եմ արտաշատյան դառը գինին,- ասածը թարգմանեց ընկերներին: Սրանք ոտքի ելան, խմեցին իրենց բարեկամության կենաց թասը:

Երեկոյան, երբ վաճառատուն տեղափոխեցին ապրանքները, նստեցին իրար դեմ:

- Պատմիր, ինչե՛ր ես քաշել, որտե՛ղ են գարկել, տեսնում եմ՝ սրի հետք է: Մռայլ ամպ անցավ Ռամի դեմքով:

- Երկար պատմություն է, քուշանաց երկրում գարկեցին քարավանս,- հայերեն բառեր ընտրելով, շարունակեց,- անձերս հազիվ փրկեցինք: Մնացի մորե մերկ: Զաղցած, տանջահար հասա տուն: Տաժանելի դժվար էր, նորից քարավան կապեցի, ստույգ է, մեծ վնասներ էի կրել: Թերեւս սուրբ Գանեսը գայրացել էր ինձ վրա, քարավանս դարձյալ գարկեցին, աչքս կռվի մեջ կուրացավ: Կիսամեռ ընկած էի ավազներին, երբ մի ծեր քուշան կին գտավ ինձ, տարավ լեռները: Երկու շաբաթ պառկած եմ եղել անգիտակից: Ինչ-որ թուրմեր է տվել ծեր կինը: Կամաց-կամաց կյանքի նշաններ եմ ցույց տվել, ապա տեսա շրջապատս, հասկացա, ամեն բան կորցրել էի: Հուսահատությունս այնքան մեծ էր, որ դաշույնս խրեցի կուրծքս: Աստծո նախախնամությունն էր, որչ մնացի: Դարձյալ այդ կինն էր, փրկեց կյանքս: Դաշույնիս սայրը չէր հասել սրտիս, թույլ էր ձեռքս: Երկու ամիս հետո միայն Թուրիի հետ գնացինք տուն: Դու չես պատերազմում ինչ է այդ կինը ինձ համար: Մայրը մի անգամ է կյանք տալիս որդուն, իսկ նա երկու անգամ կյանքի կոչեց ինձ, փրկեց կյանքս: Ազգականներս օգնեցին նոր քարավան կապեցի, մեծ ջոկատով անցա Հոռմ, հաջող էր, շահավետ: Չէի մոռացել պատվերդ, սակայն դեռ չէի կարող գալ Արտաշատ: Իսկ արդ, ամեն բան կարգավորվեց: Բերել եմ պատվերներդ, դու կարող ես ինձ համար ներկ գնել, սակայն շատ եմ հոգնել: Այս ձմեռ կմնամ Արտաշատում: Ես մեծ ջոկատ պիտի գումարեմ, անցնեմ քուշանաց երկրով, դեռ հաշիվներ ունեմ քուշանների հետ: Դու կարող ես չխոսել, դատարկ վաճառատունդ պերճախոս վկայություն է վիճակիդ: աստված բարի, իմ հայ եղբայր, մենք դեռ առեւտուր կանենք, դեռ կհռհռանք,- տանջալի շարժումով ուղղեց աչքի կապը, գտել էր հայերեն բառը,- մենք դեռ կհռհռանք ճակատագրի երեսին:

Կաթողիկոսի կառքը արքայական պողոտայով ընթանում էր Արտաշատ: Աղբիանոս եպիսկոպոսը

ցանկացել էր կիսել վեհափառին սպասվող վտանգները:

Կառքի առջեւից ու հետեւից ձիավարում էին հեծյալ ջոկատի մարտիկները: Մի քանի հոգեւորներ ջորիներ հեծած, գալիս էին կառքի հետեւից:

Քարավանը բավականին արագ էր ընթանում: Տուկատը գլխավորում էր Արշավիր Կամսարականը, սպարապետի դուստրայրը: Նա գիտեր սպասվող հարձակման մասին:

Սպարապետը արագ երթով անցել էր առաջ, Ողականում սպասում էր լուրերի Աշտշատից: Նրա հետ էր մյուս դուստրայրը՝ Սյունյաց Անդովկ իշխանը: Վաչե սպարապետը իրավացիորեն խորհում էր, որ Բակուր բղեշխը չի հանչգնի գորքեր ուղարկել Աղձնիքից: Նա կարող է տարբեր ճանապարհներով ծայտյալ զինվորներ ուղարկել, անհրաժեշտ պահին գումարվելու, կաթողիկոսի վրա հարձակվելու համար: Այդ հարցում էլ սպարապետը անսխալ դուրս եկավ: Խուզարկուները զեկուցում էին, որ մեծ թվով ուխտավորներ են գալիս Աղձնիքից: Դրանք մեծ մասամբ ծայտյալ զինվորներ էին: Ճանապարհին հարձակումը չէր բացառվում: Սակայն Կամսարաց Նախարարի ջոկատը զսպիչ արգելք էր: Դավադիրները գայլերի պես ժնգժնգացնելով ատամները ընկել էին կառքի հետեւից, թեւէ չէին հանդգնում մոտենալ: Սպարապետին ու փեսաներին անհանգստացնում էր մեկ այլ պարագա: Տարոնում մի քանի ծայտյալ քուրմ էր հայտնվել, մարդկանց հրահրում էին Աշտշատի վրա հարձակվել: Դա արդեն նոր բան էր, որ խիստ անհանգստացնում էր նրանց: Այդ պարագայում բղեշխը խելացի էր խորհել, եթե հարձակման մասնակցեին Տարոնի բնակիչները, հետագայում մեղքը կգցեին բնակիչների վրա: Տարոնի հողում դեռ թարմ էին կրոնական պատերազմի հուշերն ու վերքերը չէին սպիացել...

Խուզարկուները զեկուցեցին, որ բղեշխը հարձակման գործը դրել է ոմն սեպուհ Առնակի վրա:

Կառքը մոտենում էր Աշտիշատին, ասել է թե ճանապարհին այլեւս հարձակում չի լինի: Այս պարագան հուշում էր՝ Աշտիշատը կպաշարվի: Քանի ավելանում էին Առնակի կողմնակիցների թիվը, այնքան սպարապետը համոզվում էր, որ վանքը պաշարելու են, թեւէ այն ամրոցից պակաս ամուր չէր, սակայն կար վանքը ներսից բացելու վտանգը:

Այդ պատճառով սպարապետը վճռեց հարձակվողներին ոչնչացնել վանքի պարիսպների տակ: Հարձակումը արագացնելու նպատակով լուր տարածվեց, որ կաթողիկոսը աճապարհով ետ է դառնալու Ոստան:

- Իրավացի է սպարապետը, ես չեմ կարող այլեւս սպասել մինչեւ Փրկիչի խաչելության փրկական-գոհացողական պատարագի մատուցմանը: Դեռ երեք ամիս կա...

- Մինչ այդ մեզ կարող են մի քանի անգամ նետահարել կամ թույնել,- դառն քմծիծաղ տվեց Աղբիանոսը:

- Հասնում ենք, առջեւում Աշտիշատն է,- լսվեց իշխանի ձայնը:

Կաթողիկոսը ետ տարավ վարագույրը:

- Հարձակում չի լինի,- Նժույզը մոտեցնելով կառքին՝ ասաց իշխանը,- մեզ կպաշարեն վանքում:

Քիչ անց երեւաց վանքը, որ թառել էր Քարքե լեռան վրա ու նրա դարավոր կաղնիների հարեւանությամբ հիշեցնում էր հեթանոս ժամանակների բազիլիկները: Հյուրընկալորեն բացվեցին Աշտիշատի դռները: Կառքն ու հեծյալները ներս մտան: Կեսգիշերին աղմուկ-աղաղակներով պաշարվեց վանքը: Հարձակվողները աստիճաններ դնելով սկսեցին մագլցել պարիսպները, քնած չէին պաշտպանները: Կամսարաց զինվորները կեռերով զինված շուռ էին տալիս աստիճանները, ցած գցում: Վանքում, ինչպես իսկական ամրոցում, կուպր ու արճիճ գտնվեց: Վանականները հալած կուպրն ու արճիճը լցրեցին հարձակվողների գլխին:

Սկսվեց պաշարումն ու հարձակումը ռազմական կանոններով: Կամսարաց իշխանին հաջողվեց երկու զինվոր գաղտնուղով իրար հետեւից ուղարկել Ողական:

Հարձակվողները քանի գնում, այնքան համարձակ էին դառնում: Նրանց հաջողվեց գրավել աշտարակներից մեկը: Իշխանը իր թիկնապահներով նետվեց այնտեղ, կարողացավ հարձակվող առաջամարտիկներին ցած նետել պարսպից, սակայն նորանոր խմբեր էին գալիս, միանում հարձակվողներին: Ասես Տարոն ժողովուրդը վճռել էր իրեն պատժել տարիներ առաջ հղած արյան համար, ուզում էր կործանել Աշտիշատը, թերեւս այդ պահին հարձակվողներին էին միացել հոգիներում հառնած հայ աստվածները...

Հանկարծ հարձակվողների թիկունքին շեփորներ հնչեցին, զարկեցին մարտական թմբուկները: Կաթողիկոսը ձեռքերը երկիւնք կարկառեց:

- Փա՛ռք քեզ, տե՛ր Աստված, որ մեզ փրկում ես սպարապետի արդար ձեռքով:

Մարտն արագ ավարտվեց, վանքը պաշարողները չկարողացան դիմանալ կանոնավոր զորքի ճնշմանը: Նրանց մի մասը սրատվեց, մնացածները հանձնվեցին սպարապետի ողորմածությանը: Գերի ընկավ Նաեւ սեպուհ Առնակը:

Երբ առավոտյան արեւը ծագեց, մարդկանց առաջ մի տխուր պատկեր բացվեց: Պարիսպների մոտ, սպարապետի պատժող սրից փրկված մի քանի հարյուր ըմբոստներ էին կանգնած, կապյալ ու գլխիկոր: Նրանք մահվան էին սպասում, քանզի սուր էին բարձրացրել Հայոց Վեհափառի վրա:

- Տե՛ր Մամիկոնե՛ց, երախտապարտ ենք մեր փրկության համար: Դու պատժող սուրն ես Հայաստան աշխարհում,- ասաց կաթողիկոսը, նայեց Աղբիանոսին, վճռեց փրկել գերյալներին,- ի՞նչ ես վճռել, ի՞նչ պիտի անես այս մոլորյալներին: Տեր Աստված ասել է...

- Մոլորյալներին,- հեզնեց, սպարապետը,- սրանք, այս մոլորյալները մեծ հաճույքով քեզ ու Աղբիանոսին կմորթեին, կկործանեին եկեղեցին: Բա՛վ է, վեհափառ, շատ ենք կործանել: Իրավացի է Խոսրով արքան, հարկ է կառուցել: Ցավալի է ինձ, որ այս ամենը Տարնո հողի վրա է, հայոց անդրանիկ եկեղեցու մոտ...

- Տեր Մամիկոնե՛ց, արձակիր այս մարդկանց, այս մոլորյալներին: Սրանք, տեսնելով Աստծո գթասրտությունը, զի ամեն բան Աստծուց է, դարձի կգան, կպաշտեն Աստծուն...

Դառը բմծիծաղ գծագրվեց սպարապետի դեմքին:
«Առհավական մեր նախնյաց համար խորթ չէր ներողամտությունը, սակայն թշնամուն պատժելու, ծնկի բերելուց հետո միայն»՝ հոգոց հանեց:

Վճիռը հասունացել էր: Հայր Արտավազդը լուռ կանգնել էր սպարապետի կողքին, չէր միջամիտում:
- Ավագներին շղթայել, տանել Ողական, արքայի դատին, իսկ անարժան սեպուհին բերեք ինձ մոտ: Նա պիտի պատասխան տա իր սպարապետին: Մնացյալներին ազատ եմ արձակում:

Կաթողիկոսը ջերմորեն խաչակնքեց սպարապետին, հայացքը փախցրեց, չնայեց հորը, որի դեմքի արտահայտությունը չո մի լավ բան չէր ասում նրա մտադրության մասին: Կաթողիկոսը գոհ էր, որ հայրը չմիջամտեց: Գերյալները ազդվելով կաթողիկոսի վեհ տեսքից, ծնկի իջան:

- Դուք, որ դեմ ելաք ձեզ արարող Աստծուն ու նրա եկեղեցուն: Դու, որ դրժեցիք սուրբ մկրտությամբ մեզ պարգևած երանությունը, արժանի եք պատժի, սակայն մեծ է Աստծո, Որդու եւ Անմահ Հոգու բարությունը, նա սահման չունի: Դուք արժանի եք պատժի, զի կռապաշտ եք ու մոլորյալ, ձեր հոգիները դժոխք կգնան, եթե ամենատես ու ամենաստեղծ Աստծո կողմից ներում չստանաք: Դուք, որ ձեռք բարձրացրիք սորբ եկեղեցու վրա, որ ինքը բարձր, ինքնագո Աստծո ամենագոր Էությունն է Հայաստան աշխարհում, ներում եք ստանում... Նայեք եկեղեցու սուրբ խաչին, որին փարված լույսը հենց նույն աստվածային Հոգին է, որ փառաբանում է Աստծուն, Որդուն: Ապաշխարեցեք, գավակներս, ձեր աղոթքներում ներում հայցեք Տեր-Աստծուց...

Կաթողիկոսի խոսքերը ազդեցին նաեւ սպարապետի վրա, սակայն հակառակ ազդեցություն ունեցան: Նա գիտակ էր մարդու հոգուն, գիտեր նրա խորունկ վարքն ու բարքը. «Պատիր հույսեր,- խորհեց սպարապետը, ի՞նչ է սրանց համար այդ պահին դարձի գալը, չէ՞ որ կյանքներն են փրկում: Հարկավ, կերդվեն, արցունք էլ կթափեն, դողդոջ ձայնով Աստծուց ներում կհայցեն... Մի՞թե հոգին ազատ չէ ընտրելու... Արդ, սրանք ծիծաղում են մեզ վրա, իսկ դեմքերին միայն բարեպաշտություն է: Մարդը Աստծո ստեղծած ամենակարայալ, նաեւ անկատար էակն է, սրանով ամեն բան է ասված: Ե՛, ինձ միայն սեպուհի խոստովանությունն է պետք»:

- Արշավիր իշխան, հրամայիր սեպուհին բերեն օթեւան: Դու էլ արի,- ասաց, կաթողիկոսին, եպիսկոպոսի հետ թողնելով «մոլորյալներին» դարձի բերելու «ծանր» գործի վրա, գնաց օթեւան:
Քիչ անց ներս մտավ Կամսարաց իշխանը: Նրա հետեւից երկու զինվոր բերում էին կապյալ սեպուհին: Սա հանգիստ արժանապատվությամբ տարավ սպարապետի հայացքը:
- Խոսի՛ր, Առնա՛կ սեպուհ:
- Խոսելիք չունեմ, տեր սպարապետ, գլխատել տուր:
- Դու ինձ ասա, ինչու՞ էր ցանկանում Բակուր բղեշխը սպանել կաթողիկոսին: Ի՞նչ նպատակ է հետապնդում,- սպարապետը չասաց, չհարցրեց, թե ով է սեպուհին ուղարկել: Նա իր հարցով սեպուհին նահանջելու տեղ չթողեց: Սպարապետը անվիճելի էր համարում բղեշխի մասնակցությունը այս գործին:
- Ես հեթանոս եմ ու կռիվ ելա ձեր Աստծո ու եկեղեցու դեմ:
- Դու՛, սեպուհ, թերեւս ինձ չես ճանաչում, սակայն հայրդ՝ Վազգեն իշխանը, ինձ պետք է, որ հիշի: Ասա, նա քեզ չի պատմել, որ կռվի ժամանակ փրկել եմ կյանքը, լավ հիշիր, սեպուհ:
Սեպուհը ցնցվեց, կախեց հայացքը:
- Ներող եղիր, հայոց սպարապետ: Ես երդվել եմ Վահագնի զոհասեղանով: Երդմնագանց չեմ լինի: Գիտեմ՝ փրկել ես հորս կյանքը,- դառնությամբ ժպտաց,- ճակատագրի խաղ է, փրկել ես հորս, որ գլխատես որդուն:
- Այլեւս ինչ երկմտանք, եթե չես ցանկանում անսալ բանականությանը, ասել ճշմարտությունը,- սպարապետի ձայնի մեջ ափսոսանք լսվեց,- դու կգլխատվես որպես դավաճան:
- Հոգուդ մեղք մի վերցրու, տեր սպարապետ: Ես դավաճան չեմ: Ասա, ու՞մ եմ դավաճանել՝ Աստծուն, որինչ չեմ երդվել: Ես իմ աստվածն ունեմ՝ Վահագնը, իսկ դու, հայոց սպարապետ, ինչու՞ դու, ազնվագույնդ հայերի մեջ, ինչու՞ աստվածասպան դարձրիր, ինչու՞ կործանեցիք հայոց բազմիկները: Հոգին ազատ է ընտրելու, ինչու՞, ո՞ր իրավամբ եք պարտադրում ձեր օտար Աստծուն: Այսօր օտար աստվածներ եք պարտադրում, վաղը՝ օտար տերեր ու կկործանեք արիական հայոց հոգին, որ կենդանի ու հզոր է իր սեփական աստվածներով...

Սպարապետը զարմացած նայում էր սեպուհին: Նրա հայացքում ամիսասնք էր ծնվում. «Ի՞նչ ասաց այս պատանյակը, այժմ օտար աստվածներ եք պարտադրում, վաղը՝ օտար տերեր ու կկործանեք հայոց արիական հոգին: Տես է, սա էլ է խոսում արիականանց մասին, ասել է թե՛ այն չի մեռել մեր մեջ... Աստված իմ, սա ասում է մի սուկական սեպուհ, որին պիտի գլխատենք: Տես է՝ ուր է հասել միտքը: Սեպուհը խոսում է այն մասին, ինչ էս երկար տարիներ խորհել եմ, սակայն չեմ կարողացել եզրահանգել ու այսպես հասարակ, նաեւ իմաստուն կերպով ասել: Նա հասել է այս մտքին, քննել է հոգում, իսկ եթե դրան հասել է մահվան շունչն առնելուց միայն... Եթե նա հասկացել է այս ամենն, ապա չպիտի մեռնել որպես դավաճան»:

Դարձավ գինվորներին.

- Սեպուհին պահեք փակի տակ, ինձ մոտ հրավիրեք Մարդպետաց տիրոջը:

- Եթե մի փոքր տանջեիք, թերեւս ասեր ով է ուղարկել,- Արշավիրն էր:

- Այսպիսի մարդիկ չեն վախենում կոտանքներից: Նա չի մատնի բռնեչիսին: Դու գնա, հանգստացիր, ասա ինձ մոտ ուղարկեն հայր Արտավազդին:

Իշխանը դուրս գնաց:

- Այսօր օտար աստվածներ եք պարտադրում, վաղը՝ օտար տերեր ու կկործանեք հայոց արիական հոգին, այստեղ կա մի բան, որ չասաց սեպուհը... Իսկ եթե դրանք նրա խոսքերը չեն... Չէ, խելահաս մարդ է սեպուհը, թեեւ՝ երիտասարդ: Նա չասաց, սակայն կարող էր հասնել այս եզրահանգմանը՝ սովորեցինք զիջել եւ սա է ամենասարսափելին: Կտվորենք զիջել, ենթարկվել, դա սարսափելի է: Ո՛չ, նա մարգարե չէ, այլ սուկական մարդ, որ հոգով հասել է այս ամենին... Մենք մեզ խորագետ այրեր ենք կարծում, մեզ, որ մազ ու մորուք ենք սպիտակեցրել, չունենք այս պատանյակի խորաթափանցությունը: Այո՛, այո՛, սարսափելի բան է կատարվում մեր ժողովրդի հետ, սա կարող է կործանման տանել... Մենք զիջեցինք, կորցրեցինք մեր արիական ինքնությունը, նահանջեցինք արիական առաքինություններից, ապա զիջեցինք հեթանոս աստվածներին եւ մինչեւ ե՞րբ...

Ներս մտավ հայրը:

- Ի՞նչ կա, մտահոգ ես, սպարապետ:

- Այո՛, Արտավազդ,- անունով դիմելն արդեն անկեղծ խոսակցություն էր պարտադրում,- գիտես ինչ ասաց սեպուհը, - լռեց, մտովի կրկնեց սեպուհի խոսքերը, ասաց,- այսօր օտար աստվածներ եք պարտադրում, վաղը՝ օտար տերեր ու կկործանեք հայոց արիական հոգին: Իսկ սրա տակ թագքված էր սարսափելին՝ հայերը զիջող են դարձել, զիջեցինք աստվածներին, կզիջենք նաեւ ազատությունը: Արտավազդ, հնամենի ընկեր, ես այս պարագայի վրա շատ եմ խորհել, չեմ կարողացել այսպես համառոտակի ու հասարակ շարադրել...

- Սպասի՛ր, Վաչե՛, ես հասու եմ մտքերիդ: Ես էլ եմ խորհել այդ մասին, սակայն լեզուս չի գորել այսպես դիպուկ... Եւ ի՞նչ, պիտի գլխատե՞լ տաս սեպուհին...

- Խելացի մարդուն սպանելուց զատ, նաեւ անմտություն է,- ասաց սպարապետը,- ես նմանօրինակ անմտություն չեմ անի:

Մարդպետաց տերը գլխով հավանություն տեց, ասաց.

- Ամեն անգամ Տարնո հողը մտնելիս տակն ու վրա է լինում հոգիս... Ինչ անհեթեթ պատերազմ էր,- տնքաց,- աչքիս առաջ Արձան քրմապետը, ապա կործանվող բազիլներն են, ասես գլխիս են փլխվում, ապա Դեմետրի գլխատված մարմինն է... Փլվող բազիլների փոշին աչքերիս մեջ է: Այդ օրվանից ամեն բան տեսնում եմ մշուշի մեջ,- ձեռքը թափ տվեց,- ի՞նչ ես ասելու արքային, չէ որ կցանկանա իմանալ գործի գլխավորի անունը: Թվում է, թե սեպուհը կլռի: Դա մեզ փակուղու առաջ կկանգնացնի: Չես կարող ապացուցել Բակուրի մասնակցությունն այս գործին: Հառձակվողների մեջ կային Աղձնիքից, Հաշտյանքից, Տարոնից, ինչպե՞ս կապացուցես...

- Վճռել եմ խնդրել արքային միջոցներ չձեռնարկել Բակուրի դեմ...

Հայրը ծիծաղեց:

- Բակուրի վրա դա ավելի կազդի, կստիպի սխալ քայլեր անել: Դա հնար կտա ինչ-որ տեղ չեզոքացնել նրան: Վատ չես խորհում, տեր սպարապետ...

- Դու իմ փոխարեն ինձանից վատ չես խորհում, տեր Մարդպետաց,- ժպտաց սպարապետը:

- Ի՞նչ, դարձյալ ձախողեցիր: Ծերանում ես, հազարապետ, ոչ մի գործ ավարտին չես հասցնում: Չրվանը մթագնել է միտքդ,- գայրալից ասաց արքան: Ինչպես երեւում էր, ավելին խիստ խոսել չէր ցանկանում, հակառակ դեպքում կհայիոյեր: Ասել է թե մտքում բաներ կան, որ համազոր են կաթողիկոսի սպանության ձախողմանը:

«Իրավացի է արքայից արքան, ծերանում եմ, մտքով տկարանում: Առաջվանը չեմ, չեմ կարողանում խելացի մտքեր հուշել: Արքան կես խոսքից հասկանում է ինձ, միտքս շարունակում է որպես սեփական, դա նրա մոտ իր իսկ մեծության պատրանք է ստեղծում: Վատ չէ, սակայն, արդ... Չէ՛,

տկարացել եմ մտքով...»:

- Ի՞նչ ես մոմռացնում քթիդ տակ, ի՞նչ խանգարող հանգամանք կա: Մենք նրան կընծայենք Աղձնյաց թագը, թող անկախ հռչակի Աղձնիքը,- Շապուհը քմծիծաղ տվեց,- մեծամիտ են արմենները: Ամեն իշխան երագում է թագ դնել գլխին: Ի՞նչ ես խոսում կաթողկոսի սպանության մասին:

- Ո՛ր՛ իմաստուն արքա, Աստծո փոխանորդ երկրի վրա, դու, որ կարողանում ես մտքիդ լույսով լուսավորել տիեզերքը... Բղեշխը լավ էր գործը բռնել, սակայն խանգարեց սպարապետը: Եթե նա չլիներ, հասու չեմ, որտեղի՞ց, ինչպե՞ս իմացավ հարձակման մասին, նա փրկեց կաթողկոսին: Տեր իմ, նա է մեզ Արմենիայում խանգարում, հասյալ է ժամը նրա...:

- Դյուրին գործ չէ, թեեւ շատ ցանկալի: Նրան սիրում են երկրում, փեսաները աչք չեն հեռացնում նրանից, աստվածացնում են նրան: Տեսնում եմ՝ գլխումդ էլ բաներ կան, խոսի՛ր, հազարապետ:

- Տեր իմ, պարզել եմ Բակուրի դժգոհության պատճառը: Նա երիտասարդ տարիներին սիրել է թագուհուն, նշանված են եղել: Խոսքով արքան նրանից խլել է այդ կնոջը: Նրանք դեռ սիրում են իրար, հանդիպում են: Այդ մասին խոսում են երկրում: Հայոց կաթողիկոսը մեղադրել է թագուհուն բղեշխի հետ շնանալու համար, ահա թշնամանքի պատճառը...:

- Կատաղած քած,- զայրացավ արքայից արքան,- անհավատարիմ թագուհիներին ցից պիտի հանել, իսկ բղեշխին արքայի անձի դեմ ստորություն անելու համար ներքինացնել:

- Սակայն դա մեզ...

- Լռի՛ր, հիմա՛ր ծերուկ: Դու չես հասկանում, որ արքայի անձը, նրա կանայք սրբազան են հպատակների համար: Խոսքովը մեր թշնամին է, սակայն նա արքա է: Նրան հասցված վիրավորանքը՝ վիրավորանք է բոլոր արքաներին: Արքաները կարող են իրար վիրավորել, սոսկական մահկանացուներին օրեն չէ...:

Շապուհը ընկավ մտքերի մեջ, մռայլվեց: Հազարապետը սկսվել էր: Նա հասկացավ, որ սխալ էր թույլ տվել:

«Ոչինչ, սա ինձ օրինակ ու լեզվիս զսպիչ պատվար թող լինի,- մոմռացրեց մտքում,- տես է, պահում է արքաների պատիզը: Օ՛, Մազդան, նոր հասկացա: Վախենում է... Արդ, ներքինների կեսին սրատել կտա, նորերին կբերի ու իր աչքի առաջ կփողոտեն: Է՛, ծերանում եմ, հասու չեմ արքայից արքայի խոհերին»: Գլուխը կախեց, սակայն անմիջապես հասկացավ, արքայից արքայի ներկայությամբ անթույլատրելի էր ինքդ քեզ հետ լինել, քանզի ամեն պահ պիտի պատրաստ լինի պատասխանելու արքայի հարցերին, ավելին, նա պիտի արքայի փոխարեն խորհի ու ելք հուշի: Խելացի մտքեր պիտի հուշի: Հակառակ դեպքում նոր հազարապետ կկարգի արքան, իսկ թեկնածուներ՝ որքան ուզես: Հարկ է փրկել հեղինակությունը արքայի աչքում:

- Տե՛ր իմ, որ հզորների մեջ, որ հավասարո՞ղ չունես տիեզերքի մեջ, թույլ տուր խոսեմ,- տեսավ, որ Շապուհը լսում է, քաջալերվեց,- մարդ ուղարկենք բղեշխի մոտ, առաջարկ ենք ապստամբել...:

- Սպասի՛ր, թող ապստամբի,- մատը վեր տնկեց,- իսկ երբ ապստամբի, մենք սահմանները ապահովելու համար զորքեր կուղարկենք Հայաստան-Արմենիա, որ կայսրը չկարողանա մեզ մեղադրել Մծբինի դաշնադրությունը խախտելու մեջ: Բղեշխին խոստացիր Աղձնիքի թագը, այն բնավ չի տարբերվում բղեշխական խուլրից: Թագը նրան կմղի գոռոզության, ասում են իրեն արիական ասպետ է համարում,- հազարապետը զարմացավ, այդ մասին ինքը ոչինչ չէր ասել արքային, որտեղի՞ց իմացավ,- թերեւս գնա Արտաշատի վրա: Մնացած դժգոհները կմիանան նրան,- սպասեց, ասես ծանր ու թեթեւ արեց ասելիքը,- մենք ձմռանը այնտեղ զորքեր չենք ուղարկի: Դաժան են ձմեռները այդ անիծյալ երկրում: Թող մեր գաղտնադեսպանը մեզանից նամակ տանի Բակուր բղեշխին, մենք նրան թագ ենք խոստանում:

- Օ՛, մեր իմաստուն տեր, քեզ Մազդան է իմաստուն մտքեր հուշում: Հարկ եմ գտնում գժտեցնել նախարարներին իրար հետ, նաեւ նրանց, ովքեր երկրի կենտրոնում են: Նրանցից օգուտ չկա ոչ մեզ, ոչ Հռոմին:

- Հռոմասերներին գժտեցրու մերայինների հետ, որ մոտ են սահմաններին: Խոստումներ արա, թող միանան Բակուրին: Նախարարներին կռվեցրու, թող իրար միս ուտեն, դա ձեռնտու է մեզ, չեն կարող զորքեր հանել մեր դեմ: Հա, ի՞նչ եղավ Բզնունիների իշխանը, պատասխանե՞ց մեր առաջարկին, ինչու՞ է ձգում: Մարդ ուղարկիր թող աճապարեն... Անիծյալ Մծբին, ձեռքերս չեմ կարող շարժել, ի՞նչ լուրեր Բյուզանդիոնից,- արքան զայրացավ,- մենք այն կայրենք, մոխիրը ծով կլցնենք: Ասում են մեծ հարստություններ են հոսում Հռոմից: Կայսրը իր այս քաղաքամայրը մեզ մոտեցնում է, վատ չի խորհել: Դա նրան կօգնի ժամանակին զորքեր համալրելու, դյուրին կդարձնի պատերազմի գործը: Տես է, շուն է, ատամ է սրում րանի վրա: Սակայն չմեղանչեմ՝ ճշմարտությանը, խելացի քայլ է, մենք էլ նույն կերպ կվարվենք,- նորից զայրացավ,- հազարապետ, եթե այս անգամ էլ ձախողեցիր՝ գլուխդ կգնա:

Սա ի՞նչ հրաշք է, մի՞թե սրանք երեկվա մարդիկ են... Ինքն է բարի, բոլորին բարիք է ցանկանում:

Այ, նա բարի է, բարի է նաեւ այս ձյունը, որ հալչում է ձեռքին, հալչում է բարությունից: Եթե այս պահին վարդ բացվեր, չէր գարմանա: Չէ, նա խակ պատանի չէ, հասու է այս ամենի պատճառին: Նա շատ կանայք է տեսել, իսկ Նազենիկը եկավ հայ աստվածների ներշնչմամբ, սա սեր է... Աշխարհը լցվել է բարությամբ, ցոյա ու շվայտ կյանքից սկսել է մաքրվել: Նրան չես ստիպի գնալ այդ գաղջ ու գինու թմբիրի մեջ թաղված խնջույքներին, որ ամեն անգամ ավարտվում է հարբած սիրո մեջ: Այո՛, այո՛, հարբած սիրո, քանզի այդ պահին ոչ ոք չի զգում, թե գրկում իշխանուհի է, թե նաժիշտ, հարձ: Նա, որ քիչ աշռաջ խոնարհվում էր քո առաջ, այս պահին քո մարմնի լիիրավ տերն է: Դու պիտի գգվես նրան, քանզի հարբած ես ու քո միակ ձգտումը վայելքն է, կրքի հագեցումը... Մի՞թե այդ ամենն եղել է, գարմանում է, ինքն իրենց ամաչում...

Չարմանալի բան է կատարվել, խղճում է կնոջը: Գեղեցիկ է Սաթենիկը թե մարմնով, թե հոգով, միայն ժպիտն է խանգարում սիրո աստվածուհի համարվելու: Ոչ մի բանով նրան կյանքի հունից չի հանի: Մի անգամ վճռեց փորձել նրան, պատմեց իր հարբած սերերի մասին: Կինը դարձյալ ժպտաց դրանով գինաթափ արեց նրան: «Իսկ եթե այս ամենը դիմակ է ու մի օր դեն նետելու դիմակն ու ներկայանալու է վիուկային եուրյամբ...»: Առաջ այդ մասին չէր խորհում, անտարբեր էր այդ ամենին, սակայն, արդ, իրեն մեղավոր է զգում, քանզի սեր ունի, վախճնում է կորցնել այդ երկնային սերը: Չի ցանկանում դիմակ տեսնել, ծռմռված դիմակ: Երբ հիշում է Նազենիկին, ամեն բան դառնում է հասկանալի, պարզ: Վճռեց խնդրել Սաթենիկին վանք մտնել: Յնում լավ էր, աստվածները չէին արգելում բազմակնությունը: Երբ հասնեմ գահին, կապրեմ հին աստվածների հետ, արիական օրենքներով, բա՛ր է թաքցնենք զգացմունքներս միայն նրա համար, որ բարեպաշտ երեւանք հոգեւոր հայրերին:

Այս ամենը խեղկատակություն է եւ ուրիշ ոչինչ: Նազենիկին պալատ կտանեմ, կապրեմ հետը որպես օրինական կնոջ:

Մանկուց դաստիարակել եմ, որ արքան առաջին հերթին պիտի սիրի երկիրը, գահն ու ժողովրդին, ապա նոր միայն սեփական անձը: Իսկ ի՞նչ է, մի՞թե հնարավոր չէ լինել անձնապես երջանիկ ու լինել նաեւ արքա...

Երեկո էր: Տուրտ քամի էր փչում: Առավոտյան եկած ձյունը հալվել էր, ոտքերի տակ ջրափոսերը մուրֆ փայլում էին, երբ լուսնի լույսը ընկնում էր փոսերի մեջ: Բռնեց արիեստավորաց թաղի ճամփան: Թռռնանը գալիս էր հետեւից: Յասավ Նազենիկենց տուն: Դուռը բացեց Նազենիկը: Տիրանը նրա համար նաժիշտ էր ուղարկել, սակայն Նազենիկը մտերմացել էր նաժիշտի հետ, ասես չկար նրանց մեջ եղած տարբերությունը: Նազենիկը բարությամբ լցրել էր իրենց մեջ եղած տարբերության անդունդը, մտերմացել էր Գոհարի:

Քաղաքում սկսել էին խոսել նրանց սիրո մասին, թերեւս այդ մասին լսել էր Սաթենիկ իշխանուհին, սակայն նրան խոսելու այդ մասին, անհնար էր: Արքան զբաղված էր Դվինով ու անտառներով: Նա սպարեպտի ու նրա օգնական Յայկի հետ է: Նրանցից գատ ոչ ոքի չի ուզում տեսնել: Այլեւս ինչի մասին խորհել, երբ գրկել է Նազենիկին, ի՞նչ Յոմ, ի՞նչ Պարսկաստան, Դվին ու անտառներ...

- Երկու օր է տուն չես եկել, մոռացել ես քո Նազենիկին: Յարկավ, լավ է քեզ համար պալատում, այդ գոռոզ իշխանուհիների ու հիմա ր պալատակնների հետ: Դու մոռացել ես այս տանը քեզ ավելի եմ սիրում, քան այնտեղ: Թերեւս քեզ քծնանք է պետք մատուցել...

- Լա՛վ, լա՛վ, Նազենիկ,- ժպտաց Տիրանը,- ես չեմ մեղանչել քո առաջ: Մի բարկացրու հայոց աստվածներին,- Նազենիկի հետ մտերմանալուց հետո իրեն հեթանոս էր զգում, ասես հայ հին աստվածները ետ էին եկել, վկայելով, որ աստվածները հիշաչար չեն, ներել գիտեն...

Գոհարը գնաց Եսթերենց տուն: Նազենիկը նետվեց Տիրանի գիրկը: Նրան թվում էր՝ Տիրանը կարող է հեռանալ ու կցնդի այս երանելի երազը: Նա հայտնագործություն էր արել իր համար, պարզվում է՝ ինքը կարող է սիրել: Մինչ այդ թվում էր՝ ամբողջովին նվիրված է Երեւմունքին, պարզվում է՝ կա այրմարդու սերը, որ այրում է հոգին ու մարմինը առանց մոխիր անգամ թողնելու: Նա, այդ դեռատի կինը, որ խաղացել էր կանանց դերեր, սիրո մասին խոսել խաղարանում, արդ, հասկացել էր դրանց աստվածային իմաստը: Ի՞նչ է սերը,- հարց էր, որ Նազենիկը ինքն իրեն տալիս էր ու չէր գտնում բազմաթիվ պատասխանների մեջ միակը՝ իրենը: Թերեւս միակ այդ պատասխանը չկար, այն, ինչ անհայտ էր որպես պատասխան, կա առկա է Տիրանի աչքերի մեջ, նրա գրկում: Նրան սպասելու երկար ու ձիգ ժամերի մեջ, փողոցից լսվող նժույգի սմբակներից վեր թռած կնոջ սրտատրոփի մեջ, ի՞նչ իմանաս, կամ ո՞վ գիտե...

- Ես քեզ սիրում եմ կյանքից ավելի,- շնչում էր Նազենիկը սիրուց խոնջացած գլուխը Տիրանի կրծքին դրած: Կնոջ փարթամ մազերը ծածկել էին Տիրանի կուրծքը, ասես պաշտպանում էին թշնամական սրերից,- գիտես, Տիրան, ես, արդ, ավելի լավ եմ խաղում, սակայն ցանկանում եմ ըմբոստանալ, դեն նետել դիմակս ու խաղալ սեփական դեմքով: Սկսել եմ հասկանալ այն կանանց, որոնց խաղում եմ: Տիրա՛ն, սիրելիս, ոչ մի բան մի փոխիր իմ կյանքում: Դու ես ինձ պետք: Ոչ մի հարստություն չեմ ուզում: Դու ինձ մենակության ես դատապարտում, ընծա ես ուղարկում, չեմ ուզում, ինձ դու ես պետք, որ լինես մոտս,- Նազենի շարժումով ելավ տեղից: Աշտանակի լույսի տակ գծագրվեց

Նրա բարակիրան մարմինը: Հրաշեկ մազերը ծփացին, լույսն ընկավ թիկունքին, մարմինը ողողվեց լույսով: Տիրանը դյուրթված նայում էր: Նազենիկը դանդաղ շարժվեց դեպի Տիրանը, կանգ առավ օթեւանի կենտրոնում: Հանկարծ ձեռքերը գալարվեցին մարմնի շուրջը, կինը ճմլվեց, գլուխը դանդաղ իջավ, քսվեց հատակին, իսկ ձեռքերը շարունակում էին գալարվել: Տիրանը զարմացավ, ինչ որ մեղեդի լցվեց հոգին, սենյակը: Սա ի՞նչ հրաշք է, սա լեռնային առվակի կարկաչն է, ջուրն է կարկաչում, թե՞ արտույտն է ճլվլում գետակի ափին, ահա հրաշքը՝ սոխակն է երգում, սակայն սա արտույտի միօրինակ ճլվլոց չէ: Սոխակը երգում է բարձրաձայն ու գեղեցիկ, իսկ Նազենիկը գալարվում է եւ նրանից մեղեդի է բխում, մեղեդի հողի ու գեղեցկության մասին, ապա շունդալից ձոն է քաջության, ահա դարձյալ մեղեդի... Տիրանը դյուրթանքի մեջ է:

Նազենիկի հայացքում վախ կա, մի ձեռքը սեղմել է կրծքին, մեղմիկ մոտենում է Տիրանին, պտտվում է տեղում, թվում է, թե ընկնում է, ճկուն շարժումով ծնկի է գալիս, ձեռքերը մեկնում է Տիրանին: Նազենիկը կաքավում է: Տիրանը ապշել է, լեզուն կպել է քիմքին, չի կարող խոսել: Կնոջ աչքերը դյուրթում են, նրանց մեջ սիրո զարթոնք կա: Նազենիկը ձեռքերը կրծքին սեղմած ելնում է տեղից, պտտվում է սենյակում, բոց է, հուրհուրում է, այրում է առանց կրակի: Կանչում է Նազենիկը, գալարվում է Նազենիկը: Կնոջ աչքերի արտահայտությունից Տիրանը հասկացավ, Նազենիկը իրենց սիրո պատմությունն է կաքավում: Կինը մոտեցավ Տիրանին, սա ցանկացավ գրկել նրան: Նազենիկը օձագալար շարժումով դուրս պրծավ Տիրանի գրկից, խելահեղ արագությամբ սկսեց պտտվել սենյակում: Հերարձակ, հրաշեկ մազերը պտտվելիս փռվեցին, ծածկեցին Նազենիկին:

Տիրանը իրեն տեսավ դուռը անհամարձակ թակելիս, ապա ներս մտավ, խոսեց անհամարձակ, ահա մյուս հանդիպումները, անդրանիկ համբույրը:

Տիրանը ապշահար էր, սա երա՞գ էր, թե՞ արթմնի հրաշք: Նա արվեստի հզոր բազուկների մեջ էր... «Օ՛, աստվածներ, ինչու՞ են այս հրաշքը արգելել, մեզանից թաքցրել...»:

Ուզեց ձեռք տալ Նազենիկին, համոզվելու համար, որ սա Նազենիկն է եւ ոչ եթերային էակ, կինը թովիչ ժպտաց, հեռացավ: Ձեռքերն այնպիսի նազանքով էր շարժում ասես կարապետ լինեին իրար զգվելիս: Ահա մերձեցան, գրկախառնվեցին: Կինը այնպես էր գրկել ինքն իրեն, որ Տիրանին թվաց, թե Նազենիկը իր գրկում է: Կինը ծնկի իջավ, ապա նազանքով պառկեց, ձեռքերը երկարեց Տիրանին: Խելագարվել կարելի էր: Տիրանին թվաց, թե ինքը ծնկի է իջել, գրկել է կույսի մարմինը, ապա իմաստացած կնոջ աչքերն էին, մերկ աչքերը... Նազենիկը ժպտում էր կյանք մտած, հրաշագործված: Դարձյալ ոտքի ելավ, նորից սկսեց պտտվել է սենյակում, արդեն հասուն սեր էր: Գալարվում էր կինը սիրո կրակների մեջ:

Տիրանը կարող էր երդվել, որ մեղեդին շարունակում է ու նա կա, այն ծնվում է Նազենիկի շարժումներից: Կինը մոտեցավ Տիրանին, երկու ձեռքերով նրան մեկնեց, Տիրանը ցնցվեց: Այո՛, այո՛, Նազենիկը նրան էր մեկնում իրենց անդրանիկ գավակին: Մայրը մեկ երեխային էր նայում, մեկ սեղմում կրծքին, մեկ օրորում: Տիրանը հրաշքի էր ականատես: Երեխան կար, Տիրանը զգում էր նրան: Տեսնում էր նրան, իսկ սենյակում՝ օրոր, օրոր տարածվեց,- իմ որդի... Տիրանը ծնկեց, գրկեց կնոջ ոտքերը:

Եվ ի՞նչ է գահը, ի՞նչ են աշխարհի գանձերը: Սա է գերագույն պահը երանության... Փնտրած, գտած, երագած... Անեացան պահի երանության մեջ... Քիչ անց, երբ անցան խելահեղ գրկախառնումները, սիրո շշուկները: Նազենիկը խոսեց բեկ-բեկ ձայնով.

- Սպասիր, սիրելիդ իմ Տիրան, ես քեզ կկերակրեմ:

- Հապա Գոհարը, նա համեղ ճաշեր է պատրաստում:

- Սակայն ամեն կին պիտի կերակրի իր - Նազենիկը կապ ընկավ, նայեց անօգնական: Այն, ինչ կանգնեցրել էր կնոջը, հասկանալի էր Տիրանին, չիղճալ այս անձնագոհ կնոջը անհնար էր: Կին, որ հանուն սիրո ընկել էր Արտաշատի բերանը, ծամծամվում էր: Սիրում է իրեն, սակայն ի՞նչ է ստացել հզոր գահաժառանգից: Փալասներ, զարդեր, որոնց կարիքը բնավ չունի: Նրան թագն է վայել Մեծ Հայքի, իսկ ինքը գալիս է գող-գող...

Նազենիկը լաց եղավ: Տիրանը նետվեց դեպի կինը, գրկեց նրան, սկսեց խելագարի պես համբուրել շրթունքները, կրծքերը, պարանոցը, թաց աչքերը...

- Ների՛ր ինձ, իմ աստվածուհի: Ների՛ր, որ քեզ արժանի ամուսին չեմ, որ քեզ այստեղ եմ պահում, երբ քո տեղը պալատն է, ուր ամենքն էլ պիտի խորնահրվեն քո առաջ, ների՛ր ինձ:

- Միայն մոտս լինես, այլ բան չեմ ուզում:

Ամեն բան մոռացվեց, նաեւ այս աշխարհը, որ դեմ էր նրանց մաքուր սիրուն: Ափսո՛ս հա աստվածներին... հայարիները մարդու ամենամեծ արժանիքը սերն էին համարում, հազա՛ր ափսոս...

Լուսակն ժամն էր, երբ Տիրանը դուրս եկավ տանից, մոտեցավ Գոհարը, փսփսաց ականջին.

- Տե՛ր իմ, ինչ որ ստվերներ են պտտվում տան շուրջը: Վախենում եմ տիրուհուս համար: Մեկին ճանաչեցի, թագուհու ծառաներից էր...

Եթե արեւմտյան Տիգրիսով բարձրահոս գետի կտրուկ թեքման տեղը, որ ուղղված է լեռների թիկունքում ծածկված Եփրատին, հասնեն երկրորդ վտակին, հյուսիս դարձող վտակին, գնաս երեք փարսախ, կանգ կառնես զարմացած, դեմ կառնես քաղաքի, որի աշտարակները հաշվելու համար կես օր ժամանակ է հարկավոր:

Դա հայոց Մեծ Տիգրանի հիմնած քաղաքն է, Հայաստան աշխարհի երբեմնի քաղաքամայրը՝ Տիգրանակերտը: Այն իր խստաշունչ հզորությամբ ներկայանում է որպես հայարի տիտանների կողմից արարված հրաշք:

Այլ՝ Տիգրանակերտն է՝ Աղձնյաց աշխարհի սիրտը: Այստեղ, այս հզոր պարիսպների հետեւում իր գոռոզությունն է պահ տվել Աղձնյաց Բակուր բղեշխը, որ իրեն վաղուց է արքա համարում, էլ ուր մնաց՝ հարգի Խոսրով արքային:

Բակուրը համոզված է, որ արժանի է Մեծ Հայքի գահին, քան այդ կոտակը, քանզի ինքը հզոր զորական է, նաեւ անպարտելի իր այրական գեղեցկությամբ: Նրա նախնիք այնքան գոռոզ են եղել, որ միշտ ցանկացել են բաժանվել Հայաստանից, անկախ հռչակվել, սակայն ամեն անգամ ինչ-որ նկատառումներով խանգարել են Հռոմը կամ Պարսկաստանը:

Շատ թշնամիներ է տեսել Տիգրանակերտը, շատ անգամներ են նրա պարիսպներին զարնվելով ատամները փշրել պռոմեական լեգեոններն ու պարսկական գնդերը: Եվ ավեր է տեսել, հրդեհներ, սակայն ամեն անգամ նորոգել է, հառնել մոխիրներից, քանզի տերերը շատ են սիրում իրենց քաղաքը: Հագիվ թե Հայաստան աշխարհում լինի Տիգրանակերտի նման տարագգի քաղաք: Այստեղ ապրում են հայեր, հրեաներ, պարսիկներ, հույներ, ասորիներ, եւ ամեն անգամ նրանցից մեկն ու մեկը դավաճանել է, բացել քաղաքի դռները, ապա թշնամու վայրագություններից սահմռկած, մոռանալով քիչ առաջ արած ստորությունը, ամենքի հետ եղբայրաբար ու կատաղի վրա են տվել, կոտորել են թշնամուն, ազատել քաղաքը: Չկա ու չի եղել Հայաստան աշխարհում մի այլ քաղաք, որ այդքան արագ հառնի մոխիրներից, ինչպես Տիգրանակերտը: քաղաքի ոգին արհեստավորներն են, վաճառականները: Այլ կերպ չի էլ կարող լինել, քաղաքը ընկած է երեք պողոտաների խաչմերուկում: Արքայական մի պողոտա տանում է Պարսկաստան, մյուսը՝ Հայոց արքայական պողոտան՝ Արտաշատ, իսկ երրորդը ուղիղ գծով գնում է Արածանիով վեր:

Չուր չէր այստեղ քաղաք կառուցել Մեծն Տիգրանը: Նրա քաղաքամայրը դարձել էր Հայաստանի սիրտը, նրա զորությունը: Այստեղ է կառուցվել Հայոց առաջին Երեւմուկքը: Մեծն Տիգրանը Երեւմուկքի համար մեծ ու շքեղ շինություն է կառուցել, դրանով շարժել գեղեցկությունից հղփացած հռոմեացիների նախանձը: Չէ՛, այս ամենը լոկ հիշողություն չէ, այս ամենն այսօր էլ կա: Եվ այդ ամենի տերը Բակուր բղեշխն է: Մի՞թե այս ամենն ունեցողը պիտի գլուխ խոնարհի Խոսրով արքայի առաջ:

Բակուրը ցանկանում է գլխին թագ դնել:

Չարմցաած է Բակուրը, աչքը զցել է արքայից արքայի նամակին: Նամակաբերը, գաղտնադեսպան պարսիկ իշխանը վայելում է բղեշխի հյուրասիրությունը: Բակուրը չի ցանկանում, որ իշխանին տեսնեն օտար աչքեր, նրան ընդունել է սրահում, այն հեռու-հեռավոր ժամանակներում է գահասրահ եղել: Այստեղ է նստել Մեծն Տիգրանը, ինչպես խորհում է Բակուրը, հրամայել է ողջ աշխարհին, տիեզերքին:

Բակուրը իրեն համարում է Մեծն Տիգրանի հետնորդը, ժառանգը: Մնացած իշխաններին ու բղեշխներին նայում է արհամարհանքով, արքային համարում խեղկատակ, որ նոր աստծո կամքով նստել է գահին, իսկ ինքը հավատարիմ է հայ հին աստվածներին, օրեն է չճանաչել Խոսրովի գահը: Այս խոհերը երկար տարիների արդյունք են, որ բերել են ըմբոստացման, Աղձնիքն անկախ հռչակելու վճռին: Համոզված է՝ զինվորներն ու արհեստավորները կկանգնեն իր դրոշի տակ:

Մանկամիտ չէ Բակուրը, գիտե Հայոց ապստամբությունը, գիտե՝ ամեն անգամ, երբ հայոց գահին ապաշնորհ արքա է նստում, ճակատագրի կամոք սպարապետը առյուծ է լինում: Արդ, նույնն է վիճակը: Երկրի պաշտպանությունը Վաչե սպարապետի ձեռքին է: Բակուրը հոգու խորքում հարգում է սպարապետին, նրան արիական համարում: Լինելով ուժեղ մարդ՝ չի կարող չհարգել դիմացինի ուժը, թեեւ գիտե սպարապետը չի սիրում իրեն, չի սիրում գոռոզության համար: Վաչեին ինչ, նրան մի տիտղոս է մնացել՝ Ազգի բարերար, որ մտնի հայոց պատմության մեջ: Հանկարծ հիշեց կաթողիկոսին, զայրացավ, որտեղի՞ց, ինչպե՞ս իմացավ սպարապետը հարձակման մասին: Ո՛չ, պատահական չէր Ողականում հայտնվելը, պատահական չէր փեսաներին զորքերով այնտեղ հավաքելը, ուղեկցող ջոկատ ուղարկելը: Չէ, սեպուհը ամուր մարդ է, բերանից խոսք թռցրած չի լինի, պատվախնդիր մարդ է:

- Ի՞նչ կասես, Շավասպ իշխան, հաճելի՞ է քեզ Աղձնիքը,- չգիտես ինչու հարցրեց, թեեւ մտքին այլ բան կար: Նա խոցվել էր Շապուհի տոնից:

«Մեզանից թագ կստանաս...»: Նա սպասում էր այդպիսի առաջարկության, սակայն հոգու խորքում վիրավորվել էր Մեծն Տիգրանի համար... Նա գիտեր հայոց պատմությունը, գիտեր, որ արիները արարվել են Հայաստան լեռնաշխարհում ու այստեղից գնացել, նվաճել են աշխարհի չորս ծեփերը,

Նաեւ Երանը եւ պարսիկները պանիրաժի են սեփականել արիականութեան առաջնութիւնը, ավելին՝ իրենց կոչում են արիներ, արյաց արքա, ա՛խ, հայե՛ր, ինչու՞ ազգովի դեմ չէլաք Տրդատին ու Գրիգորին, ինչու՞ մանրացաք, տկարացաք... Դրա համար է Շապուհի տոնը խարազանում հոգիս՝ «Մեզանից թագ կատանաս, թու՛, ես քո...»:

- Իշխան, Աղձնիք ողջ Արմենիան արժե,- ժպտաց իշխանը, ինչ-որ բան մոմռացրեց լիքբերան, ապա պարզ ասաց,- դու, հարկ է, արքա օծվես: Արքայից արքա, թող Մազդան հարյուր տարվա կյանք տա նրան, քեզ թագ կուղարկի,- վերջապես կուլ տվեց փասիանի միսը,- դու կարծանա՞ս արքայից արքայի հզոր աջակցութեանը: Արարատցին արժանի չէ հայոց թագին: Ամեն բանում մեղավոր են մեր մեծերը՝ Գրիգորն ու Տրդատը, ձեզ հեռացրեցին մեզանից, մեր կրոնից: Զարեցիք Զոմմին, պաշտեցիք Զրիստոս սուտ աստծուն,- մի շնչով դատարկեց գինու գավաթը,- դուք, արմեններդ, խոտորվեցիք աստվածների կրոնից: Երբ մի կրոնի ինք, դուք վայելում էիք մեր հզոր աջակցութիւնը, եղբայրական սերը: Կարճ է ձեր հիշողութիւնը: Մոռացաք, ո՞վ ավերեց այս քաղաքը՝ հռոմէացիները...:

- Վե՛րջ տուր, իշխա՛ն,- անձկացավ բոլորից,- դու ինձ մի հիշեցրու հայոց պատմութիւնը: Ես այն լավ գիտեմ, գիտեմ նաեւ պարսիկների կողմից ավերած քաղաքների անունները: Արի չքորքոնք պատմութիւնը, որ ամենքիս էլ վիրավորական բաներ ունի պահած,- շունչը ետ բերեց,- գործից խոսե՛ք: Մենք արդէն վճռել ենք,- ասածից ցնցվեց, ասել է թե՛ իրեն արդէն արքա է համարում՝ «Մենք, արդէն...»:

Պարսիկը հասկացավ նրան, ծուռ ժպտաց:

- Մենք վճռել են, թող մեր եղբայր Շապուհը,- ետ գնալու տեղ չկար,- մեզ ոչ թե նամակ ուղարկի, այլ զորք: Պարսից գունդը ժամանելուն պես կսկսենք գործը: Մեր կողմից խոստանում ենք սատարել պատերազմում Զոմմի դեմ, սակայն մի պահանջ, մենք ինքներս պիտի կառավարենք մեր երկիրը: Ոչ մի պարսիկ պաշտոնյա չի մտնի Աղձնիք: Լիափոխ էմ, մեր եղբայրը կընդունի մեր պայմանները...:

Իշխանը բերանբաց նայում էր բոլորին: Չարմանքից գատ նաեւ հիացմունք կար նրա հայացքում: «Ես էլ նույն կերպ կվարվեի: Այս արմենի անամոթութիւնն իրոք արքայական է... Իրոք, արմեններն էլ են արիական: Մեր մոգերը ընդունում են դա, անգամ արքայից արքան

մի անգամ խոսեց արմենների արիական լինելու մասին, իմաստուն տիրակալ, ինչպէս է ճանաչում արմեններին: Կանխավ գիտեր, որ բոլորը պայմաններ կդնեն, հրամայեց համաձայնել ամեն պայմանի, միով բանիվ, Աղձնիքը անկախ կհռչակվի, սակայն փաստացի կախյալ կլինի Երանից»:

- Երեք տարի Աղձնիքը ազատ կլինի տերունական հարկերից: Արքայից արքան հրամայեց զորքերդ պատրաստ պահել պատերազմի համար: Զարկավ, հասու ես, մենակ չես կարող դիմանալ հոսրովի բանակի ճնշմանը: Ես արքայից արքայի անունով բերել եմ աղով կնքած դաշինք, այն հավերժ կկապի բարեկամութեամբ Աղձնիքն ու Պարսկաստանը:

- Թող հայոց աստվածներն ուժ տան կատարելու մեր պարտքը Աղձնիքի ու նախնայաց առաջ,- ասաց Բակուրը հիրավի արքայական հանդիսավորութեամբ:

Գարունը նոր հոգսեր էր բերել հոգսաշատ սպարապետին: Եթե չլինէր Զայկը իր օգնականներով, գուցէ հրաժարվէր անտառատնկման գործից: Կամովն աստծո, հայտնվել էր Զայկն ու ամեն բան վերցրել էր իր ձեռքը: Ամեն տեղ հասնում էր, օգնում գործով, խորհուրդով:

«Այդ ռամիկը,- խորհում էր սպարապետը,- աստվածատուր շնորհք ունի, ի գորու է ուզածդ մարդու համոզելու: Նրանից ակնածում են: պատժելու իրավունքն ունի, անգամ գանահարելու, երբեք չի օգտվում այդ իրավունքից»:

Զայկին երկու գրագիրներ են օգնում, որպէսզի սպարապետի անունից նամակներ գրի թերացողներին: Մի անգամ, երբ բուքը մեղմել էր, Զայկի հետ բարձրացան Գառնո կողմերը: Տեսան՝ խանդակները լցվել են ձյունով, Զայկը չոքեց խանդակի եզրին, սկսեց ձեռքով ամրացնել ձյունը:

- Զույս ունե՞ս, որ բռնեն տնկիները:

- Էլ ի՞նչ երեսով նայեմ քեզ ու արքային: Դուք այսքան իշխանութիւն տվեցիք, այսքան մարդու ճակատագրեր վստահեցիք: Եթե չբռնեն, ապրելու գուր է: Չէ՛, կբռնեն, չեմ խայտառակվի:

Այս խոսակցութիւնից անցել է մեկ ամիս: Գառնո ու Դվինի շրջակայքի ձյունները հալվել են, հողը սկսել է չորանալ, միայն խանդակներն են խոնավութիւն պահպանել: Տնկիները սկսել են կանաչել, ստույգ է՝ մի քանի տեղ քամիները քշել, տարել են տնկիները, սակայն Զայկը նորերը տնկել տվեց: Արդ, համ կանաչ է, տունկիները երկար շարքերով աչք են ուրախացնում:

- Եսպէս որ գնա, երկու տարի անց գազաններ կբերենք: Տեր իմ, ես կողմերում նապաստակներ են հայտնվել, կրծում են տունկիները: Ա՛յ, նայի՛ր,- սպարապետը լարեց տեսողութիւնը, սակայն ոչինչ չտեսավ, այնքան մանր էին նապաստակի ատամների հետքերը, իսկ տնկիները կտրված, ընկած էին գետնին:

- Գահաժառանգը սիրում է նապաստակի որսը, կասեմ, թող գա որսի:

- Տե՛ր իմ, թող միայն բազեներով գան, նծույգները սմբակածե՛ծ կանեն անտառները,- հանկարծ հայացքը պայծառացավ,- լավ կլինի Դվնո երեխաներին բերեմ, թող նետերով ու պարսատիկներով որսան, հալածեն էդ աներեսներին:

Խոսակցությունն ընդհատվեց: Նժույզը չափ գցած նրանց էր մոտենում մի հեծյալ: Սպարապետի թիկնապահները մոտեցան հեծյալին, ճանաչելով արքայի անձնապահ գնդի զինվորին, նրա հետ մոտեցան սպարապետին:

- Տե՛ր Մամիկոնեից, արքան հրավիրեց պալատ,- հարցրեց սպարապետը, քաշեց նժույզի սանձը, որ օտար նժույզի հոգտից փոշտաց, ծառս-ծառս եղավ:

- Որդունիներն ու Մանավազյանները պատերազմ են սկսել իրար դեմ...

- Սկսվե՛ց,- մռայլվեց սպարապետը,- Հայկ եղբայր, դու էստեղ մենակ մնացիր: Հույսս դու ես: Ոչ ոքի մի խղճա, պատժիր թերացողներին, ծուլլերին զանահարել տուր, դրա իրավունքն ունես,- նժույզը մոտեցրեց Հայկին, կռացավ,- գիտե՛ս, Հայկ եղբայր, սերունդները կսեն Խոսրով արքան անտառներ տնկեց: Զեզ ու սրանց չեն հիշի: Դու, եղբայր, սին հույսեր մի փայփայիր,- զարմացավ, Հայկը բռնեց նժույզի սանձը:

- Ներող եղիր, տեր Մամիկոնեից, կաղնիներն արպում են հազար տարի: Ա՛յ, երբ ինձ նման մեկը մոտենա հազար տարի հետո, շոշափի կաղնու բունը, հարցնի. «Զեզ ո՞վ տնկեց», կասի՝ ոչ թե արքան, այլ հայ շինականը, կասի՝ ժողովուրդն հայոց: Հավատա՛ ինձ տեր սպարապետ, վկան՝ աստվածներն հայոց ու ես անտառները:

Սպարապետը Հայկի աչքերում կրակներ տեսավ, լիաթոք ծիծաղեց:

- Ապրե՛ս, հայ եղբայր, իրավացի ես: Կաղնին հազար տարվա հիշողություն ունի: Նաեւ մենք, որ հինավուրց ենք արմատներով...

Արտաշատ գնալիս հիշում էր Հայկի խոսքերը: Պատմությունն այս մեծագործությունը կվերագրի Խոսրով արքային, սակայն մարդիկ կկարդան տողատակի գիրը, պարզ ճշմարտություն՝ արարեց ժողովուրդն հայոց...

Պալատ մտնելիս զարմացավ, պատերազմական լարվածություն չկար: Խոժոռվեց ծեր գորականը, խորհեց արքայի անհոգության մասին, մտովի դատաբետեց նրան:

Ստավ գահասրահ, անմիջապես հասկացավ հանգստության պատճառը: Կաթողիկոսը իր ներկայությամբ հանգստություն էր տարածել շուրջը: Նրա հանգիստ պահվածքը սիտպում էր մարդկանց խորհելու, որ այս պատերազմը ոչ այլ ինչ է, քան նախարարների միջեւ ծագած միջադեպ, արքայի հրամանը բավական է, որ վերջ տրվի պատերազմին, վերականգնվի երկրի անդորրը:

Սպարապետը խոնարհվեց արքային, առավ վեհափառի աջը, սպասեց արքայի խոսքին: Թվաց՝ արքան կաշկանդված էր կաթողիկոսի ներկայությամբ, թերեւս մինչ այդ տիաճ խոսակցություն էր եղել: Վճռեց օգնել արքային դուրս գալու այս վիճակից: «Տրդատը՝ այս փոքրամարմին արքայի հայրը, Գրիգոր սրբին Խոր Վիրապում երկար տարիներ պահեց, անարգեց, կտտանքի ենթարկեց: Իսկ սա խուսափում է անգամ կարծիք հայտնել: Է՛, սրա վերջը աշխարհիկ իշխանության զիջումն է, հետո էլ... Մի՞թե արիական մեր նախնիք այդչափ կնվաստանային քրմերի առաջ, հարկավ, ո՛չ, նրանք չէին կորցնի իրենց հպարտությունը եւ ոչ էլ դիրքը...»:

- Տե՛ր Մամիկոնեից, ականջալու՞ր ես, չարյաց ուժերը դարձյալ գլուխ են բարձրացնում,- սպարապետը աչքի տակով տեսավ, ինչպես խորշոմապատվեց արքայի ճակատը:

- Լսողաց եմ, վեհափառ տեր, հարկ է պատժել խստագույնս...

- Տեր Մամիկոնեից, դու գորական ես, պարտք ես համարում պատժել, սակայն Տեր Աստված մեզ բարության է կոչում, ներելու մերձավորներին: Մենք՝ ազգի մեծերս, հարկ է կատարենք Աստծո պատգամները: Դաժանությունը դաժանություն է ծնում, արյունը՝ արյուն:

Սպարապետը վիրավորվեց, ոչ իր համար, այլ արքայի: Կաթողիկոսը իրեն չվերաբերվող հարցերի լուծում էր թելադրում:

- Տե՛ր արքա, հրամայիր ոչնչացնեմ խռովարարներին: Այսօր իրար դեմ են ելել, վաղը՝ գահի դեմ: Հարկ է պատժել խստագույնս...

- Իրավացի ես, տեր Մամիկոնեից: Այո՛, պատժել է պետք: Վեհափառը մոռացավ, ինչպես նրան փրկեցիր հրոսակներից, երբ նրան պաշարել էին Աշտիշատում: Ցավ է ինձ, որ չպարզվեց...,- արքան ականհայտորեն հեզնեց վերջին բառերը, որ հասկանալի դարձավ՝ արքան գիտեր ամեն բան,- այդ միտքը չէր կարող ծագել ոմն սեպուհի գլխում: Հոգով եմ զգում, երկրում արհավիրք է կուտակվում:

- Ես դեմ եմ արյունահեղությանը: Հարկ է Աստծո անունից խաղաղության խոսք տանել Արշակին ու Միհրանին, վերջ տան կռվին: Ստույգ է՝ գոռոզ ու ինքնասածի մարդիկ են, սակայն լիահույս եմ, չեն անսա հայրենիի ձայնը, դառնալ պատճառ հարյուրավոր զոհերի, չեն կարող: Եթե չանսան բանակականության ձայնին, այնժամ վարվեք, ինչպես կվճռեք:

- Պատիր հույսեր: Վեհափառ, նրանք չեն անսա քո հորդորներին, հույս չփայփայես:

- Տեր Մամիկոնեից, վճռել եմ խռովարարների մոտ ուղարկել Աղբիանոս Եպիսկոպոսին, պատանյակները չեն հանդգնի դեմ խոսել ծերունագարդ Եպիսկոպոսին: Ես հավատում եմ Աղբիանոսի առաքելությանը:

Աղբիանոսի առաքելության լուրը առաջին պահին հանգստություն բերեց մարդկանց: Շատ կռիվներ էին տեսել, բա՛վ է այս խայտառակությունը, հայը հայի դեմ եւ հանուն ինչի՞, մի՞թե հող հայրենին է վտանգվել, թե՞ կրծքերը դեմ են տվել պարսից նիազկներին: Ինչու՞ են արյուն հեղում: Չարագուշակ սպասում իջավ Արտաշատի վրա, քանզի ճանաչում էին այդ նախարարներին, գիտեին նրանց հինավուրց վեճերը, հակամարտությունը: Ով ու՞մ հողն էր տիրել, ով ումի՞ց էր հող խլել... Անհույս էր դառնում սպասումը, երբ հիշում էին Արշակ Մանավազյանի վանող դեմքը, իսկ երբ մտաբերում էին Միհրան Որդունուն, նրա արհամարհական քմծիծաղը, այլևս անհույս էր դառնում խաղաղությունը: Կատարվեց, այն, ինչին սպասում էին, ինչից վախենում էին: Ախոյան նախարարները արհամարհեցին ծեր հոգեւորին, վռնդեցին իրենց երկրներից: Դա արդեն վիրավորանք էր արքայի ու վեհափառի հասցեին:

Քաղաքում պապանձվեցին, սպասեցին ծանր դեպքերի: հարկավ, արքան պիտի պատժեր խռովարարներին: Իսկ երբ իմացան, որ խռովարարների դեմ գնում է սպարապետը, հասկացան՝ արյուն էր հեղվելու: Սպարապետին միացավ նաեւ Մարդպետաց տերը, սա կարող էր տանել գոռոզ մարդկանց, իսկ դավաճանների համար միայն մահու վճիռ էր կայացնում: Հայը ներում էր թշնամուն ծնկի բերելուց, վրեժն առնելուց, պատժելուց հետո միայն...

Խռովարարների ճակատագիրը վճռված էր...

- Ես գուշացրեցի ամենքիդ,- մոյլորեն նետեց սպարապետը,- զուր ուղարկեցիք Աղբիանոսին: Նրանք մեղավոր են Աստծո ու մարդկանց առաջ, պիտի պատժվեն:

Կաթողիկոսը մռայլվեց: Նա լավ էր ճանաչում սպարապետին, գիտեր, որ նրա գերագույն նպատակը երկրին ծառայելն է:

- Տեր Մամիկոնեից, մենք՝ ես ու դու, երկար ենք ապրել, շատ ու շատ բաներ ենք տեսել, լավ ու վատ: Մի մոռացի՛ր, որ Տեր Աստված ներող է,- զարմացած նայեց արքային, սրա դեմքը սեւացել էր, ապա գունատվեց, ձեռքը սեղմել էր կրծքին: Ամենքն էլ վախեցան արքայի համար: Առաջին անգամ էին նրան այդ վիճակում տեսնում, շատերը ցանկացան բուժ կանչել, սակայն արքան արգելեց սպառնալից բարձրացրեց ձեռքը, լռեցին:

- Վեհափառ տեր, մենք այս գործը հանձնում ենք սպարապետին: Հրաման մեզանից՝ խստագույնս պատժել խռովարարներին, որ չեն հարգում Մեծ Հայքի գահն ու եկեղեցին: Այնպես պատժիր, որ օրինակ դառնա ամենքին,- արքայի մեջ գլուխ էր բարձրացրել վաղուց կուտակված զայրույթը,- ուր հասանք, տյա՛րք, նախարարները տիրազուլուխ են: Անտեսում են արքայի հրամանները, ըմբոստացել են գահի դեմ,- արքայի ձեռքի մականը դողում էր: Սպարապետը ցանկացավ, որ արքան մականը զարկեր գահի արմնկակալին ու գոռար:

- Բա՛վ է, վեհափա՛ռ, մի խառնվիր աշխարհիկ գործերին,- ցավոք նրա ցանկությունը չիրականացավ:

- Տե՛ր Մամիկոնեից, թերեւս փորձես մի վերջին անգամ, չէ՞ որ մերն է արյունը...

Սպարապետը հասկացավ՝ կաթողիկոսը բնավ չէր կամենում փրկել խռովարարներին: Նա ցանկանում էր վերջին խոսքը իրենը լինել:

- Ո՛չ, հոգեւոր տեր: Ես եպիսկոպոս չեմ, մտադիր չեմ տանելու նրանց հանդգնությունը: Արքայի հրամանը հոգուս թելադրանքն է նաեւ,- ասաց ու չսպասելով կաթողիկոսի պատասխանին, դուրս գնաց գահասրահից:

Սպարապետի խոսքերը, զայրալից պահվածքը այնքան հարազատ էին արքային, որ պատրաստ էր համբուրելու սպարապետի ձեռքը, քանզի սպարապետի միջոցով դաս տվեց կաթողիկոսին:

Սենեկապետ Վրույրը չհասցրեց մի կողմ քաշվել վարագույրից, որին կպած լսում էր: Սպարապետը զայրալից շուրժումով մի կողմ նետեց նրան: Ելավ բալ: Չարագուշակ հնչեցին շեփորները:

Սպարապետը գորքերը արագ երթով տարավ Որդունիք: Երկիրը սսկվեց: Դրան հաջորդեցին սահմռկիչ լուրեր: Մի քանի օրում արքայական գորքերը ջարդեցին Որդունիներին, ապա Մանավազյաններին: Ավերեցին նրանց բերդերը, կոտորեցին նախարարական տան անդամներին, որձակտոր արեցին տոհմերը: Խռովարար նախարարներին գլխատեցին:

Արքայի հրամանը կատարվեց ամենայն բարեխղճությամբ: Խոսքով արքան ցնծում էր: Սակայն արքայի ուրախությանը սառը ջուր լցրեց կաթողիկոսը, երբ առաջինը եկավ շնորհավորելու, պահանջեց, այո՛, այո՛, պահանջեց... Աստված իմ, մի՞թե, հեթանոս օրերին, քրմապետերը կհանդգնեին պահանջ դնել արքայի առաջ, իսկ սա, Գրիգոր որդին, պահանջեց խռովարարների հողերը ընծայել հոգեւորներին, որոնց վիրավորանք էր հասցվել...

Սպարապետը բռնեց Ողականի ճամփան, Հայրը վերադարձավ Արտաշատ: Երկիրը խաղաղվեց, ցավոք, միայն ամերես: Նախարարների մեջ դժգոհություն էր բուն դրել... Բակուր բղեշխը հասկացավ՝ երկրում հրաբխացող դժգոհությունը օգուտ կբերի իրեն: Արքայի հեղած արյունը կավելացնի իր համախոհների թիվը:

Գարնանային անուժ արեւը փորձեր էր անում ջերմացնելու շրջապատը, սակայն ամենուր ձմռան շունչն էր: Բնությունը թելադրում էր իր օրենքները՝ ձմռանը փոխարինելու էր գալիս գարունը: Այրարատ աշխարհը հեւում էր գարնան շնչից: Ծառերը կենդանանում էին, բողբոջում: Տափերականի մոտ երեխաները ձնծաղիկ էին հավաքում, քսում էին աչքերին, ասում էին...

- Վահագն աստծո ծաղիկներն են, ով քսի աչքերին, դիպուկ նետածիգ կդառնա: Օտարությունից տուն վերադարձող թռչունները կենդանությամբ էին լցրել շրջապատը: Արագիլը, ահա թե ում է սպասում այրարտոցին, արագիլի գալուց հետո այլևս ձմեռ չկա: այդ սուրբ թռչունների հետ գալիս է գարունը:

- Գալի բարի, արագիլ բարի...

Արեւը հագիվ էր մեկ նիզակաչափ բարձրացել, երբ հնդստանցի Ռամն ու գոհարավաճառ Բուրակը դուրս եկան Արտաշատից: Ռամի քարավանը վաղուց էր գնացել, արդ, նա արագ երթով պիտի հասներ քարավանին ու գնար Յնդստան: Ձմռանը մնալով Արտաշատում Ռամն ու Բուրակը ավելի մտերմացան, հիրավի, իտրենց եղբայրներ էին համարում:

Բուրակը սկսել էր թախծել, անհանգստանում էր Ռամի համար: Դե, ինչպես չանհանգստանար, երբ նայում էր Ռամի դեմքի սարսափելի սպիին, պատկերացնում է այն վտանգները, որ սպասում են ճանապարհին: Հանդիպման հեռանկարը դառնում է ահույս, քանզի Ռամը դարձյալ անցնելու է քուշանաց երկրով, իսկ մի՞թե միայն քուշաններն են վտանգավոր, հապա մնացածները, քանի-քանի երկրով է անցնելու, մինչեւ հասնի սրբազան Գանգեսի ափերին: Վտանգավոր ճանապարհ էր ելել Ռամը: Մեկը, անտեղյակ Ռամին ու նրա Էությանը, կհարցներ. «Ինչու՞ ես չափչփում աշխարհի ճանապարհները, արքայի չափ հարստություն ունես: Նստիր տանդ ու վայելիր: Ինչու՞ ես կամովին խցկվում մահվան երախը: Հենց իսկ թագավորները, հրովարտակ տվող թագավորները, հետեւիցդ ավագակներ են ուղարկում, չէ, Ռամին կանգնեցնել անհնար է...»:

Ծանր անհայտություն է ճանապարհ կոչվածը, քանի՜-քանիսին է կուլ տվել, քանի՜-քանիսի հետեւից լացող աչքեր թողել: Ծանր է քարավանի ճամփան, անապատ ու անհայտություն: Այսօր, այստեղ ջրհոր կար, վաղը չկա, կուլ է տվել ամենակուլ ավագը: Այսօր, այստեղ շեն էր, վաղը հրդեհների հետքեր են մնալու եւ անթաղ մեռելներ, բորբ արեւի տակ քայքայվելով, մարդկանց երեսին հռհռալու են դատարկ ակնակապիճներով: Հռհռալու են, կորցնելով ճամփաներն ու հույսը...

- Դու մի՛ կասկածիր, ես ետ կգամ: Երդվում եմ Գանգեսով ու Արարատներով, մեղ ժպտաց Ռամը, որի միտքն արդեն ճանապարհին էր, հասել է քարավանին, բռնել տունդարձի ճամփան:

- Իջնենք նժույգներից, մի-մի գավաթ գինի խմենք բաժանվելուց առաջ, բարի մաղթենք իրար:

Կանգ առան: Ծառուրդ գորգ փռեց ճանապարհի եզրին: Մախաղից գինի, լավաշ, պանիր, երկու խորոված փասիան հանեց: Բուրակը լցրեց գավաթները:

- Խմենք ու բարի վերադարձ ցանկանք քեզ, իմ հնդստանցի եղբայր: Թող սուրբ Գանգեսն ու Արարատները ետ բերեն քեզ: Ճակատագրին եմ հանձնում քեզ ու խնդրում եմ աշխարհի բոլոր աստվածներին՝ անփորձանք անեն ճանապարհիդ: Ցավ է ինձ քեզ մենակ թողնել, սակայն գիտեմ անհանգիստ հոգիդ, հպարտ Էությունդ: Չնայ՛ ու հիշիր՝ Հայաստան աշխարհում դու եղբայր ունես քեզ սպասող:

Ռամը գրկեց նրա ուսը, գլխից վեր բարձրացրեց գավաթը:

- Եղբայր իմ, երդվում եմ՝ ջանք չեմ խնայի ետ գալու համար: Նախ կիջնեմ Տիգրն, ապա կդառնամ արեւելք, կգնամ քուշանաց երկիրը: Ես դեռ հաշիվներ ունեմ այստեղ,- մռայլվեց,- քուշանաց երկրից կբռնեմ տունդարձի ճամփան: Այս անգամ ավելի վաղ կվերադառնամ, պատիվներդ կկատարեմ, անհոգ մնա:

Բուրակը երկար ժամանակ նայում էր արագորեն հեռացող ընկերոջը: Նրա մտքով սարսափելի բաներ էին անցնում, սակայն հուսանք այս անգամ աստվածները կհովանավորեն Ռամին եւ որքան էլ հույս տար իրեն, դարձյալ մտում էր անհայտությունը: ամեն, ամեն բանի, ամեն բարի կամեցողության արանքում մի չար անհանգստություն էր սողոսկում: Ռամը անհայտացավ բլրակի հետեւում: Մնաց սպասումը, հոգեմաշ ու անձկալի սպասումը:

- Ի՞նչ կասես, Հայր Արտավազդ, խիստ չէ՞ր պատիժը,- հարցրեց արքան, որսաց Հոր նախատիկնով լի հայացքը,- հայոց գահնամակից երկու նախարարություններ պակասեցին,- հոգոց հանեց,- վեհափառը համամիտ է մեզ հետ...

- Հարկավ, գոհ կլինի: Այս ամենը ի հաճույս հոգեւոր դասի կատարվեց,- դառը քմծիծաղ գծագրվեց Հոր դեմքին,- Մանավազյանների հողերը անցան Աղբիանոսին, Որդունյացը՝ Բասենի եպիսկոպոսին: Ինչ կա, առանց մարտում սուր ճոճելու պարգեւ ստացան: Արժանի վաստակ, ինչ կարող ես անել,- ապա գայրացավ,- դու վկայեցիր եկեղեցու հզորությունը, սակայն աշխարհականի հաշվին...

Արքան զգուշացած հայացքը զցեց վարագույրների կողմը: Զեր ցանկանում սենեկապետը լսեր

իրենց խոսակցությունը: Նա իրեն մեղավոր էր զգում, հակիրձի էր ընծան: Այո՛, այո՛, դժգոհ էր, սակայն այդ հողերի համար չէր ցանկանում գժտվել կաթողիկոսի հետ, իսկ իրավացի չհամարել Յորդ, չէր կարող, քանզի իրոք աշխարհական իշխանության հաշվին հզորացել էր եկեղեցին: Նա կատարել էր կաթողիկոսի խնդրանքը, ինչու ոչ՝ կամքը: Դրա գիտակցումը դառնացնում էր: Հայրը շեշտում էր՝ մարտին մասնակցողները ընծա չստացան: Նա իրավացի էր:

- Տե՛ր Մամիկոնեից, ներող եղիր, հարկադրական էր քայլս, կարի կարելուր է՝ դժգոհություն չընկնի արքայական ու կաթողիկոսական տների միջեւ, առանց այն էլ բարվոք չէ վիճակը:

- Գիտե՛մ, որդի՛,- մեղմեց Հայրը,- ծանր է վիճակդ,- սակայն նորից գայրացավ,- մինչեւ ե՞րբ...

- Աստված սիրես, մի՛ տանջիր, ինչպիսի անձս,- զգաց, պատվարը քանդվեց տարիների կուտակված մաղձը դուրս պիտի թափվեր, հակառակ պարագայում՝ հանգստանալ չէր կարող, Հայրը չթողեց խոսեր:

- Դու հզորացնում ես հոգեւոր դասը եւ դա ի հաճույս հայոց թշնամիների, իսկ դա հղի է վտանգներով: Քրիստոսը ժուժկալություն է քարոզում, ինչու՞ հոգեւորները չեն հետեւում Աստծո պատգամներին, ինչու՞ են ձեռք կարկառում աշխարհիկ իշխանությանը, զսպել է պետք, տե՛ր արքա,- լռեց:

- Աստծո ու երկրի առաջ նա էլ է պատասխանատու:

- Մի՛, մի՛, Խոսրո՛վ,- գայրույթի պահին մոռանալով խոսակցի արքա լինելը, շարունակեց,- դու արդարացում մի՛ փնտրիր: Օրեն չէ քիթ խոթեն աշխարհիկ գործերի մեջ:- Լռեց, սպասեց, ասես գահասրահը պիտի պատասխան տար, արձագանքեր իրեն: Լռել էր նաեւ արքան,- ներող եղիր, տեր արքա: Ես ասացի այն, ինչ հաճելի չէր քեզ: Եթե ես չասեմ, ով պիտի ասի: Տե՛ր արքա, դեմ կանգիր կաթողիկոսի նկրտումներին, հակառակ դեպքում կկորցնես վարկդ երկրում...

- Լռի՛ր, Աստված սիրես,- խնդեց արքան,- մենք այլ ելք չունենք,- գլուխը կախեց, ասես մի տաս տարով ծերացավ:

Ծեր գորականը դառնությամբ նայեց արքային:

«Խոսրովը հազիվ է դիմանում գահի ծանրությանը: Այո՛, ծանր է հայոց գահը»,- խորհեց Հայրը:

- Հոգիս վատն է գուշակում, տե՛ր արքա,- տնքաց Հայրը, բարձրացավ տեղից,- Ո՛րջ լեր, տե՛ր արքա:

Չուր չէր տազնապում Հոր հոգին, զուր չէր արհավիրք գուշակում: Նա եկավ հանկարծակիի: Մազքութաց հսկա բանակը երկիր մտավ: Սանեասն թագավորը, ծնունդով Արշակունի, սպանել էր Վրթանես կաթողիկոսի որդուն՝ Գրիգորին՝ Աղվանքի կաթողիկոսին:

Սանեասնը իր հրոսակներով մտավ երկիր: Ով ասես չկար նրա բանակում՝ հոներ, թավասպարներ, գուգարներ, ճղբեր, եգերսավներ... Թիվ ու համրանք չկար նրա հեծյալներին: Բնույթով բիրտ ու դաժան Սանեասնը կատաղի լեռնականներին թալանի էր բերել: Լեռնականների ցեղախմբերը, գնդեր կազմած, թալանում էին քաղաքներն ու շենքերը, ավերում: Արյուն ու սարսափ էր բռնել Հայաստանը: Արքան ու կաթողիկոսը հեռացան Դարանոյք: Գահաժառանգը Գառնիում էր, սպարապետը՝ Հռոմում: Չկար մեկը, որ սկսեր դիմադրության գործը, դեմ ելներ Մազքութաց գործերին:

Անպատմելի ստորացուցիչ էր դեպքերի հետագա ընթացքը: Անպաշտպան երկիրը ընկել էր լեռնականների իշխանության տակ: Սանեասնը դիմադրության չհանդիպելով առաջանում էր ավերելով բերդերն ու քաղաքները:

Վերջապես Սանեասնը կարող էր հագուրդ տալ կրքին՝ թալանին: Ի՞նչ լեռնական առանց թալանի, իսկ Գրիգոր կաթողիկոսը արգելում էր թալանը, դե՛, թող բորենիների կեր դառնա, թող ոսկորները ցրիվ տան ծովափին: Ազատ են Արշակունի Սանեասնի ձեռքերը: Նա հպարտությամբ է նայում իր բանակին: Մեկ-մեկ կանգնեցնում է բանակը, հրամայում է զինվորներին մեկական քար գցել գետնին: Այն կույտ է դառնում հսկա, վկայում է Սանեասնի հզորությունը: Կույտը բլրակ է դառնում, ուրախություն բերելով թագավորին: Այդ ահավոր նշանները թողնելով ճանապարհին, առաջ է գնում Սանեասնը, քահ-քահ խնդրում է Սանեասնը:

Ահա եկել է Վաղարշապատի պատերի տակ կանգնել ու լեռնականի անզուսպ հետաքրքրությամբ, նաեւ քանդելու մոլուցքով գնում է պարիսպներն ու եկեղեցիների փայլուն գմբեթները: Կարծում է ոսկուց են, այդպես է երագում քանզի նրա Աստվածը՝ ոսկին է: Նաեւ նախանձ է ծնվում այս ամենի հանդեպ, սակայն դեղին փայլն ահագնանում է, դառնում տիեզերքի պես տիրապետող, անհասանելի: Խեղճ վաղարշապատցիներ, ո՞վ պիտի պաշտպանի քաղաքը, արքան ու կաթողիկոսը Դարանոյքում են, հայոց գործերը ցրված երկրով մեկ: Ճակատագիրը խաղ էր անում Վաղարշապատի հետ, քաղաքն ընկավ: Այլ կերպ չէր կարող լինել, խեղճ քաղաք, անտեր քաղաք, անտեր երկիր... Մի ամբողջ տարի լեռնականները սուրում էին երկրում, ավերում էին, արյուն հեղում, գերեվարում մարդկանց:

Մի ամբողջ տարի, խղճա՛, Աստված... Մի՞թե մեռել է արքան, մի՞թե մեռել է հայի հոգին, ազատատենչ հոգին: Եվ մի՞թե չպիտի հառնեն հայոց ռազմաբեր աստվածները, մի՞թե չպիտի

սատարեն ժողովրդին... Ով ուզում է՝ թողլի՛ն՝ Աստված, թե արքա, միայն թե ցնցահար անի հայի ընդարմացած հոգին, հանի սուրբ պատերազմի: Պատրաստ եմ ծնկի գալու անգամ սատանայի առաջ, միայն թե կռվի հանի հայերին. ռազմասեր ու արի, արդ, խաչի հովանու տակ ընդարմացած հայերին...

Եվ ահա, համընդհանուր վիատության ու մղձավանջի մեջ մի լույս ծնվեց, հույս դարձավ: Մի փոքրիկ կայծ, որ սկզբում մլմլաց, սկսեց ծխալ, ապա բոցավառվեց: Չէ, կրակը չվառվեց Դարանոյքից, եկավ Զոռմաց սահմանից, չկարծեք, թե «խաչապաշտ» Զոռմը օգնության հասավ: Բավ լիցի ինձ, ես այդքան միամիտ չեմ, որ հույս փայփայեմ... Այդ Վաչե սպարապետն էր մտավ Զայաստան: Եկավ մի փոքրիկ ջոկատով, նրան Զոռմ ուղեկցած ջոկատով: Ջոկտարը սկսեց սովարանալ: Չէ՛, թող վայեն հայոց ճակատագրի վրա օտար գիշերահավքերը, նրանց կոնչյունը բոթ չդարձավ, չէ՛, չի՛ մեռել հայի արիական հոգին: Այն կռիվ է ելել հին ու նոր աստվածների հետ միասին, հասյալ է ժամը սրբազան պատերազմի:

Եկան, սպարապետին հասան Բագրատ Բագրատունին, Մեհեկան ու Գարեգին Ռշտունիները: Իջան բերդերից ու սպարեպտին միացան նրանք, ում համար թանկ էր աշխարհն հայոց: Ափսոս, սակավ էր այս ամենը Սանեսանի հսկա բանակի դեմ ելնելու:

Վերջապես մեծ գնդով տեղ հասավ Զայր Արտավազը: Սպարապետը գրկաց Զորը.

- Զեզ էի սպասում, գիտե՞ս, Արտավազը,- ծիծաղեց սպարապետը,- երբ հետս ես, թիկունքից չեմ վախենում: Դե՛, փառք Աստծո, սկսենք:

- Դու մենակ չես եղել ու չես լինի: Մեր ընկերությունը սրբություն է, մենք անդավաճան ենք արիական մեր առաքինություններին,- իր հերթին հուզվեց Զայրը, ապա ասաց,- սպասի՛ր, դու մոռացել ես գուգազը: Ահա այն ուժը, ինչու՞ ես երկմտում, գուգազը հանիր Սանեսանի դեմ: Լսի՛ր, Վաչե, ժամն էհասել, կյանքիս իմաստը այս հայտնագործությունն է՝ հայ շինականին ու ազատանուն միացրու գորական դաշինքով... Ահա հուսկ միակ միջոցը փրկության այսօր, վաղը, հավիտյանս հավիտենից... Ով հասկանա սա, այս դժվարամարս ճշմարտությունը, կհաղթի: Մեր փրկությունը մեր ձեռքին է: Պարտ ենք լինել ժողովրդի հետ: Միացնենք մեծ աշխարհագորը ազատանու գնդերին ու զարկենք Սանեսանին,- հանկարծ գայրացավ,- Եվ չփորձեք առարկել... Մի՛ խորհեք, չեմ օրպակասել, թու՛, ես ձեր ծնունդը... Զայրը առաջին անգամ հայիոյեց, ապա շտկեց ուսերը,- մեր հույսը ժողովուրդն է, մի՛ անտեսեք շինականին: Սա արիական նախնյաց պատգամն է՝ լինել ժողովրդի հետ: Մենք այնքան աշխարհագորական կհանենք, որ կարող ենք ուզածը թշնամու հետ ճակատել: Մենք այլընտրանք չունենք:

Մինչ Զայրը խոսում էր, մնացածները լռել էին, չէին ցանկանում խանգարել նրան, ասես դրանից հետո պիտի պատասխան տային Վերին Դատավորին, Ամենքն էլ հասկանում էին, եղած գորքերով Սանեսանի դեմ չես ելի:

- Այլընտրանք չունենք, իրավացի է Մարդպետաց տերը: Զարկ է գործել արագ: Ես մեկին գիտեմ,- քմծիծաղ տվեց,- նա կարող է մեծ աշխարհագոր հանել, միայն թե գենք հասցնենք,- տեսնելով հետաքրքրված հայացքները, շարունակեց,- խոսքս Զայկ վերակացուի մասին է: Ստույգ է, նա գորական չէ, սակայն ասեմ ոչ ձեզ զարմացնելու համար: Նա հայտնագործություն է երկրի ու գահի համար: Նա իր մարդկանցով կես ամսում այնքան զինվոր կհանի, որքան մենք մեկ տարվա ընթացքում: Վճռել եմ Պարգեհին ուղարկել Զայկի մոտ,- նայեց փեսային,- խնդրանքս է, օգնես Զայկին: Նա գորական չէ,- Անդովկ Սյունին խոնարհվեց, թեև դժգոհ էր, սակայն զսպեց իրեն: Նա չէր կարող դեմ խոսել սպարապետին, որին հարգում էր ու սիրում որդու պես:

- Որքա՞ն մարդ կարող է հավաքել այդ Զայկը,- հարցրեց Վարագ Կամիսականը,- դժվարանում եմ հավատալ այդ ռամիկին:

- Չուր ես տարակուսում, իշխան,- նրա խոսքը կտրեց Զայրը,- դու չես ճանաչում Զայկին: Այս պարագան է քո մեջ կասկած ծնում: Մի՞թե չես լսել արտաշատցի խենթի մասին, միայնակ առու հանող խենթի մասին: Իցիվ այդպիսի խենթեր շատ լինեին: Զայկը հարկավ արիական է:

- Լիահույս եմ, Զայկը երկու-երեք բյուր աշխարհագորային կհանի,- հաստատուն ձայնով ասաց սպարապետը:

Ներկաները տարակուսած իրար նայեցին: Անհավանական էր սպարապետի ասած թիվը:

- Դա հո բանակ է,- պարզիր միտքդ,- Ամատունին էր:

- Զարկ է լուր ուղարկել արքային,- խոսեց մինչ այդ լուռ նստած Ռշտունին,- արքան վտանգված է, անհայտության մեջ...

Ամենքն էլ հասկացան ինչ էր ցանկանում ասել իշխանը: Յուրաքանչյուրը կարող էր շարունակել նրա միտքը:

- Արքան հեռու է մնացել երկրի պաշտպանության գործերից, սակայն չանտեսենք նրա իրավունքները...

- Արքան միայնակ չէ: Վեհափառը նրա հետ է,- չգիտես ինչու ասաց Զայրը, թերևս ցանկանում էր արքայի պատասխանատվության մի մասը դնել վեհափառի վրա:

- Տյա՛րք, այս պահին մենք ենք կանգնած Սանեսանի առաջ: Մենք ենք պատասխան տալու Աստծո

ու ժողովրդյան առաջ, մնացածը ունայնություն է:

Սպարապետի խոսքերում դառնություն կար, նաեւ անսքող դժգոհություն:

- Մեծ Հայքի սպարապետ Վաչե Մամիկոնյանը վերադարձել է Հռոմից: Համհարզի խոսքերը ասես մտրակեցին թագավորին: Սանեսանը մռայլվեց, լուրը անսպասելի էր, թեպետ նա սպասում էր այդ սարսափելի մարդուն: Թագավորի ծանր հայացքի տակ համհարզը կծկվեց: Ներկաները սսկվեցին: Ամենքն էլ ականջալուր էին, գիետին հայոց սպարապետին որպես հմուտ զորավարի, ավելին՝ նրա փառքը տարածված էր որպես անկարտելի զորավար: Հասկացան, պատերազմը նոր էր սկսվում Հայաստան աշխարհում, մինչ այդ միայն թալանել են երկիրը, իսկ այս պահից հայերը կռիվ կելնեն: Թալանած հարստությունները երկար ժամանակ կբավականացնի իրենց անհոգ ապրելու: Հարկ է ետ դառնալ, սակայն չի կարող հագենալ թալանից Սանեսանը:

Տաղավարում հավաքվել են լեռնական ցեղապետները, ինչպես թագավորն էր ասում՝ թագավորիկները, եթե նրանք թագավոր են, ապա ինքը արժանի է արքայից արքա կոչվելու: Ազահ ու ընչաքաղց է Սանեսանը: Նա չի կարող հեռանալ մի երկրից, ուր դեռ կան չթալանված շինականներ, քաղաքներ ու շեներ: Մի անգամ մտքով անցավ, որ սպարապետը կարող է ի մի բերել Մեծ Հայքի ուժերը, ճակատել իր հետ, սակայն իսկույն մոռացավ, իսկ հոգում, ինչ-որ խորքում զգուշացում էր լսում. «Չգու՛յշ, հայերը կատաղել գիտեն...»: Հանկարծ գլխում զարմանալի միտք ծնվեց: Այդ ինչպես է եղել, մինչեւ այդ չի խորհել: Չէ՞ որ ինքը Արշակունի է, մի՞թե վատ կլինի նստի հայոց գահին: Պատկերացրեց Մեծ Հայքը միացած Մազբութաց աշխարհին, չկային Կուր գետի սահմանները: Այս պահին նստած է Վաղարշապատում, էլ ի՞նչ կարող է խանգարել տիրելու հայոց գահին: Եթե հայերը չընդունեն իրեն որպես արքա... Ավագանին կգիջի, քանզի ինքը կոտակ չէ, այնպես կսեղմի... Մի արգելք կա՝ Վրթանեսը, դե՛, ի՞նչ, նրան մեջտեղից կվերացնի: Սպանելուց զատ այլ միջոց չկա՝ Վրթանեսն իրեն չի ների որդու՝ Գրիգորի մահը: Հիշելով Աղվանքի կաթողիկոսին կատաղած ձիու պոչից կապված, ծովափին քարշ տալը, հռհռաց: Ոչինչ, եկել է հոր հերթը: Պահը հարմար է, կտիրի հայոց գահին: Հիմար, անմիտ հայեր, ինչու հրաժարվեցին իրենց բնաիկ աստվածներից: Ա՛խ, իմ միամիտ «եղբայրներ», ինչպե՛ս եղավ, որ Գրիգորն ու Տրդատը խաբեցին ձեզ - դուք խաբեությունը մեծագործություն կոչեցիք: Նորից հռհռաց: Այդ մեծագործության չափ էլ փոքրացաք, խեղճ հայեր: Ցավ է ինձ՝ Արշակունուս, այդ մասին խորհելն անգամ... Եվս մեկ հանգամանք՝ Վաչե սպարապետի նվիրվածությունը: Մոլեռանդ է, գահին նվիրված, ինչպես ամեն Մամիկոնյան... Իսկ ինչու ոչ իրեն՝ Սանեսանին, չէ՞ որ նա գահին է նվիրված եւ ոչ խոսրովին: Վաչեի օգնությամբ իր հսկա բանակով կարող է դեմ ելնել թե Հռոմին, թե Պարսկաստանին:

Այնքան էր տարվել խոհերով, որ մոռացել էր զինակիցների ներկայությունը:

- Արքա՛, վճիռ դիր: Բեզ են սպասում քո քաջ զինակիցները,- լսեց ալանների ցեղապետ Կազբեի ձայնը,- Վաչե սպարապետը գեղքի մարդ է, նրան չես վախեցնի մեր շատվորությամբ: Նա անկարտելի զորավար է հռչակված աշխարհում: Լուրեր կան՝ նրան են միանում հայոց իշխանները: Մի քանի օր առաջ նրան օգնության է հասել ընկերն ու անդավաճան զինակիցը, այն եծր նախարարը, անունը չեմ հիշում: Իշխաններից մեկի հեծելագունդն են տեսել երթի մեջ, կարծյոք, Կորդուք աշխարհի տերն է: Մենք մի քանի անգամ մարտում հանդիպել ենք այդ երիտասարդ իշխանին, կգերադասեի նրան որպես բարեկամ հանդիպել, հմուտ՝ կռվող է: Վիճակը ծանրանում է, վճի՛ռ դիր, տե՛ր արքա:

- Ամենքին էլ կջարդենք: Մեր դեմ ոչ մի սպարապետ էլ ի գորու չէ կռվելու,- խոսեց գուգարների ցեղապետը,- ա՛յ, կջարդենք սպարապետին ու տուն կերթանք, փա՛վ է, ինչ ավարեցինք: Չսպել զինվորներին այլեւս անհնար է: Տուն են ուզում վերադառնալ: Ցեղապետները աղմկեցին, հիշեցրեցին Հայաստան աշխարհի դաժան ձմեռների մասին: Համընդհանուր պահանջ էր՝ տուն դառնալ:

... Մտա Մեծ Հայքի սահմանը: Չորքեր եմ գումարում թշնամուն զարկելու:

Ողջ լեր, Մեծ Հայքի արքա:

Վաչե, սպարապետ հայոց:

Այսքանը եւ ոչ մի բառ ավելի: Հակիրճ էր, նաեւ բովանդակալից: Արքան պատրաստ էր լաց լինելու: Երբ շնորհակալական զգացումն անցավ, տեղ տվեց վիրավորանքին, ինչու՞ այսքան հակիրճ: Արքան նամակի տողատակում հանդիմանություն էր փնտրում, չգտնելով, գայրացավ:

Նա իրեն արդարացնող խոսքեր էր փնտրում, թեւ նամակում մեղադրանք չկար:

- Վրու՛յր, հայտնիր վեհափառին, գնում եմ նրան այցելության: Սպարապետից լուրեր եմ առել:

- Ներող եղիր, տեր արքա, հարկավ, բարի են լուրերը,- կախեց հայացքը:

Սենեկապետը տիպի սովորույթ ուներ, չէր նայում մարդկանց աչքերի մեջ: Հայացքը կախելով,

պատրաստվում էր մարդկանցից:

«Սենեկապետը համեստ մարդ է ու խոնարհ», - խորհեց արքան: Սխալվում էր արքան, Վրույրը համեստ մարդ չէր: Նա ծակող հայացք ուներ: Թերեւս դրա պատճառով թաքցնում էր հայացքը: Վա՛յ նրան, ում չսիրեց սենեկապետը, ոտի տակ կտար, իսկ եթէ այդ մարդը իրենից բարձր դիրք ուներ, նրան կվարկաբեկեր արքայի առաջ եւ այդ ամենը կաներ հայացքը կախ եւ այնպիսի հմտությամբ, որ արքան կխորհեր՝ մարդը արժանի է պատժի:

Արքան մոտեցավ աշտանակին: Երկար նայեց մոմին, ապա կտրուկ շարժումով ձեռքը պահեց կրակի վրա, եթէ դիմանար, ձեռքը ետ կքաշեր, ամմեն բան լավ կընթանար: Չէ՛, չդիմացավ, ճչաց, ձեռքը ետ քաշեց: Վրույրը նայեց զարմացած: Արքան կրկնեց փորձը, ձեռքով փակեց կրակը, ձեռքը սկսեց այրվել: Սիրտը ծակեց, սակայն գտել էր հաղթելու ճամփան, այն գալիս էր ցավին դիմանալով: Դիմացավ, ժպտաց ցավագին: Ուզեց լսել սենեկապետի գովասանքը, հասկանար, որ արքան էլ գիտե տոկունության գինը: Վրույրը անշնորհք դուրս եկավ, չխոսեց:

- Թիկնապահներից երեքը թող գան, - նետեց սենեկապետին, նշան արեց հետեւել իրեն, դուրս գնաց սրահից:

Միջանցքում կպրաջահերը բռնած՝ կանգնել էին թիկնապահները: Արքան ցանկացավ, որ սենեկապետը ներկա լիներ կաթողիկոսի հետ կայանալիք խոսակցությանը: Երբ տեսավ կաթողիկոսը կկոցված աչքերը, որոնք բարություն էին ճառագում, միտքը փոխեց, հանգիստ նստեց աթոռակին: Առաջին անգամ չառավ վեհափառի աջը: Լռեց: Կաթողիկոսն արքայի պահվածքի մեջ փոփոխություն տեսավ, անախորժեց: Տեսավ արքայի ձեռքի նամակը: Հասկացավ, արքան կարելու գործով էր եկել:

- Լուրեր ունես դրսից, - կաթողիկոսը Դարանոյքը զնդան էր համարում, սակայն սեփական կամքով ընտրած զնդան:

Արքան անխոս մեկնեց նամակը: Այն ընթերցելուց հետո, սպասածին հակառակ՝ կաթողիկոսը երկար լռեց, շոյելով մորուքը:

- Մտա Մեծ Հայքի սահմանը, զորքեր եմ գումարում... Փա՛ռք Երկնավորին: Նա մեզ սպարապետի մաքուր ձեռքերով ազատություն է ուղարկում: Ես երբեք հավատս չեմ կորցրել Վաչեի հանդեպ: Նա առ Աստված մարդու նվիրվածության վկայությունն է մեր աշխարհում: Նա երբեք չի լքի հայոց գահն ու եկեղեցին...

- Որը լքեցինք մենք, - անձկորեն նետեց արքան:

Վեհափառը ցնցվեց, դա ապտակ էր:

- Այո՛, Վեհափառ, անձերս փրկելու համար լքեցինք ժողովրդին, փախանք այս անառիկ բերդը: Պատմիչները կչարախնդան՝ արքան ու կաթողիկոսը արհավիրքի պահին լքեցին ժողովրդին, պատսպարվեցին Դարանոյքում, նաեւ կմեղադրեն...

- Սպասի՛ր, Խոսրո՛վ, մի՛թե հասու չես, անձերս փրկելով օեոգուտ բերեցինք երկրին, հավատքին: Ասա, ի՞նչ կլիներ, եթէ արքան ու կաթողիկոսը գերեվարվեին:

- Ժողովուրդը նոր արքա ու կաթողիկոս կընտրեր, - մռայլ ասաց արքան, - դա կլիներ արդար ու աստվածահաճ գործ...

- Ովքե՛ր կկանգնեն սպարապետի դրոշի տակ, - ցանկացավ փոխել տիհաճ խոսակցությունը, ասաց կաթողիկոսը:

Արքան չպատասխանեց նրա հարցին: Երկար ժամանակ շրջում էր օթեւանում, ապա եկավ, նստեց կաթողիկոսի դիմաց:

- Սանեսանը Արշակունի է, մենք չէինք ցանկանա նրա մահը, թող վտարեն երկրից, - արքան չզգաց էլ, որ սխալ թույլ տվեց:

Կաթողիկոսը հասկացավ, կարող էր օգտվել արքայի սխալից: Արքան, իր ազգակցական զգացմունքներին տուրք տալով, կաթողիկոսին զիջեց խրատական խոսելու կորցրած իրավունքը:

- Ի՛նչ արքա՛, սթա՛փ խորհիր, - կեղծ զայրացավ կաթողիկոսը, - Սանեսանը ավերում է երկիրը, կոտորում քրիստոնյա ժողովրդին, իսկ դու խղճում նրան, զի Արշակունի է... Մի՛ մոռացիր, որ Սանեսանը մարդասպան է, նա սպանեց որդուս՝ Գրիգորին, Աղվանքի կաթողիկոսին: Մի՛ մոռացիր այս պարագան: Ես կաղոթեմ Աստծուն, հզորություն կխնդրեմ սպարապետի համար, թող պատուհասի Սանեսանին:

Հայկն ու Պարգելը գրկախառնվեցին:

- Փա՛ռք աստծո, եկար, շատ ենք սպասել սպարապետից լուրերի, - փնթփնթաց Հայկը, - էլ համբերանք չմնաց, խոսի՛ր, մարդ աստծո:

- Ներս գնանք, - ասաց Պարգելը, - չորս կողմ նայելով, ներս մտան պալատի անավարտ գահասրահ:

- Ասա՛՛ գինի բերեն, նժույգս էլ քաշեն ծածկի տակ: Մի քանի օր թամբից չեմ իջել:

- Վանե՛, - ձայնեց Հայկը, - տղաներին ասա նժույգը ծածկի տակ քաշեն, գարի տան: Կանչի՛ր մերոնց,

շտապով:

- Հայկ եղբայր, նժույզը ծածկի տակ է, գարի ենք տվել, հո դրսում չէինք թողնելու: Մերոնց կանչել եմ տվել, ուր որ է կգան:

- Հա՛, Հայկ եղբայր, նեղու՞մ են լեռնականները... Ես հազիվ պրծա, նժույզս էր վազական:

- Դու մեզ՝ ռամիկներին, լավ չգիտես,- ծիծաղեց Հայկը,- մի քանի անգամ փորձեցին, ջարդ կերան, ետ քաշվեցին: Դու ասա, ի՞նչ լուր սպարապետից, ե՞րբ ենք սկսելու: Չենքն է սակավ, թե չէ՝ մի լավ ջարդ կտայինք Սանեսանին եւ այնպես, որ մոռանար հայոց ճամփաները:

Սկսեցին հավաքվել Հայկի օգնականները, շատերին Պարգելը ճանաչում էր, կային մի քանի անձանոթներ, մի վաճառական:

«Տեսնում եմ՝ Հայկը անգործ չի նստել: Սրանք են Դվն փաստացի տերերը, եթե ցանկանան մեծ աշխարհագոր կհանեն», - հարգանքով նայեց Հայկին, ապա օգնականներին՝ Խաժակին, Վանեին, Դավթակին, բրուտագործ Սոկրատին, Ղեւոնդ հյուսնին, վարպետներ Տիրայրին, Արամին, Եզնիկին, Սեթին, վաճառական Բուրակին:

- Դվն ավազներ, Պարգել ազատը սպարապետից լուրեր է բերել: Ես ցանկացա ամենքս միասին լսենք նրան,- ժպտաց թավ բեղ ու մորուքի մեջ:

Պարգելը հասկացավ՝ իրենց բացակայության ընթացքում շատ բան է փոխվել, Հայկը իր մարդկանցով դարձել է քաղաքի փաստացի տերը, քանզի կարողացել է քաղաքը պաշտպանել լեռնականներից:

- Դվն մեծեր,- զգաց, ավելի հարմար բառ չէր կարող գտնել,- Մեծ Հայքի սպարապետ Վաչե Մամիկոնյանը մտել է երկիր, իր ողջույնն է հղում ձեզ: Մամիկոնեից տերը իր ձեռքն է վերցրել Սանեսանին երկրից վտարելու գործը: Ցանկանք բարին այս սուրբ առաքելությանը:

- Ամեն,- խաչակնքեցին ներկաները:

- Դվն մեծեր, սպարապետը պատվիրել է Հայկի գլխավորությամբ աշխարհագոր կազմել: Նա ձեզ սպասում է Խախտյաց լեռներում:

- Հոգվոյս պարտք ու պարտականություն,- խոնարհվեց Հայկը, Դվն ժողովուրդը կելնի սուրբ պարետագմի, քանզի Սանեսանը ձեռք է կարկառում սրբության սրբոց՝ Հող Հայրենիին: Կելնենք ամենքս էլ...

- Ելնենք, ելնենք, մենք ենք Հող Հայրենին: Չարկենք անօրեն լեռնականներին,- խոսեց դարձին Դավթակը,- Պարգել եղբայր, մեզ հետ է Դվն պարծանք, մեր Հայկ պետը:

- Լա՛վ, լա՛վ,- նեղսրտեց Հայկը,- գործից խոսիր:

- Իսկ դու մի՛ արգելիր խոսել,- միջամտեց Վանեն,- դու մեզ մարտի տարար: Դու ես սպարապետի կարգած զորապետը:

- Ես զորական չեմ ու կմտնեմ որեւէ իշխանի հրամանի տակ,- ասաց Հայկը:

- Մի քանի ժամից տեղ կհասնի Անդովկ Սյունին: Նա Հայկ եղբորը կօգնի զորական գործերում: Կամոքն սպարապետի, դու ես Դվն վերակացուն,- ասաց Պարգելը, պահի վճռականության մեջ այս պաշտոնն էլ սպարապետի անունից ավելացրեց Հայկի ունեցածին:

Ներկաները սպարապետի թիկնապահի խոսքերն ընդունեցին ուրախությամբ: Պարգելը հասկացավ՝ Հայկին արված պատիվը կիսեցին նրա ընկերները:

- Չեմ հասկանում, ինչո՞վ ենք կռվելու,- քչախոս Եզնիկն էր,- սպարապետը կոչ է անում կռվելու մարտի դաշտում: Ձեզ ասեմ, սա պարսպի վրայից կռվել չէ: Մենք գենք ու զրահ չունենք, ինչո՞վ ենք կռվելու, ինչո՞վ ենք զորք ու զինվոր դառնալու:

- Եղբայրներ, սպարապետը գենք ու զրահ կուղարկի արքունի պահեստարաններից, սակայն հարկ է, դուք էստեղ հայթայթեք,- ասաց Պարգելը:

Ինչպես երեւում էր, հավաքվածները միտք չունեին իրենց ոգեւորությունը զիջել Եզնիկին:

- Սպասե՛ք, եղբայրներ: Ես խոստանում եմ գենք բերել Արտաշատի վաճառականներից,- ասաց Բուրակը:

- Կեցցե՛ն մեր վաճառական եղբայրները, տես է, վարձ էլ չեն ուզում,- խայթեց Սեթը: Նա չարալեզու էր, զարմանալի էր, որ մինչ այդ չէր խոսել: Ընկերները նրան ներում էին քաջության ու ճշմարտախոսության համար:

Բուրակը ցանկացավ խոսել, սակայն սաստվեց Հայկի հայացքից, չպատասխանեց Սեթին:

- Բա՛վ է, շատ ենք խոսում, գործել է պետք, Բուրակ, դու Հայրապետի ու Արշամի հետ գենքի գործով կգնաք Արտաշատ: Դավթակ, Տիրայրի հետ կհավաքեք արհեստավորներին: Սոկրատը կօգնի ձեզ: Վանեն, Սեթն ու Խաժակը գործավորներին կբաժանեն դասակների ու վաշտերի, կկարգեն հրամանատարներ ու ավազներ: Դե՛, ինչ ասեմ, առաջին անգամ չէ: Անիծյալ կյանք, կռիվն էլ սովորական գործ դարձավ: Մի քանի օրից կշարժվենք,- նայեց ընկերներին, հոգոց հանեց,- մենք, հարկավ, զորք չենք, սակյն Սանեսանը կստիպի զորք ու զինվոր դառնալ: Վախենում եմ մենք մնանք սպարապետի միակ հույսը: Գնացեք, թող ռազմի Աստված Վահագնը ուժ ու զորություն տա մեզ:

Ասաց ու ցնցվեց Հայկը, այն «Մեկը», որ կար ու չկար, թերեւս, ժպտում էր, կանգնած թիկունքին:

Չգաց դա. «Ես արիական եմ,- հոգում արձագանքեց Յայկը»:

Տիրանը խորասուզվել էր խոհերի մեջ: Սպարապետի նամակը լույս էր սփռում երկրի վիճակի վրա: Հոր ու կաթողիկոսի հեռանալը Դարանայք, նրան հանել էր սովորական հունից: Նրա փորձերը՝ դուրս գալ Գառնիից, դիմադրական ուժերի կազմակերպելը, արդյունք չտվեցին: Իսկ նստել, սպասել չէր կարող: Ահա այս տվայտանքի ու անձկության մեջ սպարապետի նամակը խեղդվողին նետած պարան էր, որից բռնելով կարող էր ափ ելնել: Շատ մտովի էր դատափետել հորն ու վեհափառին, նրանց քայլը համարել դավաճանություն:

Սպարապետը գրում էր՝ իրեն են միացել Բագրատունին, Ռշտունին, Վահան Ամատունին, Ջոն իշխանը, Վարազ Կամիսականը, Մարդպետաց տերը: Հարկավ, մեծ ուժ են, սակայն սակավ է անեսանի դեմ ելնելու: Տիրանը զարմացած շուռ ու մուռ է տալիս նամակը: Չարմանք է պատճառել Յայկ վերակացուի մասին գրածը: Չարմանում է. անտառների վերակացուն պիտի աշխարհագոր հանի գուգազավորներից: Ինչպե՞ս կարելի է գեներ տալ ռամիկի ձեռքը, Աստված մի արասցե, գեները դարձնեն տերերի դեմ: Չէ որ եղել են դեպքեր... Մի՞թե սպարապետի պես պետական այրը, զորավարը, հասու չէ այս վտանգին: Հուսանք բարին: Ես հարկ է լինեմ սպարապետի հետ, հակառակ պարագայում՝ կխայտառակվեմ: Ա՛խ, հա՛յր, հա՛յր, ինչու՞ չլսեցիր սպարապետին, ինչու՞ բոլոր նախարարական գնդերը չդրեցիր նրա հրամանի տակ: Այդ պարագան կզսպեր հարեւաններին: Սանեսանը չէր հանդգնի մտնել երկիր: Հիշեց Մարդպետաց տիրոջ խոսքերը. «Թվով յոթանասուն- ութսուն նախարարական տների զորքերը գումարելով, հսկա բանակ կարող ենք պահել եւ ոչ մի շուն չի համարձակվի հաչել մեզ վրա»:

Ներս մտան Սաթենիկ իշխանուհին ու Տիրանուշը: Տիրանը ցնցվեց, հիշեց Նազենիկին, որդուն՝ Տիգրանին:

- Հայրիկ, ե՞րբ ենք գնալու Արտաշատ,- դուստրն էր: Տիրանուշը գունատ էր, հայրը խղճաց նրան: «Ահա կամքին հակառակ ամուսնության հետեւանքները, ես մեկ դժբախտ»:

- Շուտո՞վ, շուտո՞վ,- մոմնացրեց քթի տակ:

- Լուրեր ունե՞ս,- հարցրեց Սաթենիկը:

- Սպարապետը վերադարձել է Հռոմից: Նամակ ստացա: Շուտով պատերազմ կսկսվի Սանեսանի դեմ: Այս վիճակը ստորացուցիչ է, ուզում եմ ոռնալ գայլի պես: Ես պիտի մասնակցեմ պատերազմին: Դուք գնացեք, ես պիտի պատասխանեմ սպարապետին:

- Տիրա՛ն, որդիներիցս լուր չկա, ուշացան:

- Ի՞նչ ես դժգոհում, չէ որ Հռոմում են: Արշակն էլ, Տրդատն և Տիրիթը զորականներ են: Մի անհանգստանա, պարսից արքունիքում չեն: «Խաչապաշտ» կայսեր մոտ են,- դառը քմծիծաղ տվեց,- ուսյալ որդիներ կունենաս, կդառնան լուսավորիչներ,- հանկարծ միտքը խայթեց. «Իսկ փոքրիկ Տիգրանը, ա՛խ, իմ հարազատներ: Ինչու՞, ինչպե՞ս եղավ, չհասցրեցի պալատ բերել: Կասեի ամենքին՝ սա կինս է, սա՛ որդիս...»: Ասի, չէ՞,- գայրացավ,- գնացեք, խանգարում եք նամակ գրելու,- տոնը խիստ վիրավորական էր: Տիրանուշը լաց եղավ: Սաթենիկը ժպտաց, ձեռքով շոյեց ամուսնու ձեռքը, շշնջաց.

- Ես քեզ կսպասեմ, սիրելիս:

Տիրանն ուզեց գոռալ, որ չի սիրում նրան, գրկելիս հիշում է Նազենիկին, սակայն զսպեց իրեն: Որքան մոտենում էր բացահայտումը, այնքան տանջալի էր դառնում վիճակը, խղճում էր Սաթենիկին: Անքուն գիշերներ էր անցկացրել, թերեւս դա խանգարեց Նազենիկին պալատ բերելը:

Հիշեց սպարապետին, սպասվելիք պատերազմը: Ընտանիքն ու մնացած հարցերը մոռացվեցին մի պահ: Հարկ է պատասխանել սպարապետին: Երկրում կասեն գահաժառանգը պատերազմ է ելել Սանեսանի դեմ, դա կոզեւորի մարդկանց: Ա՛խ, հա՛յր, հայր, ի՞նչ արեցիր...

Ռազմախորհրդի անժամների անհանգստությունը սահման չունեց: Ի՞նչն է գայրացրել սպարապետին, ի՞նչ կա գրված այդ նամակում: Ի՞նչն է սպարապետի պես հավասարակշռված մարդուն գայրացրել: Վերջապես սպարապետը հայացքը կտրեց նամակից.

- Հասու՞ եք, ումից է նամակը,- հարցրեց, նայեց Ջոն իշխանին: Նրան առանձնացնելով, քանզի ամեն անգամ խորհել էր, քանի կա Ջոն իշխանը, որ հիշեցնում էր իր երիտասարդությունը: Եթե կա Ջոն իշխանը, կռվում է, ինքը չի զարկվի,- Սանեսանից է, հրավիրում է իր մոտ ծառայության: Հիշեցնում է Արշակունի լինելու պարագան: Դե՛, ի՞նչ կասեք, զինակիցներ,- դարձավ Բագրատունուն,- ի՞նչ կասես, հայոց ասպետ, շատ չէ տոհմիս արված պատիվը,- գայրացած ավելացրեց,- ասա՛, հայոց ասպետ, ի՞նչ պատժի է արժանի այդ «Արշակունին»: Այսպիսի վիրավորանք կյանքումս չէի...

- Դու մի՛ գայրացիր, Սանեսանը հենց դա է ուզում: Դա էլ քիչ չէ պատերազմից առաջ: Խորամանկ է

Սանեսանը:

Ներս մտավ թիկնապահներից մեկը, փսփսաց սպարապետի ականջին: Սա ուրախացած ձեռքով արեց, լռեցին:

- Տյա՛րք, Պարգեւը վերադարձել է: Մենք թարմ լուրեր կունենանք Դվինից: Թող գա,- ներս մտավ Պարգեւը, խոնարհվեց, հոգնած էր, փոշոտ:

- Տեր իմ, երեք օրից Հայկ վերակացուն գորքով կշարժվի Խախտյաց լեռները, մեզ միանալու:

- պարզի՛ր մանրամասները,- Վարազ Կամինականն էր:

- Ամեն բան ինձ համար պարզ է: Հայկ վերակացուն աշխարհագոր կազմած շարժվում է Դվինից, մեզ միանալու,- ձեռքը բարձրացրեց սպարապետը,- գիտեմ, կասեք ռամիկի ձեռքը գենք եմ դնում: Հապա ու՛մ տամ գենքը, երբ գենք բռնողները թառել են բերդերը, թխսկաններ, թու՛... Ռամիկը ելել է հայրենյաց պատերազմի, այլ ելք չունենք... Ռամիկի մեջ հառնել են արիականք, անսացեք այս պարագան:

Աշևանային մռայլ առավոտ էր, անձրև էր մաղում: Գերիները հավաքվել էին իրար գլխի: Ծանր էր երեխաների վիճակը, ուտելիք չկար: Ցուրտ էր: Նազենիկը որքան էլ ցանկանար, չէր կարող տաքացնել Տիգրանիկին: Սա սկզբում լաց էր լինում, արդ, լռել էր, սեղմվել մոր կրծքին: Լավ է, բազմափորձ Գոհարը մի քանի լավաշ էր թաքցրել հագուստի տակ: Իրենք էլ քաղցած էին, կերակրում էին միայն երեխային, քանզի հայտնի չէր, թե ուր են տանելու իրենց:

Վիճակը օրհասական էր... Մի կին զարկել էր իրեն դանակով, մեռնում էր: Գիշերը հինգ զինվոր քարշ էին տվել առվակի մոտ, բռնաբարել էին: Խեղճ կինը մեռնում էր արյունահոսությունից, թույլ չէր տալիս կտրեն արյունը:

- Չեմ ուզում ապրել, պղծեցին ինձ շները: Ես իմ Վաղոյին աշխարհի հետ չեմ փոխի: Չեմ թողնի՛ Վաղոս կախազուխ ման գա...

- Ա՛յ աղջի, ապրիր, ախր ինչու՞ ես քեզ սպանում:

- Չէ՛, եսթեր մայրիկ, ինձ կյանք չկա: Իմը պոծավ, -պոկեց վիրակապը: Արյունը դարձյալ հոսեց,- բախտ չունեցա երկվորելու, աստված չկամեցավ,- լաց եղավ,- երեք ամիս է առագաստ եմ մտել, չերկվորեցի... Վաղո, Վաղո,- հանկարծ դեմքը սրվեց,- հայե՛ր, բա դուք մա՛րդ եք, մեզ էսպես ոչխարի պես մործե՛ն, բա մեր հայ աստվածները ու՛ր են, բա մեր Վաղոները ու՛ր են...

Գոհարը Տիգրանիկի դեմքը դարձրեց դեպի լեռները, չտեսներ դժբախտ կնոջ մահը:

- Տիրուհի՛, դու էլ հաց կեր:

- Չասես տիրուհի, մեկ էլ տեսար մեզ բաժանեցին: Ոչ ոք չպիտի Տիգրանիկի ով լինելը իմանա:

Նձրեւը կտրվեց: Աշևանային անուժ արեւը դուրս եկավ, սկսեց ջերմացնել: Մարդիկ շարժվեցին, ուշքի եկան:

Գերիները, թվով երկու հազար մարդ կլինեին, Արտաշատից, Գառնիից էին, լեռնականները գերեվարել էին Վաղարշապատի ճանարպահին, ուխտ գնալուց:

- Ախր սա Ցլի գլուխ լեռն է: Տե՛ս է, ու՛ր են բերել,- մի ծեր արիեստավոր էր,- թե գերել են Մազբութաց աշխարհի տանելու, ինչի՞ են պահում լեռան մոտ:

- Թող հաց տան, երեխեքը քաղցած են:

- Հասմիկը մեռնում է,- ասաց Գոհարը, ոչ ոքի չդիմելով,- խեղճ կինը տանջվում է, որ չի երկվորել:

Կինն իր անունը լսելով՝ գլուխը բարձրացրեց:

- Վաղո՛, եկա՛ր: Անխիղճ Հասմիկիդ մենակ ես թողել: Ես ինչի՞ ուշացար: Ելնեմ, կերակրեմ քեզ, քաղցած ես, սպասի՛ր, ամոթ է, համբերիր...

Ոչ հեռավոր անցյալի մի պահ հուշ էր դարձել, դեմ էր առել մեռնողին, զառանցանք էր դարձել:

- Մատանի՞ ես բերել, ու՛ր է...

Չինվորները, տաքանալով արեւի տակ, աշխուժացան, մտան գերիների մեջ, սկսեցին գեղեցիկ կին փնտրել: Գոհարը Նազենիկի դեմքը մրոտել էր, գլխին մի հին գլխաշոր էր գցել: Նա վախճնում էր իր տիրուհու համար, սակայն դա էլ չօգնեց:

Լեռնականներից մեկը մոտեցավ Նազենիկին, բռնեց թեւից, ինչ-որ բան ասաց: Նազենիկը նրա ասածից ոչինչ չհասկացավ, սակայն ցանկությունը հասկանալի էր: Չինվորը մի կտոր հաց էր տալիս, թերեւս իր լեզվով ասում էր հացը կտա երեխային, եթե մայրը... Նազենիկը խորշանքով ետ քաշվեց զինվորից: Նրանից ձիու, սխտորի, գինու հոտ էր գալիս: Սա բռնեց Նազենիկի ուսը:

- Կորի՛ր,- ճչաց Նազենիկը, գրկեց երեխային:

Ալան զինվորը բարձրացրեց մտրակը, սակայն Նազենիկը ցավ չզգաց, Գոհարը իրեն առաջ գցեց, մտրակը իջավ նրա ուսին: Չինվորը կատաղեց, ձեռքը գցեց սրին: Նրա ցանկությունն ու սպառնալիքը հասկանալի էին: Նազենիկը սարսռաց: Մի քանի զինվոր մոտեցան առաջին զինվորին: Նրանք էլ իրենց համար կին կփնտրեն ու քարշ կտան մոտի ձորակ կամ ով գիտե, ինչու՞ հեռու գնալ, կարելի է

հենց քարավանի մոտ, գերիների աչքի առաջ...

- Գոհա՛ր, երեխիս լավ նայիր, մինչեւ հայրը գա, կասես...- մնացածը պարզ էր, նա միտք չունեց զիջելու: Նա պիտի կռվեր իր պատվի համար, զուր չէր Մեդեա խաղացել Բաքոսուհիներ, զուր չէր տիրել մարդկանց հոգիներին: Պարտադրված չէր մեռնի Մեծ քրմապետի թոռնուհին: Օձագլուխ դաշույնը պահում էր կրքերի արանքում:

Գոհարը մի վերջին փորձ արեց փրկելու նրան, կաս-կարմիր իրեն առաջարկեց լեռնականին, զուր էր: Ալան զինվորը տեսել էր Նազենիկի գեղեցկությունը, նրա բարակիրան մարմինը: Նա իր գտածը ցեղապետին էլ չէր զիջի: Այդ կնոջը կտանի ծեր մոր մոտ, հեռու-հեռավոր լեռներում ծվարած գյուղ: Նա պատրաստ էր կռվելու արու գայլի պես: Նա ընտրած էգին չի զիջի ոչ ոքի:

- Գնա՛նք,- դարձյալ քաշում էր Նազենիկի թելից:

- Գոհա՛ր, քույրիկ, փրկի՛ր որդուս,- ասաց, ապա դարձավ զինվորին,- լակո՛տ, կարծում ես Արձան քրմապետի թոռնուհին հլու հնազանդ վարձա՞կ է: Լակո՛տ, ես արիական գարմ եմ, ոչ ոք ի գորու չէ նվաստացնելու արիական արյուն...- ծոցից դուրս քաշեց դաշույնը, մի հատիկ զարկի մեջ դրեց ողջ ուժն ու ատելությունը: Հարվածը դիպուկ էր, դաշույնը կտրեց զինվորի շնչափողը: Նազենիկը անզիտակցաբար այնպիսի հարված էր տվել, անգամ ամենամիուտ դահիճը կնախանձեր: Լեռնականը ընկավ գետնին, ջղածգվեց, գրկեց անձրեւից փայլող մի մեծ քար, անշարժացավ: Կանայք ճչացին, այրմարդիկ քայլ արեցին առաջ, լեռնականները մերկացրեցին սրերը:

Պահը քարացավ պատժի սպասման մեջ: Թերեւս սա Նազենիկի խաղացած ամենահաջողված դերն էր, որ խաղում էր կյանքի գնով...

Հանկարծ շեփորների ձայներից թնդաց լեռնահովիտը: Մարդիկ զարմացած իրար նայեցին:

- Մերոնք են,- շշնջաց մեկը:

- Ձեզ մատաղ, մեր փրկիչներ,- մի քանի ծերունիներ նետվեցին Նազենիկի ու զինվորների միջեւ, կրծքով պաշտպանեցին նրան:

Ալանները նետվեցին նսույզները, զուր էր, չհասան: Հայ հեծյալները զարկեցին, անցան առաջ: Լեռնականները նիզակահար, սրահար ընկան գետնին: Ալան մի զինվոր ուսից սրատված տնքում էր: ԱՆրակի սրատված ոսկորը դուրս էր ցցվել անթել մորթե կապայլի տակից: Բերանից արյուն էր հոսում, լերդանում էր կրծքին: Չինվորը աչքերով փնտրում էր Նազենիկին: Կինը խղճաց նրան, քանզի զինվորի հայացքից վերացել էր կույր կիրքը, դրանք մարդկային էին, ցավից տանջվող մարդու աչքեր: Գերիներից մեկը վերցրեց մի մեծ քար:

- Չհամարձակվե՛ս,-ճչաց Նազենիկը, կառչեց գերու թելից,- մարդ է ախր...

- Սա մարդ չէ, քիչ առաջ քեզ էր սպանում, հայ ենք, է՛,- զայրացավ գերին,- ախր քույրիկ, ինչու՞...

- Մենք հայ ենք, մենք բարձր ենք: Նա գայլ է, լեռնական, մի՛ սպանիր, եղբայր իմ,- ալան զինվորը հայացքը քարից փախցրել, հառել էր Նազենիկին: Նրա աչքերում շնորհակալություն կար, թերեւս նաեւ զղջանք, այդպես գնահատեց լեռնականի աչքերի արտահայտությունը Նազենիկը, իսկ իրականում ո՞վ կարող է քննել մարդու հոգին... Ով գիտեր, ի՞նչ կար նրա հոգում, սակայն հույս փայփայեւք, որ մարդ իսպառ չի գազանացել...

Նազենիկը չի ուզում այս զինվորի մահը: Նա իրեն նվաստացնողին սպանել է, իսկ սա ծանր վիրավոր է, թող ապրի, թերեւս հիշելով այս առապարի մարտը՝ մարդանա, ո՞վ գիտե...

Պահն իր ահագնացած պոռթկումի մեջ մոռացել տվեց վիրավորին: Գերիները նետվեցին օգնելու հարձակվողներին: Սկսվեց մի աննախադեպ նախճիր:

Հայկական գնդերը ահասարսուռ աղաղակներով ընկել էին լեռնականների վրա, Վաչե սպարապետը այնպիսի վայրում էր շրջապատել լեռնականներին, որ սրանք հարկադրված էին իրենց համար անբարենպաստ պայմաններում մարտը ընդունել: Հայերի թափն անկասելի էր: Լեռնականները կոտորվեցին, եղան նաեւ գերու ստորացուցիչ վիճակը պատվով մեռնելուց գերագնահատողներ, որով ժխտեցին լեռնականների հպարտ հոգու մասին առասպելը եւ, ավա՛ղ, նրանց ծնող լեռներին...

Սկսեցին հավաքվել զորապետերը:

- Հը՛, տղայք, ամե՛նքդ էլ կաք,- ժպտաց սպարապետը,- փա՛ռք աստվածներին հայոց: Ուրախ եմ, իմ զինակիցներ, շնորհակալ եմ, որդի՛ք, սատարեցիք ազգիս արիական: «Այդպես բացարձակ խոսել արիականության մասին, թերեւս առաջին անգամ էր խոսում, ազդվել էր հաղթանակից, հաղթանակի բերկրանքը քանդել էր հոգու պատվարը, ոգեկոչել արիական ոգին...»:

- Սա առաջին հարվածն է, Սանեսանը ուշքի չի գա այս հարվածից: Արդ, դեպի Վաղարշապատ, թույլ չտանք ուշքի գան լեռնականները: Հա՛, ու՛ր է Հայկ զորապետը:

- Չուր ես անհանգստանում,- ծիծաղեց Բագրատունին,- ողջ ու առողջ է քո Հայկը:

- Տեր իմ, Հայկը գերիներից խմբեր է կազմել սպանվածներին թաղելու,- ասաց Պարգեւը,- առանց նրա գործ չի շինվի:

- Զաջ մարդ է,- նորից ծիծաղեց Բագրատունին:

- Զո Հայկը քահանայի չափ խելք ունի, թերեւս քրմի... Նրանք, իրոք, մարտի դաշտում

սպանվածներին առանձին-առանձին էին թաղում, չէին խառնում հայարիներ, այլոց հետ... Անցած-
չանցածը երեսուն տարի է, չի մոռացվել քրմական սովորույթը,- հոգոց հանեց,- նաեւ կորուսյալ
իմաստությունը,- հանկարծ զայրացավ հայոց ասպետը, որ մասնակից էր կրոնական պատերազմին,
նորից հոգոց հանեց...

Ի՞նչ պատահեց ձեզ՝ հայարիներ, այդ ինչպե՞ս եղավ, հանկարծ հիշեցիք առհավական մեր
նախնայաց սովորույթները, հիշեցիք, որ աշխարհը սասանել է արիական գնդերից, որ Հայաստան
լեռնաշխարհից իրենց կրոնը, անմահ արիական կրոնը տարածեցին աշխարհի չորս ծեգերը: Ինչպե՞ս
եղավ, որ հիշեցիք, թերեւս հաղթանակի բերկրանքն է ոգորում ձեր մեջ: Թերեւս ձեր մեջ լինեն քաջ
հայեր, որ գոչեն՝ հառնե՛ք, հայարիներ: Ի՞նչ եք ամոթխած իրար նայում, ինչի՞ց եք ամաչում,
հաղթանակած հայեր: Անսացեք այս պարագան, այդ ձեր հոգիներում հանգրվանած հայարիներն են
հաղթել՝ հառնե՛ք, հայարիներ...

- Չխանգարենք Հայկին: Նա իր գործը լավ գիտե՛, միջամտեց Ջոն իշխանը,- թող Ամատունյաց
իշխանը վկայի, ես Հայկի պես սրամարտիկ չեմ տեսել: Այդպես մարդ կարող է կռվել տունը մտած
ավազակի դեմ, աղջկան բռնաբարողի, սիրկայի դեմ: Ես այդպիսի կատաղություն չեի տեսել,-
զգացվում էր երիտասարդ իշխանը ասելիք ուներ:

Այդ պարագան հասկացավ Հայրը, սիրով գրկեց Ջոն իշխանի ուսը:

- Ասա՛ մտքինդ, իշխանիկ: Հուսամ, բարին ես խորհում Հայկի մասին: Գիտեմ նաեւ, քեզ արիական
ասպետ ես հռչակել եւ հավատարիմ ես արիական առաքինություններին, ասի՛ր, որդի՛:

- Այսօրվա կռիվը, տեր սպարապետ...

Սպարապետն ու Հայրը հայացքներ փոխանակեցին:

- Ուզում ես ասել զորական կանոններով չե՞ր: Չես սխալվում, մենք այսօր կռվեցինք ռամկավարի:
Սա կռիվ էր ի ոչնչացում հակառակորդի ու մերայինների: Սպանել՝ թեկուզ սպանելու գնով, ահա այս
կռվի իմաստը: Սա հող հայրենիի կռիվ է, հարկ է խելացի վարվել, զուր չծախսվենք, վերջ ի վերջո նա
է երկրի հույսը պահողն ու կերակրողը: Խելացի վարվենք հող հայրենիի կռիվ ելած ռամիկի հետ...

- Տեր Մամիկոնեցի,- Ջոն իշխանը շտկեց ուսերը, բարձրացրեց գլուխը, մի տեսակ
կերպարանափոխվեց,- հող հայրենիի արիական սրբության սրբոցն էր...

Հայրը գրկախառնվեց երիտասարդ իշխանի հետ:

- Ապրե՛ս, որդի, իրոք արիական ասպետ ես, վկայում ես, վկայում եմ ի լուր աշխարհի ու հայոց
անմահ աստվածների:

Ոգեւորության առաջին պահն անցավ, սկսեցին սթափ խորհել, սակայն արիականության
հիշեցումը հայացքները լցրել էր ինչ-որ լուսավոր փայլով, ասես վերքերն անգամ սպիացել էին: Ամեն
ոք նրանցից այս մարտում իրեն արիական էր զգացել, ասել է թե՛ հզոր ու անկարտ:

Սթափվեցին ոգորումից:

- Աշխարհագորայինների գոհերը շատ են, անփորձ են, անզրահ,- Կամիսականն էր, զգացվում էր՝
կռիվը նրա մեջ շատ բան էր փոխել: Եվ ոչ միայն նրա մեջ: Շատերի աչքերը բացվել էին, սկսել էին
հասկանալ ռամիկին: Նա կարող էր հրաշքներ գործել, թե՛ն խուսափում էին բացեփաց խոսել այդ
մասին: Միայն սպարապետն ու Հայրը սովորականի պես ընդունեցին մարտի ելքը: Նրանք վաղուց
գիտեին ռամիկի ուժը:

- Ի՞նչ կասես, տեր Մարդպետաց,- ընկերոջը դիմեց սպարապետը:

- Ինչ ասեմ, Վաչե, մենք այս պարագայի վրա շատ ենք զրուցել,- նայեց զորապետերին,- Ռամիկը՝
ահա՛ մեր ուժը, որն է՛ ժողովուրդը հայոց: Կարծում եք, դուք էլ հող հայրենին, ո՛չ, սիրելիներս, ո՛չ,
հազար անգամ՝ ո՛չ, հասկացավ, սպարապետի հետ ունեցած վեճերից մի քայլ առաջ էր անցել,
հեռացել էր ամենքից,- հեթանոս-քրիստոնյա, քրիստոնյա-հեթանոս հայեր,- մոմացրեց քթի տակ:

- Դու չավարտեցիր միտքդ, տեր Մարդպետաց,- դարձյալ Կամիսականն էր, այսօր նա նման չէր ինքն
իրեն, ելել էր սովորական վիճակից, չէր կարողանում հանգստանալ,- մեզ այդչափ տկարամիտ մի
կարծիք, կհասկանանք ասելիքդ:

Հայրը զարմացած նայեց իշխանին, դարձավ սպարապետին, քանզի ասելիքը առաջին հերթին
նրան էր վերաբերում: Այդ պարագան պիտի ընդուներ սպարապետը: Նա պիտի ասեր այն, ինչի մասին
խորհել էր ողջ կյանքում, քննել էր հայոց պատմությունը, հասյալ էր ժամը:

- Երկիրը պահելու համար մեզ պետք չէ ո՛չ Հոռն, ո՛չ Պարսկաստան: Մեր ուժը ժողովուրդն է հայոց:
Ով գնաց ժողովրդի հետ, կապրի, ով չանսաց այս դժվարամարս ճշմարտությունը, կկործանվի,- ծեր
զորականը գինու գավաթը քաշեց գլուխը, խմեց մինչեւ տակ, սրբեց բեղ ու մորուքը, նայեց
նախարարներին, ծիծաղեց,- ինչու՞ սկսվեցիք, հարկ է ուրախանաք, քանզի կա այս ամենը, միայն
վերցնել է պետք: Նաեւ զարմանում եք՝ հողատեր նախարարը խոսում է ի օգուտ ռամիկի,- հանկարծ,
ինչպես վերջերս հաճախակի էր պատահում, զայրացավ,- պատանյակներ, ասեք ո՞վ կփրկի երկիրը,
արքա՞ն, կաթողիկո՞սը, նրանք Դարանոյքում են, գահաժառանգը Գառնիում է: Սպարապետը նոր է
վերադարձել Հոռմից: Դե՛, ասեք, մեծ-մեծ բրդողներ, որտե՞ղ էիք մինչեւ այսօր, իսկ սրանք, այս
ռամիկները կռվում էին Սանեսանի դեմ: Գիտեք, Հայկը Դվինում երեք հարձակում է ետ մղել,- ձեռքը

թափ տվեց Ջոն իշխանի վրա,- գիտեմ, որդի, գունդդ երեք անգամ մարտի ես տարել լեռնականների դեմ: Դու հայոց գահին քո նվիրվածությամբ երջանիկ բացառություն ես, զուր չենք քեզ արիական ասպետ կոչում: Փա՛ռք ծնողիդ, եթե քեզ պես լինեին... Մե՛նք՝ ազատներս, սակավ ենք երկիրը պահելու համար...

Որքան խոսում էր ծեր գորականը, այնքան խոսքերը խորն էին մտնում մարդկանց հոգիները, թերեւս կային նաեւ, որ համամիտ չէին նրա հետ, սակայն չցանկացան ընդդիմախոսել: Լռել էր նաեւ սպարապետը: Նա իր խոհերի հետ էր: Յոր ասածները նրա համար նորություն չէին: Յայրը հույսը դնում էր սեփական ուժերի վրա, ռամիկի վրա: Իսկ նա սպարապետ է, նրան կանոնավոր գորքեր են պետք: Նա էլ վերջին մարտում շատ բաների մասին խորհեց: Յայկ գորապետը իր աշխարհագորական գնդով տակն ու վրա էր արել ռազմավարական բոլոր կանոնները, արդյունքը անսպասելի էր՝ հաղթանակ, ափսո՛ւ, Յայկը վատ է հաշվում, քանզի կռիվը գնում էր ոչ միայն ի հաշիվ հակառակորդի, այլ նաեւ մերայինների: Սպառնում մարդկանց վերջնական հաղթանակի չես հասնի: Այսօր դեռ այս մարտավարությունը ընդունելի է, իսկ եթե Յայկն էլ է հաշվում, իսկ եթե նա էլ է հասկանում այս ամենը, եւ զոհաբերության է գնում գիտակցելով, դա ավելի վատ կլինի երկրի համար, վաղը ռամիկը կարող է հաշիվ ներկայացնել տերերին,- ինքն էլ ապշեց խորհածից,- ոչ-ոչ Յայկը իսկական արիական հայ է, երկրին ու գահին նվիրված... Վճռեց չխորանալ այս պարագայի քննության մեջ:

- Տյա՛րք, արքայի ու ժողովրդի տրված իրավունքով վճռում եմ գնալ Վաղարշապատի վրա:

Արքայի անունը լսելով մի պահ սթափվեցին, մոռացել էին, երկրում նաեւ արքա կար: Եթե արքայի մասին է խոսում սպարապետը, ասել է, թե արքան պետք է որպես դրոշ, որպես գաղափար, կռիվ ելնելու իրավունք:

«Գնում եմ Վաղարշապատի վրա, եթե կհաճես, միացիր մեզ»:

Ինչպես միշտ կարճ ու հակիրճ: Տիրանը նայեց սուրհանդակին, մի հաճելի երիտասարդ սեպուհ, կարծյոք, Ամատունյաց տոհմից էր:

- Պատմիր կռվի մասին, հարկավ, մասնակցել ես, գիտես մանրամասները: Նստի՛ր, հոգնած ես երեւում:

- Ես անմիջապես սլացա Գառնի: Նժույգս հանգստանա, կվերադառնամ: Ցանկանում եմ մասնակցել Վաղարշապատի կռվին:

- Դու շատ արագ ես հասել Գառնի, կարող ես մի փոքր շունչ առնել: Ես էլ եմ ցանկանում մասնակցել կռվին: Պատմիր Առապարի կռվի մասին:

- Վաչե սպարապետը, նախարարների հետ,- գլխի ընկնելով, որ գահաժառանգը չգիտե կռվի մասնակիցներին, ավելացրեց,- Բագրատունյաց, Ռշտունյաց տերերը, Կորդուքի տեր Ջոն իշխանը, Վահան Ամատունին: Մարդպետաց տերը, միացյալ ուժերով, աշխարհագորական մեծ գնդի հետ շրջափակ արեցին Սանեսանի գնդերը Ցլու Գլուխ լեռան մոտ, ջարդեցին լեռնականներին, ոչ մի զինվոր չփրկվեց, գերի հանձնվողներից զատ: Տե՛ր իմ, կատարյալ հաղթանակ էր, հայոց զենքերը փայլում էին Առապարի քարադաշտերում:

- Կեցցե՛ սպարապետը,- ուրախ բացականչեց գահաժառանգը,- ա՛յ հերոս ասպետ, արժանի հայոց բարերարի աստվածահաճ տիտղոսին. «Իսկ հայրս նստել է Դարանոյքում», - տհաճորեն խորհեց հոր մասին, դարձավ սուրհանդակին,- գերիների մեջ արտաշատցիներ կային:

- տե՛ր իմ, կռվից հետո անմիջապես սլացա Գառնի, լսել եմ, շատ գերիներ կային, մեծ մասամբ ուխտագնացներ:

Սեպուհի պատասխանը տխրեցրեց Տիրանին: Նա գիտեր, Նազենիկը պատրաստվում էր ուխտագնացության: Ծափ զարկեց, ներս մտավ սենեկապետը:

- Շեփոր հնչեցրու, կանչիր զինակրիս: Ամենքին էլ ասա՛ գնում ենք հայրենյաց կռվի,- սփրթնեց, սեղմեց բռունցքները,- գնում ենք կռիվ հանուն մեր հայ աստվածների,- իրենից ելած, պահի ոգևորանքի մեջ հեթանոսացած գոչեց Տիրանը: նայեց հիացմունքից ապշահար սեպուհին:

- Յանուն մեր հայ աստվածների,- կրկնում էին սեպուհի շրթունքները:

Աշնանային անձրեւներից հորդացած Արածանին մոլեգնում էր բերդի պարիսպների տակ, խանդոտ մոլուցքով միտում քանդել այն, սակայն այս էլ քանի դար է գետը անհույս իր ցանկության մեջ, քանզի անկարող է սասանել Քարքե լեռան գրանիտե հաստաբետ գանգվածները, որոնց վրա տիտանաբար բազմել է Ողականը:

Բերդը հնում պատկանում էր Սզկունիներին, ապա անցավ Մամիկոնյաններին, տոհմի հիմնադիր Մամգուն իշխանին: Նրանից էլ սերվեցին Մամիկոնյանները:

Գետինն նայող հարկաբաժնի պատուհանից դուրս է նայում Սահանդուխտ իշխանուհին: Նա ականջալուր է՝ ամուսինը Վաղարշապատի պարիսպների տակ է: Իշխանուհուն զարմացնում է արքայի ու կաթողիկոսի վարմունքը, այն ոչ մի լավ բան չէ բերելու երկրին: Նա շատ է խորհել, սակայն արդարացում չէ գտել երկրի տերերի համար, իսկ Վաչե՞ն, ի՞նչ է ակնկալում. ոչինչ հայրենիքի փրկությունից գատ: Նա հասու է, երկրին արքա ու գահ է պետք, առանց արքայի չես պահի: Գահին Արշակունի արքա է նստած, սա է կարելոր, սա է երկիրը պաշտպանելու խորհուրդը:

Խոհերն ընդհատվեցին, նաժիշտն ասաց, որ որդին՝ Արտավազը, գալիս է մոր մոտ: Պատանին վերջին մեկ տարվա ընթացքում առնականացել էր: Նրան միայն մազ ու մորուքն էր պակաս այրմարդու շարք առնելու համար: Հասակով հորն էր քաշել, բնույթով դեռ պատանի էր, երեխա: Մեկ նետվում էր հայոց պատմության մատյանների մեջ, մեկ՝ ռազմի գործերի, մեկ՝ անտառներից տուն չէր գալիս, օրերով որս էր առնում: Մայրը գլուխ չէր հանում՝ ինչին էր տալիս նախասիրությունը, սրի՞ն, թե՞ մատյաններին: Վերջերս սկսել էր կոպտել ծառաներին, ոչ ոքի հաշվի չէր առնում: Մայրը ուզում է բողոքել հորը, սակայն վաքենում է, գիտե, որ հայրը խիստ կպատժի:

Վարագույրը ետ գնաց, ներս մտավ որդին, ոտից -գլուխ թռչված էր: Թաց հետքեր թողնելով գործգերի վրա, մոտեցավ, համբուրեց մոր այտերը, փռվեց բազմոցին:

- Մա՛յր իշխանուհի, գիտե՞ս, այսօր մի լավ լողացա Արածանիի մեջ: Չենք ու զրահով նետվեցի գետը: Դու տեսնես, թե ինչպես էր ձեռ ու ոտ ընկել սեպուհ Վահանը: Մամիկոնյանը հարկ է դիմանա ամեն փորձության, ի՞նչ է կատաղած գետը, միայն փրփրած ջուր: Կամքն է հզոր գորականի, արիական գորականի կամքը, որ հաղթում է անգամ բնության ուժերին, տարերքին,- ծիծաղեց,- դու միայն տեսնիր նրան, իսկ ես առանց նրա օգնության դուրս եկա գետից: Սեպուհը հասկացավ՝ խեղդվող պտուղ չեմ, լաց եղավ: Ստույգն ասաց, այդ պահին խղճացի նրան:

- Պե՛տք չէ այդպես կատակել,- զայրացավ մայրը,- Արածանին հորդացել է վերջին անձրեւներից: Գետը ջրապտույտներ ունի, խորասույզ ժայռեր, դու կարող էիր ջարդ ու փշուր լինել: Ներում հայցիր սեպուհից, մի՛ մոռացիր, նա քո դաստարակն է: Շնորհակալական զգացումը չպիտի խորթ լինի Մամիկոնյանին: Չե՞ որ քեզ արիական ես համարում:

- Լավ, մայրիկ, ես կխորհեմ: Ի՞նչ է գրում հայոց սպարապետը, նամա՞կ ես ստացել:- Հայրդ ջարդել է Սանեսանի գնդերը, արդ, գնում է Վաղարշապատի վրա...

- Կեցցե՛ս հայրիկ, թող իմանան ինչ ասել է Մամիկոնյան սպարապետ: Նա արքա կամ կաթողիկոս չէ, որ լքի երկիրը...

- Լռի՛ր,- սաստեց մայրը,- օրեն չէ այդպես խոսել եւ ոչ վայել Մամիկոնյան իշխանագունին:

- Ներող եղիր, մայրիկ,- քմծիծաղ տվեց պատանին:

Երբ սպարապետը հայտարարեց առավոտյան գրոհը սկսելու մասին, ամենքն էլ հասկացան՝ սպարեպտի մտքում ինչ-որ բան կար:

Չորական խորհուրդը չէին սկսում, սպասում էին Ջոն իշխանին, որին հանձնարարված էր շրջապատել քաղաքը: Վերջապես նա էլ եկավ:

- Տյա՛րք, չեմ ուզում զոհեր տալ,- քրթմնջաց սպարապետը,- եկեք խորհենք Սանեսանի փոխարեն: Նրան բանակը պետք է թալանը տուն հասցնելու համար: Մեծ թվով գերիներ կան գումակում, կարող են ըմբոստանալ ճանապարհին: Նա միայն բանակով կարող է նահանջել:

- Կարող է նաեւ պաշտպանվել քաղաքում, պարիսպները բարձր են,- Գարեգին Ռշտունին էր:

- Նա չի եկել Հայաստանում մնալու, անօգուտ գործ է քաղաքում պաշտպանվելը,- խոսեց Ջոն իշխանը,- Սանեսանը հասկացել է՝ վերջ թալանին, պատերազմը տանուլ է տվել: Պատերազմը գնում է ի սպառումն լեռնականների:

Սպարապետը գործվանքով նայեց երիտասարդ իշխանին, դարձավ Հորը:

- Լավ է, Տեր Մարդպետաց, մեզանից հետո էլ զորավարներ կմնան հայոց աշխարհում:

Սա ի պատասխան միայն գլխով արեց:

- Տյա՛րք, եթե Սանեսանը քաղաքից դուրս գալուց հետո գնա Սյունիքով, որով եկել է, դժվար կլինի ազատել գերիներին: Կգնա շատ արագ երթով: Հարկ է նրան քշել Վիրքի կողմերը: Ճանապարհը կանցնի Շիրակով, լիափոս եմ՝ շիրակցիները կչոքացնեն նրան:

- Ցանկալին ես խոսում, տեր Մամիկոնեցից, սակայն Սանեսանին կամք թելադրելը դժվար է:

- Չմոռանանք, Սանեսանը մի տարի անպատիժ թալանել է երկիրը, մեզ անպատիվ ու թուլամորթ է կարծում,- քրթմնջաց քչախոս Վահան Ամատունին,- հարկ է զարկել հենց քաղաքում, մնացածներին դուրս քշել քաղաքից, ջարդել պարիսպների տակ կամ տունդարձի ճանապարհին:

- Սպասե՛ք, կարծյոք, սպարապետը հետաքրքիր գործ է մտմտում,- լիաթոք ծիծաղեց Հայրը,- սպարապետը թեկնածու ունի, մեկին, որ կարող է քաղաքում կռիվ գցել, բացել դռները:

Սպարապետը հայացքը փախցրեց Հորից: Նրանք իրար անխոս հասկացան:

- Մի՛ տանջիր, Հայր Արտավազդ,- խնդրեց Ջոն իշխանը,- մի՞թե խորհում եք դարձյալ Հայկ գորապետի օգնությանը դիմել, ստույգ մահ է...

- Այո՛, տյարք, խոսքս ամենահաս ու ամենակարող Հայկի մասին է: Դեմ չեմ, իրավացի ես, վտանգավոր գործ է, սակայն պատերազմ է, ամենքս էլ Ազգի գոհասեղանին ենք դրել կյանքներս, ում որտեղ հասավ մահը, կընդունենք արիաբար,- հանկարծ անհարկի ծիծաղեց,- ինչու՞ վախենալ մահից, երբ հոգին անմահ է, ինչու՞ նվաստանալ, վախենալ: Մեր ճակատագրերը վճռված են ի վերուստ... Խորհում եմ՝ սպարապետի վճիռը խելացի է, մեր պարագայում միակը:

- Այո՛, ելք չկա,- Հորը միացավ Կամիևականը,- իրոք ամենահաս մարդ է Հայկ գորապետը: Ես հավատում եմ նրան: Հայկը բարի աստղի տակ է ծնվել:

Ոչ ոք չէր սպասում Կամիևականի պես ռամկատյաց մարդուց այդպիսի գնահատական: Նրա խոսքերը զարմացրեցին սպարապետին: Հայրը ձեռքը դրեց Կամիևականի ուսին:

- Ապրե՛ս, որդի՛: Դու կարողացար մի կողմ դնել ունեցածդ հակակրանքը: - Հարկ չկա ռամիկին երկինք հանել,- դժգոհեց Մեհենդակ Ռշտունին,- նա ամեն բան անում է սպարապետի թելադրանքով:

- Վե՛րջ տվեք, տյարք, ես ուրախ եմ, որ Հայկի պես օգնական ունեմ: Ասում եք՝ իմ խորհրդով: ասա, իշխանիկ, ո՞վ կարող է քեզ ստիպել ստույգ մահվան գնալ, ոչ ոք: Իսկ նա գնում է ոչ թե իմ պահանջով, այլ սրտի թելադրանքով, կամովն Աստծո, Հայկը մեր ու ժողովրդի միջև կամուրջ է: Անսացեք այս պարագան եւ մի քանդեք այդ կամուրջը,- ապա ավելացրեց հատ-հատ,- այլ ելք չկա, Վաղարշապատ կգնա Հայկը,- նայեց Պարգեւին,- կանչի՛ր Հայկին: Զիչ անց ներս մտավ Հայկը, խոնարիվեց սպարապետին:

- Հայկ եղբայր, - սպարապետը հասցրեց նկատել, թե ինչպես «եղբայր» բառի վրա ցնցվեց Ռշտունին,- ես իմ ու գորական խորհրդի մասնակիցների անունից խնդրում եմ,- սպասեց, նայեց հավաքվածներին,- դու կարո՞ղ ես քաղաք մտնել, բացել դուռը, պահել մինչեւ հասնեն գորքերը:

Հայկը հանգիստ նայեց սպարապետին:

- Մի՞թե հայոց սպարապետին պետք է իմ համաձայնությունը: Նրա խոսքը օրենք է ինձ համար, քանզի հայոց սպարապետը տքնում է երկրի ու գահի համար: Տեր Մամիկոնեից, ես քաքաղին ծանոթ չեմ, հետս վաղարշապատի գինվոր դրեք: Ես չգիտեմ ելումուտը, գաղտնուղիները:

«Ապրե՛ս,- խորհեց Հայրը,- քիչ էլ ու հայոց սպարապետը կհասկան՝ մեր փրկությունը սեփական ուժերին ապավինելու մեջ է, ազատանու ու ռամկաց դասի գորական դաշինքի մեջ,- սպասեց, ասես ցանկացավ խոսքերը լսեն ամենքն էլ,- ահա փնտրածը՝ ազատանու ու ռամկաց դասի գորական դաշինք: Փա՛ռք ձեզ, հայոց անմահ աստվածներ, պարգեցիք միտքս: Վե՛րջ, ամեն բան պարզ է՝ դաշինք, ահա փրկության հուսկ միակ միջոցը»:

- Դժվար գործ չէ, գինվորների մեջ վաղարշապատցիներ շատ կան, գոնե մի սողանցք կգտնենք: Գնա՛, աստված քեզ հետ:

- Ես հավատում եմ, Հայկ եղբորը,- սպարապետին միացավ Բագրատունին:

Այս անգամ Հայկին եղբայր անվանեց հայոց թագադիր ասպետը: Սա արդեն շատ ծանր հարված էր Ռշտունուն:

«Զէ, սրանք ամենքն էլ օրպակասել են: Մեզ էլ կստիպեն ռամկանալ»: Նայեց եղբորը, զարմացավ, եղբոր դեմքը հանգիստ էր: Չայրացավ, թքեց ու դուրս գնաց տաղավարից:

Նույն այդ գիշեր Հայկն ու վաղարշապատցի մի գինվոր քաղաքմտան: Սանեսանի գինվորները նկատեցին նրանց: Կռվի ժամանակ գինվորը զարկվեց: Հայկին հաջողվեց իրեն զցել արիեստավորաց թաղ, փրկվել:

Մյուս օրը սկսվեցին գրոհները, սակայն անարդյունք: Քաղաքի պաշտպանները կռվում էին մեծ հմտությամբ: Հայերին չհաջողվեց գրավել ոչ մի աշտարակ, չկարողացան բարձրանալ պարսպի վրա: Սպարապետը սպասում էր Հայկին: Նա այնքան էր հավատում Հայկին, մտքով իսկ չէր անցկացնում, որ Հայկը կարող էր անհաջողության հանդիպել: Նա էլ էր համոզված՝ Հայկը բարի աստղի տակ էր ծնվել: Եթե Հայկը չբացեր դռները, ստիպված կլինեին անցնել երկարատև պաշարման:

Երեկոյան գրոհները դադարեցին: Քաղաքի պարիսպների վրա խարույկներ վառվեցին: Չարագուշակ լույսերը խաղացին Ռշտունու աչքերի մեջ:

- Չանսացիք բանականությանը, գործը վստահեցիք ռամիկին: Թերեւս Հայկը հմուտ է անտառատնկման գործում, սակայն ռազմի գործը ազատի մենաշնորհն է: Աստված իմ, խելագարվել կարելի է, տեսեք, է՛, Բագրատունյաց տերը Հայկին արիական կոչեց, մի՛ պղծիր բերանդ, հայոց ասպետ... Մենք մի օր կորցրինք ձեր այդ Հայկի պատճառով եւ դեռ էլի...

- Բա՛վ է, իշխանի՛կ,- գայրացավ Հայրը,- մենք ամեն անգամ տուժում ենք միայն այն բանի համար, որ խորշում ենք ռամիկից, մոռանալով, որ ուտում ենք ռամիկի արարած հացը: Մի՛ եղեք այդչափ անշնորհակալ: Ափսոս, հասու չեք այս ճշմարտությանը...

- Տեր Մարդպետաց, դու հայտնի ես քո ռամկասիրությամբ...

- Տեր Կորդովաց,- ուշադրություն չդարձնելով այս տհաճ խոսակցությանը, խոսեց սպարապետը,- զգոն ջոկատ կարգիր դռան մոտ: Գունդդ պատրաստ պահիր դռան մոտ: Ես հավատում եմ Հայկին,

երթ չի զարկվել, կբացի դուռը,- դարձավ հավաքվածներին,- Ձոն իշխանը կհսկի գիշերս, դուք ամենքդ էլ գնացեք հանգստի: Քնեք առանց զրահները հանելու, սիրտս վկայում է, այս գիշեր գորը սկսվելու է:

- Բարի գիշեր,- ասաց Յայրն ու դուրս եկավ տաղավարից: Տեսավ՝ ինչպես սպարապետի փեսաները, թիկնապահների հետ ներս մտան: Նրանք աչք չէին հեռացնում սպարապետից: «Վաչեն երջանիկ մարդ է: Երկրում սիրում են նրան, իսկ ի՞նձ,- հարցն այնքան անսպասելի էր, կանգ առավ, թիկնապահը հազիվ իրեն պահեց նրան չզարնվելու համար: Յայրը չգիտես ինչու հիշեց Ռշտունուն,- ատում է ռամիկին: Գուրգենը դեռ ոչինչ, իսկ Մեհենդակը, Աստված մի արասցե ձեռքին հնար լինի, կկոտորի ռամիկներին... Չկա չարիք, առանց բարիք, այսօր Կամինականը խելքի եկավ, հասկացավ ռամիկի ուժի, իսկ Տիրանը,- խորհեց գահաժառանգի մասին,- խելացի է, նա կհասկանա՝ երկրի փրկությունը ազատանու ու ռամկական դասի գորական դաշինքի մեջ է: Տիրանը հոգով հեթանոս է, նա չի խոնարհվի հոգեւորների առաջ: Դա հաստատ է: Նրա սրտովը չէ, դժգոհ է, տեսնելով ինչպես է հայրը խոնարհվում կաթողիկոսի առաջ: Դա լավ էմ տեսնում, թեեւ Կրթանեսը նրա խնամին է: Տեսնենք, տեսնենք, իշխանությունը փորձաքար է, կապրենք, կտեսնենք»:

Գիզակն ժամն էր: Մուրն ու լույսը կռիվ էին տալիս իրար հետ, ապա եկավ ժամը՝ Լուսակն, սկսվեցին սովերները երկարել, առանձնանալ, նաեւ առարկայանալ: Առավոտյան մշուշը սողաց գետնի վրայով, աստիճանաբար քաշվեց քաղաք, անցավ խանդակը, կլանեց, թաքցրեց քաղաքադուռը: Վեր ելավ պարիսպները, սրանք էլ անհետացան:

Իշխանը զգաց, աչքերը կուչ էին գնում: Վաղորդյան քունը տիրական էր, անդիմադրելի:

- Տեր իմ, ձայներ եմ լսում,- լսեց թիկնապահի ձայնը,- ասես կռվում են, թույլ տուր մոտենամ:

- Քնա՛, զգույշ եղիր, սպասի՛ր, ես էլ լսեցի:

Լսվեցին զենքերի այնքան ծանոթ շառաչը, հանկարծ մեկը ճչաց առավոտյան լռության մեջ: Ճիչը բարձր էր, ասես հազարավոր զարկվածներ ճչացին: Լռությունը բզիկ-բզիկ եղավ: Ձոն իշխանը սուրը մերկացրեց: Տեսավ, թե ինչպես զինվորները նետվեցին դռան կողմը, այն կամաց-կամաց բացվում էր, բացվածքից՝ կլիներ հազիվ ափաչափ, մի ձեռք դուրս մղվեց, մատները ջղածգաբար առաջ էին մղում մուգ ափաչափ հետք թողնելով դռան վրա: Դրան հետեցին տնքոցներ: Ձեռքը սկսեց լայնացնել բացվածքը- օղազրահով մի ուս դուրս մղվեց դռնից: Երեւաց մի բարձրահասակ գորական: Նա մեջքով հենվեց դռան կողնակին, սեղմեց, բացեց դուռը:

- հասե՛ք, հայե՛ր,- թույլ ձայնեց գորականն ու ընկավ դռան բացվածքի մեջ:

Իշխանը տեսավ Յայկի տանջահար դեմքը:

- Շտապի՛ր, իշխան...

- Կորյուն, օգնի՛ր Յայկին, վիրավոր է,- գոռաց ու զարկեց մեկի գլխին, սրբեց դեմքին ցայտած արյունը, փշրեց ինչ-որ մեկի վահանը: Լեռնականները վրա տվեցին, հասան նաեւ իշխանի զինվորները, որոնք խառնվեցին Յայկի հետ դուռը բացող վաղարշապատցիներին: Կորոզվացիք գոռում-գոչյուններով ներս լցվեցին քաղաք:

- Առա՛ջ, Կորոզվաց քաջե՛ր,- գոռաց Ձոն իշխանն ու սեփական ձայնը չլսեց: «Կուրծքս այրվում է, անիծյալ լեռնականներ, գոնե ցավ զգայի: Ախր սրանց դաշույնները բարակ են, նեղ շեղքով, արյունը ներս է լցվում...»: Յենվեց սրին, գետինը փախչում էր ոտքերի տակից: Ինչ-որ մեկը ուսը դեմ տվեց, պահեց ոտքի վրա:

- Յե՛ր, Կորոզվացիք, իշխանը վիրավոր է, օգնեք,- լսեց Կորյունի ձայնը:

Չորքերը քաղաք էին լցվում:

- Լավ է, ձեզ մատաղ, լավ է,- զգաց, որ բարձրացրին վահանների վրա: Կորցրեց գիտակցությունը:

Այդ պահին Սանեսանի գորքերը դուրս էին թափվում Շիրակի կողմի դռներից: Նահանջեցին Օշականի կողմերը: Սպարապետը նայեց Յորը:

- Ի՞նչ կասես, տեր Մարդպետաց, Աստծո օգնությամբ ամեն բան մեր ցանկությամբ է կատարվում: Արուճի ու Երվանդաշատի, Արմավիրի կողմի գնդերը նետել դեպի Օշական, փակել Սանեսանի ճամփան: Թող Ձոն իշխանը իր գնդով կառչի լեռնականներից...

- Տե՛ր իմ, Կորոզվացի տերը վիրավոր է, դաշույնով են զարկել:

- Ի՞նչ,- սպարապետը պտտեցրեց նժույզը,- վերքը ծա՛նր է, կապրի՞:

- Կապրի՛, տեր իմ, մարմինը երկաթ է, երկու օրից ոտքի կելնի:

- Փա՛ռք Աստծո, ես այսօրվա հաջողությունը չեմ փոխի իշխանի վերքի հետ անգամ: Դուք աճապարեք գնդերը,- ասաց սուրհանդակներին,- Եզնի՛կ, դու ետ մնա, խնամի՛ր իշխանիկին: Նա ինձ պետք է կռվի մեջ: Խնամիր, ինչպես հարազատ որդու:

- Յոգվույս պարտք, տեր սպարապետ,- խոնարհվեց բուժը:

- Գուրգեն, գնդիդ միացրու կորոզվաց քաջերին, ասա հրամանս է, կառչիր լեռնականներից, մինչեւ Ամատունին ու Բագրատունին անցնեն, փակեն ճամփան: Կամինական, կլինես Բագրատունու հետ: Գնացեք,- դարձավ Յորը,- խնդրանքս է՝ հավաքել տաս վիրավորներին: Գտնել տուր Յայկին: Այս հաղթանակը նրան ենք պարտական:

Յայացքով փնտրեց, գտավ Մեհենդակին, ուզեց նրա աչքերում զղջանք տեսնել, սակայն ցնցվեց,

հանդիպելով իշխանի մաղձոտ հայացքին: Օրը կիսվել էր, արեւը գեւիթում կանգ առել, այրում էր անխնա: Օշականի առապարի քարերը շիկացել էին: Օձ ու կարիճի ժամն էր, դուրս էին եկել արեւկող անելու:

Բագրատունին արագ երթով հասել էր, փակել էր Սանեսանի ճամփան: Իսկ երբ ձախից մոտեցավ Ամատունին իր գնդով, լեռնականները հարկադրված էին մարտն ընդունել: Վերջապես տեղ հասավ Կամինականի գունդը: Սանեսանը հասկացավ՝ ճակատարմարտը անխուսափելի էր:

Բանակներն իրար դեմ էլան: Բնությունը մի պահ կարկամեց քար լռության մեջ, այն զնգաց-զրնգաց մարդկանց հոգիներում: Անհավանական այս լռության մեջ մարդ կարող էր խելագարվել, դա միայն մի ակնթարթ էր, այն իր մեջ ամփոփել էր ահավոր մի որոտմունք, որոտմունք ծնված մարդկանց ատելությունից...

Կյանք ու մահ դրվեցին կշեռքի նժարներին... Ում, ինչ կտար ճակատագիրը, անմեկնելի էր, անիմանալի... Ճակատագիր կոչված այդ վարձակը պիտի վճռեր անիմանալին...

Յանկարծ հայոց բանակը մեկեն որոտաց.

- Կեցցե՛ գահաժառանգը:

Սպարապետը խոնարհվեց գահաժառանգին, սա որդիական սիրով գրկեց նրան:

- Սանեսանը աստ կպատուհասվի,- ձեռքն առաջ պարզեց սպարապետը,- նետածիգնե՛ր, առա՛ջ:

Յնչեցին հայկական շեփորները, զարկեցին պատերազմական գուշերը: Յայ նետածիգները առաջացան, սկսեցին նետահարել թշնամուն:

- Իշխան Կամինական, գունդդ տար խորխորատով, անցիր Սանեսանի թիկունքը,- ապա մոտ կանչեց Ամատունուն,- Վահան, կզարկես ձախ թեւին, հևար տուր Կամինականին անսկատ անցնի լեռնականների թիկունք: Տեր Բագրատունյաց, կզարկես միջոցին...

- Իսկ լեռնականների ա՞ջը,- հարցրեց Մեհենդակ Ռշտունին:

- Նրանց աջը շարժվելու տեղ չունի, տեսե՛ք, սեղմվել է կիրճին: Թռչուն չեն, չեն թռչի կիրճի վրայով: Չարմանում եմ Սանեսանի պես փորձված զորավարի վրա, ինչու՞ է անգործ թողել գնդերը: Թերեւս վճռել է այդ գնդերով ապահովել նահանջը:

- Իրավացի ես,- խոսեց Յայրը,- եթե գնդերը պահել է նահանջի համար, ասել է թե հույս չունի հաղթելու մեզ: Այլ բան չեմ կարող հասկանալ նրա բռնած դիրքից ու զորքերի դասավորությունից:

Տիրանը հետաքրքրված նայում էր Մեծ Յայքի հռչակավոր զորավարներին...

- Կօզնե՛ս Բագրատունուն,- լսեց Տիրանը:

- Յրամանդ ի կատար,- Տիրանը խոնարհվեց սպարապետին: Նա խորհում էր, որ սպարապետը իրեն հեռու է պահելու մարտից, անգամ պատրաստվել էր բողոքելու, սակայն, ինչպես երեւում էր սպարապետը վճռել էր նրան մարտի մեջ քաշել:

Թիկնապահները գեկուցեցին՝ զորապետները տեղերում են, մարտի պատրաստ:

- Առա՛ջ, ի մարտ,- սպարապետը նժույզը թռցրեց առաջ,- առավե՛լ:

Այդ պահին նրանից առաջ անցան Տիրանն ու Պարգեւը: Մեկը իր արագավազ նժույզով առաջ մղվեց, մյուսը առաջ նետվեց սպարապետին ուղղված հարվածը կրծքով ընդունելու:

Սպարապետը հասկացավ, գահաժառանգը խառնելու էր իր հաշիվները, քանզի արագավազ նժույզը կտրվեց մնացածներից, տիրոջն անպաշտպան թողնելով կողքերից:

- Տիրա՛ն, ձգի՛ր սանձը,- գոռաց սպարապետը:

Չարմանալի ու աննախադեպ վիճակ ստեղծվեց: Մարտի սկիզբը վերածվեց ձիարշավի: Տիրանն իր անխոհեմ քայլով կարող էր ձախողել սպարապետի մտահոլացումը, անգամ մարտի ելքը:

Գահաժառանգը սլանում էր թշնամու վրա: Դա անմտություն էր, կարող էր զոհ դառնալ հարձակվողների հոծ շարքերին: Սպարապետը սրի տափակ կողով դաղեց նժույզի գավակը, նժույզը հսկայական ցատկերով նետվեց առաջ:

- Արտավա՛գդ, գունդը տար գրոհի: Ես կաշխատեմ փրկել այս երիտասարդին, հակառակ պարագայում խայտառակ կլինենք պատմության առաջ: Դադարեցրու՛ վազքդ,- գոռաց Տիրանին,- մեզ ստույգ մահ է սպասում:

Տիրանը քաշեց սանձը, նժույզը խռիռացրեց, անցավ վարզի:

- Անխոհեմ ես, Տիրա՛ն, այդքան հեռանալ գրոհողներից, ստույգ մահ է: Կողքից կխոցեն, չես էլ նկատի:

Նրանց էին հասնում հայ հեծյալների առաջին շարքերը, սակայն հասնում էին նաեւ լեռնականները: Սրանք հասկացել էին՝ հայերից առաջ ընկած անխոհեմ հեծյալները կարելուր անձիք են, թերեւս վճռեցին գերել նրանց: Կատաղի վայնասունով նետվեցին սպարապետի ու Տիրանի վրա, եւս մեկ ակնթարթ ու կշռապատեին նրանց: Այդ պահին նրանց հասավ Պարգեւն ու խելահեղ արագությամբ բախվեց երեք լեռնականների: Սրանք իրենց նժույզներով առաջ էին անցել մնացածներից, վճռել էին գերել անխոհեմ հեծյալներին, տիրանալ օդապարիկ նժույզին: Անձնագոհ թիկնապահին ոչինչ չէր մնում լեռնականների ճամփան սեփական մարմնով փակելուց զատ: Երեք նիզակ խոցեցին Պարգեւին, սակայն հսկա թիկնապահը մնաց թամբին: Լեռնականներից մեկը դաշույնը ատամներով

բռնած, ցատկեց Պարգեւի սծույգի գավակին, ցած քաշեց նրան, վայրենի աղաղակներով, հետեւից բռնելով Պարգեւի քթածակերից, գլուխը սեղմելով ծնկներին, կտրեց այն:

Այնքան արագ կատարվեց այս ամենը, որ ներկաները չհասցրեցին օգնել: Սպարապետը մոռացավ Տիրանին, ամեն, ամեն բան: Նծույգը թռցրեց լեռնականների վրա, սրի մի զարկով թռցրեց Պարգեւին սպանողի գլուխը: Մյուսին սրատեց Տիրանը, երրորդին զցեց նծույգի սմբակների տակ: Այդ պահին հասավ Մարդպետաց տերը իր հեծյալներով, բախվեց լեռնականներին, կատաղի սրամարտ սկսվեց: Երկուստեք այնպիսի թափով իրար եկան, խառնվեցին իրար, կռվողների մի հսկա զանգված առաջացավ, որտեղ հայ ու լեռնական հեծյալներին իրարից զանազանել հնար չկար, խառնվել էին իրար, կռվում էին մոլուցքով: Չրահները չէին դիմանում պողպատ սրերին, փշրվում էին մարդկանց ոսկորները: Արյունը ցայտում էր վերքերից, ներկում մարդկանց, նծույգներին ու շրջապատը:

Մի աննախադեպ զագանացում էր տիրել մարդկանց, ամեն ոք իրեն ախոյան էր ընտրում, կռվում էին կատաղի գոռոցներով, դրանով ցանկանալով խլացնել վախը: Թերեւս երկար շարունակվեք այս սպանողը, եթե ճակատամարտ չմտներ Բագրատունյաց գունդը, նրան հետեւեց Կամիւնականի կատաղի հարվածը, ապա գոռում-գոչյունով մարտ մտավ հսկա Ամատունյաց տերը: Նրանք տեսել էին գահաժառանգի ու սպարապետի վտանգվելը, աճապարել էին, սակայն լեռնականներն էլ իրենց հերթին համառում էին, չէին հրաժարվում Տիրանին ու սպարապետին գերելու մտքից:

Դե՛, փորձիր մոտենալ նրանց: Սպարապետի ծանր սրից ընկնում էին լեռնական ընտիր զինվորները: Չգացվում էր տասնյակ տարիների մարտական փորձը, զմուր չէր սուր շարժում հայոց սպարապետը: Ամեն շարժում, ամեն զարկ մահ էր բերում: Իսկ Տիրանին ընդհանրապես մոտենալ հնար չկար: Նա ուզում էր անձնագոհ կռվով քավել ականա գործած մեղքը, ավա՛ր, ետ չես բերի անձնագոհ թիկնարպահին...

Գահաժառանգի նծույգը ձգում էր լեռնականներին: Շատերն էին ձգտում տիրանալ նծույգին ու զարկվում էին նծույգի տիրոջ սրից:

Հայրը տեսավ սանին սրամարտելիս, հասկացավ՝ լեռնականները կարող էին հեռվից նետահարել նրան:

- Վաչե՛, դուրս արի մարտից, ինչ եք ամենքդ էլ խելքներդ թռցրել: Տեսեք, Սանեսանն էլ մարտ մտավ, այս ի՞նչ է կատարվում, մարդ աստծո, դուք զինվոր չեք, խելքի՛ արեք: Մարտ ու ճակատամարտ վարեք, ոչ թե հասարակ զինվորի պես կռվել առաջին շարքում:

Սպարապետը չէր կարող չզննահատել Հոր դիտողությունը: Հասկացավ, այս ճակատամարտի միակ սթափ զորականը նա էր: Հորը ոչնչով չես հանի հավասարակշռությունից:

Աշտանակելով նծույգը՝ սպարապետը բարձրացավ փոքրիկ բլրակ: Նրա առաջ տիպա՛ տեսարան բացվեց: Հայկական գնդերը խառնվել էին լեռնականներին, կարգ ու կանոն չկար:

- Պարգեւ,- կանչեց, տնքաց, ասես մարմնական ցավ զգաց, պատկերացրեց այն պահը, երբ լեռնականը կտրում էր սիրելի թիկնապահի գլուխը,- Աբգա՛ր, Սոկրա՛տ, թեք Բագրատունու մոտ, թող կարգի բերի գունդը: Աբգա՛ր, հետո կզնաս Ամատունու մոտ, կասես հրամանս՝ զարկել Սանեսանի կանգնած տեղը, հրամանս է՝ գերել կամ սպանել թագավորին,- մի պահ վճռեց գահաժառանգին հանել մարտից, ապա հրաժարվեց,- թող մի քանի թեթեւ վերք ստանա, զրահները ընտիր են, կդիմանա: Թող հասկանա զինվորի արյան արժեքը: Հա՛, ի՞նչ եղավ Հայկը, տես է, հիշեցի, այն էլ այս պահին... - Նայեց մարտադաշտին, տեսավ՝ Բագրատունու գունդը մարտակարգի մեջ էր մտնում,- լավ է, երբ փորձված զորապետներ ունես, հա, ի՞նչ եղավ Կամիւնականը, Վահանն էլ չի երեւում,- լարեց տեսողությունը, փոշին խանգարում էր տեսնել մարտադաշտը: Մարդկային զանգվածների շարժից հասկացավ՝ Սանեսանի գնդերը թեքվում են Օշականի կողմը: Ուրեմն իրավացի է հայրը: Այնտեղ կանգնած է Սանեսանի պահեստի գունդը, ամենայն հավանականությամբ պահել է նահանջը ապահովելու համար: Մարտից առաջ Մազբությաց թագավորը խորհել է նահանջի մասին, հաղթանակի հույս չի ունեցել: Արսեն, թռի՛ր Ռշտունու մոտ, ասա գունդը հանի, կարգի բերի, թող Մարդպետաց գունդը գրավի նրա տեղը մարտադաշտում:

Ինչպես երեւում էր, Սանեսանը վճռել էր գումակից չբաժանվել: Եթե Ամատունին կարողանա զարկել լեռնականներին, խառնել մարտակարգերը, ապա մենք հնար կունենանք լեռնականներին մի լավ ջարդ տալ, հակառակ դեպքում երկուստեք զոհերը ավելանում են, Ամատունին իր գործը գերազանց կկատարի: Խելացի զորական է:

Իրոք, Ամատունին հասկացավ սպարապետի մտահղացումը: Մամիկոնեից տերը ստիպում էր Սանեսանին նահանջել:

- Ամատունիք, եղբայրներ, սպարապետը մեզ մեծ պատիվ է անում: Մենք պիտի գերենք կամ սպանենք Մազբությաց թագավորին: Մեզանից է կախված կռվի ելքը: Առա՛ջ, իմ հետեւից, ի մա՛րտ,- գոռաց ու սրարշավ գնաց առաջ: Ամատունյաց գունդը առանց հաշվի առնելու լեռնականների թվական գերակշռությունը, նետվեց մազբությաց միջոցի վրա: Հարվածի կենտրոնում նախարարն էր, ահարկու, անսովոր մեծ սրով: Ոչ ոք ի վիճակի չէր փակել նրա ճանապարհը:

Իր հերթին սաստկացրեց ճնշումը Բագրատունին: Կամիւնականը այսօր ուշադիր հետեւում էր

Նշանավոր գորապետին, կրկնեց նրա շարժումը:

Աշխարհագորական գունդը, որ ամենքից շատ էր տուժել, այդ վարպետ հարվածներից ուշքի եկավ, ոգի առավ, իր հերթին սաստկացրեց հարվածները: Աշխարհագորայինների նմանօրինակ տոկունությունը զարմանք էր պատճառում փորձված գորականներին:

Իսկ լեռնականները միտք չունեին զիջելու, թվական գերակշռությունը դեռ նրանց կողմն էր, թեև հայերը հմուտ գորական շարժերով շրջափակել էին նրանց: Այդ շրջափակումը նման էր առյուծին արկանելու փորձերի, առյուծի, որ դեռ կարող է փշրել արկանոցն ու հոշոտել որսորդներին: Այդպես էլ կար: Սանեսանի բանակը դեռ շատ բազմամարդ էր և ուժեղ իրեն անհաջողության մատնված համարելու համար: Սանեսանը հասկացավ՝ իրեն մնում էր նահանջով դուրս գալ այս անիծյալ առապարից ու բռնել տունդարձի ճամփան: Պարզ գորավարական հաշիվ էր, սակայն Սանեսանի զինակիցներից մեկը՝ ալանների քաջ ցեղապետ Կազբեն կտրեց ճամփան:

- Տե՛ր արքա, մի՛ լքիր զինակիցներիդ, մենք դեռ շատ հզոր ենք ու կարող ենք ջարդել հայերին...

- լակո՛տ, ես բանակը պիտի տուն հասցնեմ,- ֆշացրեց Սանեսանը, աշտանակեց նժույզն -՝ սլացավ առաջ:

- Յե՛յ, քաջ ալաններ, տուն ենք գնում,- խլացնելով մարտի ձայները, գոռաց Կազբեն ու իր գունդը արագ քառատրոփով անցկացրեց թագավորի մոտով:

Ալանները աղմուկ-աղաղակներով հեռացան, մնացած գնդերը զարմանք կտրած հետեւեցին նրանց, հեռացան թավասպարները, ճղբերը, Եգերսավները: Սանեսանի բանակը մասնատվեց: Օգտվելով այդ խառնաշփոթից՝ Ամատունին սկսեց առաջանալ դեպի թագավորը:

Սանեսանը երբեք չէր խորհել, որ Մեծ Յայքում կարող էր այսպիսի ճակատամարտ տալ, զարմացել էր: Սխալ, սխալի հետեւից էր թույլ տալիս: Նա կորցրել էր գլուխը, ախր սրանք այն հայերն են, որոնց թալանում էր անպատիժ, որ մի տարի խույս էին տալիս իրեն հանդիպելուց, չէին ճակատում: վախկոտներ, իսկ, արդ...

- Կա՛նգ առ, Սանեսան արքա, սուրդ ինձ հանձնիր, Ամատունյաց նախարարիս: Յոգվույս պարտք՝ անվնաս հասցնեմ Խոսրով արքային,- առաջարկությունն ու տոնը անսպասելի էին, կամք խաթարող ու վիրավորական: Մարտի այս հատվածում զինվորները մի պահ քարացան, ի՞նչ կպատասխաներ Սանեսանը, դրանից էր կախված նրանց կյանքը: Մարտն այստեղ դադարեց ինքնաբերաբար: Սանեսանը եւս մեկ սխալ թույլ տվեց, կանգնեցրեց նժույզը, զինվորները կուտակվեցին նրա թիկունքին: Սպասեցին թագավորի պատասխանին, թեպետ խելացի պատասխան չէին սպասում:

- Յնձնվի՛ր, Սանեսա՛ն, մի՛ հեղիր այս անմեղների արյունը,- վերջին անգամ թագավորին խելքի բերելու փորձ արեց Ամատունին:

- Ո՛չ,-կատաղած գոռաց Սանեսանը,- ի՛նձ, Մազթուքաց թագավորին, գերյալ տանել Խոսրովի մո՛տ: Նա իմ վախից փախավ Դարանոյք...

Այս պահին Մազթուքաց թագավորն անցավ այն սահմանը, որ կար խելամտության եւ հիմարության արանքում, մի ակնթարթում դարձավ արնապարտ ու ոճրագործ, իր ձեռքով փակեց հազարավորների տունդարձի ճամփան,- առա՛ջ, Մազթուքաց քաջեր, մեզ անմահություն է սպասում,- մերկացրեց սուրն ու նետվեց Ամատունու վրա, սկսվեց մի ծանր սրամարտ, այն ավարտվելու էր մեկն ու մեկի մահով: Երկուստեք համոզվեցին՝ զուր եւ սուր ճոճում, ամեն բան վճռելու էր մի հատիկ զարկով, ճակատագրական զարկով: Սրերը պատրաստ պահած պտտվում էին, նժույզները տերերից ոչ պակաս կատաղած, խռիռացնում էին, փրփուր շաղ տալիս: Շրջապատում հասկացան, սա մենամարտ չէր, այլ սառնասիրտ սպանություն: Չինվորները շունչները պահած, սպասում էին: Առաջինը չհամբերեց Սանեսանը, թուրը վրա բերեց Ամատունու գլխին, ինչպես երեւում էր, ճակատագիրը վճռել էր պատժել Սանեսանին: Ամատունին խույս տվեց ախոյանի սրից, պողպատիկ սրով զարկեց ախոյանի պարանոցին: Թագավորի գլուխը մի կողմ թռավ: Չինվորները խառնվեցին իրար: Ամատունին վերցրեց նիզակն ու, Սանեսանի գլուխը ցցելով նիզակին, վեր բարձրացրեց ի ցույց ամենքի: Դա նշան էր դադարեցնելու այլեւս անիմաստ կռիվը, սակայն Սանեսանի մերձավորները կատաղի ոռնոցով նետվեցին հայերի վրա, հայերն էլ այդ անմտությունից ոչ պակաս կատաղած շրջափակ արեցին լեռնականներին, կոտորեցին մինչեւ վերջին զինվորը: Մազթուքաց բանակը դիմեց փախուստի...

Սպարապետը, աչքը Ողականի ճանապարհին զգած, նաեւ չտեսնելով այն, ընկել էր խոհերի հորձանուտը: Մտովի վեճի էր բռնվել արքայի ու կաթողկոսի հետ: Նրանց խելքի բերելու անհաջող փորձեր էր անում, սակայն ավա՛րդ... Դժվար գործի առաքելության ծանրության տակ նա կոչել էր բոլոր մարմնական ու ոգեղեն ուժերը, հաղթել Սանեսանին, լեռնականներին վտարել երկրից: Իսկ հոգում բուն դրած դժգոհությունը թույլ չէր տալիս գոհանալ արածով: Նա սեփական անձի համար ակնկալիք չունեց, ո՛չ հարստություն, ո՛չ մեծարանք, ո՛չ, հազար անգամ՝ ո՛չ... Իսկ երբ հիշում էր, ինչպես էր

արքան ողբում Սանեսանի մահը, գայրանում էր, վիրավորվում մարտերում զոհվածների փոխարեն: Սպանվածներին տեսնում էր գերեզմաններում շուռ եկած... Մի՞թե, տե՛ր աստված, չես տեսնում այս ամենը, մի՞թե չի գալու դատաստանի օրը, ինչպե՞ս պիտի արդարանան նրանք... Անտառ է տնկում, սակայն դա զբաղմունք է խաղաղ օրերի:

Նորից հիշեց արքայի այլալվելը, երբ Ամատունին նիզակին ցցած ցույց տվեց Սանեսանի գլուխը, «Արշակունի» գլուխը, արքայի «եղբոր» գլուխը: Արքան լաց եղավ: Օ՛, հայոց աստվածներ, հայոց անմահ աստվածներ, արքան լաց եղավ, եւ ու՛մ համար՝ երկիրն ավերողի, ժողովրդին կոտորի, Մեծ Հայքի ոխերիմ թշնամու համար...

Ետ նայեց փեսաներին: Սրանք գալիս էին գրուցելով: Իսկ եթե նրանք ատեն արքային, դա վնաս է երկրին, հարկ է առաջն առնել, վեր ելնել ամեն ինչից, ատելությունը կխարխլի գահը, իսկ այն, լավ, թե՛ վատ, ներկայի ու ապագայի հույսն է: Կանգնեցրեց նժույգը: Արշավիրն ու Անդրովկը մոտեցան նրան:

- Ի՞նչ հասկացաք պատերազմից, ի՞նչ խորհեցիք արքայի ու կաթողիկոսի մասին: Խոսեք անկեղծ, ուզում եմ հասկանալ ձեզ:

Փեսաները իրար նայեցին: Նրանց հայացքներում այնքան բան կար, որ սպարապետը զղջաց, սակայն հարցը տրված էր, սպասեց պատասխանի:

- Ներո՛ղ եղիր, տեր սպարապետ,- մտերմիկ տոնով խոսեց Արշավիրը,- մենք հասու ենք այն երկրնտրանքին, որ ապրեցիր,- նայեց քենակալին, քմծիծաղ տվեց,- եթե դու տուրք տայիր անձնական վիրավորանքին, ապա Սանեսանը չէր պատուհասվի, լեռնականները չէին վտարվի երկրից...

- Ամեն բան արվեց հավուր պատշաճի, սակայն ինձ անհանգստացնում է մեկ այլ պարագա, ռամիկին գենք տալը: Նաեւ մտահոգի է: Ռամիկին ցույց տվեցինք մեր անկարողությունը: Ռամիկը տիրագլուխ է այլեւս, ըմբոս...

- Սպասի՛ր, Անդր՛վկ, դու դեմ չէիր ռամիկին, քեզ ի՞նչ պատահեց,- Արշավիրը զարմացած նայեց քենակալին:

Սպարապետը ավելի հետաքրքրվեց. «Սրանք այս պարագան քննել են: Լավ է, դեմ չեն ռամիկին: Անդրովկն ավելի զգուշավոր է, իսկ Արշավիրը, որպես իսկական Կամսարական, մոտ է ռամիկին»:

- Երկուստեք հասու եք երկրի վիճակին, դա լավ է... Դեմ չեք ռամիկին... Արդար ու բարեհաճ եղեք նրա հանդեպ: Չեմ ասում՝ ռամկացեք: Ա՛յ, մտաբերե՛ք, հին ու հին պատումներ կան այդ մասին, որ արիականը հաշվի չէին առնում ծագումը, եթե մարդ տքնում է երկրի համար, այլեւս ի՞նչ ռամիկ, ի՞նչ ազատ: Արիական առաքիլություններին հավատարիմ լինելը հենց իսկ արիանալու էր բարձրացնում մարդ էակին: Մի՛ գարմացեք, մենք շատ ու շատ բաներ ենք կորցրել, եւ դա մեր անխոհեմության պատճառով: Հարկ է քննել մեր հեռավոր անցյալը, չհեռանանք մեր սեփական աստվածներից,- լռեց, սկսեց օրորվել նժույգի քայլի հետ, ապա շարունակեց, երբ տեսավ փեսաները անհանգստացել են լռության պատճառով,- այ, խորհում էիք Հոր հետ, որին ճանաչում եմ մի ամբողջ կյանք, գիտեմ՝ նա երկրի ճակատագիրը կապում է ռամիկի ու ազատանու զորական դաշինքի հետ... Ես էլ մտավախություն ունեմ՝ ռամիկին գենք տալու մեջ... Չենք մարդուն դարձնում է անզուսպ, իսկ այլ ելք մենք չունենք: Կուզեի հավատալ Հռոմի օգնությունը, սակայն վերջին այցելության ժամանակ այդ օգնությունը թաղվեց, ամենայն դեպքում՝ ինձ համար, ես նրանցից սպասելիք չունեմ: Եվ իրավացի է Հայրը, մնում ենք ռամիկի հույսին: Սոխաված ենք բռնել յուրաքանչյուր օգնող ձեռք եւ շրջահայաց լինել, դա թելադրում է մեր այս հեղեղուն վիճակը,- երկար լռեց, ապա հարմար տեղավորվեց թամբին,- սպասեք, չասիք ի՞նչ եք խորհում վեհափառի մասին, նա լքեց մեզ արհավիրքի պահին, լքեց իր հոտը:

- Հոտը լքող հովվապետը արժանի չէ մնալու հովվապետ... Իր ասածից գայրացած, մոմռացրեց Արշավիրը,- մեղա՛, տե՛ր աստված, մեղա...

- Է՛,- սպարապետը հասկացավ, այլեւս չարժեր խոսել, փեսաները խելացի մարդիկ էին, նրանք կլինեն գահի հետ, կարելուրը սա էր, ցանկացավ ժամ առաջ հասնել տուն, տեսնել կնոջն ու որդուն: Աշտանակեց նժույգն ու սլացավ: Փեսաները հետևեցին նրան:

Երկիրը խաղաղվեց: Արքան ու կաթողիկոսը վերադարձել էին Դարանոյքից: Սպարապետը գնաց Ողական: Պատերազմի մասնակից նախարարները վերադարձան իրենց ոստանները:

Չարմանալի մարդիկ են հայերը, ամեն բան, անգամ արհավիրքն են մոռանում: Այս անգամ էլ մոռացան թե՛ արհավիրք, թե՛ պատճառները, սկսում են դարձյալ մեծ-մեծ խոսել ազգի ու պարտքի մասին: Գլորվելով մինչեւ անդունդ, մեծ տքնանքով, արյան ծովերի գնով փրկվելով, չեն իմացել փրկության արժեքը, դասեր չեն առել, այդպիսին են հայերը...

Հայկի աշխարհագրականները ցրվեցին երկրով մեկ, անտառներն ու քաղաքը մնացին երեսի վրա: Հայկը ծանր վիրավոր պառկած էր տանը, եթե կինն ու երեխաները չլինեին, կելներ, կգնար անտառները ստուգելու: Ուսի վերքը դեռ չէր փակվել, արյուն շատ էր կորցրել, թույլ էր:

Յայկը շատ էր փոխվել: Երբ կինը ականջ էր դնում, այնպիսի բաներ էր լսում ամուսնու մասին, որ գիշերները երկար-երկար նայում էր քնած Յայկին: «Մի՞թե սա իր Յայկն է, աշխարհագրորի քաջ պետը, անտառների վերակացուն, Վաղարշապատի դռները բացող հերոսը: Խեղճ կին, դժվարանում է հավատալ, ախր Յայկը իշխանի չափ իշխանություն ունի, աշխարհի չափ պատիվ: Ստույգ է, նա տան հոգսը թողել է նրա վրա, ոչինչ, թող մենակ ասեն՝ հայկը Դվն վերակացուն է, ազգի ծառա, որ Յայկը նախահոր նմանակն է: Դրանից մեծ պատի՞վ: Կինը զգում է՝ ինքն էլ է փոխվել, սկսել է քիչ խոսել: Խոսելուց առաջ մի լավ խորհում է, հանկարծ անխելք բաներ չասի: Թե չէ՝ կասեն՝ Յայկ գորապետի կինը ցնդածի մեկն է»:

Արդ, հավաքվել են Յայկի ընկերները:

- Անավարտ մնացին գործերս: Ի՞նչ երեսով նայեմ սպարապետին ու արքային...

- Արքայի մասին հարկ էլ չկա խորհելու,- միջամտեց Եզնիկը,- ա՛յ, որ սպարապետին պիտի պատասխան տանք, սա է մտահոգիչ: Նրան օրեն է մեզանից պատասխան պահանջելը:

- Դա հետո, ախր չէ՞ք տեսնում անտառները բարձրացել են,- խոսեց Խաժակը,- ժամ չէ գազաններ բերենք, հը՞:

- Սպասի՛ր, սպասի՛ր,- սթափվեց Յայկը,- դու նախ՝ ցանկապատիր անտառը, հետո գազաններ բեր, թե չէ՝ մի օր էլ գազան չի մնա: Յասա՞նք, հա՞, հասա՞նք երանելի օրվան...

Ընկերները իրար նայեցին: Խաժակի առաջարկը հանկարծակիի էր բերել նրանց, մոռացան արքային, սպարապետին, քանզի իրենցն էին համարում անտառները: Պատկերացրեցին, թե ինչպես են գազաններ անտառ մտնում: Լսեցին գայլերի ոռնոցը, արջերի մրթմրթոցը, հովազների կաղկանձը: Այո՛, այո՛, նրանք լսում էին, այդ ձայները, քանզի հոգով էին երագել այդ պահը: Նրանք լսում էին անտառի երգը...

- Ես մի քանի օրից ոտքի կելնեմ, կերթամ արքայի մոտ, թող հրամայի նախարարներին գազաններ բռնեն: Մենք էլ կսպասենք անտառները ցանկապատել: Գազան բռնել էլ կսովորենք,- Յայկը խոսում էր անտառների մասին, սակայն չգիտես ինչու, միտքը ուրիշ տեղ էր. «Ինչու՞ լքեցին երկիրը, ինչու՞ հեռացան,- լսել էին՝ արքան սպարապետին էր ընծայել Յուր Գուրխ գավառակը: Նախարարներին ընծաներ էր տվել,- Է՛, թող աստված մեկը հազար անի, սակայն աշխարհագրականներին ի՞նչ տվեցին, մի՞թե արյուն չէին թափել: Ստույգ է՝ ռամիկը հպարտ է: Նա հող հայրենիի համար թափած արյան դիմաց պարգև կամ վարձ չի ակնկալում, իսկ ինչու՞ մոռացան զոհվածների ընտանիքներին: Այո՛, սպարապետը գնաց Ողական, ամեն ազատ իր բաժինը ստացավ, իսկ մե՞նք... Եթե չբացեի դռները, քանի-քանիսը կգարկվեին: Սպարապետը իրեն էլ մոռացավ: Է՛, ես ընծա չեմ ուզում, գոնե օգնեն զոհվածների ընտանիքներին... Ցավ է ինձ, երբ նեղն են ընկնում, գոռում են. «Ելի՛ր հող հայրենիին ապավեն...»: Իսկ երբ անցնում է արհավիրքը, մոռանում են ռամիկին: Չէ, մեզ ոչինչ պետք չէ, միայն չարհամարհեն, գրաստ չկարծեն, վիրավորված է ռամիկի հոգին...»:

- Հող հայրենիի կռիվը սուրբ է: Մեզ վայել չէ վարձ ակնկալել արյան դիմաց... Սա է պատգամը մեր հեթանոս նախնյաց,- ներկաները իրար նայեցին: Յայկը նրանց ներկայությամբ առաջին անգամ էր խոսում հեթանոս նախնյաց մասին, չգարմացան հետաքրքրվեցին...

- Հապա նշխաններին ու նախարարներին վայել՞ է,- Եզնիկն էր,- ես հող հայրենիին եմ անդավաճան, հող ու ջրին, կանաչ-կապույտ Յայաստան աշխարհին:

-Այո՛, Եզնի՛կ եղբայր, նրանք իշխան են, տեր են: Նրանք մեր ուժով են պատասխան տալու Հռոմին, Պարսկաստանին: Մենք գիր ու մատյան չգիտենք: Նրանք ուսանել են Աղեքսանդրիա, Հռոմ: Նրանց արքան ընծաներ է տալիս, քանզի նեղացկոտ են,- հեզնեց Յայկը,- մոռացա՞ք Մանավազյաններին ու Որդունիներին, նրանց պատժեց սպարապետը, ապստամբների հողերն անցան պոզեւորներին: Ի՞նչ է, սպարապետը, Յայրը չվիրավորվեցի՞ն: Է՛, հողատերը հողատեր կմնա: Արքան, հարկավ, այս անգամ ուղղեց սխալը, ընծաներ տվեց կռվողներին...

- Բա մե՞նք,- Եզնիկն էր, ձեռքը թափ տվեց, մեր արյունը ջուր է...Դաշույնի հարվածներ կան, տիեզարական ընտրյալների են վերջ տալիս, կան հարվածներ, որ հասարակ մահկանացուին ընտրյալների շարք են բարձրաձուլում: Ահա այդպիսի մի հարվածով Նազենիկը, բարձրացավ, հասավ սպարապետին, Յայր Արտավազդին կամ գորապետ Յայկին...

Այո՛, մեծարել գիտեն հայերը... Այդ կնոջ քաջագործությունը բերնե-բերան լցրեց առանց այն էլ իրենց առաքինի համարող հայերի սրտերը: Այո՛, այո՛, այդ մենք ենք, պատվի կռվի ելնում... Կռվել ենք ու կկռվենք: Մենք ի սկզբանե պատվասեր ենք, ավա՛ղ, ընկել ենք գազանների արանքն ու ապրում ենք պատվի համար կռվելով, ապրում ենք կռվելով ու հառնելով:

Ա՛յ, արիական հայուհի, Էգ առյուծ: Գիտեր, որ կտոր-կտոր են անելու... Չէր երկնչել, պատիվը բարձր էր դասել կյանքից: Օ՛, մեր պատվասեր քույր, մեր արիական քույր, խոնարհվում ենք քո առաջ, ապրե՛ս, հազար ապրես, դու բարձր պահեցիր հայի անունը...

Եվ մեզ՝ հայերիս, ստրկացնել են միտում հոգով ստրուկները, մեզ, որ Յայկեր, Վաչեներ, Տիգրաններ, Նազենիկներ ունենք: Մենք արժանի ենք մեր նախնյաց անանց փառքին, մեր Արարատներին...

Նազենիկը այդ օրվանից շատ էր փոխվել: Նրան թվում էր, թե իր հետ փոխվել է նաեւ աշխարհը, իմաստավորվել է իր հետ, դարձել է հարազատ ու հասկանալի: Նա տեսնում էր՝ այրմարդիկ ակնածում են իրենից, իսկ կանայք, որ առաջ նախանձում էին, հարազատ քույրեր են դարձել: Բամբասանքը մեկեն լռեց: Մինչ այդ վատահամբավ համարվող կինը դաշույնի մի հարվածով մաքրվեց, սրբացավ: Օ՛, եթե իմանային, որ Մեծն Արձան քրմապետի թոռնուհին է, այլեւս ի՞նչ թագուհի կամ իշխանուհի կարող էր մրցել նրա հետ:

Լուրը հասավ նաեւ պալատ, հասավ մի փոքր չափազանցված, իբրեւ հինգ լեռնական էր սպանել: Անգամ թագուհին, եւթյամբ նախանձ այդ կինը, մի քանի հիացական խոսք ասաց Նազենիկի մասին:

Մի երկու օր խոսեցին պալատում, մոռացան: Սակայն պալատում կար մեկը, որ ցնցված էր: Տիրանն իրեն մեղավոր էր զգում, կորցրել էր գլուխը: «Աստված իմ, որքան անշնորհակալ մարդ եմ, մոռացել եմ նրանց, հանձնել ճակատագրի հարվածներին, ինչու՞, ինչի՞ համար: Ու՞մ են պետք քծանքի ու մեղկության այս պալատը, այս շողոքորթ մարդիկ, այս մշտաժպիտ կինը: Այստեղ արհեստավորաց թաղում են կինս ու որդիս, իսկ ես...»:

Դուրս նայեց, մինչեւ երերկո դեռ երկու ժամ կար: Ձայն տվեց սենեկապետին:

- Նժույգս թամբել տուր, հետս կգա Թոռնանը,- ասաց ու զգաց հանկարծահաս վճիռը, մնացած բաները ետ մղվեցին: «Ես գնում եմ կնոջս ու որդուս մոտ»:

հանկարծ ներքին ձայնը բռնեց կոկորդից:

- Այդ ինչպե՞ս եղավ, տե՛ր իմ, որ հիշեցիր նրանց: Երբ վտանգն անցավ եւ ողջ երկիրն է հիացած, փառաբանում կնոջդ... Ինչու՞ էիր մոռացել: Երբ Թոռնանի մեղադրող հայացքն էիր զգում վրադ, մտովի կշտամբում էիր նվիրված թիկնապահիդ: Իսկ նա կնոջդ իր տիրուհին է համարում, որդուդ՝ տեր...

- Սպասի՛ր, հապա մնացածները, իսկ իմ մնացած որդիները՝ Արշակը, Տրդատը, Արտաշեսը, հապա իմ դժբախտ Տիրանուշը: Մի՞թե նրանք իմը չեն: Մի՞թե զորական ուսուցումը զբոսանք է, մի՞թե կայսրը դադարել է ուխտադրուժ մարդ լինելուց: Ես սպասում եմ, իսկ ի՞նչ եմ սպասում, ի՞նչ հրաշք եմ սպասում, ո՞վ իմ փոխարեն պիտի լուծի այս կնճռոտ հայրցը,- խոհերով տարված չնկատեց, ինչպես բաց թողեց սանձը, նժույգը պտտվեց տեղում, սլացավ փողոցով: Մի տեղ նժույգը թոցրեց սայլի վրայով, խեղճ սայլապանը հագիվ վայրագեց իրեն սայլից: Մի տեղ նժույգը հսկայական թռիչք կատարեց, անցավ երեք մարդկանց վրայով, չվնասեց ոչ մեկին: Տիրանը գիտեր՝ սա իր շնորհքը չէր, այլ հրաշք նժույգի: Հագիվ թե աշխարհում գտնվեր Փոթորիկի պես մեկ այլ նժույգ, նաեւ զարմանալի գեղեցիկ ու խելացի: Նժույգը սեւին զարկող կարմրավուն էր, մանր սեւ գույնի բծերով, պարսիկները կոչում են «Ճանճկեն»:

Փոթորիկը հայտնի էր երկրում ու նրա սահմաններից դուրս: Շատ իշխաններ ու նախարարներ էին ցանկանում տեր դառնալ նժույգին, մեծ գումարներ էին առաջարկում: Նրանցից մեկը առաջարկեց քսան մարտական նժույգ, սակայն դա միայն քմծիծաղ առաջացրեց Տիրանի մոտ: Նա երբեք չի բաժանվի իր մարտական ընկերոջից, իր ամենամեծ գանձից, ընկերոջից, ընկերոջը չեն դավաճանում, չեն դավաճանում...

Չնկատեց, ինչպես հասավ Նազենիկենց տուն: Կինն ինքը բացեց դուռը, նետվեց Տիրանի գիրկը:

- Ների՛ր, ների՛ր,- շշնջում էր Տիրանը:

Ամեն բան այստեղ հարազատ է, այնքան ծանոթ, Տիրանը թուլացավ, նստեց աթոռակին: Նազենիկը մոտ բերեց Տիգրանիկին: Սա վախվորած նայեց հորը, լաց եղավ:

- Խորթացել ես, որդի՛ս: Չե՛ս ճանաչում հորդ: Իրավունք ունես, արժանի չեմ...

- Մի՛ խոսիր,- Նազենիկը փարվեց ամուսնուն,- մենք քեզ շատ ենք սիրում, շատ ենք կարոտել,- Տիրանը կնոջ ձեռքը տարավ շրթունքներին:

- Աստվածուհի, արիական տիրուհիս, ինչպե՞ս քավեմ մեղքերս: Դու այլեւս չես մնա այս տանը, քո տաղը պալատում է:

- Ես չեմ խորհել այդ մասին: Այստեղ ինձ համար լավ է, միայն թե մոտեն լինես,- գլուխը կախեց, ապա հպարտորեն բարձրացրեց,- ես ուզում եմ մարդիկ իմանան, թե ով եմ ես: Շատ եմ տանջվել, մինչեւ հասել եմ այդ վճռին: Ինձ բնավ մեծարանք ու պատիվներ պետք չեն, սակայն ամենը պապիս ու հորս հիշատակի համար, մորս համար: Տիրան, այլեւս չեմ ուզում թաքնվել, դա վիրավորական է Արձան քրմապետի հիշատակի համար,- լաց եղավ,- իմ մեջ գլուխ է բարձրացնում պապիս արյունը...

- Այո՛, այո՛, այսպես շարունակել անհնար է: Ես կխոսեմ Սաթենիկի հետ, նա վանք կմտնի, հավատացած եմ, հակառակ պարագայում ես կխելագարվեմ:

- Վարվիր ինչպես հարկ կհամարես: Սպասի՛ր, Գոհարի բարեկամուհուն ճանապարհեմ:

- Ո՞վ է:

- Նաժիշտ է պալատում,- եղավ պատասխանը:

Տիրանը գրկեց որդուն:

- Դու շատ ես նման եղբայրներիդ, միայն ավելի գեղեցիկ ես, քանզի իմ ու Նազենիկի որդին ես, եղբայրները քեզ շատ կսիրեն,- համբուրեց որդուն: Սա փախցրեց դեմքը, հոր մորուքը խուտուտ էր տվել դեմքը: Երեխան վերջապես ժպտաց: Արցունքները դեմ առան Տիրանի կուպերին,- դու կապրես պալատում, քեզ կդաստիարակեն որպես գահաժառանգի: Ինձանից հետո դու կժառանգես հայոց գահը: Երագանքս է, եղիցի՛:

Ներս մտավ Նազենիկը:

- Գիսանեն գնաց, խեղճ կին: Նա այնքան դժբախտ է, չգիտեմ ինչպես օգնեմ:

- Սպասի՛ր, Գիսանե՞ ասացիր, նաժիշտ է: Եթե նաժիշտ է մորս մոտ... - լռեց, իսկ մտովի. «Մայրս լրտեսում է ինձ: Նա այսօր կիմանա խոստմանս մասին: Մա՛յր, մա՛յր, ինչու՞ ես այդչափ օճաբարո, անգամ որդուդ ես լրտեսում»:

Նա միայն կես ճշմարտությունը գիտեր: Նա չգիտեր՝ լուրը առաջին հերթին հասնելու էր կաթողիկոսին:

- Վաղը ամեն բան կվճռվի,- մռայլ ասաց նա:

Մռայլ գիշեր էր: Բամին ոռնում էր քաղաքի փողոցներում, տերեւներ էր քշում այս ու այն կողմ:

Կռռնակը փեշերը հավաքած, շտապում էր կաթողիկոսի մոտ:

«Շատ է փնթփնթում վեհափառը, ասում է՝ շատ են ծախսվում տղաները, խմում են: Կարծում է դյուցին գործ է կռապաշտներ հայտնաբերել: Քիչ գործ չենք անում հավատքի համար: Ստույգ է՝ մեկ-մեկ էլ անմեղ մարդկանց ենք ներկայացնում որպես կռապաշտների... Պատահում է, ինչ կարող ես անել, ծանր գործ ենք անում... Ախր մեկը լինի հարցնի՝ ի՞նչ եք անելու այդքան ոսկին, հարստությունները: Տվեք մեզ՝ երիտասարդներին, կյանք վայելեք: Ասես հետներն են տանելու, թու՛, ես ձեր...»:

Բամին մի քանի տերեւ պտտացրեց գլխավերելում: Կռռնակը ծուռ ժպտաց, ուզեց բռնել տերեւներից մեկը, չհաջողվեց: Անհաջող փորձը սահմանափակեց մի ընտիր հայիոյանքով: Մտավ կաթողիկոսարան:

- Սպասի՛ր, Յայր Կռռնակ,- ասաց երիտասարդ դպիրը: Սրա անառողջ տեսքը զայրացրեց Կռռնակին:

«Գիտեմ ինչու է հալվում դպիրը: Էն քածը սրան՝ ես միամիտին գերեզման կտանի: Լակո՛տ, չգիտե, որ տեղյակ եմ Եղևարի մասին, բավական է մի խոսք ասեմ վեհափառին, կվճռվեն»:

Չայրույթն անցավ: Նա հաճույք էր ստանում մարդկանց մասին տեղեկություններ հավաքելուց, նաեւ նրա համար, որ վեհափառի մոտ անգետ չէրեւար: Էս լակոտին, մի անգամ հասկացրի, որ ականջալուր եմ նրա ու Եղևարի կապի մասին, փափկեց, եթե ստիպեմ, ոտքերս կհամբուրի:

- Յայր Կռռնակ, վեհափառը հաճեց ընդունել, բարի եղի՛ր,- երիտասարդը խոնարհվեց: Կռռնակը այնպիսի տեսքով անցավ նրա մոտով, ասես ամենաքիչը եպիսկոպոս լիներ: Վեհափառը լավ տրամադրության մեջ էր, անգամ աջը երկարեց համբուրելու:

- Խոսի՛ր, Կռռնակ, հարկավ, հրատապ գործով ես եկել:

- Գահաժառանգը Նազենիկի մոտ էր: Խոստացավ Նազենիկին պալատ տանել: Այս անգամ կկատարի խոսքը: Այդպիսի կնոջ խնդրանք անհնար է չկատարել...

- Լռի՛ր, անառակ,- սաստեց Աղբիանոսը,- դու հասկանու՞մ ես, ի՞նչ ես բարբառում...

Կռռնակը միտք չունեւ լռելու:

- Երկրում կասեն Վեհափառը չի կարողանում խելքի բերել գահաժառանգին,- Կռռնակը գիտեր ինչ վտանգավոր խաղ էր անում, այլ էլք չկար, դրամը վաղուց էր վերջացել, տղաները շրջում են քաղցած գայլերի պես: Եթե դրամ չհայթայթեր, կսկսեն թալանել մարդկանց: Դժգոհ են իրենից:

- Լռի՛ր, անառակ,- դարձյալ եպիսկոպոսն էր,- չափո՞ ճանաչի՛ր: Մի՛ չարաշահիր վեհափառի համբերությունը, համեստ եղիր, որդյակ,- խոսելիս հասկանալով, որ խիստ էր խոսել իրենց համախոհի հետ, գաղտնիքը կիսողի հետ,- համեստ եղիր,- եպիսկոպոսը ժպտաց, աչքերը կորան թավ հոնքերի տակ:

Կաթողիկոսը լուռ էր: Նա էլք էր փնտրում, իսկ էլքը պատրաստ էր հուշելու Կռռնակը. «Յարկ է Նազենիկին ու որդուն հեռացնել երկրից կամ սպանել: Այդ սպանությունը կհարստացնի իրեն: Կռռնի Գիսանենին ու կհեռանա Մեծ Յայթից: Գիսանեն գեղեցիկ, խելացի է, նրա հետ կարելի է շատ գործեր շինել: Սակայն հարկ է այնպես անել, որպեսզի ծերերը իրենք խնդրեն: Դա կավելացնի վարձի չափը: Մեծ գումար կպահանջի,- հանկարծ գլխում մի միտք ծնվեց,- իսկ եթե այս ամենի մասին պատմի գահաժառանգին, անշուշտ, վարձ կստանա, իսկ այդ դեպքում էլ վեհափառը կպատժի: Ստացվում է՝ թանկ գաղտնիքը չի կարող վաճառել»:

- Մենք լուր կիղենք կայսերն այս մասին: Գահաժառանգը հեթանոսանում է, անօրենի զավակ ունի: Կայսրը այս պարագայում երբեք նրան արքա չի օժի, իսկ եթե չանսա բանականությանը, Կռռնակը կանի այն, ինչ խորհում է այս պահին...

Կռռնակը, որքան էլ արի լիներ, չկարողացավ չցնցվել:

- Ես վեհափառի սպասին եմ: Այս ամենը հոգու փրկության համար է,- Կռռնակը փորձեց բթացնել հոգեւորներին, զուր անցավ: Սրանք Կռռնակին լավ էին ճանաչում, գիտեին, նրա միակ աստվածը ոսկին էր:

- Մենք ինամիական կապերով կապված ենք արքայական տան հետ,- վեհափառը շոյեց մորուքը:
- Եկեղեցու շահերը վեր են ինամիական կապերից: Աստված չի ների մեր թուլությունը, հարկ է խոսել Տիրանի հետ: Մի՛ մոռացիր նաեւ այս պարագան՝ Տիրանը անզուսպ է... Ափսոս, ձեր ինամիական կապերը օգուտ չբերեցին եկեղեցուն:

- Եթե Նազենիկին հեռացնենք երկրից,- Կոռնակը ստիպված հուշեց էլքը,- դուք կդառնաք այդ կնոջ ու երեխայի պաշտպանները, որպեսզի նրանց գլխից մազ անգամ չպակասի: Հակառակ դեպքում պատասխան կտաք Տիրանին: Հոգեւորները իրար նայեցին:

- Այլ էլք չկա, հեռացրու՛ երկրից, կորցրու անլուր, անհետ...:

- Հոգեւոր տեր, ես վախենում եմ Տիրանից: Նրա ձեռքերը երկար են: Ես չեմ կարող ապահովել Նազենիկի ու որդու անվտանգությունը, դեռ ավելին, հարկ է, որ ես մնամ նրանց հետ, հակառակ պարագայում մի շաբաթից նրանք կհայտնվեն Արտաշատում, ու Տիրանը կիմանա ամեն բան, իսկ նա...:

- Լա՛վ, լա՛վ, դու այնքան ոսկի կստանաս,- գայրացավ կաթողիկոսը,- այնքան ոսկի, որ քեզ կապահովի երկար ժամանակ: Հեռացրու՛ նրանց Մեծ Հայքից, թեկուզ ժամանակավոր,- նայեց Կոռնակին, սա միտք չունեւ գնալու: Կաթողիկոսը հասկացավ, առանց ոսկին ստանալու չի հեռանա: Ելավ տեղից, գնաց հարակից սենյակ: Զիչ անց վերադարձավ, Կոռնակին տվեց մի մեծ քսակ ոսկի:

- Ամեն բան անում եմ հանուն հավատքի,- ասաց Կոռնակը, խաչակնքեց:

Հոգեւորները ճարահատյալ հետեւեցին նրա օրինակին:

Կոռնակը դուրս եկավ կաթողիկոսի մոտից: Կյանքում առաջին անգամ վախ գգաց, քանզի հարուստ էր: Նայեց չորսբլորը, շոշափեց հագուստի տակ, դաշույնի սառնությունը հանգստացրեց. «Տես Է, հարստացա, սիրոս վախ ընկավ: Խեղճ հարուստներ...»:

Մի գիշերվա մեջ ձյունը ծածկեց երկիրը, ձոր ու առու լցվեցին: Սպիտակ-սպիտակ մաքրություն իջավ երկրի վրա: Ձմռան այն հանդիսավոր պահն էր, երբ ձյունը իր մաքրությամբ մարդուն հոգով մաքրում է, ավա՛րդ, այն երկար չի տևում: Կամաց-կամաց դեղնում է, մարդ սկսում է գարուն երագել:

Այդ գարնանը Հայկին ու նրա ընկերներին անսովոր գործ էր սպասում: Գազաններ պիտի բռնեին անտառներում բաց թողնելու համար: Հարկավ, գործը անսովոր էր, սակայն ամեն բան սկսվում է նորից, անսովորից: Անտառի գործն էլ նոր ու անսովոր էր, խնդրեմ, տեսեք, անտառները արդեն կան: Հայկը խելացի վարվեց, կաղնիների արանքում մասրենիներ տնկեց: Արդ, մասրենիները ծածկել են ծառերի բները, ոտք ու ապահով է:

Քամիներից պաշտպանվելու, կեր հայթայթելու համար անտառ են մտել նապաստակներ, նրանց հետեւից էլ մի քանի աղվես, գայլեր էլ կան: Այդ գազանները կամովին են մտել անտառ, անտառը ապահովություն է խոստանում ու սկսվել է անտառի կյանքը: Արտաշատցի ու դվինցի երեխաները պարսատիկներով ու նետերով հալածում են նապաստակներին, սակայն անհնար է նրանց հեռացնել անտառներից: Արքան արգելել է որսը այդ վայրերում: Առաջին որսի իրավունքը արքայինն է: Արքան արգելել է որսը այդ վայրերում: Առաջին որսի իրավունքը արքայինն է: Հայկը դա գիտե, դրա համար էլ ցանկանում է հետաձգել որսը, մինչեւ գազաններ բերեն, մինչեւ գազանները սերունդ տան, բազմազան: Օրերը տաքանալու հետ կավարտեն ցանկապատման աշխատանքները: Արքան միջոց ու ջանք չի ինայում անտառների համար: Անտառներից մեկը կոչվում է Խոսրովակերտ: Մի՞թե սակավ է անմահանալու համար, իսկ ի՞նքը, ինքը ի՞նչ, ինքը սոսկական մարդ է, իսկ արքան... Ամեն արքա մտնում է պատմության մեջ, ապրել է, ի՞նչ է արել, իսկ եթե արքան մեծագործ է, ետ է մղել թշնամու բանակները, քաղաք է կառուցել, բերդեր, ամրոցներ, ասել է թե անմահացրել է իր գործերով, որոնք սեփականից ձերբազատվելով, դարձել են պետության ու ժողովրդինը, այս է ժողովրդի պատկանելիքը... Իսկ ի՞նքը... Սա մեծագործություն է հայերի համար, փառք, հիշվող, իր երբեմնի մեծությանը ապավինող, խենթացած հայերի համար... Չորօրինակ, Հայկի համար չէր, որ այս ամենը նա է անում, իսկ չի անմահանալու, չէ, թող չգրեն անունը պատմության մեջ: Նա եկող սերունդներին կհայտնվի որպես անանուն մարդ, մասնակից այս արարման: Մի՞թե այս ամենը մեծագործություն չէ, այո, սա շնորհունակ մարդկանց օրինական գնահատականն է, որ հասնում են ինքնաճանաչման, արած գործերի գնահատականը տալուց հետո միայն, այդպես է կյանքում, չգարմանաք:

Աղբիանոսի գնալուց հետո կաթողիկոսը թուլացրեց իրեն, ազատություն տվեց լարված մկաններին, քանզի այլևս կարիք չկար կայտառ երեւալու: Աղբիանոսի մոտ իրեն առողջ էր ցուցադրում, քանզի սա բողոքում էր տկարությունից, ունեցած, չունեցած հիվանդություններից, ծերությունից:

Այդ կանոնին հետեւելով երկար տարիներ, հասկացել էր՝ ընկերը իր մեջ սովորություն է

դաստիարակել: Աղբիանոսը իր տնքտնքոցներով ստիպում է իրեն առույգ մնալ: Դա զարմանք է պատճառում տարիքով ավելի երիտասարդ հոգեւորներին, քանզի սրանք նման են գառամյալ ծերունիների, նրանք ցուցադրում են իրենց ծերությունը, ասես աստծո պարգեւն է, տկարամիտներ:

Մտահոգ է վեհափառը, վերջերս սկսել է լուրջ վախենալ գահաժառանգից: Նա Տիրանի մեջ տեսնում է ապագա կամային, ինքնասածի արքայի: Աստված մի արասցե, Կոռնակն անսա իր հրամանն ու վնասի այդ կնոջը: Պատկերացրեց կատաղած Տիրանին... Մտքերն այլ հուևով գնացին, վերջերս վատ են կաթողիկոսական տան գործերը... Մտքերն այլ հուևով գնացին, վերջերս վատ են կաթողիկոսական տան գործերը... Մի՞թե Աստծուն բավական չէ իր նվիրվածությունը, որդու՝ Գրիգորի մահը: Ախր ես հոտիս հոգսերով եմ ապրում, իսկ այն տկար է: Երկրի տերերի մեջ կռապաշտներ կան: Ա՛յ, օրինակ, թագուհին,- հիշելով նրան՝ սրտնեղեց,- տես է, կատաղած քած, փորձեց սպանել ինձ, որպեսզի երկրում ոչ ոք դեմ չխոսի, չլինի մեկ, որ երեսով տա Բակուրի հետ շնանալը... Արքան թուլակամ է, թագուհին՝ պոռնիկ, գահաժառանգը ինչ պիտի սովորի նրանցից:

Այսօր դեռ տանելի է վիճակը, իսկ վաղը, երբ Խոսրովը կնքի մահկանացուն, գահ բարձրանա Տիրանը... Մի՞թե Յուսիկը ի գորու է դեմ ելնել, զսպել նրան: Այ, երբ Կոռնակը երկրից հեռացնի կնոջն ու երեխային: Տիրանը կկորցնի ելուխը, սխալներ թույլ կտա, այն ժամ հնար կլինի նրան մեղադրել: Սպասենք դեռ,- դառնորեն մտմտաց, մահիճ չմտավ, քնեց վեհապետական գահի մեջ, քնեց ծերունական ծանր քնով:

- Ի՞նչ են խոսում Արտաշատում, երկրում գահաժառանգի մասին,- անսպասելի հարց տվեց արքան: Սենեկապետը, որ այդպիսի հարցի չէր սպասում, սառեց: Արքան պատասխան էր սպասում: Վրույրը արքայի հայացքում սպառնալիք տեսավ, զարմացավ: Վճռեց մի փոքր ուշացնել պատասխանը, թերեւս արքան մոռանար հարցը, այլ գործերից խոսեր: Ինչպես երեւում էր, արքան միտք չունեւ այլ բաներից խոսել:

«Մեկ էլ տեսար Տիրանի գահակալության ժամանակ սենեկապետ մնացի,- խորհեց Վրույրը,- եթե իմանա, որ չարախոսել եմ...»

- Սենեկապետ, ինչու՞ ես լռում,- լսեց արքայի սառը ձայնը,- ասելիք չունե՞ս, թե՞ վախենում ես Տիրանից: Չե՞ս ուզում ասել, ախր կապված է ինչ-որ վարձակի հետ, երեխա ունեն:

- Ներող եղիր, տեր արքա, ես կասեմ այն ամենը, ինչ գիտեմ,- արքան թեթեւացրեց սենեկապետի գործը, ասելով այն, ինչին սենեկապետը ավելացնելու բան չունեւ: Տիրանը անզուսպ է, կարող է անգամ սպանել, տեսնելով արքայի դեմքի վրայով անցած սուվերը, վրա տվեց:

- Տե՛ր արքա, գահաժառանգը կապված է Արտաշատի Երեւմունքի խաղարկու Նազենիկի հետ: Նրանք երեխա ունեն, Տիգրան է անունը:

- Ստու՞յգ է այդ ամենը,- արքան բռունցքը զարկեց գահի արմակակալին,- գահաժառանգը ապօրինի զավակ ունի: Նա, որ գլխին է դնելու Մեծ Յայքի թագը, հոգալու է այս երկրի ու ժողովրդի հոգսերը: Նա պարտ է բարի ու առաքինի լինել... Սենեկապետ, կանչել տուր քարտուղար Յամասին, շտապով:

Քիչ անց սենեկապետը վարագույրների մոտ հանդիպեց Յամասին, ասաց.

- Արքան հարցնում էր Նազենիկի մասին: Ոչինչ չասացի, արքան գիտե ամեն ինչ,- հոգոց հանեց,- Արտաշատը բամբասանքի բույն է:

Յամասը մտավ գահասրահ, խոնարհվեց արքային:

- Ստույգ է լու՞րը, Տիրանը ապօրինի զավակ ունի այդ Նազենիկից,- արքան ետ ընկավ գահի մեջ, ձեռքը սեղմեց կրծքին: Սիրտը սաստիկ ծակում էր:

Յամասը հասկացավ, ժխտելն անիմաստ էր եւ ոչ անվտանգ:

- Այո՛, տեր արքա: Գահաժառանգն ու Նազենիկը սիրում են իրար: Նրանք որդի ունեն: Տիգրան է անունը,- ասաց խորհելով, որ հայրը շատ ուշ է հետաքրքրվում գահաժառանգով:

- Տիրանը որդիներ ունի, ամուսնացած դուստր, պապ է,- մոմացրեց արքան,- եւ այդքան իջնել, պառկել վարձակի հետ, ի՞նչ կասես:

- Գահաժառանգը սիրում է նրան:

- Լռի՛ր, արքաները պիտի երկիրը, ժողովրդին սիրեն: Անձնական երջանկությունը անթույլատրելի շքեղություն է արքայի համար: Ա՛յ, ինչ օրեն է հասարակների համար, անթույլատրելի է աստծո ընտրյալների համար,- նայեց Յամասին, սակայն նրան չտեսավ, զայրացած էր,- դու գիտե՞ս ինչ ասել է արքա,- տեսնելով Յամասի զարմացած հայացքը, ծիծաղեց,- չես էլ իմանա: Գիտե՞ս, Յամաս քարտուղար, դու երջնիկ մարդ ես, քանզի արքա չես: Դու կարող ես ուտել, խմել, պարկել ում հետ ցանկանաս, իսկ արքան,- մատը թափ տվեց,- դու կարող ես քեզ սպանել, սակայն արքան իրեն չի պատկանում: Նա երկրինն է, երկիրն էլ՝ նրանը: Դու, գնա, Յամաս քարտուղար:

Յամասը դուրս գնաց: Արքան ելավ գահից, սկսեց շրջել գահասրահում, ապա զայրալից նայեց վարագույրների կողմը:

- Կանչե՛ք գահաժառանգին,- գոռաց սենեկապետին, սա դռներից ետ դարձավ: «Տկարամիտներ, կարծում են անտեղյակ եմ երկրի գործերից, իրենց վարք ու բարքից: Գիտեմ ով ինչով է ապրում, ինչ է խորհում: Գիտեմ՝ թագուհին ինձ չի սիրում,- խորհեց հանգիստ, ապա հռչոռաց,- մենք ամեն բան գիտենք, գիտենք, թե որքան հավք է թռչում Մեծ Հայքի վրայով, գիտենք գորքերի քանակը... Մենք ամեն բան գիտենք: Հիմարներ, չգիտեն՝ Բակուրի դավադրության մասին իրենցից վաղ գիտեի: Ափսոս, չկատարվեց այն, ինչ աստվածահաճ էր: Կարծում են, չգիտենք ինչպես փրկվեց վեհափառը: Ամեն բան գիտենք, սակայն լռում ենք հանուն ժողովրդի, հանուն այս երկրի խաղաղության ու անդորրի: Ի՞նչ անեմ, դե՞մ ելնեմ վեհափառին, խառնե՞մ երկիրը: Դեմ ելնեմ Բակուրին, Շապուհը հենց իսկ դրան է սպասում, գորքերը երկիր կմտցնի: Մանկամիտներ, ինչու՞ չեն հասկանում, սա է մեծագործությունը, արքայի մեծագործությունը խաղաղությունն է: Իմ մեծագործությունը չեն ուզում տեսնել, որ կա անկախ նրանց տոհմական գռեհկությունից: Մենք մեծ ենք, քանզի կարողանում ենք խաղաղությունը ապահովել երկրում: Մենք կառուցում ենք: Ի՞նչ է, այս ամենի մասին պիտի գոռամ երկրի ճամփաբաժաններում, մեկ է, չեն հասկանա մեր հաստագլուխները, իմ կապտակները: Այսօր զարգանում են արհեստները, առևտուրը: Թող հաշվեն քանի քարավան է դուրս գալիս Արտաշատից, քանի-քանի երկրներից են Հայաստան գալիս վաճառականները: Վերջապես Դվինն ու անտառները... Ո՞վ է հայոց արքաներից այսպիսի մեծագործություն արարել, ոչ մկը... Կարձահասակ ենք,- նորից հռչոռաց, նայեց գահից կախված ոտքերին,- Կոտակ են կոչում, մանկամիտներ, արքային հասակ պետք չէ: Մի՞թե քիչ են բթամիտ հսկաները: Թող հետևորդները գնահատեն մեր գործերը: Մի՞թե թեկուզ մեր սեփական նվաստացման գնով խաղաղություն կհաստատենք, որ ծաղկի Մայր Հայաստանը... Չարմացած նայեց Տիրանին, սա եկել, կանգնել էր գահի առաջ: Հասկացավ, այս ամենը խոսել էր բարձրաձայն,- լիահույս եմ, հասկացար մեզ:

Տիրանը ավելի քան զարմացած համբուրեց հոր ձեռքը եւ դա արեց ոչ սովորույթով, առաջին անգամ հոր ձեռքը համբուրեց սրտի թելադրանքով:

- Քո անձնագոհությունն արժանի է փառաբանման, պատիվ է բերում Մեծ Հայքի գահին ու արքային:

- Ուրախ եմ, որդի, հասկացար մեզ,- ժպտաց արքան, իջավ գահից, գրկեց որդուն: Հիշեց, ինչի համար էր հրավիրել, որդուն այդ ամենը մանր թվաց, ճղճիմ բաներ, ուզեց ասել որդուն. «Քանի չես ուսել պետության ծանր բեռը, ապրիր հաճույքներով: Գահը շատ ծանր է երջանիկ լինելու համար, սակայն խոսեց այլ բաների մասին:

- Նստի՛ր, որդիս, վաղուղ չես եկել հորդ մոտ: Մենք պետության գործերի մեջ թաղված, չենք կարողանում հասցնել, մեկ-մեկ արի, թեթեւացրու հոգսերս, կիսիր գործերիս ծանրությունը:

Տիրանը ուշադիր նայեց հորը, նոր խորշոմներ տեսավ, աչքերի տակ պարկեր էին գոյացել: Տեսքն այնպիսին էր, ասես նոր էր ելել հիվանդության մահիճից:

- Ի՞նչ ես նայում այդպես, ասես ահապարտ եմ: Մի՞թե այդքան տկար եմ երեւում, խղճում ես մեզ,- զայրացավ,- մենք ենք այս աշխարհի տերը,- գլուխը կախեց, թերեւս ամաչեց բռնկումից,- գիտենք, կռահում ենք, թե ինչ ես խորհում, ինչ ես ուզում հարցնել: Ուզում ես, որ արդարանանք, սակայն չեմ կարող,- հանկարծ նստեց գահի պատվանդանի աստիճանին, խեղճացավ,- որդի, մենք պարզապես վախեցանք... Մի՛ զարմացիր, դա մարդկային սովորական զգացմունք է եւ ուրիշ ոչինչ: Կորցրեցի գլուխս... Ահա այն ամենը, ինչ ուզում էինք ասել փախուստի մասին,- խորհեց մի փոքր, թերեւս մտովի ծանրութեթեւ արեց ասելիքը:- Մենք մեղքերս քավեցինք Վաչեի ու մնացածների հանդեպ՝ ընծաներ տվեցինք, ավելին անել չէինք կարող,- տնքաց,- իսկ ի՞նչ է, նրանք երկրի առաջ պարտավորություն չունե՞ն: Նրանք էլ են հայ, պարտ են կռվել: Մենք տեսանք ովքեր են նվիրված գահին, ովքեր արժանի են պարսավանքի: Եւս մի պարագա, մի՛ մոռացիր, որ Սանեսանը մեր եղբայրն էր, նույնպես Արշակունի,- գլուխը կախեց:

Հակասական էին արքայի ասածները, բռնկումը, զայրույթը: Տիրանը խղճաց հորը, դուրս նայեց, խոշոր փաթիլներով ձյուն էր գալիս: Ինչ որ մեղմություն կար, հանգստություն: Բնությունը հուշերի էր տրամադրում: Նստես այս պահին խարույկի մոտ, փայտ ավելացնես կրակին, նայես երկնքին, թաղվես հուշերի հորձանուտը, հիշես, հիշես...

Արքան ձեռքը դրեց որդու ուսին, թերեւս այդ շարժումից դեմքը կծկվեց, ձեռքով բռնեց կուրծքը: Սիրտը ծակում էր: Որդու դեմքին խղճահարություն տեսավ, կատաղեց:

- Ու՞մ ես խղճում, մե՞զ: Ախր դուք եք խղճահարության արժանի... Մենք ամեն բան գիտենք, գիտենք նաեւ քո անառակությունը...

- Արքա՛...

- Սպասի՛ր,- որդուն սաստեց արքան,- նաեւ քո մոր մասին: Գիտենք ձեր վարքն ու բարքը: Գիտենք, թե այսօրվանից ի՞նչ ես խորհում երկրի մասին, մեզ պես չպիտի կառավարես երկիրը, պիտի սեղմես հոգեւորներին, անկախ ես ուզում ապրել: Դե՛, փորձի՛ր, կտեսնես, ինչպես են քեզանից հեռանում նախարարները՝ ամենահավատարիմները, քանզի ամեն ոք սեփական շահն է փնտրում պետություն կոչվող այս ախոռում: Իսկ մենք այն որպես պետություն ենք պահում եւ ապահովում ենք

խաղաղությունը, ահա արքայի գերագույն նպատակը: Մենք բերդեր ենք կառուցում, եկեղեցիներ, քաղաք ու անտառներ: Եվ այդ ամենն անելիս խաղում ենք լարի վրա: Հասկացի՞ր, լարախաղացին զենք պետք չէ, նրան բավական է հավասարակշռության ձողը: Ա՛յ, վերցնենք մորդ ու Բակուրին, կարծում ես չե՞նք կարող երկուսին էլ կապել տալ կատաղի նժույգների պոչերից ու գլուխները ցրիվ տալ քարերին, սակայն դա հղի է վտանգներով: Շապուհը դրան է սպասում... Հասկացա՞ր վիճակս,- հոգնեց խոսելուց, նստեց գահին: Ձեռքը սեղմեց կրծքին, վերջերս հաճախակի էին կրկնվում ծակոցները: Թերեւս այսքան բան իմանաք ու պահել իր մեջ, դիմանալ, չէ, մարդու սիրտն էլ երկաթից չէ:

Տիրանը զարմացած նայում էր հորը: Հասկացել էր, ինքը չէր կարող այդքան բան իմանալ, մի կողմ կնետեր երկրի շահն ու կպատժեր մեղավորներին, իսկ հետեւանքները կլինեին սարսափելի...

- Ի՞նչ է լինելու սրա վերջը, դարձյալ լսելու ես վեհափառին,- Տիրանը ուզեց փոխել խոսակցության նյութը, խղճաց հորը, սակայն այս հարցն էլ դյուրիններից չէր:

- Սպասի՞ր, տիրան, վեհափառը խորագետ այր է: Նա ամեն բան գիտե, հասկանում է... Վեհափառը շատ ծեր է, շուտով կկնքի մահականացուն, մենք հնար կունենանք հզորացնելու աշխարհիկ իշխանությունը, իսկ եթե,- ձեռքը սեղմեց կրծքին,- մեզ չհաջողվի, դու կանես: Դժվար գործ է, սակայն հնարավոր:

Տիրանը կախեց գլուխը, սկսեց խաղալ սրի երախակալի հետ: Արքան այդպես էլ չասաց որդուն կանչելու պատճառը: Նա գոհ էր, որդու հայացքում հարգանք էր տեսել...

Շապուհը ետ նայեց, թիկնապահները չէին երեւում, ետ էին մնացել: Նայեց դիմացի լանջին, տեսավ եղնիկին, կանգ էր առել շունչ առնելու համար, նորից վազեց: Շապուհը աշտանակեց նժույգը, սլացավ: Կամաց-կամաց սկսեց մոտենալ եղնիկին: Կենդանու հետևամասի սպիտակ մորթին պարզ երեւում էր, արքայից արքան կարող էր նետ արձակել: Հանկարծ վճռեց կենդանուն բռնել օդապարանով: Այս պարագան կապեց շատ ու շատ բաների հետ, նաեւ երկրի բախտի հետ: Թվաց, թե եղնիկ չէ, կայսրն է ճողոպրում: Ահա նժույգը անցավ թփուտի միջով, արագացրեց սլացքը: Շապուհը վստահ էր, գիտեր նժույգի ուժերը, շատ ու շատ անգամներ նժույգը փրկել էր մարտում, որսի ժամանակ: Վիշապը նրա համար մի ամբողջ աշխարհ արժեք: Նժույգը առանց սանձի ու մտրակի հասկանում էր տիրոջը: Նա շատ էր սիրում Վիշապին, անգամ այդ սիրուն նախանձում էր տիկնանց տիկինը:

Շապուհը համարվում էր անզուգական հեծյալ: Ամեն օր երկար վազք էր կատարում նժույգով, նպատակը երիտասարդ մնալն էր: Նպատակը շատ ցանկալի էր, սակայն նաեւ դժվար:

- Վիշա՛պ, հասի՞ր,- գոռաց Շապուհը, ծանրությունը տեղափոխեց առաջ, կռացավ նժույգի բաշին: Նժույգը ավելի արագացրեց առանց այն էլ խելահեղ գազքը: Շապուհը թամբի կեռից արձակեց օդապարանը: Օդը շառաչեց պարանի օդակի ցնցումից, պարանը փաթաթվեց եղնիկի վզին: Շապուհը սեղմեց ծնկները, նժույգը սմբակներով գիրտ կտրեց հողը, մեխվեց տեղում, միայն շատ հմուտ հեծյալը կարող էր դիմանալ այդպիսի ցնցման, մնալ թամբին: Ական չթթափած՝ պարանը ձգվեց, եղնիկը սարսափելի հարվածից ցնցվեց, ասես պատի զարկվեց, շրմփաց գետնին:

«Կայսրը լինե՞ր, մի զարկով վերջ կտայի: Խորհեց Շապուհը, դուրս քաշեց դաշույնը: Եղնիկը թփրտաց նրա ծնկի տակ: Որքան կենդանին թփրտում էր, այնքան որսորդը կորցնում էր հետաքրքրությունը որսի հանդեպ: Տեղ հասան թիկնապահները, նրանց հետ էլ հազարապետը:

- Եղնիկը պալատ տարեք,- քրթմնջաց Շապուհը:

- Թող Մազդանն հավերժացնի բազկիդ ուժը, տեր իմ,- խոսեց հազարապետը,- եղնիկը շատ արագավազ կենդանի է, միայն քեզ պես հեծյալը կարող էր հասնել: Թող երբեք նժույգիդ սմբակը քարի չառնի, թող քո... լռեց, տեսնելով արքայից արքայի հեզնական հայացքը:

Շապուհը դաստառնակով սրբեց նժույգի կուրծքը, ցույց տվեց հազարապետին: Դաստառնակը չոր էր:

- Այսքան փարսախ սլանալուց հետո, ոչ մի կաթիլ քրտինք: Այ, թե ինչպիսին պիտի լինի մարտական նժույգը:

- Այո՞, տեր իմ, աննման նժույգ է: Սրա մայրը բերվել է Դանուբի ափերից, հայրը՝ Մեծ Հայքից: Նա քեզ հավատարիմ է ծառայում...

- Ափսոս, հազարապետներս այդքան հավատարմություն չունեն... Հա, խոսեցիր արմենների երկրի մասին,- նստեց գորգին, որ փռել էին տեղ հասած ծառաները,- դու դեռ ձմռանը կրկնում էիր, իբրեւ բղեշխը պատրաստ է ապստամբելու: Ի՞նչ եղավ, ինչու՞ է ձգձգվում այդքան:

Արքայից արքան կանգ էր առել անտառի բացատում: Այն կիսելով, խոխոջալով առվակ էր հոսում: Շապուհը թիկն տվեց բարձերին, նայեց ջրերին: Ջրերը առվակի պռնկի մոտ, զարնվելով քարին, փոքրիկ ջրվեժ էին կազմել: Շապուհը ձեռքը մտցրեց ջրի մեջ: Հաճելի էր ջրի սառնությունը: Բանդեց

կապայի օձիքը, թաց ձեռքը մտցրեց ծոցը, շփեց քրտնած կուրծքը:

«Ամեն բան լավ է, բանակը պատրաստ է արշավի: Օ՛Ֆ,- տևքաց, հիշել էր Մծբինը, տրամադրությունն ընկավ,- ինչ լավ էր արշավելիս, մոռացել էի Մծբինի դաշնադրությունը: Օ՛, Մազդաո, էլ համբերանք չմնաց: Չենք կարող չսկսել, չենք էլ կարող սպասել: Կայսրը կասի, որ դրժել եմ աղով կնքաց երդումը, թքած աղի վրա էլ, կայսրի վրա էլ: Կյանքում միայն ուժն է արդար: Այլևս ինչ սպասել, բանակը անշարժացել է, զինվորները ճարպակալում են, զսբաղվում են թալանով, պոռնկությամբ: Հարկ է նոր հարկեր գանձել, պատերազմ սկսել: Կայսրը քնած է կարծում արյաց ամյուծներին,- նորից ձեռքը թռչեց, մտցրեց ծոցը, սառնությունը հաճելի էր,- չէ, հարկերը պետք է ավելացնել: Երբ մարդ հաց է ունենում, գլուխը հագար ու մի հիմարություն է մտցնում: Նախնայաց իմաստուն խոսքն է, միայն քաղցած մարդն է խաղաղ ապրում...»:

Նայեց հազարապետին, ձեռքները կրծքին ծալած, կանգնել էր ստրկամիտ ժպիտը դեմքին: «Սա էլ իրեն իմաստուն է կարծում, սակայն անշուշտ խորամանկ է: Հիմարի գլուխ, ամեն քայլը գիտեմ, թե որքան կաշառք է վերցնում, անգամ որդուց է կաշառք վերցրել, թու՛, ոսկեպաշտ ծերուկ: Նոր հողեր է ավելացրել ունեցածներին: Ահրիմանի գավակ... այսօր, այս էլ քանի անգամ հիշեցի Ահրիմանին, ասել է թե գործերս լավ չեն, քանզի Ահրիմանը մարդկանց լավ գործերի չի տրամադրում... Թող մեր գաղտնադեսպանը հրաման տանի մեզանից բղջիխին, երբ ապստամբեց, գորքեր կմտցնեմ Արմենիա»: Ուզեց խղճալ ծեր հազարապետին, իսկ ծերանալը նրա մոտ կամովին թուլանալու նշան էր... Ո՛չ, դեռ գործել է Պարսկաստանի փառքը՝ Շապուհ արքան: Նա իր հզոր ձեռքով վանում է ծերությունը, հռչում է գլորվող, անվերադարձ հեռացող տարիների վրա, չի ցանկանում ծերանալ ու չի ծերանում Շապուհ արքայից արքան:

Նրա հայացքում աստիճանաբար արհամարհանք ծնվեց:

«Չէ՛, նոր հազարապետ է պետք, սա իրեն սպառել է, հարկ է երիտասարդ մարդ կարգել ոսկու սով ունենա մեջը: Մարդ պիտի քաղցած լինի, սթափ խորհելու համար:

Բարձրացավ տեղից, ծնկները շփելով մոտեցավ առվի քարքարոտ մասին: Կռացավ, ափով ջուր վերցրեց, ցողեց դեմքը: Ծառան գալիս էր հետևից, դաստառնակը մեկնեց նրան: Շապուհը սրբեց դեմքը, չորացրեց մորուքը: Չոր դաստառնակը հաճելիորեն գրգռեց դեմքը:

- Հազարապետ, մի տաս օրից բանակը կշարժես Ամիդ, բերդաքաղաքը կառնեք գրոհով:

- Տեր իմ, Մծբինը...

- Լռի՛ր, ավանան՛կ, բա՛վ է, չկա Մծբինը: Երանը պիտի տիրի աշխարհին: Գաղտնադեսպան ուղարկիր Բակուրին, թող սկսի, նաեւ Դատաբեին, առաջինը Բակուրին...

Ի՞նչ ճիչ էր, ո՞վ սպանեց լռությունը... Թերեւս վատ բան չէր կատարվել, չէ որ պատահում է մարդ երագում ճչում է, սակայն այս ճիչը ցավ էր, տանջանք...

Սուկրատը մի կողմ նետեց վերմակը, տեսավ, ինչպես որդին՝ Գեղամը, կացինը ձեռքին դուրս թռավ տանից: Շապկանց հետևեց որդուն:

Լուսնի լույսով տեսավ, երեք սովեր պոկվեցին Նազենիկի տանից, ինչպես որդին կտրեց նրանց ճանապարհը: Լուսնի դժգույն սկավառակի վրա սուր շողաց՝ որդին ընկավ փողոցում, վրնջացին Նժույզները:

- Գեղամ, որդի, քեզ ի՞նչ եղավ,- սա տնքալով ելավ, ձեռքով սեղմել էր ուսի վերքը:

- Բան չկա, այ հեր, Նազենի ձենն էր, արի՛:

Սուկրատը հասավ որդուն: Նրա հետ տուն մտան Եսթերը, հարսները, հարեւան Վահանը: Այն, ինչ տեսան, կարող էր սարսափեցնել ամենաքարսիրտ մարդուն անգամ: Երեք դիակ ընկած էին հատակին:

Նազենիկը գրկել էր որդուն, ցանկացել էր պաշտպանել, սակայն մարդասպանները երեխային էլ չէին ինայել: Գոհարը ընկած էր մահճակալի մոտ, գլուխը ջախջախված էր: Պատերին արյան հետքեր կային, սակայն դա Նազենիկի արյունը չէր, քանզի նա զարկված էր թիկունքից, հագուստը թաց էր, արյունը չէր կարող ցայտել պատերին: Հավանական է Նազենիկը վիրավորել էր մարդասպաններից որեւէ մեկին: Նա պաշտպանել էր իրեն ու որդուն, սակայն ի՞նչ կարող էր անել մարդասպանների դեմ:

Կանայք ցանկացան երեխային վերցնել մոր գրկից, չկարողացան: Նազենիկը հոգեւարքի մեջ որդուն սեղմել էր կրծքին: Կանայք նորից ողբացին: Վերջապես այրմարդկանց օգնությամբ երեխայի դիակը անջատեցին մորից: Նազենիկի ձեռքը բացվեց, շրմփաց հատակին: Երեխային, հավանական է, զարկել էին մկունդով: Նազենիկին դաշունահար էին արել:

- Վա՛յ, իմ խեղճ որբեր, վա՛յ, աչքերս կուրանան,- ողբում էր Եսթեր մայրիկը,- վա՛յ աշխարհ, ի՞նչ էին արել խեղճերը...

Կանայք ողբում էին, այրմարդիկ քարացել էին, մռայլվել:

- Վա՛յ մեզ, զրկվեցինք մեր Նազենիկից, ափսո՛ս, հեռացան մեր հայ աստվածները, հետներն էլ

տարան արալեզներին... Է՛, մենք ենք մեղավոր...

- Մոռացանք մեր աստվածներին, անպաշտպան մնացինք...

Առավոտյան պալատից պաշտոնյա եկավ: Նայեց, քրթմնջաց, նա էլ չդիմացավ, գլուխը կախեց:

- Մայր ու որդի... աղախինն էլ հետները, չեն էլ թալանել...

- Մենք կթաղենք, մեր հարազատներն են,- ասաց Սոկրատը:

Պալատականը ինչ-որ բան քրթմնջաց քթի տակ, մրից միայն գահաժառանգ բռն լսեցին: Մոռացել էին նրան: Ախր Նազենիկի ամուսինն է, երեխայի հայրը:

Արտաշատցիները բակ լցվեցին, գալիս էին մեծ ու փոքր, գալիս էին լաց լինում, անիծում էին մարդասպաններին:

- Մնացինք առանց Նազենիկի, առանց մեր քրոջ,- տևքում էին արտաշատցիները,- մնացինք առանց գեղեցկության, մնացինք մենք ու մեր անուրախ կյանքը, սակայն ո՞վ է սպանել, ախր ու՞մ էին վատություն արել:

Ամեն ոք մեղավոր էր փնտրում, հայացքները հառում էին պալատին, այնտեղից օգնություն էին սպասում, բակ մտավ գահաժառանգը:

Տիրանը գալիս էր գլուխը կախ: Ճակատին մի փունջ սպիտակ մազ էր կախվել, թերեւս միայն այսօր սպիտակած: Գալիս էր վերջին հրաժեշտի, սակայն գալիս էր որպես մեղավոր՝ Նազենիկի ամուսինը, երեխայի հայրը, այդ անմեղ, այդ մեղավոր մարդը...

Տիրանը նայեց Նազենիկին, կինը չէր փոխվել: Աչքն ընկավ որդուն, դեմքը ծածկել էին սեւ շղարշով: Տիրանը կամաց, շատ կամաց բարձրացրեց շղարշը: Երեխան անճանաչելի էր դարձել: Հայրը տնքաց, երերաց: Թռռնանը ուսով պահեց նրան:

- Ո՞վ կարող էր այսպիսի հրեշավոր միտք հղանալ: Ինչու՞ սպանեցին անմեղ կնոջս ու որդուս, ինչու՞,- հարցն ուղղված էր Համասին: Սա մռայլ հայացքը երկինք էր ուղղել,- ասա՛, - Համասին ցնցեց Տիրանը,- ասա, ամենագետ մարդ: Ես ի վիճակի չեմ խորհել:

- Տեր իմ, հարվածը քեզ է ուղղված, ոչ այս անմեղ կնոջն ու երեխային: Ներող եղիր, տեր իմ, քեզ են վախեցնում:

- Այո՛, այո՛, սակայն ինչու՞ չեմ խելագարվում, ինչու՞ չեմ սպանում ինձ,- նայեց հավաքվածներին:

Այստեղ էին Սոկրատը, Էսթերը, Գեղամը, Թռռնանը, Համասը: Հովհաննես քահանան քաշվել էր մի անկյուն, ապշահար նայում էր գահաժառանգին, որի մասին ասում են, իբրեւ հեթանոս է, հապա ինչու՞ արալեզներ չի բերում, ինչու՞ չի կենդանացնում կնոջն ու որդուն:

- Վրեժն է մտում, տեր իմ,- Համասն էր:

- Այո՛, վրեժ ունեմ առնելու այս պիղծ աշխարհից,- հանկարծ զայրացավ,- հոգեւորների ձեռքի ետրձն է, ուզում են վախեցնել: Ի՞նչ են ուզում մեզանից, որ դադարենք սիրելուց, դադարենք մարդ լինելուց, որ հլու հնազանդ ոչխար դառնանք: Ո՛չ, հազար անգամ՝ ոչ: Ես ձեզ այնպես թափ տամ, մոռանաք ձեր քրիստոսին, դատաստանի օրը բերեմ:

Մտեցավ Նազենիկին, համբուրեց ճակատը, պարանոցից հանեց հուռուքն ու կախեց իր պարանոցից:

- Տեր իմ, Նազենիկը սրանով է պաշտպանվել, վնասել է մարդասպաններից մեկին, թե երկուսին, տեսեք պատերին արյուն է ցայտել,- Սոկրատը Տիրանին մեկնեց քրմապետական խորհրդանշանով դաշույնը:

Տիրանը ցնցվեց, սենյակը պտտվեց նրա առաջ...

... Նազենիկը երեխային գրկած, փախչում է սենյակի անկյունից անկյուն, միաժամանակ պաշտպանվում էր, մարդասպաններին մոտ չէր թողնում, թափահարում էր դաշույնը: Նրա ձայնը նվաղել էր, օգնություն էր կանչում, սակայն ձայնը դուրս չէր գալիս, ոչ ոք չէր լսում նրան, անգամ աստված էր խլացել:

- Ինձ սպանեք, երեխին ձեռք մի՛ տվեք: Ախր ի՞նչ ենք արել ձեզ,- աղերսում էր կինը,- երեխային ինչայեք, հո գազա՞ն չեք:

Մեկը ձեռքը մեկնեց երեխային, Նազենիկը դաշույնով զարկեց նրա ձեռքին:

- Չմոտենաք, պիղծ շներ,- իրենից ելած, գոռաց, երեխային ձեռք չտաք,- երկրորդ մարդասպանը վերք ստացավ, սակայն հասցրեց բռունցքով զարկել Նազենիկին, սա մի կողմ շարտվեց, գլուխը զարկեց պատին, երեխան ընկավ ձեռքից: Թերեւս ուշքի չգար, եթե երեխան լաց չլիներ: Ուշքի եկավ, գրկեց երեխային: Մարդասպաններից մեկը մկունդով զարկեց Տիրանիկի գլխին: Նազենիկը ճչաց: Դա առաջին ճիչն էր, որ լսեցին Սոկրատենց տանը:

- Շուն,- գոռաց Նազենիկը ու զարկեց երեխային սպանողին: Այդ պահին լսվեց երկրորդ ճիչը: Մարդասպանների գլխավորը, որ գլխին կնգուղ էր քաշել, Նազենիկին զարկեց թիկունքից, ձախ թիակի տակ:

Սա երկրորդ ճիչն էր՝ վերջինը:

- Արա՛գ, թագանելու բան չկա: Ես լրբի ձայնից մարդիկ կարթնանան: Անշնորհքներ, մի կին զարկել չեք կարող...

...- Ի՞նչ տեսար, ի՞նչ մարդիկ էին,- Տիրանը մոտ կանչեց Գեղամին,- լսեցի՞ր գոնե մի խոսք:

- Դեմքերը չտեսա, կնգուղներով էին: Մենակ նրանցից մեկը, ոնց որ թե,- Տիրանը բռնեց Գեղամի ձեռքը:

- Գեղամ, հիշի՞ր, ես վրեժ ունեմ, հիշի՞ր:

- Տեր ի, բակից դուրս գալուց, երբ բաժանվում էին, մեկն ասաց. «Վաղը Տափերականի գիներտանը», էլ բան չեմ լսել:

- Տե՛ր իմ, Տափերականի գիներտանն էլ կբռնենք մարդասպաններին: Հարկ է գնալ ծայտյալ,- ասաց Համասը:

- Այո՛, այո՛,- քրթմնջաց Տիրանը:

Մյուս օրը Նազենիկի ու Տիգրանիկի թաղումն էր: Ողջ Արտաշատն էր եկել վերջին հրաժեշտի: Տիրանը ասես երազի մեջ լիներ: Նորից աչքի առաջ հառնել էր իրենց համատեղ կյանքը, ասես աստվածները ետ էին տվել կյանքի անիվը: Ահա, ինքը նստած է Երեւմուկքում, սպասում է, ձանձրանում: Ահա Նազենիկը մտնում է խաղարան, նրա դիմակը այնքան վարպետորեն է պատրաստված, որ ամեն ոք ճանաչում է Նազենիկին: Հարկ չկա Նազենիկին կոթուրներ հագնել, նա բարձրահասակ է: Ահա ինքը խելքը թռցրած գնում է Նազենիկի տուն: Իրեն տեսնում է աթոռակին նստած, ինչ-որ բան է խոսում պատանու պես, ահա անդրանիկ համբույրը, խելահեղ ու երազելի գիշերները, ահա որդու ծնունդը... Այդ ամենը տեսնում է, նայելով Նազենիկի դեմքին: Կինը բնավ չի փոխվել: Մի փունջ մազ սահել է հերակալի տակից, իջել է այտին: Բարձր ճակատին ոչ մի խորշում չկ: Անգամ մահը ի գորու չի եղել եղծել նրա գեղեցկությունը:

Տիրանը փախցնում է դեմքը, չի կարողանում նայել որդուն, դեմքը ծածկված է սեւ շղարշով:

«Երեկոյան կիմանամ մարդասպանի անունը, վա՛յ մեղավորին...»:

Խոհերով տարված, այդպես էլ չնկատեց, ինչպես ավարտվեց թաղումը: Ուշքն ու միտքը այնտեղ էր՝ Տափերականի գիներտանը: Այնտեղ է թաքնված սպանության գաղտնիքը:

- Տե՛ր իմ, մարդիկ ասում են, որ Նազենիկը Վիշապ քաղաքի քրմապետ Արձանի թոռնուհին է,- Տիրանը քաշեց սանձը,- տեր իմ, մոտենում ենք, տղաներին վաղուց եմ ուղարկել գիներտուն...

Նազենիկի ու որդու սպանությունը հանկարածկիի բերեցին կաթողիկոսին, իրեն մեղավոր էր համարում: Շատ բան կտար, միայն թե չլիներ իր ու Կոռնակի միջեւ վերջին խոսակցությունը:

Գահասրահում նրանից ու Աղբիանոսից գատ երկու եպիսկոպոսներ կային, սրանք խանգարում էին նրա ու Աղբիանոսի միջեւ կայանալիք խոսակցությունը: Եպիսկոպոսները եկել էին իրենց թեմերից, պատրաստվում էին վերադառնալ իրենց նստավայրերը: Երբ սպանության լուրը ստացվեց, ամենքն էլ ցնցվեցին: Լուրը արագորեն տարածվեց երկրում: Ստույգ է, դեռ չէին խոսում մեղավորների մասին, սակայն կասեն՝ ու՞մ է ձեռնտու...

- Դժոխաց ծնունդներ, ինչպե՞ս հանդգնեցին ձեռք բարձրացնել այդ կնոջ ու երեխայի վրա: Պատժել է պետք, վեհափառ, եւ այնպես սաստկագին, որ դաս դառնա ամենքի համար, նաեւ կռապաշտների...- Եպիսկոպոսը ցնցվեց իր իսկ խոսքերից, իր ծերունական գլխում «լուսավոր» միտք ծնվեց, ելքը գտավ:

Նրա դեմքի արտահայտությանը նայելով՝ կաթողիկոսը հետաքրքրվեց:

- Սրբազան, բա՞ն ունես ասելու:

- Այո՛, վեհափառ: Այդ ամենը կռապաշտների գործն է, հարկավ, լսել ես, այդ կինը Վիշապ քաղաքի քրմապետի՝ Արձանի թոռնուհին է, Դեմետրի դուստրը...

- Հետո՞, - աղոտ կռահելով եպիսկոպոսի խոհերը, հարցրեց կաթողիկոսը:

- Նազենիկին ու երեխային սպանել են կռապաշտայները, որպեսզի մեղադրեն գահաժառանգին այդ կնոջը դժբախտացնելու համար: Ահա որտեղից է գալիս չարիքը:

Կաթողիկոսը զարմացավ ոչ թե ընկերոջ մտքի ճկունության, այլ անամոթության վրա: Ինչ արած, այլ ելք չկա: Ամբոխի մեջ խոսում են այդ կնոջ բարձր ծագման մասին, ասել է թե այս ամենը կընդունեն հալած յուղի տեղ:

- Դուք, սրբազան հայրեր, վերադարձե՛ք ձեր թեմերը, տարածե՛ք Աստծո հավատքը: Աստծո բարեգթությունը պիտի լինի կռապաշտներին դարձի բերելու գլխավոր կվանը: Մեր գեները խոսքն է: Հանուն Հոր, Որդվո ու Հոգվույն սրբո: Ամեն:

Եպիսկոպոսներն առան կաթողիկոսի աչքը, դուրս գնացին զարմացած, մի փոքր էլ վիրավորված:

- Խոսի՛ր,- Աղբիանոսին դիմեց վեհափառը,- ի՞նչ հնար ես հուշում: Մի՞թե երկրում չեն լինի մարդիկ, մի՞թե չեն հասկանա սատանայական մտքերդ,- խաչակնքեց,- հարկ է գտնել Կոռնակին: Նա, թեկուզ ժամանակավոր, պիտի հեռանա Մեծ Հայքից, հակառակ պարագայում Տիրանը կքանդի կծիկը: Չմոռանանք, նա գլխին է դնելու Մեծ Հայքի թագը...

- Կոռնակին հարկ է կորցնել...

- Չհասկացա՛...

- Ողջ թե մեռած, նա պիտի հեռանա, տեր Աստված ասել է...

Կաթողիկոսը թափ տվեց ձեռքի փոքրիկ գանգը:

- Կոռնակին շտապով, գտե՛ք, մա՛րդ ուղերկեք:

Մինչ Կոռնակին փնտրում էին կաթողիկոսի մարդիկ, սա շտապում էր Տափերականի կամուրջ:

Երեկոն կամաց-կամաց իջնում էր Երասխի վրա: Սովերները երկարեցին: Կամրջի հսկայական սովերը, ասես երկրորդ կամուրջ լիներ, ընկած ջրերին: Լուսինը ամոթխած հարսի պես չէր համարձակվում գլուխը դուրս հանել ամպի տակից:

Կոռնակը անտրամադիր էր, հոգևած: Կյանքում առաջին անգամ անհանգստացած էր: Ոչ նրա համար, որ կին էր սպանել, խորհում էր, որ այս անգամ չի մարսելու արածը: Ինչ-որ վատ կանխազգացում ուներ, դառն սպասում: Խոհողեպով տարված՝ հասավ գինետուն, այն մի հարկանի, խարխված շինություն էր: Դրսից այնքան անշուք էր, որ ամեն մարդ չէր ցանկանա ներս մտնել, միայն դռան վրայի գինու սափորն էր ձգում մարդկանց: Գինետան տերը չէր անհանգստանում իր գինետան համբավի համար: Լինելով Տափերական կամրջից հետո առաջին գինետունը, այն առավելությունն ուներ, որ այստեղ հասած յուրաքանչյուր հեծյալ ցանկանում էր կերակրել նժույզն ու ինքն էլ մի գավաթ գինի խմել: Եթե գինետունը հին էր, ապա ախոռին կարող էր նախանձել անգամ արքայի ախոռապետը: Այստեղ կարելի էր հարյուր նժույզ պահել: Ախոռը նոր էր կառուցված, որի կողքին խոտի հսկա դեղեր կային ու էլի մի քանի շինություններ, բոլորն էլ քարից էին, նոր կառուցված: Մարդ զարմանում էր, այսքան հնարավորություն ունեցող մարդը ինչու՞ նոր գինետուն չի կառուցում, սակայն գինետան տիրոջը ճանաչողները այդ հարցը չէին տալիս, քանզի գիտեին գինետան տեր Վռամին, որպես ինքնասածի ու խենթ մարդու: Նա բնավ նման չէր մյուս գինետան տերերին, որոնք մնացած մարդկանցից տարբերվում են պարարտ փորով, կրկնակի կզակով, գինու հոտով: Վռամը բարձրահասակ մարդ է, գանգուր մազ ու մորուքով: Աչքերը ծաղրական են, հեգնոտ, նաեւ կատաղի, երբ հարկ է լինում գինետանից դուրս նետելու որեւէ հարբածի: Նա ամուսնացած չէ, հայտնի չէ՝ եղե՞լ է: Ավելին կզարմանաս, երբ ուշադիր նայես չորս կողմը: Այստեղ ոչ մի կին չկա: Վռամը խուսափում է կին հաճախորդ ընդունելուց: Փսփսում են՝ կինը դավաճանել է նրան ինչ-որ ազատի հետ: Նա էլ երկուսին իրար կապած անդունդն է նետել, սակայն ո՞վ կհաստատի կամ ո՞վ կհերքի:

Վռամը ծանր բռունցքներ ունի, ստիպում է հարգել իրեն: Կամ մի հանգամանք, գինիները անարատ են, դա է պարզերես անում Վռամին, ուտելիքը համեղ է: Թե գիշերելու տեղ ուզես, կճամվի: Նա մի քանի փոքր սենյակներ ունի: Մարդ կարող է հանգիստ առնել մաքուր փսիաթների վրա, սենյակների հատակը կավով հարթեցված է: Այստեղ ամեն բան կոպիտ է, ամուր, հաստատուն: Գինետանը բազմազան կերակուրները չկան, միայն խորոված ու եփած միս: Վռամի խոհարարը այրմարդ է, ուրիշ կերակուրներ եփելու հետ գլուխ չունի: Վռամը գնի համար չի սակարկում, թերեւս դա է պատճառը, որ ավելի են վճարում եւ դա անում են առանց ափսոսալու: Եթե դրամ չունես, ձեռքը թափ կտա, իբրև՝ կտաս, երբ ունենաս: Դու էլ ամբողջ կյանքում հիշում ես նրան, պարտքդ էլ ժամանակին բերում ես: Դրանից հետո Վռամին մտերիմ մարդ ես համարում: Չարմանալի հիշողություն ունի Վռամը, մարդուն մի անգամ որ տեսավ, երբեք չի մոռանա, թե անունը, թե դեմքը:

Կոռնակը իր մարդկանց հաճախ է էստեղ հավաքում: Նրա ու Վռամի միջեւ զարմանալի դաշինք կա: Վռամը չի հետաքրքրվում նրանց գործերով, թույլ էլ չի տալիս էստեղ իրենց տեր ու տնօրեն համարեն: Մի անգամ երեքին ծեծեց, սրանք երդեցին տունն ու խոտի դեզերը այրել: Վռամը իմացել էր ու տեղում բռնելով մի լավ շարդ տվել: Կոռնակը այդ դեպքից հետո արգելեց Վռամին ձեռք տալ:

Կոռնակը նժույզը կապեց գերանի կեռից, մի հայացքով զննեց բակը: Այս երեկո բակում մեծ թվով նժույզներ կային՝ մարտական կենդանիներ: Դա զարմացրեց նրան: Հանգստացավ, երբ տեսավ Բարդուղի կապուտակ նժույզը:

- Եկել են,- քրթմնջաց, ներս մտավ: Զգիտես ինչու հոգում կասկած ծնվեց: Նայեց գինետան կիսախավարի մեջ, հագիվ ճանաչեց Վռամին: Սա գինի էր լցնում հաստափոր սափորի մեջ: Բարդուղն ու Դավիթը նստել էին անկյունի սեղանի մոտ: Սրանք ոտքի ելան, համբուրեցին նրա աջը:

- Օրհնի՛ր, տե՛ր հայր,- մոմաջրեց Բարդուղը,- վատ հոտ եմ առնում, Կոռնակ: Եթե քեզ չսասեինք, վաղուց ճղել էինք արանքը...

- Աստված օրհնի, որդյակ,- խաչակնքեց Կոռնակը, նստեց սեղանի առաջ:

Դավիթը գինի լցրեց նրա համար: Կոռնակը մոմի տեղը փոխեց, լույսն ընկավ թիկունքին, արդ, հանգիստ կնայի մարդկանց, որոնք վախեցրել էին Բարդուղի պես թոկից փախածին: Նրան զարմացնում էր այն հանգամանքը, որ այս երեկո ցնցոտիավորներ չկային, ամենքն էլ հագած-կապած մարդիկ էին: Նրանցից մի սեղան հեռու, թիկունքով Կոռնակին դարձած, նստել էր միջահասակ, լայնալանջ մարդ, որին մնացածները հարգանքով էին վարվում: Մարդը նստել էր հանգիստ, սակայն Կոռնակի փորձված աչքը ինչ-որ անհանգստություն զգաց: Մարդու թիկունքն անգամ նրան լարված թվաց: Նայեց երկու հարբածների, որոնք իր ներս մտնելուց տեղերը փոխեցին, նստեցին դռների մոտ, ասես փակեցին դուռը: Ավելի զարմացավ, երբ Վռամը չվնդեց նրանց, չէր էլ կարող, երկուսն էլ հսկաներ էին:

Այս երեկո գինետանը չկար այն սովորական աղմուկը, որ լինում է այս ժամերին, դա զարմացրեց Կոռնակին: «Դե, մարդիկ են, եկել են, խմում են,- խորհեց Կոռնակը,- իսկ ինչու՞ ոչ մեկը տեղից չի շարժվում, աղմուկ էլ չկա, ասես ամենքն էլ ենթարկվում են միջահասակին,- վճռեց պարզել միջահասակի ով լինելը,- ուզում են ինձ թալանել,- ծիծաղեց քթի տակ,- Էն լողլողին ինչ-որ տեղ տեսել եմ: Տես է, պետք է անցնել այն երկու հսկաների արանքով»,- հասկացավ, դրանք բնավ էլ հարբած չեն, այլ դուռն են փակել: Դարձավ ընկերներին:

- Ծուղա՛կ է, ձիերը թամբած են, բակում մարդ չկա: Ես կոմտենամ այն երկուսին, դուք զարկեք սեղանի մոտ նստածներին:

Ընկերները գլխով արեցին, երեւում էր նրանք էլ էին ձանձրացել սպասելուց: Գործելը ըպարզեր վիճակը:

Կոռնակը իրական վտանգ զգաց եւ այնպես շոշափելի, որ շունչը կտրվեց: Նա փորձված էր այս տեսակ գործերի մեջ, հասկացավ, իրենից ավելի փորձվածի ձեռքն է ընկել: Արդ, նրա հետ մուկ ու կատվի խաղ են խաղում: Վճռեց կռվել մինչեւ վերջ, սակայն ոսկին, դրա հնարն էլ գտավ: Քսակը կնետի Վռամի սեղանի տակ, հետո կվերցնի: Նայեց ներսի դռանը, այն դեռ չեն փակել, սակայն այն երեքն էլ ական չթոթափած կփակեն ճամփան: Չէ՛, փորձված մարդիկ են, լավ են գործը բռնել:

Եթե Կոռնակն իմանար, որ այստեղ գահաժառանգի մարդկանցից գատ մարդ չկար, կսարսափեր: Տիրանը սպասում էր Գեղամին, սա պիտի ճանաչեր գիշերային սրիկայի ձայնը:

Կոռնակը գավաթը ձեռքին մոտեցավ միջահասակին: Չգաց, ինչպես մեռելային լռություն իջավ: Նա սեփական սրտի զարկերը լսեց: «Ծուղակ է, սրանք ամենքն էլ ենթակա են միջահասակին»:

Կտրուկ շրջվեց, խոսքերն առաջին պահին սառեցին բերանում: Դառը քմծիծաղը դեմքին, նրան էր նայում գահաժառանգ Տիրանը:

- Խմե՛նք Աստծո կենաց թասը, ինչպես մեր սեփական արյունը,- ասաց ու գավաթը նետելով Յամասի դեմքին, նետվեց դեպի դուռը: Այն երկուսը, իհարկե, հարբած չէին, կտրեցին ճամփան, մեկին ուսով հրեց, սակայն սարսափելի հարվածից, ասես գլուխը ներսից պայթեց, չոքեց հատակին: Չգաց, ինչպես կապեցին ձեռքերը:

- Վե՛րջ, ոսկին կորավ,- ուշքի գալով, խորհեց,- հիմար, ի՞նչ ոսկի, կգլխատեն, իսկ ես ոսկու մասին եմ խորհում:

Դեմքին ջուր ցողեցին, ուշքի բերեցին: Տեսավ սեղանին դրված քսակը: Փախցրեց հայացքը, չկարողացավ նայել Տիրանի աչքերին:

«Ախր կարող է մի դուռ բացվել, ոչ ոք չի տեսել մեզ տանը, տղաները չեն մատնի, իրենք էլ կպատժվեն»:

Բարդուղին ու Դավիթին էլ էին կապկպել:

- Ո՞վ ես, ասա՛ անունդ,- լսեց Տիրանի ձայնը:

- Անունս Վարդան է, վանական եմ Թեղուտի վանքում: Բզնուհիքից եմ: Վանահայրը ուղարկեց վեհափառի մոտ...

- Նա՛ է, տե՛ր իմ,- համարյա ճչաց Գեղամը,- նա էր ասաց, որ էստեղ հանդիպեն:

Նա՛ է, տե՛ր իմ, նա զարկեց ինձ:

Կոռնակը գալարվեց պարանների մեջ:

- Ափսո՛ս, լակո՛տ, գլխիդ պիտի զարկեի,- տնքաց նա:

Կոռնակը որքան էլ կատաղած լիներ, չէր կարող չնկատել Տիրանի մռայլվելը, ինչպես ձեռքերը դողացին:

- Տե՛ր իմ, թող ասի ում հրամանով է սպանել... Տե՛ր իմ, սա Կոռնակն է, ազագակապետ քահանան: Սրա խղճի վրա շատ բաներ կան...

- Սպասի՛ր, Յամա՛ս, մի՛ շտապիր,- ասաց Տիրանը:

Նրա մարդիկ սեղ օղակով շրջապատել էին Կոռնակին: Բարդուղն ու Դավիթը ընկած էին մի քանի քայլի վրա, հատակին:

- Այն, որ սպանել ես կնոջս ու որդուս,- գերեզմանային լռության մեջ խոսեց Տիրանը,- ապացուցելու հարկ չկա: Դու պիտի ասես՝ ո՞վ է քեզ ուղարկել եւ ինչի՞ համար:

- Ես մարդ չեմ սպանել,- մռայլ ասաց Կոռնակը:

- րտեղի՞ց քեզ ոսկին:

- Կաթողիկոսը տվեց վանքի համար:

Կոռնակը զգաց սխալը, սակայն, ուշ էր: Յամասը ինչ-որ բան բարբառեց Տիրանի ականջին, սա գլխով արեց:

- Ժամանակ եմ տալիս, մինչեւ շնկանան շամփուրները,- մռայլ ասաց Տիրանը: Թիկունքով դարձավ Կոռնակին, սկսեց գինի խմել,- մոտ բերեց այն երկուսին:

Բարդուղին ու Դավիթին քարշ տալով, մոտեցրեցին նրան:

- Եթե դուք էլ ձեր պետի պես պիտի սուտ խոսեք, ավելի լավ է սկսենք շամփուրներից,- Բարդուղը ձեւի համար փորձեց հերքել իրենց մեղքը, սակայն Թոռնանի բռունցքն իջավ քունքին թե չէ, մեկեն

ամբեց:

- խոսի՛ր, շուն՛,- Համասը դաշույնը սեղմեց մարդասպանի կոկորդիս,- եւս մի սուտ՝ կմեռնես,-
ֆշշացրեց նա:

Տիրանը քարտուղարին երբեք այդպես կատաղած չէր տեսել: Բարդուղը ճչաց, դաշույնը քերծել էր
վիզը:

- Տե՛ր իմ, շամփուրները շիկացել են,- Կոռնակը ցնցվեց, նայեց Վռամին:

Շամփուրի կարիք չզգացվեց:

- Տեր իմ, մենք Կոռնակի հրամանով սպանեցինք Նազենիկին ու երեխային:

Կոռնակը խոստացավ այնքան ոսկի տալ...

- Հա՛, Բարդուղը ստույգ ասաց,- մեջ ընկավ Դավիթը, վախենալով, իրեն ասելու բան չմտա,
ընկերոջը կներեն, իսկ իրեն կգլխատեն:

- Ոսկին ո՞վ է տվել Կոռնակին:

- Կաթողիկո՛սը, Կոռնակն ասաց,- շտապով վրա բերեց Բարդուղը,- տեր իմ, ես զարկեցի նաժիշտին,
Դավիթը՝ երեխային: Կոռնակը սպանեց Նազենիկին,- շուտասելուկի պես վրա տվեց շնչարգել:

Տիրանը նայեց Թոռնանին:

- Ես երկուսին տարեք, գլխատեք,- հանգիստ ասաց Տիրանը,- ինձ մենակ թողեք Կոռնակի հետ:

Բարդուղն ու Դավիթն ընկան Տիրանի ոտքերը, զուր էր, թիկնապահները դուր տարան նրանց:

- ասա՛, ո՞վ է ուղարկել սպանելու կնոջս ու որդուս,- հարցրեց Տիրանը,- քեզ քիչ է մնացել: Չեմ
խաբի, ասես էլ կսպանեմ, չասես էլ: Գոնե մի անգամ մարդ եղիր, ասա ճշմարտությունը: Ոչինչ
չթաքցնես, միայն ճշմարտությունը:

- Կաթողիկո՛սը, տեր իմ:

- Սրիկա՛,- մռնչաց Տիրանը:

- Տե՛ր իմ, վեհափառը հրամայեց Նազենիկին ու որդուդ հեռացնել Մեծ Հայքից,- փրկության հույսը
կորցրած խոսեց Կոռնակը,- հավատա՛, տե՛ր իմ, իմ վիճակում սուտ չեն խոսում, ինձ փրկություն չկա,
սակայն լավ իմացիր՝ թշնամիդ վեհափառն ու Աղբիանոսն են: Նրանք պահանջեցին Նազենիկին
հեռացնել երկրից: Ես նժույզներ էի տարել, սակայն կինչ չհավատաց, հետո էլ նաժիշտը աղմուկ
բարձրացրեց, ստիպված էիք...

Կոռնակը այնքան հասարակ ասաց այս ամենը, որ Տիրանը սահմուկեց:

- Ես էլ եմ ազնիվ ծնվել: Շուտ գրկվեցի ծնողներից: Վանք տարան, քաղցած էի, հավանոցից երկու
ծու թոքրեցի, ծեծեցին, հազիվ կենդանի մնացի: Երբ առողջացա, սպանեցի վանահորն ու փախա: Այդ
օրվանից ձու եմ գողանում, ձու՛, ձու՛...

Տիրանը զարմացած նայեց Կոռնակին, սրա աչքերը չռվել էին, բերանից փրփուր էր թափվում:

- Հե՛յ, ո՞վ կա,- գոռաց Տիրանը: Ներս ընկան մի քանի հոգի,- գլխատեք: Երեքի գլուխներն էլ կզցեք
կաթողիկոսի դռանը,- Համասն ու Թոռնանը խոնարհվեցին:

- Ձու՛ եմ գողացել,- հռչում էր Կոռնակը,- ձու՛, ձու՛...

Այրարատ աշխարհին վիճակված չէր խաղաղվելու:

Նազենիկի ու որդու սպանությանը հաջորդեց Կոռնակի ու նրա մարդկանցից երկուսի
սպանությունը: Եթե այդ սպանությունը կապված չլիներ կաթողիկոսի անվան հետ, թերեւս չխոսեին,
սակայն այդ մարդկանց գլուխները գցել էին կաթողիկոսի ննջարանի դռանը:

Սկսեցին փսփոցները: Այդ երկու սպանությունները կապեցին իրար: Մեկը վրեժ էր լուծել Նազենիկի
ու որդու սպանության համար, ինչու՞ են գլուխները գցել կաթողիկոսի դռանը, ասել է թե՛ նա է
մեղավոր, քանզի Կոռնակը հոգեւոր էր, կաթողիկոսի մարդկանցից:

Այն, որ գահաժառանգն է գլխատել տվել այդ մարդկանց, անժխտելի համարեցին: Խոսեցին՝
Տիրանը Խոսրով չէ: Նա գիտե պատժել: Հանկարծ հիշում էին, երկրում արքա կա: Դե՛, արքան
զբաղված է անտառներով, քմծիծաղ էին տալիս: Նա ժամանակ չունի երկրի գործերով զբաղվելու:
Դառը հեզանք կար այդ խոսքերում:

Թագուհին փորձեց սփոփել որդուն, անօգուտ: Տիրանը մռայլ էր, կատաղած: Նրան այդ վիճակից
կարող էր հանել երկրի վրա կախված որեւէ արհավիրք: Ստույգ է, գահին Խոսրովն էր, սակայն Տիրանը
սկսել էր զբաղվել երկրի գործերով: Արքան Տիրանին գորական գործերով ուղարկեց Տարոն:

Կնոջ սպանությունից հետո Տիրանը խուսափում էր Սաթենիկից, Տիրանուշից: Դստեր վիճակը քանի
զնում, այնքան անտանելի էր դառնում: Այդ պատճառով Տիրանը հոր առաջարկը սիրով ընդունեց,
քանզի ճանապարհին ժամանակ կունենար խորհելու: Սպարապետի սրտաբաց ընդունելությունը մի
փոքր սփոփեց նրան, քանզի այստեղ անկեղծություն էր տեսնում: Սպարապետի կինը նրան ընդունեց
հարազատ մոր պես: Իշխանուհին միայն մի անգամ հիշեցրեց նրա վշտի մասին, ապա շրջապատեց
մայրական հոգատարությամբ, եթե չլիներ արքայի հրավերը, երկար ժամանակ կմնար Տարոնում:

Հալիլոցի հետ վերադարձավ Ոստան: Գարուն էր Հայոց աշխարհում: Այն բացվում էր խաղաղության սպասումով, հայի հոգուն այդքան հարագատ սպասումով: Ուրախացել էր նաեւ թագուհին, սակայն ոչ խաղաղության համար: Բակուրը պիտի ապստամբեր, անկախ հռչակեր Աղձնիքը: Այդ մասին նամակով հայտնել էր բղեշխը: Թագուհին չէր կարողանում մի տեղ հանգիստ նստել, այնպիսի անհամբերությամբ էր նայում ձյուններին, ասես հայացքով հիշում էր Բակուրին, նրա հետ անցկացրած գիշերները: Նրա բախտից Բակուրին շատ նման մի պատանի սեպուհ էր հայտնվել պալատում: Պատանին իր անփորձ սիրով սփոփում էր թագուհուն: Սեպուհին պահում էր գաղտնասենյակում, գիշերները գնում էր մոտը: Պատանին այդ կատաղի սիրուց, արեւի բացակայությունից դեղնել էր, իսկ թագուհին միտք չունեւ նրան բաց թողնել: Նա դեռ հագուրդ չէր տվել կրքերին, սիրո պահերին պատանուն Բակուր էր կոչում: Պատանին հասկացավ գոհ լինելու պարագան, կարող էր փախչել, սարսափելի բան կատարվեց՝ սիրեց թագուհուն, մնաց կամովին: Նա գիտեր, եթե ձանձրացներ թագուհուն, ապա այդ սենյակից դուրս չէր գա, թագուհին իրեն կթունավորեր: Անփորձ պատանին թագուհու կրքի տեսարանները սիրո տեղ էր ընդունում, սիրում էր թագուհուն, վախենում, ակնածում...

Արքայի հրավերը հանկարծակիի բերեց թագուհուն, չգնալ չէր կարող, ուստի հրամայեց.

- Գիսանե՛, հագցրե՛ք ինձ, զարդերս բերեք:

Որպես կին նա մեծ հաճույք էր զգում զարդարվելուց: Ցանկանում էր երիտասարդ մնալ: Նա բազմաթիվ այրեր էր ծանաչել, գիտեր նրանց բոցավառվելու խորունկ գաղտնիքները, այդ ամենը նրան սովորեցրել էին քրմուհիները: Արդ, այնպես զարդարվեց, այնպես ներկեց աչքերը, վարդագունեց այտերը: Նայեց հայելու մեջ, գոհ մնաց: Թագուհին իր սեւագիշեր աչքերից գիտեր հուր բաց թողնելու գաղտնիքները, արվեստ, որին հասնում են հասուն տարիքում, իսկ թագուհին հասել էր այդ տարիքին, մի բան էլ անցել, սակայն դեռ հեզաճկուն էր, նրբիրան, կարող էր ստիպել անգամ սեփական ամուսնուն դողալ, խելահեղ ձգտել իրեն:

Գեղեցիկ է հայոց թագուհին: Երկու ծանր հյուսքեր ընկել են բարձր կրծքերին, բարձրահասակ է, ճոճկան իրանով, նազելի քայլքով:

Թագուհին գոհ մնաց զարդերից: Ուղղեց թագի ճակատի մեծ նռնաքարը, բաց պարանոցից քարշ էր արել ծանր ոսկե շղթան, ակնակուռ խաչով, որին կնախանձեր յուրաքանչյուր քրիստոնյա թագուհի: Մատները ծածկված էին մատանիներով, դրանք ծանրագին էին, ոչ միայն ազուցված ադամանդներով, այլ նաեւ նրբագեղ աշխատանքով: Դրանք Մեծ Հայքի ու հարեւան երկրների հռչակավոր ոսկերիչների գործերն էին: Հնդստանից բերված մանյակ էր կրում, գինդերը Հռոմից էին: Կրծքի ձախ մասում, ոսկյա քորոցով փոքրիկ շղթա էր ամրացված, որից կախված էր մոր ընծան, մի մեծ սուտակ, իր մեծությամբ հազվագյուտ: Այն հավի ձվի մեծություն ուներ, ձեռքի մեջ խաղացնելուց հղկվել էր: Թագուհին սովորույթ ուներ խոսելիս խաղալ սուտակի հետ: Այն կոչվում էր «Սիրո քար»: Նորից նայեց հայելու մեջ, գոհ ժպտաց, ավելի ստույգ փորձեց ժպիտը:

- Ուղեկցե՛ք ինձ, - ասաց ու քայլեց գահասրահ: Նաժիշտները, նույնպես պճնված, հետեւեցին նրան: Նրանք թվով տասներկուսն էին, ամենքն էլ գեղանի կանայք ու աղջիկներ: Նրանց մեջ աչքի էր ընկնում Գիսանեն:

Այդ կինը ապրելով երկվության մեջ, միաժամանակ լինելով երկրի կյանքի հորձանուտում, առնչվելով գաղտնիքների, որոնց բացահայտման դեպքում մահ էր սպասում, ապրում էր մշտական վախը սրտում, սակայն կամային կին էր, կարողանում էր տիրապետել իրեն: զգում էր իր գերազանցությունը մնացածների նկատմամբ, իսկ հոգում սպասում կար, հատուցման սպասում: Կռռնակը նրան չէր մատնել, հակառակ դեպքում վաղուց ինքը սպանված կլիներ: Կռռնակը չկար, իմացած լուրերը չէր կարող հասցնել վեհափառին, դա հղի էր բացահայտմամբ, իսկ դա ստույգ մահ էր:

Գահասրահում արքան մենակ չէր: Թագուհին առավ վեհափառի աջը, նստեց արքայի կողքին դրված գահին:

- Ինչպե՞ս են թոռներս, որդիս՝ գահաժառանգը,- հարցրեց, բնավ չանհանգստանալով նրանց համար,- լուրեր ունե՞ս:

- Ո՛չ, տիրուհի,- հիանալով թագուհու շքեղ տեսքով, հազիվ արտաբերեց արքան,- կարոտել էր կնոջը: Թագուհին կանացի բնագործ զգաց դա ու մի թովիչ ժպիտով խրախուսեց արքայի՝ պահին ոչ վայել ցանկությունը:

- Գարուն է, հարկ է անտառները բնակեցնել գազաններով, ավարտել Դվինի կառուցման աշխատանքները,- ասաց արքան, մի բան ասած լինելու համար: Արարողապետը գեկուցեց, գահաժառանգը գալիս էր գահասրահ: Արքան ուրախացավ, համբուրեց որդու ճակատը, ուզեց շոյել այտը, սակայն հիշեց՝ Տիրանը պապ է: Աչքն ընկավ վահափառին, սա թթված տեսք ուներ: Արքան հիշեց, որ Տիրանը չառավ վեհափառի աջը, դա էր վիրավորել վեհափառին: Տիրանը հանգիստ էր, զուսպ: Նրա ճակատին հայտնված սպիտակ մազափունջը չէր կարող թաքցնել խոր խորշումը, որ գոյացել էր Նազենիկի ու որդու սպանությունից հետո, այդ խորշումը վախեցնում էր արքային:

«Մի՞թե Տիրանն է գլխատել կաթողիկոսի մարդկանց: Եթե այդպես է, վա՛յ Մեծ Հայքին: Տիրանը կվնասի Հուսիկին,- արքան համարյա կռահում էր մոտալուտ ապագան, միաժամանակ չէր կարող չնկատել Տիրանի մեջ հայտնված ծերունական իմաստությունը, տեսածի, ապրածի խոր հետքերը: Իրոք, ծերունու պես էր խորհում Տիրանը, ամեն բան կշռադատում էր, գործում նրբորեն, ցույց չէր տալիս հոգում կուտակված վիշտն ու վրեժը...»:

Իր հերթին Տիրանը թաղվել էր խոհերի մեջ: Կաթողիկոսի ներկայությունը խորացնում էր վիշտը, բորբոքում էր վրեժը:

«Վրեժը սուրբ է արիականաց համար... Սակայն վաղ է դեռ... Հայարիների առաքիլությունները մեր արյան մեջ են, իսկ նրանք ընդունում էին վրեժը, միայն թշնամուն հաղթելուց, ծնկի բերելուց, երբ առնում էին վրեժը, դրանից հետո կարող էին անգամ ներել... Հանկարծ հիշեց Տիրանուշին,- այս էլ քանի տարի է բեսաս՝ Հուսիկը, հեռացել է Տիրանուշից: Վանքից դուրս չի գալիս, իսկ որդիները մեծանում են: Լավ է, կարողացա նրանց հանել հոր դեմ, քանզի ցանկանում են զորական դառնալ: Հուսիկը ուզում էր անմեղ հոգիները աստծուն ընծայել... Տաժանելի ծանր է դատերս վիճակը, հարկ է, Հուսիկը վերադառնա կնոջ մոտ... Մի՞թե հայ աստվածները թույլ կտային այդպիսի հրեշավոր միտք, տե՛ր աստված, ի՞նչ հրեշավոր միտք ես հղացել Հուսիկի մոտ, միայն մի գիշեր մերձենալուց կնոջը, հեռանալ վանք: Մի՞թե սա է ձեր բարեգութ աստծո մեծությունը...- հոգոց հանեց, նայեց արքային,- հայրս կանչել է, սակայն չի խոսում, իր հերթին վեհափառն է լռում, թերեւս իրեն մեղավոր է զգում: Դու սպանել տվեցիր կնոջս ու որդուս: Երդվում եմ հայ աստվածներով, վրեժ կառնեմ քեզանից: Վրեժը սուրբ է, կառնեմ վրեժս...»:

Սպարապետը մռայլ էր, անհանգստացած: շապուհը մի գունդ էր մոտեցրել սահմանին: Նա զգում էր՝ երկրում ինչ-որ բան է կատարվում, որ դուրս է մնացել իր հսկողությունից. «Ահա քեզ քաղաք կառուցելու, անտառներ տնկելու արյունքը... Ախր ես ի՞նչ գործ ունեմ...»:

Երկու հեծյալ գնդեր ուղարկեց սահմանի վրա, հսկելու Շապուհի գնդին: Փեսաներն են գլխավորում այդ գնդերը: Ինքը մնաց եկեղեցու օժմանը մասնակցելու:

Արքան իր մեծագործության իրականացման ճանապարհին է, բնավ չանհանգստացավ, սակայն ետավ, որ սպարապետի ձեռք առնված միջոցները բավարար են սահմանի վրա հավասարակշռություն պահելու:

Ամեն ոք այստեղ իր հոգսերն ուներ, այսօրվա հոգսերը, վաղվա սպասումը:

... Հայկը, ընկերներով շրջապատված, քայլում էր թափորի հետեւից: Արքան մի օր առաջ պալատ էր հրավիրել, երկար-բարակ գրուցել էին: Արդ, Հայկը պիտի գլխավորի անտառները գազաններով ու երեններով բնակեցնելու գործը: Հարկավ, դժվար գործ է... Սակայն գլուխ կբերեն: Այդպես էլ Հայկը չկարողացավ Արտաշատից Դվին տեղափոխվել: Ստույգ է, ամիսներով տանը չի լինում, սակայն կա առուն, այն կապում է նրան ներկային ու ապագային հույս ներշնչում:

Թափորը մոտեցավ եկեղեցուն: Վեհափառը կարճ աղոթք մրմնջաց, մտան գավիթ: Բջերին հաջողվեց մտնել եկեղեցի: Հայկը բնավ չվիրավորեց, նա եկեղեցում անելիք չուներ:

Առընթերակա եպիսկոպոս Աղբիանոսը ջուր լցրեց կաթողիկոսի ձեռքերին: Սա կարդաց «լվացից սրբությանմբ» սաղմոսն ու ելավ սուրբ սեղան: Հոգեպարար շարական տարածվեց եկեղեցում, ապա այն դուրս հորդեց բակ: Կաթողիկոսը ձեռքերը երկինք կարկառեց.

- Օ՛, ամենատես արարիչ Աստված, այսօր տոն է Մեծ Հայքում: Այսօր մենք փառաբանում ենք քո մեծությունը, քո ամենատես աչքի առաջ օծում ենք Կաթողիկե եկեղեցի, հանուն հավատքի ու քո մեծության: Այսօր մենք մեկ անգամ էլ հաստատում ենք քո մեծությունը, քո զորությունը ընդդեմ կռապաշտների: Դու՛, Տե՛ր Աստված, մեզ ուրախություն պարգևեցիր...

Սպարապետը ուշադիր գնում էր Տիրանի դեմքը: Սա այնքան հանգիստ էր կանգնել, ասես, այս ամենն իրեն չէր վերաբերում: Դեմքը սառն էր, հանգիստ, սակայն սպարապետը խորագետ անձ էր: Նա Տիրանի խաղաղ պահվածքի տակ փոթորիկ էր տեսնում, դա վախեցնում էր նրան: Կցանկանար հաշտեցնել Տիրանին ու կաթողիկոսին: Տիրանը ոչնչով ցույց չէր տալիս իր դժգոհությունը, թեեւ պատճառներ ուներ, նախ կնոջ ու որդու սպանությունը, ապա Հուսիկի անհասկանալի ու ստոր արարքը՝ լքել կնոջը առաջին գիշերից հետո...

Արարողության մասնակիցներն ամենքն էլ իրենց խոհերի հետ էին, թեեւ ամենքի դեմքին էլ սրբազան երկյուղածություն կար... Անգամ այստեղ հարկադրված ես խորհել՝ ամենքն էլ խաղարկուներ են... Թագուհին իր հերթին այլ կերպ էր ընկալում այս ամենը: Նա խորհում էր, ինքն ու Բակուրը այս հոյակերպ եկեղեցին հեթանոսական տաճառ կդարձնեն:

«Ուրախացե՛ք, կգա ժամը վրեժի ու այնժամ ես, որպես առաջին հեթանոս թագուհի, կօծեմ այս տաճարը, ու ետ կդառնան հայ հալածական մեր աստվածները, նրանց հետ էլ մեր երբեմնի հզորությունը»:

Եկեղեցին օծելու հաջորդ օրը սպարապետը մեկնեց Բզունիք, ինչպես ասել էր, այնտեղ խառնակություններ էր սպասում:

Երկրում չգիտակցված սպասում կար, թաքնված տազնապ: Թերեւս այդ օրերին միայն արքան ուրախացավ:

- Խոսի՛ր, Յայկ վերակացու, քանի՞ գազան եք բերել, ի՞նչ գազաններ,- արքան ժպտաց: Գահասրահում եղածները ուրախացան, վաղուց արքայի դեմքին ժպիտ չէին տեսել: Գահասրահում ներկաների մեջ առանձնանում էր Վաղինակ Սյունին: Սա վերջերս էր ապաքինվել ծանր վերքից, եկել էր պալատ: Միջահասակ, լայնալանջ մարդ է: Չարմանալին այն է, որ Սյունին կարողանում է բոլորի հետ լեզու գտնել առանց սեփական արժանապատվությունը զցելու:

- Տեր արքա,- Յայկը նայեց արքայի ուրախությունից ճառագող աչքերին,- բերել ենք տասնհինգ արջ, որից յոթը ընծայել է Ջոն իշխանը: Օգնեց երկու հովազ բռնելու: Նախարարները հաճույքով են օգնում, քանզի ամենքն էլ որսորդ են: Նրանց համար էլ հետաքրքիր է բռնել եւ ոչ սպանել: Դժվար գործ է, կամաց-կամաց գլուխ ենք հանում:

- Ապրե՛ս, Յայկ, դու շնորհակալ գործ ես անում: Չգիտեմ ինչպես վարձահատույց լինեմ: Քանի՞ գազան եք բռնել:

- Քառասուններեք...

Արքան զարմացած բարձրացրեց ձեռքերը:

- Թվի՛ր, քանի արջ, քանի վարազ: Յետո հավշի՞ առել եք եգ ու ործ լինելը:

Կարողանան բազմանալ,- ասաց արքան:

Յայկը հազիվ զսպեց ներողամիտ ժպիտը:

- Տե՛ր արքա, գազաններն էլ կենդանի արարածներ են, առանց զույգավորվելու չեն բազմանա: Աստծո ստեղծած կարգն է: Մի քանի օրից Գուգարքից կգա իր խմբով Խաժակը: Խախտիքից՝ Յովհաննեսը, Տարոնից՝ Եզնիկը:

- Բա՞ց եք թողել գազաններին,- վախեցած հարցրեց արքան:

Յայկը գիտեր՝ արքան անձամբ է ուզում գազաններին բաց թողնել անտառ: Արքայի ցանկությունը օրինական էր, այնքան հասկանալի, քանզի նա էր գործի հեղինակը: Նրանն էր գազաններին անտառ թողնելու իրավունքը:

- Տե՛ր արքա, արկանոցները Խոսրովակերտի ժանապարհին են: Կարգադրել եմ արկանոցները չբացել, մինչեւ տեղ հասնես,- անհարկի մեջ ընկավ սենեկապետը:

- Մեկնում ենք անհապաղ: Պատրաստել տուր կառքս: Չէ՛, չէ՛, կգնամ նժույգով: Տյա՛րք, եթե ցանկանում եք կիսել ձեր արքայի ուրախությունը, միացեք մեզ,- ասաց արքան, ոտքի ելավ:

Ներկաները կամ թե ակամա ընդունեցին արքայի հրավերը: Խմբով բակ ելան: Պալատում խառնվեցին իրար: Արքան այդքան հապճեպ պալատից դուրս չէր եկել: Պալատում խառնվեցին իրար: Արքան այդքան հապճեպ պալատից դուրս չէր եկել: Մոտ բերեցին արքայի սպիտակ նժույգը: Խելացի կենդանին այնպես էր վարժեցված, արքային հնար էր տալիս նստելու թամբին առանց դժվարության, դրա համար ծալում էր առջեւի ոտքերը: Սակայն մնացած նախարարների ու պալատականների նժույգները մարտական կենդանիներ էին, կատաղի, ամեհի: Ամենքից շատ ալխացավանք պատճառեց Վաղինակի նժույգը: Արքան էր վերջերս ընծայել այդ նժույգը: Ներկաների քմծիծաղը անտեղի էր, Վաղինակը ճարպիկ հեծյալ դուրս եկավ: Նա սանձը խլեց թիկնապահից, թողեց նժույգը մի քանի ցատկ անի արքայի հեռացող նժույգին հասնելու համար, ապա կախ ընկավ թամբից, մինչեւ տիկնայք կհասցնեին ճչալ, հայտնվեց թամբին:

- Յը՛, Ոսկիկը չի՞ ենթարկվում,- ծիծաղեց արքան:

- Կինն ու նժույգը նույն բնույթն ունեն, տե՛ր իմ, սկզբում անհնազանդ են, ապա հասկանում են փաղաքշանքի արժեքը ու իրենք են ձգտում...- ծիծաղեց իշխանը:

- Ի՞նչ է, ուշանում ենք,- հարցրեց արքան Յայկին:

- Իրոք, տեր արքա, ուշանում ենք:

- Դե՛, առա՛ջ,- ասաց արքան, աշտանակելով նժույգը:

Միջօրեին, երբ արեւը նոր էր տեղ գրավել գեւիթում, հասան Խոսրովակերտի փեշերին: Կանգ առան Յայկի մարդկանց մոտ: Սրանք չէին սպասում արքային, ծնկի իջան արքայի առաջ:

- Արպե՛ք, տղայք, ամենքիդ էլ ընծաներ կտամ,- ուրախ բացականչեց արքան, տեսնելով իրար կողքի շարված արկանոցները:

- Յայկ վերակացու, ցույց տուր որսդ,- ասաց արքան, առանց թիկնապահների օգնության ցած թռավ նժույգից: Մոտեցավ արկանոցներից մեկին: Այս արկանոցում մի հսկա արջ կար: Արջը հազիվ էր զսպվում, վախենում էին կոտորեք փայտյա ձողերը: Անտառի տեսքը գազանին հանել էր թմռանքից, եթե մի փոքր էլ ուշացնեին, կարող էր փշոել արկանոցն ու մտնել անտառ:

- Յայկ, սրան որտեղից եք բռնել, ինչ խոշորն է:

- Տե՛ր արքա, մոտ մի՛ արի, շատ վայրենի գազան է,- ասաց Յայկն ու կանգնեց արկանոցի ու արքայի միջև:

- Յանե՛ք, բաց թողեք,- ծիծաղեց արքան:

- Տե՛ր արքա, մի փոքր ետ կանգնիր, այստեղ անվտանգ չէ,- խնդրեց Յայկը: Յայկի հրամանով հիկվեց հոգի, նիզակներով զինված, մոտեցան արկանոցին: Յայկը դաշույնով կտրեց արկանոցի դռան պարանները: Արջը մրթմրթալով դուրս եկավ, գնաց արքայի վրա, հանդիպելով նիզակներին, ետ դարձավ, գնաց անտառի կողմը: Առաջին գազանի մուտքը խաղաղ կանցներ, եթե, հայտնի չէ որտեղից, մի շուն հայտնվեց: Շունը առաջին անգամ էր արջ տեսնում, հարձակվեց գազանի վրա, բռնեց արջի ոտքից: Արջը հանկարծակի եկած, նստեց, հազիվ չճզվեց շանը, շունը այդպես էլ ոչինչ չհասկանալով, նորից կծեց արջին: Սա թաթով այնպես զարկեց, որ շունը մի տաս քայլ շարտվեց, ընկավ սատկած: Գազանը հանգստացած, գոհ գազանային ուժի ցուցադրումից, լնգլնգալով մտավ անտառ:

Այդ պահին մնացած արջերին դուրս թողեցին արկանոցներից, այստեղ էր, որ Յայկի տղաները քրտնեցին: Արջերից երեքը զգվոտվում էին: Արքան վերցրեց նիզակը, սկսեց օգնել տղաներին: Վերջապես արջերն էլ անտառ մտան: Մեծ աղմուկ բարձրացավ, երբ բաց թողեցին վարագներիս: Արքան անկեղծորեն ուրախանում էր: Վարագները մի պահ քարանում էին, սակայն անտառը հուշում էր փրկության ճամփան:

- Յայկ վերակացու, արկանոցները մոտեցրու անտառին, թող շատ էլ չընտելանան մարդկանց,- ասաց արքան,- ու՞մ են պետք ձեռնասուն դարձած գազանները: Լա՛վ է,- ծիծաղում էր արքան,- դու տեսնու՞մ ես, Վաղինակ, իմ անտառները անտառ են դառնում: Մի տարուց հետո կարելի է որսի գալ:

Ընդհատեց խոսքը, որսորդներից մեկ վնասվել էր: Արքան կարգադրեց վիրակապել վիավորին: Գազաններին թեթեւակի խոցոտելով, մտցրեցին անտառ: Ահա եւ վերջին հովազը մտավ անտառ:

- Տե՛ր արքա, թույլ տուր եղջերուներին այլ վայրում բաց թողնեմ: Այստեղ վտանգավոր է, հովազները կհոշոտեն:

- Այո՛, իրավացի ես,- ասաց արքան: Ուզում էր նժույգ նստել, երբ անտառից մի վարագ դուրս թռավ, նրա հետեւից հսկայական ցատկերով գալիս էր հովազներից ամենամեծը:

- Ահա՛ սկսվեց անտառի կյանքը,- ծիծաղեց արքան,- Յայկ, սա ընծա քո տղաներին, իսկ վարձը կստանաք հազարապետից,- ասաց ու Յայկին մեկնեց մի մեծ քսակ ոսկի: Արքան երջանիկ էր, կան անտառները, ապրում են անտառները:

Սպարապետը վարգում էր Ծաղկանց լեռների կորած-մոլորած արահետներից մեկով դեպի Թոնդուրեկ: Այստեղ, Թոնդուրեկի աղբյուրներից մեկի մոտ նա հանդիպելու էր խուզարկուների ավագի հետ: Բացահայտ մտնել Բզնունիք, անցանկալի էր: Նպատակը նախարարին հետախուզելն էր, սա մոլի պարսկասեր էր: Յասնելով աղբյուրին, հանգիստ տվեց զինվորներին: Սրանք հանեցին նժույգների թամբերը, սկսեցին ման գալ կենդանիներին, քրտինքը չորացնելու համար: Ամեն իսկական հեծյալ առաջին հերթին պիտի խորհի իր նժույգի մասին, հոգա նրա հոգսերը, ապա նոր միայն սեփական անձի:

Աղբյուրը, որտեղ կանգ էին առել, գտնվում էր լեռան լանջին, մի այնպիսի տեղ, եթե չիմանային տեղը, պատահականորեն գտնել չէին կարող: Անցորդները աղբյուրը փնտրելու կարիք չունեին, հանդիպակաց տեղում ջուրը մաքուր էր, սառը: Աղբյուրը թաքնված էր մասրենու թփի տակ: Աղբյուրը ժայռի միջից հորդող մի հրաշք էր: Յավանական է, աղբյուրի ակունքը ժայռի խորքում էր: Ջուրը այնքան սառն էր, որ մի թաս խմել չէր լինում: Ջուրը հորդում էր ժայռի կտրվածքից, ավանդույթն ասում էր՝ Վահագն Աստված սրով զարկել, բացել է ջրի ճամփան:

Կանաչը շրջապատում սկսել էր բարձանալ: Մի քանի կապտաչվի ծաղիկներ բացել էին աչուկները, ասես չէին հավատում, որ գարուն էր: Սպարապետը ափով ծածկեց ծաղիկներից մեկը, ափի մեջ ինչ-որ խուտուտ տվեց: Նայեց, գատիկ էր: Բզեզիկը համարձակ շարժվեց ափով, գտավ ճակատագրի անհատնում գիծն ու վազեց դաստակն իր վար:

«Տե՛ս, է, գտավ ճակատագրիս անհատնում գիծը: Զգևաց նրանով, որ հատվում է շեղակի եկող գծին, այլ ընտրեց այն անհատնելին, ափի երկարությամբ ձգվող գիծը, որով մարդ գնում է անհայտություն»:

Թիկունքում սսկվեցին, խոսակցությունները դադարեցին: Լսվեցին կապարճներից հանվող աղեղների վնգվնգոցները:

- Յը՛, տղա՛յք, ի՞նչ կա,- հարցրեց,- մա՞րդ է, թե՞ գազան:

Մտեցավ Վռամ թիկնապահը, որին Պարգեւի սպանվելուց հետո կարգել էր ավագ թիկնապահ:

- Տե՛ր իմ, մարդ է, իջավ ձորակ:

Սպարապետը լարեց տեսողությունը, ոչինչ չտեսավ:

- Յեժյա՞լ է, թե՞ հետիոտն:
- Յետիոտն է, տեր իմ, գավազանավոր է:
- Տարոնեն է,- ժպտաց սպարապետը:

Վռամը գնաց խուզարկուին դիմավորելու: Քիչ անց մոտեցան: Վռամը գալիս էր բարձրահասակ, չորչորուկ մի մարդու հետ: Մարդը կլիներ հազիվ քառասուն տարեկան, կարճ կապայով էր, ձեռքին հոնի ծանր գավազան կար: Նա ոչ մի այլ զենք չէր կրում: Տարոնեն գերմարդկային ուժի տեր էր, կարող էր գավազանով կռվել տասը զրահված զինվորի դեմ: Տարոնեն բռունցքի հարվածով ցուլ էր սպանում, էլ ինչի՞ն էր պետք զենքը:

Սպարապետը գիտեր, Տարոնեն իրեն արիական էր համարում... Նա սիրում է այդ միայնակ մարդուն: Տարոնեն ոչ ընտանիք ունի, ոչ ընկեր, միակ ազգականը սպարապետն է: Մեծացել է Ողականում, դարձել սպարապետի խուզարկուների ավագը: Տարոնեի մեջ զարմանալիս նրա պրպտուն միտքն է, նա բնավ նման չէ մյուս ամրոցաբնակներին: Ազատ ժամանակ անց է կացնում լեռներում, թե ի՞նչ է փնտրում, ոչ ոք չգիտե: Երբ մի անգամ հարցրի այդ մասին, սա ծուռ ժպտացել էր, ցույց տվել մագաղաթի վրա արված ինչ-որ նկարները:

- Ի՞նչ են սրանք,- հարցրել էր սպարապետը,- կարծյոք մեր կեռիաչերն են:

- Տե՛ր իմ, իրավացի ես, սրանք մեր հայկական արիական կեռիաչերն են: Սրանցից բազմաթիվ կան ժայռերի վրա փորագրված, նկարված:

- Յետո՞, դրանով ի՞նչ ես ապացուցելու: Ես էլ գիտեմ այդ խաչերի մասին, սակայն դա ի՞նչ է տալիս մեզ, այսօր ապրողներին...

- Յպարտություն,- շեշտել էր Տարոնեն,- Մենք մենք արիականաց նախահայրերը, մենք ենք աշխարհի աղև ու մաղը: Օրեն չէ, որ նվաստանանք, եթե այս ամենն ունենք, հարկ է հավրժ ապրենք: Չէ որ կեռիաչերն են, որոնցից արարվել է քրիստոնեական խաչը, իսկ սա, տեր իմ, Արեւ աստծո նշանն է: Ես արիական եմ ու հպրատ եմ դրանով, այս կեռիաչերը հավերժության խորհրդանշաններն են...

Յամամիտ եմ, քեզ հետ որդի, սակայն մենք ավելի աշխարհական ու այսօրական գործեր ունենք:

Տարոնեն մի ծիծաղելի սովորույթ ունի, նժույգ չի նստում, քանզի շատ արագ է վազում կամ քայլում, կարող է մրցել նժույգի հետ:

Շատ անգամներ է սպարապետը նրան ստույգ մահվան ուղարկել, ամեն անգամ ողջ ու առողջ վերադարձել է, ոչ մի բառ չասելով այն դժվարությունների ու վտանգների մասին, որ հաղթահարել է: Զբախոս մարդ է Տարոնեն, ամեն խոսքը կշռադատված է, այնքան դիպուկ, որ զարմանք է պատճառում: Սպարապետը իրեն բռնում է այն բանի մեջ, որ ռազմի հարցերից խոսելիս աշխատում է մտքերը շարադրել Տարոնեի նման կարճ ու տրամաբանական:

Տարոնեն խոնարիվեց սպարապետին, գլխով բարեւեց զինվորներին:

- Որտե՞ղ ես թողել քո մարդկանց, Բզնունիքում՞, թե՞ Ողականում:

- Մեծ մասը Բզնունիքում են, մի քանիսին ուղարկեցի Աղձնիք: Բզնունիքում դեպքերն ավելի արագ են զարգանում: Ես միայն այս երկու նախարարություններից եմ ըմբոստացում սպասում:

- Ինչու՞ ես կասկածում նրանց:

- Նախ՝ Շապուհը խաղ է սկսել սահմանի վրա, Աղձնիքի դիմաց, իսկ Բակուրը զորքերը չի մոտեցնում սահմանին, ասել է թե չի վախենում Շապուհից: Բակուրը այնքան էլ խելացի չի վարվում, եթե խելացի խորհեր, նա էլ մի գունդ կհաներ սահման, դրանով կթթացներ մեր զգոնությունը, սակայն մեր բախտից է, որ բղեշխը այդքան էլ չի հասկանում, հետո էլ կաթողիկոսի անձի դեմ կատարած մահափորձից հետո... Կասկածում եմ նաեւ թագուհուն... Չուր չի մեղադրում վեհափառը տիրուհուն... Բակուրը հազիվ է զսպվում: Նա թագ է ակնկալում Շապուհից:

- Ստու՞յգ բան գիտես:

- Մեր մարդիկ Աղձնիք գնացող քարավաններում զենք են տեսել, տանում են գաղտնի, դրանից զատ Բակուրը դարբիններից զնել է պատրաստի բոլոր զենքերը, նոր պատվերներ է տվել, մթերքներ է հայթայթում: Նույնն էլ անում է Դատաբեն: Նա էլ է պատերազմի պատրաստվում,- լռեց, գլուխը օրորեց,- Դատաբեն խելացի մարդ չէ, այդ լուրերի տարածումը կանխելու համար մարդիկ է գնդան դրել...

- Մենք չենք կարող մեղադրել զենքի համար: Ամեն նախարար իրավունք ունի զինվելու, հատկապես Մանավազյանների ու Որդունիների պատերազմից հետո: Կարող են պատճառաբանել...

- Ներող եղիր, տեր իմ, սակայն ոչ ոք չի արգելում Բակուրին զենք առնել բացեիբաց, ի՞նչ կարծիք կա թաքցնելու,- մռայլ ասաց Տարոնեն:

Սպարապետը ուզեց ասել. «Ա՛յ տղա, դու երբեւէ ժպտում ես»: Սակայն չհարցրեց, գիտեր, խուզարկուն ոչ անձնական կյանք ուներ, ոչ այլ ուրախություն: Նա ամբողջովին թաղված էր եկրի գործերի մեջ: Ստույգ է, նա սպարապետի ազգականն է, սակայն շատ համեստ է իրեն պահում: Ուրիշը, ունենալով նրա խելքն ու հնարամտությունը, եւ այդքան ծառայություններ մատուցած սպարապետին ու երկրին, թերեւս անձնականի համար ինչ-որ բան ակնկալեր, ո՛չ, նա այդ ամենի

Նկատմամբ անտարբեր է, ու՞մ համար, ինչի՞ համար...

- Ո՞վ նրանցից առաջինը կըմբոստանա,- հարցրեց սպարապետը:

- Չեմ կասկածում՝ Ռշտունին:

Սպարապետը հոգոց հանեց: Նա համամիտ էր Տարունի հետ:

- Պարսից զորքերը մտել են երկիր...

Արքան սկզբում վախեցավ, ապա զայրացավ: Երբ զայրույթի ու վրդովմունքի առաջին պահն անցավ, նայեց նախարարներին: Ու՞մ ուղարկեր պարսից դեմ, սպարապետը Ողականում էր, կարող էր ետ կանչել, սակայն ուզում էր այս անգամ արհավիրքի առաջն առնել ինքը, թե չէ կասեն՝ երկրում սպարապետից զատ կարող ու՞ չկա, զորավար չկա... Կասեն Մազբուխաց պատերազմի ժամանակ խույս տվեց Դարանոյք... Նայեց Բզնունյաց տիրոջը, որին դեռ ոչ մի լուրջ գործի մեջ չէր փորձել: Վճռեց՝ նա պիտի վարի պատերազմը:

Գահասրահում էին Մեծ Հայքի բղեշխներից՝ Գուգարաց բղեշխը, նախարարներից Բագրատ Բագրատունին, Վարազ Կամինականը, Ծոփաց Մար իշխանը, Կորդովաց Ջոն իշխանը, Բասնյաց Մանուկը, Ներսեհ իշխանը, Հաշտենից Դատը:

Վաղինակ Սյունին բացակայում էր: Ներկա չէին սպարապետն ու Հայրը, սպարապետի փեսաները՝ Անդրովկն ու Արշավիր Կամսարականը:

Սպասում էին կաթողիկոսին, սա ցանկացել էր ներկա լինել խորհրդին: Տեսնելով, որ կաթողիկոսը ուշանում է, արքան բարձրացրեց մականը, պահասրահում լռեցին:

- Տյա՛րք,- արքան հոգոց հանեց,- դարձյալ պատերազմ է : Պարսից մի մեծ գունդ մտել է երկիր ու առաջանում է Ազնուրաց Ձոր: Հարկ է դեմն առնել, հակառակ պարագայում անցնելով ձորով: Բզնունիքի վրայով կշարժվի Այրարատ: Երկու օրից շարժվում ենք թշնամու դեմ: Չորահրամանատար եմ կարգում Բզնունյաց տիրոջը: Նա ծանոթ է տեղանքին, քառասուն հազարանոց բանակով առաջ կանցնի մեզանից: Տեր հազարապետ, հրաման մեզանից՝ Դվն ու Արտաշատի մարդկանցից աշխարհագոր կազմել: Ամենքս էլ գնում ենք կռվելու: Վրույր, կանչել տուր վերակացուների վերակացու Հայկին: Թող Աստված մեզ ու՞ տա վանելու թշնամուն մեր սուրբ հողից,- լռեց:

- Տեր արքա, մենք կռվից փախչող չենք, այս անգամ Շապուհը խախտել է Մծբինի դաշնադրությունը, հարկ է տեղյակ պահել կայսերը, թող օգնական զորքեր ուղարկի,- ասաց Ջոն իշխանը:

- Մի՛ աճապարիր առաջարկ անել,- նետեց Դատաբեն,- մենք ի զորու ենք սեփական ուժերով վանել թշնամուն: Երդվում եմ՝ ջարդել պարսից գունդը: Ինչու՞ այդչափ տկար ցույց տանք մեզ կայսերը: Նա մեր ինամին չէ...

Գահասրահում աղմուկ բարձրացավ: Հասկանալի է, ոչ բոլորը ընդունեցին Դատաբեի խոսքերը, կային նաեւ այնպիսիները, որ դեմ էին Ջոն իշխանի առաջարկին:

- Ես համամիտ եմ Կորդովաց տիրոջ առաջարկին,- խոսեց Գուգարաց բղեշխը,- բա՛վ է, մենք ամեն անգամ կայսերը տեղյակ ենք պահում պարսիկների կողմից դաշնադրությունը խախտելու մասին, ամեն անգամ էլ, երբ վանում ենք թշնամուն, զոհեր ենք տալիս, կայսրը բարեհաճում է դեսպան ուղարկել ի մոտս ծանոթանալու գործերի վիճակին,- զայրացած ձեռքը թափ տվեց,- ո՛չ, մեզ զորքեր են պետք, հակառակ պարագայում Շապուհը կհամոզվի՝ զուր են մեր սպասումները, հոռոմները մեզ չեն օգնի...

- Իրավացի եք, տյարք, կհայտնենք նաեւ կայսերը, թող զորքեր ուղարկի, սակայն մենք չենք կարող սպասել մինչեւ կայսերական զորքերը գան հասնեն, կկանչենք նաեւ սպարապետին:

- Մինչեւ կայսերական զորքերը գան, մինչեւ հասնի սպարապետը, իմ երկիրը ոտնատակ կգնա,- զայրացավ Մեհենդակ Ռշտունին:

- Բա՛վ է, այլեւս ոչ մի խոսք: Կամքն է մեր՝ վաղը մեկնում ենք, աշխարհագորայինները մեզ կհասնեն մի օրից...

Երեկոյան սենեկապետը գեկուցեց Հայկի գալու մասին:

- Հրավիրիր,- արքան աշխուժացավ, մի պահ մոռացավ սրտի ծակոցները:

Երբ ներս մտավ Հայկը, իսկույն գործի անցավ:

- Հայկ վերակացու, դարձյալ պատերազմ է, գործերս անավարտ մնացին: Գիտեմ՝ հոգով նվիրված ես անտառներին, սակայն պատերազմ է,- արքան անցավ մտերմիկ տոնի: Այն, ինչ ասաց, թերեւս պահին տուրք տվեց, այս խառնակ ժամանակին, դուռը ծեծող պատերազմին, հակառակ պարագայում այդչափ չէր թուլանա ռամիկի առաջ,- Հայկ վերակացու, կանցնեն դարեր, իմ անտառները, այո՛, այո՛, իմ անտառները կմնան, կմնան ու կպատմեն Խոսրով արքայի փառքի ու աշխարհաշեն գործերի մասին: Նաեւ այն մասին, որ հնում հայոց արքաները հոգում էին մայր բնության հոգսերը: Հիշի՛ր, Հայկ վերակացու, հայարիները բնությունը մայր էին համարում, պաշտում էին բնությունը:

- Այո՛, տե՛ր արքա, պատմությունը ըստ արժանվույն կգնահատի քո մեծագործությունը,- այդ վերջին բառը Հայկը փոխ էր առել սպարապետից: Շատ երկար քննել էր իր մեջ, հասկացել. այդ մեծագործությունը արարում էին իրենք՝ Խաժակը, Վանեն, Եզնիկը, այն հարյուրավոր սայլապանները, որ հարյուրավոր փարսախ ճանապարհ կտրել, տնկիները հասցրել են Այրարատ: Այդ իրենք են դողացել տնկիների համար, քամուց պաշտպանել են իրենց մարմնով, սակայն արքան մի հարցում իրավացի է՝ նա է հղացել այս ամենը, փա՛ռք նրան:

- Դու դարձյալ կարգվում ես աշխարհագորի պետ, գունդ կհավաքես, կհանես երթի: Մթերքներ ու գենք կստանաս արքայական զինանոցներից ու պահեստներից: Կգաս, որքան հնարավոր է, արագ,- հոգոց հանեց, իր համար հայտնագործություն արեց,- առանց աշխարհագորի գործ չի շինվի...

Մինչ արքան ու Հայկը գրուցում էին, պալատի մեկ այլ հարկաբաժնում երկու հոգի նստել էին իրիկնահացի: Նրանց միայն մի ծառա էր սպասարկում: Դատաբեն ու Մանեհճիրն էին:

Վաղվա օրը նրանց հույսեր էր բերում: Եկել էր անընթաց պահը: Նրանք երկար ժամանակ կապ ունեին Շապուհի հետ: Իսկ պահն, իրոք, հարմար է, սպարապետը հեռու է, կարելի է մի հարվածով վերջ տալ արքային, երկիրը հանձնել արքայից արքային: Մեկը նրանցից կդառնա սպարապետ, մյուսը՝ հազարապետ: Դրան գումարած, երկրից վտարված, գլխատված նախարարների հողերն ու բերդերը: Հեռակարը այնքան շոշափելի էր, որ երկուսն էլ գինովցել էին, թեեւ խմում էին չափավոր:

- Ես գորքերը կմտցնեմ Ազնուրաց Ձոր, կգցեմ ծուղակը, կոտորել կտամ: Այնժամ դյուրին կլինի արլայի ու կաթողիկոսի սպանությունը: Մնացյալները կգիջեն, իսկ ով դեմ ելնի,- Դատաբեն ձեռքի դանակով պարանոցի մոտ շատ պարզ ու հասկանալի շարժում արեց:

- Այո՛, արդ, ամեն բան կախված է մեզանից: Միջոցների մեջ խտիր չպիտի դնենք: Մի զարկով վերջ կտանք սրանց, այս խելապակասներին: Թող մեր գլխին Շապուհը լինի, դարձյալ կհեթանոսանանք,- Մանեհճիրը ետ ընկավ բազմոցի մեջ,- ինչպիսի հաճույքով կգլխատեմ կաթողիկոսին, իմ ձեռքով, անձամբ,- նայեց ծառային,- դու գլխատված կաթողիկոս տեսե՞լ ես:

- Դեմ տեսել, տե՛ր իմ:

- Իսկ դու լռի՛ր, ավանա՛կ,- չգիտես ինչու կատաղեց Մանեհճիրը,- մենք քեզ կաթողիկոս ենք տալիս, ո՛չ թե արքա,- նախարարն արդեն գինով էր,- ինչ տալիս են, գոհ եղիր: Զո տերը քեզ միայն կաթողիկոս է տալիս, միայն կաթողիկոս...

- Լա՛վ, լա՛վ, գնա՛,- Դատաբեն ձեռքի արհամարհական շարժումով արձակեց ծառային, գիտեսալով, որ սա շան նման հավատարիմ է, չի մատնի:

Տարոնեն արագ քայլքով, որ ուրիշների մոտ վազքից էլ արագ էր, հասավ Զարքե լեռանը, կանգ առավ հանգստի: Վերջերս սկսել էր հոգնել, ավելին՝ քրտնել, մի բան, որ վազելիս առաջ չէր պատահում:

«Ա՛յ, հասնեմ Ողական, սպարապետից նժույգ կխնդրեմ: Մեկ էլ տեսար՝ մի օր վազելիս սիրտս կանգ առավ»՝ հռչակեց անձայն, իրեն երբեք այդչափ տկար չէր պատկերացրել:

Լվացվելու համար կռացավ առվի վրա: Ապշահար նայեց սեփական արտացոլմանը: Ջրի հայելուց նրան էր նայում սպիտակած քունքերով, ոչ երիտասարդ մի մարդ: «Սա ե՞ս եմ, չի կարող պատահել... Ես հայելու մեջ նայել եմ այն ժամանակ, երբ Վարդուհին համաձայնվեց հարսնանալ ինձ: Նայեցի հայելու մեջ, ուզում էի հասկանալ, ախր իմ ինչի՞ն էր հավանել: Ստույգ է, այն ժամանակ մազ ու մորուքս սեւ էին: Շատ ուժեղ էի, կարողանում էի երեք տարեկան նժույգը վազքի ժամանակ ոտքից բռնելով կանգնեցնել»:

Սիրտը բացել է Վարդուհուն, երբ վիրավոր պառկած էր Ողականում: Հնուց եկող կանչն էր, վիրավորի մոտ մուտքն ազատ էր: Սակայն բախտ չունեցավ ընտանիք կազմել: Վարդուհին հանկարծամահ եղավ, ոչ ոք չհասկացավ մահվան պատճառը: Մի գիշերվա մեջ ծերացավ ինքը, մազերը սպիտակեցին: Իսկ երբ սպարապետը մի քանի տարի առաջ վճռեց ամուսնացնել նրան, հրաժարվեց, պատմեց դժբախտ սիրո պատմությունը: Սպարապետը հրաժարվեց մտադրությունից, ասաց. «Ապավինենք ժամանակին, նա ամենազոր է, կբուժի վերքերդ»: Դրանից հետո իրեն տվեց երկրի գործերին: Քնաց, եկավ, ծանոթացավ հարեւան երկրներին: Սովորեց տեսնել, լսել, վերլուծել: Շատ ու շատ ծառայություններ մատուցեց սպարապետին: Հրաժարվեց սեպուհությունից, ու՛մ համար, ու՛մ պիտի ուրախացներ: Ո՛չ կոչում, ո՛չ պատիվ, ոչ էլ ամուսնացավ: Մնաց մենակ, մի մարդ, որից ամենքն էլ վախենում էին, քանզի իրեն անմնացորդ նվիրել էր երկրին: Ամենքն էլ նրանից ակնածում էին:

Գլուխը թափ տվեց, զգաց, որ հանգստացել էր: Ափով շուր ցողեց դեմքին, փնչացրեց: Սկսեց իջնել Զարքեի լանջով: Երբ հասավ Ողական, ոչ մի նշան չկար հոգնածության:

Նախարարի օթեւան մտավ առանց գեկույցի, դա նրա իրավունքն էր: Հագուստը փոշոտ էր, ոչ ոք

չէր կանգնեցնի նրան, մէկ է՝ հարցերին չէր պատասխանի, կանցներ, կգնար:

Ներս մտավ, խոնարհվեց նախարարին, իշխանուհուն: Մի հայացքով գննեց օթեւանը, հասկացավ՝ այս պահին սպարապետի ձեռքի տակ մեծ զորական ուժեր կային, քանզի այստեղ էին փեսաները՝ Անդովկն ու Արշավիրը: Անդովկը հայոց հեծելազորի պետն էր, Արշավիրը՝ հետիոտնի:

Սպարապետը նայեց հետաքրքրված: Խուզարկուի հրատապ մուտքը ոչ մի լավ բան չէր գուշակում: Սպասեցին Տարոնեի խոսքին:

- Պարսից մի մեծ գունդ Վռամշապուհի գլխավորությամբ մտել է երկիր: Գնում է Ձորաց Պահակ: Արքան զորքերը տարավ պարսից դեմ: Չորահրամանատր է կարգել Բզնունյաց տիրոջը,- նկատեց, ինչպես ցնցվեց սպարապետը,- ինչպես բռունքվեցին ձեռքերը,- զորքերի հետ են,- թվեց նախարարներին:

- Ո՞ր ճանապարհով են գնում արքան ու կաթողիկոսը:

- Բզնունյաց ծովակի հյուսիսային ափով: Դատաբեն ու Մանեհճիրը շատ են առաջացել: Գուգազը գնում է Հայկ զորապետի հրամանի տակ: Նրանք մի քանի ժամով են ետ ընկել մատենիկ գնդից...

- Տանելու են զինվորներին կոտորեն: Ախր Դատաբեն ի՞նչ զորավար,- տնքաց սպարապետը,- եթե իրավացի ես կասկածներիդ մեջ, իսկ դու չես սխալվում, մեր զորքերը չարաչար կպատժվեն: Հը, ի՞նչ եք խորհում,- նայեց փեքաներին, ապա ավելացրեց,- Տարոնեն եղել է Բզնունիքում, Ռշտունիքում հետախուզել է այդ երկու նախարարությունները: Այնտեղ խաղ են սկսել Շապուհի հետ, խնդրեմ արդյունքը: Դուք հասու՞ եք ինչ է նշանակում այս պարագան,- տեսնելով, որ Արշավիրը ուզում է խոսել, ձեռքով լսելու շարժում արեց,- մի կասկածեք Տարոնեի եզրահանգումներին: Եթե կա մեկը Մեծ Հայքում, որին հավատում եմ, դա Տարոնեն է: Նա իմաստուն է, քան քուրմը, քաջ ու հմուտ զորական է գործերում... Նա այսօրինակ գործերում չի սխալվում: Դեռ ձմռան էին նրանք նախապատրաստվում այս պատերազմին: Երկու վաշտ են հեծյալ դարձել: Այն էլ Ռշտունու պես կծծի մարդը: Նա առանց դրսի օգնության երկու վաշտ չի նժույգավարի...

- Եթե Շապուհը միջոցներ է տրամարդել նժույգներ գնելու,- ապա դա արել է պայմանով,- խոսեց մինչ այդ լուռ նստած իշխանուհին:

Սպարապետը հասկացավ՝ իշխանուհին կասկածում էր զորքերը ծուղակելու հնարավորության մասին: Նրանք այդ պարագայի մասին խոսել էին մինչ այդ: Իշխանուհին խելացի կին է, ամենքն էլ գիտեին: Նա ամեն հարցում օգնում էր ամուսնուն: Նրա բացակայության ժամանակ ընդունում էր խուզարկուներին, ապա լուրերը հասցնում էր Տարոնեին կամ սպարապետին:

- Հարկ է դեմ ելնել, թերեւս կանխեք չարիքը, չծուղակեն զորքերը: Դատաբեն զինվորների արյան գնով ուզում է սպարապետ դառնալ...

- Չենք հասցնի,- ասաց Անդովկը,- ես էլ եմ այդպես կարծում: Դրա համար եկել եմ կարճ ճանապարհով, սակայն ուշ է, իրոք, շատ ուշ: Դատաբեն շահել է ժամանակը, ափսո՛ս...

- Հայր իմ, տե՛ր արքա, ի՞նչ ես անում, չե՞ որ Դատաբեն պարսկասեր է: Կարծյոք կապ ունի Շապուհի հետ: Կկործանի զորքերը,- բռնելով նժույգի սանձը, ասաց Տիրանը,- ուշքի՛ եկ, մի՛ վստահիր նրան: Թող գունդը գլխավորի Ջոն իշխանը կամ Դատը: Ետ կանչել տուր Վաղինակ Սյունուն: Մի՛ տար զորքերը կործանման:

Չորքերը կանգ էին առել, սպասում էին արքայի հրամանին:

Դատաբեն տարե էր զորքերի մեծ մասը, մնացել էին մի քանի վաշտեր: Չինվորների հետ գնում էին աշխարհազորայիները:

Շատերը, այդ թվում նաեւ կաթողիկոսը, սպասում էին անտեղյակ: Վեհափառը բացեց վարագույրը, դիմեց հեծյալ արեղային:

- Ի՞նչ է պատահել, ինչու՞ ենք կանգ առել:

- Վեհափա՛ռ տեր, գահաժառանգը խոսում է արքայի հետ, կարծյոք, հուզված է, բռնել է արքայի նժույգի սանձը, չի թողնում:

- Մոտենանք արքայի,- ասաց Աղբիանոսն ու գավազանով հրեց կառավարին: Սրա մտրակը այնպես շառաչեց, որ կաթողիկոսը ցնցվեց: Մոտեցան արքային:

- Տե՛ր արքա, ի՞նչ է պատահել,- հարցրեց Աղբիանոսը:

Արքան չհասցրեց խոսել: Տիրանը գայրալից դարձավ հոգեւորներին:

- Սրբազա՛ն, իմնալով հանդերձ, որ Դատաբեն պարսկասեր է, դուք տանում եք մահու տաք: Ինչու՞, հասու՞ չեք... Դուք ձեզ մարդկանց հոգիների քննիչ եք համարում, ինչու՞ եք մարդկանց կործանման տանում, ո՞ր իրավամբ...

- Դու ամբաստանում ես նաեւ Ռշտունուն...

- Այո՛, նաեւ նրան: Ձեզ իմացում, ասեմ, ոչ թաքցնեմ: Բզնունուց պակաս պարսկասեր չէ: Զանի ուշ չէ, կանխեք արհավիրքը: Ես ասացի այն, ինչ պարտ էի ասել: Մեղքը ձեզ վրա,- աշտանակելով նժույգը,

սլացավ քաղաք:

- Անհիմն կասկածներ,- մռմռացրեց եպիսկոպոսը,- թերեւս ինչ-որ բան կա, սակայն հույսներս առ Աստված:

- Եթե ցանկանանք էլ չենք կարող ոչինչ անել: Գունդը երկու օրով առաջ է անցել մեզանից: Յրաման ուղարկելը անմտություն կլինի, բզուռնայաց գունդը կըմբոստանա, քանզի հրամանը կոխտվի որպէս դավաճանության մեղադրանք,- ասաց արքան, Նժույզը մոտեցրեց կառքին,- ի՞նչ կասես, վեհափառ:

Կաթողիկոսը ծակեց հայացքով:

- Դու՛ ես կարգել գորավարին, դու՛ էլ վճիռ դիր, միայն ասեմ ձեզ՝ անկասելի է Աստծո կամքը,- խաչակնքեց,- հույս առաքենք առ Աստված: Ես կաղոթեմ, որ այս պատերազմը բարեհաջող ավարտվի:

«Բթամիտ ծերեր,- արշավելիս խորհում էր Տիրանը,- տե՛ս, է, պարսիկների դեմ այնպիսի մարդիկ են ուղարկում, որ հոգով նրանց հետ են: Շապուհը թքած ունի Մծբինի վրա: Նա այս հարձակմամբ ապացուցեց, այո՛, այո՛, նա հաշվի չի առնում անգամ կայսրին: Ես չեմ ցանկանում զոհեր տանք, չեմ ուզում զինվորները զոհվեն այդ մանկամիտների պատճառով: Տե՛ր Աստված, դու օգնական հայոց զորքերին,- քիչ մնաց կանգնեցներ սլացող Նժույզը, այնքան, որ հարցը ծնվեց հանկարծակի,- ո՞ր Աստծուն եմ դիմում, ու՞մ օգնությանն եմ ակնկալում: Մի՞թե ես հեթանոսանում եմ: Եթե այս պահիս հեթանոսանում եմ, դա նշանակում է, որ հոգիս արիական է մնացել եւ ես չեմ նվաստանա կղերականց առաջ, երբե՛ք...- Հանկարծ հիշեց Նազենիկին,- Ների՛ր, սիրելիս, այս աղմուկ, աղաղկի մեջ մոռացել էի քեզ: Ների՛ր ինձ,- խոհերը այլ հուևով գնացին,- հայրս քաղաքով ու անտառներով տաքուկ տեղ է գրավել հայոց պատմության մեջ: Իսկ ե՛ս, ես ի՞նչ պիտի անեմ, զուր վիրավորեցի հորս,- դարձյալ հիշեց Նազենիկին: Նորից աշտանակեց Նժույզը, որ սլանում էր խելահեղ արագությանը, զգաց, որ քամին արցունքներ է պոկում աչքերից,- ո՛չ, վեհափառ, ես քեզանից վրեժ ունեմ առնելու,- իսկ ես խուսափում եմ անգամ վիրավորել խնամուս,- հեզնեց ինքն իր մեջ,- ո՛չ, ես վրեժ ունեմ...»:

Քաշեց սանձը, հասել էր քաղաքադռանը: Չինվորները պատիվ տվեցին: Տիրանը առաջին անգամ զգաց՝ իրավացի չէր, երբ չէր պատասխանում զինվորների ողջույններին: Բարձրացրեց ձեռքը, ողջունեց պահապան զինվորներին: Աչքի տակով տեսավ, ինչպես նրանք ուրախ հայացքներ փոխանակեցին:

Նա վերջերս սկսել էր ժողովրդի մասին խորհել, առանձին շինականին՝ առանձին, զինվորներին՝ առանձին, արհեստավորներին... Մի խոսքով, փոխել էր վերաբերունքը: Պատճառը հոր հիվանդությունն էր:

Բուժը միայն նրան էր բացել գաղտնիքը:

- Թող հայրս երկար ապրի, որքան բնությունն ու աստվածները կհաճեն,- արիական հայերը բնապաշտ էին: Նրանք աստվածներին ու բնությունը հասավարագոր էին համարում: Այդ ամենը կապում էին տիեզերքի հետ, նրանով բացատրում, իսկ, արդ, այդ սեւավորները...

Երկիրը լարվել էր, սպասում էին լուրերի: Ռամիկը հույսը դրել էր աշխարհագորի վրա, սակայն ինչ-որ վատ կանխագագացում կար, չգիտես ինչու, հանկարծ հիշեցին դավաճանության մասին դեպքերը: Ծնվեց սիրտ մաշող անհանգստություն...

Այդ օրերին հնդստանցի Ռամը իր քարավանով մտավ Արտաշատ:

- Եղբա՛յր իմ, այս ի՞նչ ժողովուրդ էք, մի՞թե ձեզ հանգիստ չկա: Ինչքան գիտեմ՝ պարետազմ է ու պատերազմ, ճանապարհին տեսա ձեր զորքերը, գնում էին Ռշտունյաց կողմերը:

- Ռամ եղբայր, մենք մեղք չունենք, հարեւաններն են գազան: Շապուհի զորքերը երկիր են մտել, արքան մեծ գնդով գնաց պարսիկների դեմ: Հայկին գիտես, մեծ աշխարհագորական գնդով զորքերի հետ է: Ես էլ եմ գնալու, կհասնեմ կռվին, Նժույզս վազկան է,- ասաց վաճառական Բուրակը:

- Գիտե՛մ, լավ կռվող է, իմաստուն մարդ: Մեր երկրում նրան միայն առու հանելու համար սրբերի դասը կհանեին, նրա անվամբ տաճար կկառուցեին, սակայն դուք... Բուրակ, մենք քեզ հետ խոսել ենք արիական մասին: Ես անգետի մեկը չեմ, գիտեմ ինչ ասել է արիացի: Ես մեր մոգերի հետ երկար-բարակ զրուցեցի: Գիտես, նրանք ընդունում են, որ արիականք ծնվել են Հայաստան լեռնաշխարհում, ապա տարածվել են աշխարհով մեկ: Դուք պիտի հպարտանաք, հակառակն էք անում: Ա՛յ, Հայկը, մի՞թե չեք հասկանում, որ նա արիական հզոր զորական է, իմաստուն մարդ... Հայկի մեջ հառնել է արիական հոգին: Դու գարմցած մի նայիր, այդպես է, որ կա: Ես էլ եմ արիական հնդստանցի: Սրբազան Գանգեսին են հասել արիները ձեր լեռնաշխարհից, իսկ դուք...,- ձեռքը թափ տվեց: Հետո էլ ձեր մեծերը, ի՞նչ մարդիկ են, այսօր Հռոմին են հարում, վաղը՝ Պարսկաստանին, սակայն արիական լինելու համար, հարկ է, որ ինքդ դա ընդունես, հոգով ընդունես...

- Իսկ դու ի՞նչ ես առաջարկում,- քմծիծաղ տվեց Բուրակը,- ես էլ արիականության մասին գիտեմ, ընդունում եմ անվերապահորեն:

Ռամը լռել էր, նայում էր գավաթի մեջ:

- Այ, գինի քաշել գիտեք, հաց ու մրգեր աճեցնել, երկաթյա սրեր կոփել, զարդեր պատրաստել, տաճարներ, եկեղեցիներ կերտել, սիրել գիտեք, սակայն ատել չգիտեք: Թշնամուն չեք կարող զանազանել բարեկամից: Բարի խոսքին հավատում եք, մոռանալով այդ մարդու նախկինում կատարած հանցանքները: Ես շրջել եմ աշխարհի լայնքով, երկանքով, շատ ժողովուրդներ եմ տեսել: Հասու եմ, թե ինչի եք ընդունակ դուք, հայերդ: Մի անգամ զրուցեցի Մարդպետաց տիրոջ հետ,- մատը վեր տնկեց,- դուք, հայերդ, Հոր նման իմաստուն մարդ ու զորավար ունեք, քիչ է մնում ճաքեմ, էլ ի՞նչ եք ուզում, ու՞մ եք փնտրում: Հայը արիական նահապետ է... Նա խելացի մտքեր ունի,- սպասեց, ինչ-որ քրթմնջաց: Գինի լցրեց Բուրակին ու իրեն, խմեց գինին, նայեց գավաթի մեջ, ասես այնտեղից էր վերցնելու հարցերի պատասխանը,- դուք կարող եք մեծ բանակ պահել, ասեք մի հարյուր հազար զինվոր: Այդ պարագան կզսպեր ձեր հարեւաններին: Ավելին, կարող եք պահել, սակայն ձեր նախարարները իրենց արքայացու են կարծում: Ձեզ Շապուհի պես արքա է պետք, որ ձգի ձեր իշխանիկների սանձերը: Կռվող ժողովուրդ եք, սակայն մասնատված եք, զորական ուժերը սպարապետի ձեռքի տակ չեն,- հոգոց հանեց,- հետո էլ, ախր շատ միամիտ եք, բացեք աչքներդ, տեսեք ինչ ժամանակներ ենք ապրում: Դարն է դաժան, արյան դար է, իսկ դուք ձեր մարդասիրությամբ ու խղճին ու խաչին ապավինելով... խա՛չ եք պարզում սրի դեմ...

- Սպասի՛ր, Ռա՛մ, մենք Մեծն Տիգրան ենք ունեցել, որ սարսափի մեջ է պահել հարեւաններին...

- Գիտեմ, իսկ ասա, ի՞նչ պատահեց հայերիդ, ի՞նչ է, հայ կանայք արու զավակներ չեն ծնում: Ախր դուք զորական ուժեր ունեք: Ես շրջել եմ Մեծ Հայքով, տեսել եմ, ամեն տեղ զորքեր կան, իսկ ի մի բերել ձեր զորական ուժերը չեք կարող: Ա՛յ, ասում ես՝ արքան զորքերը տարավ պարսիկների դեմ, իսկ դու, խելոք մարդ, ասա՛, ինչու արքան չսպառեց սպարապետին: Ձեր անհաղթ սպարապետին: Դուք, հայերդ, վահան ունեք՝ Վաչե սպարապետը: Շապուհը նման զորավարին փառքի ու ոսկու մեջ կպահեր, իսկ դուք չսպասեցիք նրա գալուն: Չարմանում եմ, նաեւ զայրանում, քանզի ձեր հետ հաց եմ ուտում... Չէ՛, ձեզ Շապուհի պես արքա է պետք, որ քաշի...

- Աստված սիրես, մի տուր այդ բորենու անունը: Նա անգամ սեփական երկիրն է արյան մեջ պահում...

- Դուք էլ աղոթքով եք պահում երկիրը: Տեսնում եմ, թե ինչպես եք պահում: Ամեն նախարար թքել է գահի վրա, անում է, ինչ կամենում է: Ա՛յ, օրինակ, երբ անցնում եմ Պարսկաստանով, չեմ վախենում ասպակներից, քանզի ամենամեծ ասպակին, ավագակին, արքայից արքային վճարել եմ երկրով անցնելու վարձը: Սպասի՛ր, չմոռանամ ասել, Պարսկաստանում զորական մեծ ուժեր են շարժման մեջ մտել: Մեծ պարետագմի հոտ եմ առնում, գիտեմ պատերազմի նշանները՝ պատերազմ Հռոմի ու Պարսկաստանի միջեւ: Լավ հիշիր, մի քանի շաբաթից Շապուհը կսկսի ավերել Հռոմի սահմանները, դուք էլ կտուժեք: Մծբինը փափուկ բարձ է Հռոմի համար: Շապուհի համար կոկորդում մնացած ոսկոր: Նա արդեն ոտնատակ է տվել Մծբին դաշնադրությունը... մենք՝ վաճառականներս: Նա ոտնատակ է տվել Մծբին դաշնադրությունը... Մենք՝ վաճառականներս, դեմ ենք պատերազմներին, այն խափանում է ճանապարհները:

Երկուստեք քռեցին, լռեցին երկար: Ամեն մեկը իր խոհերի հետ էր:

- Շա՛տ մի տրտմիր, արի խմենք, ինչքան էլ քննենք արքաների գործերը, մեկ է, անհույս է, ինչ էլ անենք, նրանք կտրելու են կապերը, պոզահարելու են իրար:

- Դու տեսածներդ պատմիր կայսրին, չէ՞ որ Հռոմ ես գնում:

- Այո՛, սակայն ես նրա հետ չեմ խոսի, ինչպես քեզ հետ: Նա իմ եղբայրը չէ, ոչ էլ,- սպասեց, գտավ հայերեն բառը, ծիծաղեց,- ո՛չ էլ իմ խնամին, ինչպես ասում են Արտաշատում: Կասեմ զորքերի տեղափոխում, իսկ ում համար՝ չգիտեմ: Մի՛ մոռացիր, ես դեռ շատ ու շատ անգամներ պիտի գնամ-գամ այդ երկրներով,- գինին իր գործն էր անում,- Շապուհն էլ, կայսրն էլ ցուլեր են, վա՛յ մեզ, թե կտրեցին կապերը...

Ոլորապտույտ ճանապարհով զորքերը բարձրանում են Ձորաց Պահակ: Շատերը, այդ թվում նաեւ արքան, առաջին անգամ էին տեսնում հռչակավոր բերդը, որ փակում էր հայկական Տավրոսով Այրարատ տանող ճամփան ճամփան:

Եղել են դեպքեր, երբ թշնամին խաբեությամբ գրավել է բերդը, ավերել, սակայն տայոց արքաները վերականգնել են: Ստույգ է, բերդը երկրի սահմանայինից պակաս նշանակություն չունի:

Բերդի թիկունքին Նեվբրովթն է, կողքին՝ անդնդախոր կիրճ, ուր գահավիժում է Ջերմ գետը:

Փոքր կայազորն անգամ կարող է պաշտպանել բերդը, քանզի այն, իրոք անառիկ է: Բերդն արարել են մեր փառապանծ նախնիք, որոնք ռազմի գործում հմուտ են եղել, կարողացել են բնության անառիկությունը գումարել մարդու հանճարի ուժով ստեղծված պաշտպանության ամրությունները... Իրո՞ք, անառիկ է բերդը: Երկու կողմերից պաշտպանված է անդունդներով, իսկ ճատակից պաշտպանվում է բազմաթիվ աշտարակներով, որոնք առաջ են ցցված բռունցքի պես, իսկ

պարհասները մի փոքր լարված, ետ են քաշված, ասես ցույց են տալիս, որ այլ ճանապարհ չկա: Կամ պիտի զարկվես աշտարակներին կամ անդունդ գահավիժես, իսկ անդունդի հատակը, որքան էլ փորես, չես տեսի: Այնտեղից մահաշունչ սառնություն է բարձրանում: Աշտարակների վրա նետաձիգների համար բազմաթիվ անցքեր են բացված, նաեւ անցքեր, որտեղից կարելի է հալած կուլար ու արճիճ թափել հարձակվողների գլխին:

Միակ ճանապարհը, ոլորապտույտ թավալվելով, գալիս է բերդ, կորում է բերդադռան տակ, ապա բերդի թիկունքից դուրս գալով, գնում է Նեվբրովթի փեշերը: Արդ, բերդի ճանապարհով գալիս է արքայական գունդը, որից առաջ ընկած հինգ դրոշակակիրներ բերում են արքայական դրոշն ու զինանշանը, ապա նետաձիգ վաշտերն են, նրանց հետեւից գալիս է սպառազեն հեծելազորը: Սրանք են հայոց զորքի փառքը: Հեծյալներն ամենքն էլ մարտական ընտիր նժույգներով են, հագել են օղագրահներ, ունեն կլոր երկաթագամ վահաններ, երկսայրի հայրական սրեր: Օղագրահի վրայից կրծքերը պաշտպանում են երկաթյա ասպարները, ունեն սռնապաններ, երկաթյա մույկեր: Ծանրագեն են հեծյալները, նրանց ահավոր գենքը անսովոր երկար նիզակներն են: Այդպիսի երկար նիզակներ հարեւան երկրներում չկան:

- Ահա՛ Ձորաց Պահակը,- Դատաբեն խոնարհվեց արքային,- բերդը փակում է իմ աշխարհ տանող ճանապարհը:

Բերդից դուրս եկան երկու զորական: Նրանցից մեկը ծեր էր, հնաճ հուսած մորուքով: Ծերունին բերդապահ Անդրանիկ սեպուհն էր: Եթե հաշվես նրա բազմաթիվ թոռներին ու ծոռներին, կհավատաս, որ իրոք հարյուր քսան տարեկան է: Նրա անդրանիկ որդին յոթանասուն տարեկան հսկա է, դեռ այնքան հզոր, որ արջի որջ է մտնում դաշույնով:

Անդրանիկ սեպուհը չգիտե թոռների ու ծոռների անունները, սակայն արի տես՝ հիշում է բերդի համար մղված բոլոր կռիվները: Չարմանալին այն է, որ ծերունին շատ բաներ գիտե նախնյաց մասին: Երբ մի գավաթ գինի է խմում, պարզվում է հիշողությունը, սկսում է խոսել հայրիկների մասին, իսկ վերջում հայիոյում է բոլոր աստվածներին եւ գտնում է, որ ամենամեծ ու անժշտելի Աստվածը՝ Արեւն է ու վերջ: Նա թքած ունի բոլոր աստվածների վրա, անգամ տիեզերքի, իսկ Արեւ Աստվածը միակն է նրա համար...

Բերդապահից հնության հոտ է փչում: Այնքան ծեր է, որ ամեն ոք նրան տեսնելիս ուզում է հարց տալ պապերի ու ապուպապերի մասին: Չարմանալին այն է, որ ծերունին դեռ կարողանում է տեսնել, լսել, չի մոռացել մարդկանց անունները: Ստույգ է, նրա փոխարեն բերդի գործերը վարում է որդին, սակայն վերջին խոսքը նրանն է:

Բերդապահը ծնկի իջավ արքայի առաջ, նրան մեկնեց բերդի բանալիները:

- Տե՛ր արքա, թող Արեւ Աստծո աչքը քաղցր լինի վրադ,- թերեւս ծերունին չգիտեր որ աստծուն է պաշտում հայոց արքան:

Այդ պահին աչքն ընկավ կաթողիկոսին, շփոթվեց: Նրա գլխում հին ու նոր աստվածները խառնվեցին իրար, մոմռացրեց քթի տակ:

- Հայ աստվածներին վտարեցին: Թու՛, ինչ օրի հասանք, ինչու՞ այսքան օրպակասեցինք, ինչու՞, ինչպե՞ս եւ ի՞նչ անել,- հարց տվեց անհարկի ու անպատասխան մնաց հարցը, օրորեց գլուխը... Սա էլ կաթողիկոսն է, ասել է թե Մեծ քրմապետը,- սակայն չխնդարեց առնելու վեհափառի աջը:

Արքան բերդ մտավ: Նրան ուղեկցում էր Դատաբեն, բացատրություններ էր տալիս բերդի մասին:

- Պարսիկները չե՞ն երեւացել,- բերդապահին հարցրեց արքան:

- Ո՛չ, տե՛ր արքա,- ասաց Հրահատն ու աչքի տակով նայեց Դատաբեին:

- Պարսիկները չեն հասել Ռշտունիք, հակառակ դեպքում մենք լուրեր կունենանք,- խոսեց Մանեհճիրը:

- Իսկ եթե փակե՞լ են բոլոր ճանապարհները, բռնել են լրաբերներին,- հարցրեց Ջոն իշխանը:

- Տե՛ր արքա, եթե պարսիկները ձոր մտնեն, մեր դետքերը կվառեն պահակային խարույկները: Դեռ ոչ մի խարույկ չի վարվել,- խոսեց Հրահատը,- մեր խուզարկուները հասնում են մինչեւ ձորի մուտքի շեներն ու ետ են գալիս: Իշայրի կողմից էլ լուրեր չկան, առավել եւս՝ Մոկսից: Եթե պարսիկները ձոր մտած լինեին, գոնե փախստականներ կգային բերդում պատսպարվելու...

- Տե՛ր Բզնունյաց, հանգի՛ստ տուր զորքերին, դետքե՛ր կարգիր, խուզարկուներ ուղարկիր: Հետեւիր ,որ կաթողիկոսին ու եպիսկոպոսին հարմարավետ օթեաններ տան:

Արքան գնաց իրեն հատկացված հարկաբաժինը: Նախարարները հավաքվեցին բերդի մեծ սրահում: Այստեղ նրանց զարմացրեց մեծ ու ճոխ սեղանը: Գինիների առատությունը շփոթեցրեց նրանց:

- Խնջույքի չենք եկել: Ասես մեկը փորձում է մեզ հարբեցնել,- ծիծաղեց Դատ իշխանը:

- Ձորի մուտքից մինչեւ բերդ որքա՞ն ժամանակում կհասնի հեծյալը,- հարցրեց Ջոն իշխանը Հրահատին:

- Կես օրում, եթե չխնայի նժույգին: Իսկ զորքերը առավոտյան ձոր մտնելիս երեկոյան հագիվ են բերդ հասնում:

- Եվ դու ոչինչ չե՞ս լսել պարսից գևդի մասին:
 - Ո՛չ, տեր իմ, այսօր ձեզանից լսեցի:
 - Դու պիտի հարյուր փարսախի վրա լսեիր պարսից ոտնատրոփը,- նետեց Դատը:
 - Լա՛վ, լա՛վ,- նրան ընդհատեց Ջոն իշխանը,- մենք գոհ ենք հյուրասիրության համար,- երբ
 Հրահատը դուրս գնաց, դարձավ ընկերներին,- տեսա՞ք, ինչ կախազուխն է: Սրա տակ շատ բաներ կան:
 Ես սրան չեմ հավատում եւ ոչ միայն սրան:
 - Մարդ աստծո, քեզ որ լսենք, բոլորն էլ դավաճաններ են,- ծուռ ժպտաց Մար իշխանը,- դու որեւէ
 բան ես նկատել: Եթե լուրջ վտանգ կա, հարկ է զգուշացնել արքային:
 Մյուսները թողեցին ուտելը: Չգացվեց, որ Մարի խոսքերը հասան ամենքին:
 - Մեզ միայն դավաճանությունն էր պակասում,- զայրացավ Մանակը:
 - Է՛, բանը որ դրան հասավ, տանուլ կտանք:
 - Տյա՛րք,- տեսնելով, որ սրահում գահին նվիրված մարդիկ են, խոսեց Ջոն իշխանը,- Անդրանիկ
 սեպուհի մասին կասկածներ չունեմ, սակայն որդին... Տեսա՞ք ինչպես կախազուխ դուրս գնաց,
 հավատացած եմ, ինչ-որ անցքից լսում է մեզ: Այս հին ամրոցներում այդպիսի բազմաթիվ անցքեր
 կան: Ամենուր ականջներ կան, անգամ անցքեր կան նետահարելու համար,- կանգնեց սրահի
 կենտրոնում, խոսքը շարունակեց համարյա շշուկով,- հարց ունեմ ամենքիդ: Երբեւէ եղել է, որ
 Դատաբեն խնդրի իրեն կարգել գորավար,- Կորդովաց տերը ժպտաց խորամանկ, աչքով արեց:
 - Ես չեմ մտաբերում,- ասաց Մարը:
 - Ես էլ,- նրան միացավ Դատը,- իսկ Մանհճի՞րը...
 - Նա էլ պակասը չէ, միշտ էլ խուսափել են:
 - Սակայն այս անգամ պատճառ ունեն արդարացնելու իրենց խնդրանքը,- դարձյալ խոսեց Մարը:
 - Անհերքելի է այս պարագան,- ձայնն ավելի ցածրացրեց Ջոն իշխանը,- եթե վաղը առաջարկեց
 զորքերը մտցնել Ազնուրաց Ձոր ու փակել պարսից ճամփան, ամեն բան պարզ կդառնա: Հասկացե՞ք,
 երկուսն էլ պնդում են, որ պարսիկները ձոր չեն մտել: Ահա այն ամենը, ինչ իմ մեջ կասկած ծնեց:
 Հուսով եմ, հասու եք մտքերիս ընթացքին...
 - Այո՛, այո՛,- մոմռացրեց Մարը: Նա այնպես էր քաշքշում մորուքը, ասես իրոք ցանկանում էր պոկել,-
 մի՞թե արքան կհամաձայնի, չէ՞ որ Ձորաց Պահակը նրա համար է, որ փակի ձորի ելքը: Իսկ ձորը
 ծուղակի համար է...
 - Վերջապե՛ս,- զայրացավ Ջոն իշխանը:
 - Մի՞թե դավ են նյութում, հարկ է տեղյկ պահել արքան...
 Մինչ նախարարները զրուցում էին, Մանեհճիրը մտավ Դատաբեի օթեւանը:
 - Եկա՞ր, մարդ Աստծո, այսքան սպասե՞լ կլինի:
 - Ի՞նչ է, իշխանին ցերեկով պիտի բերեի:
 - Ի՞նչ իշխան:
 - Այս, ես անձամբ եկա ի մոտս ծանոթանալու գործերին, պայմանավորվելու,- ասաց
 բարձրահասակ, կնգուղավոր մարդը:
 - Վռամշապուհի իշխան,- Դատաբեն ապշահար ելավ տեղից,- գիտեի քաջ ես, սակայն ոչ այսքան
 անխոհեմ: Բավական է մի անզգույշ քայլ, կորած ենք:
 - Իսկ ի՞նչ է, հո՞տ են առել:
 - Չէ, սակայն կասկածում եմ Ջոն իշխանին: Սատանայից քառասուն օր առաջ է ծնվել: Ինչ բերդ է
 մտել, ամեն ծակ ու անկյուն քիթ է խոթում: Բերդապահին դուրս է արել սրահից, խոսել են առանձին:
 Սակայն Հրահատը լսել է գաղտնանցքից: Կորդովաց տերը կասկածում է ինձ ու Ռշտունյաց տիրոջը:
 - Վատ է, ի՞նչ եք վճռել:
 - Իշխանը ասել է, թե ես արքային միտք հուշեմ զորքերը Ազնուրաց Ձոր մտցնել, ասել է թե
 դավաճան եմ...
 - Մեզ պետք է զորքերը ձոր մտցնեն, էլ որտե՞ղ կարող եմ ծուղակել,- պարսից իշխանը թթվեցրեց
 դեմքը:
 Դատաբեն սկսեց ելք փնտրել:
 - Սպասե՛ք,- խոսեց Ռշտունին,- հարկ է արքային այդ միտքը հուշել այս պահին, իսկ առավոտյան
 արքան այդ միտքը կներկայացնի որպես սեփական, քանզի ոչինչ չի հասկանում ռազմի գործերից:
 Ուզում է ցույց տալ...
 - Իսկ եթե վաղը արքան, վախենալով պատասխանատվությունից, հայտարարի, որ դու ես հուշել
 այդ միտքը, դա կհաստատի Ջոն իշխանի կասկածը:
 - Հուսանք, արքան այդ քայլին չի գնա, փառասեր է: Նա ուզում է անտառների ու Դվինի կառուցման
 գործին մի ռազմական հաղթանակ ավելացնել, չէ՞ որ մեծագործության մարմաջ ունի: Մեծագործ
 կոտակ,- հռիռաց Դատաբեն:

Արեւի ճառագայթները, պոկվելով Կոտուրի լեռներից, առանց Բզնունյաց ծովակ ընկնելու, հանկարծակի լուսավորեցին բերդի աշտարակները: Չինվորներն արթնացան: Յեծյալները սկսեցին թամբել նժույգները, հետիոտն զինվորները հավաքել իրենց մախաղները:

Գիշերվա թափթփվածության հետքն էլ չմնաց: Չորքերը զորքի նմանվեցին, աշխուժացան, ավազները սկսեցին ստուգել զենքերը, նետերի պաշարները: Եվ այդ ամենն անում էին հայիոյելով: Դա՛, ի՞նչ ավագ, որ չհայիոյի: Սրանք ամենքն էլ մարտերում թրծված զորականներ են, առանց որոնց կռիվ ու պատարեզ չի լինում: Ամեն կռվում նրանք են հերոս, սակայն փառքը հասնում է զորապետներին, զորավարներին:

Առանց պատերազմի անխոնջ մշակների՝ ավազների կռիվ ու հաղթանակ չկա ու չի կարող լինել: Սրանք խաղաղ պայմաններում համեստորեն մի կողմ են քաշվում, կռվի ժամանակ կռում ու կոփում են զինվորի Ոգին, հաղթանակի նախապայմանը: Ամենքից վաղ արթնացել էին աշխարհագորականները: Նրանք մի պահ մոռացել էին ուր լինելը, ասես դաշտ պիտի գնային, գոմ, մի խոսքով, գնային իրենց սովորական գործերին, ավա՛ր... Արթնանալով, իրար նայեցին, հասկացան, կռիվ են եկել, հոգոց հանեցին, մի կողմ վանեցին խաղաղ օրերի հոգսերն ու զինվոր դարձան:

Յայկը համարյա չէր քնել: Շրջում էր աշխարհագորայիների մեջ, շտապեցնում էր, ստուգում զենք ու զրահները:

- Մի՛ աճապարիր,- խոսեց մի տարեց շինական,- զորապե՛տ, առանց մեզ չեն սկսի:

- Յող հայրենիի զինվոր,- զայրացավ արտաշատցի Վարդանը,- զորապե՛տ, դու ցույց տուր ծիծաղողին, Էնպես շշպռեմ, որ հոր հարսնիքը հիշի: Դու մի դրանց նայիր, ելնեիք էլի, ի՞նչ էիք սպասում:

- Յերի՛ք խոսեք,- զայրացավ մի ուրիշ շինական,- Յայկ զորապետ, դու Էն ասա, որ պիտի մտնե՞նք, ախր վտանգավոր Է...

- Իրավացի ես, սակայն Էստեղ մնալով պարսիկներին երկրից չես վտարի:

Արքան Է վճռելու ամեն բան:

- Չորապետ, ես կռվից խելքս բան չի կտրում,- Խաժակն Էր,- սիրտս վատն Է գուշակում:

- Մի՛ կռավիր,- զայրացավ Վանեն, սա լաթով սուրն Էր սրբում,- տես Է, խոփի պես փայլում Է: Ես ձեր մերը... Ախր չեն թողնում մարդ իր գործն անի: Մի գլուխ իրար միս են ուտում: Շապուհը խելք չունի, ասա, շուն շան որդի, մի քիչ համբերիր, մինչեւ վարեինք, ցանեինք, բերք հավաքեինք, թալանելու բան կլիներ...

- Լա՛վ, լա՛վ, հերիք լեզուներիդ տաք, պատրաստվեք,- զայրացավ Յայկը:

Այդ պահին բերդի մեծ սրահում հավաքվել էին նախարարներն ու զորապետները, այստեղ էին բերդապահն ու Յրահատը, սպասում էին կաթողիկոսին: Արքան մռայլ Էր, անտրամադիր: Սպասում էին, ասես առանց կաթողիկոսի չէին կարող զորական խորհուրդ սկսել: Վերջապես ներս մտավ վեհափառը: Աղբիանոսը հետեւում Էր նրան:

- Տյա՛րք, լուր առա, պարսիկները երեւացել են Ռշտունիքում, անգամ Նպատ լեռան լանջերին: Ավերում են շեներն ու քաղաքները: Կա մի հանգամանք, որ խորհել Է տալիս: Պարսից գնդի կեսը չկա, ասես անհայտացել Է: Խուզարկուները չեն գտնում այդ վաշտերը:

- Թերեւս ետ են քաշվել, կամ թալանով են զբաղված:

- Տե՛ր արքա, քանի չենք պարզել անհայտացած վաշտերի պարագան, չի կարելի ձոր մտնել,- ասաց Ջոն իշխանը:

- յո՛, այո՛, իրավացի Կորդուքի տերը,- իշխանին միացան մի քանի հոգի: Կաթողիկոսը գավազանը զարկեց հատակին: Լռեցին, նայեցին զարմացած, նաեւ զայրացած:

- Տյա՛րք ,մի՛ մոռացեք, այնտեղ կոտորվում Է քրիստոնյա ժողովուրդը: Ուշքի եկ, տեր Կորդուպաց, ինչպե՛ս կարելի Է սպասել...

- Ինչու՞ չի խոսում Ռշտունյաց տերը,- Ներսեհի ականջին փսփսաց Ջոն իշխանը,- Էստեղ մի բան կա, այն դեմ Է տրամաբանությանը: Մի՞թե չի խնդրելու զորքերը ձոր մտնել...

- Ի՞նչ ես փսփսում, տե՛ր Կորդուպաց,- զայրացավ կաթողիկոսը, անհասկանալի պատճառով խոսեց այնպիսի բաներից, որ չէին սպասում,- ասա մտքիդ, գիտեմ՝ շատ ես ցավում հեթանոս տաճարների կործանումը, ասել ես մի քանի անգամ, որ կործանեցինք լույսի կաճառանոցներ... Չե՛ս ուզում գնալ օգնության:

- Վայել չէ հոգեւոր առաջնորդիդ ինձ մեղադրել: Ես իմ նվիրվածությունը վաղուց եմ ապացուցել Տեր Աստծուն ու գահին, թող իմ բազմաթիվ վերքերն ու սպիները սկայեն վարքս, նաեւ քո դեմ, որ միայն աղոթքով ես պաշտպանում երկիրը: Նաեւ քո դեմ, որ հողեր ես կորզում ի օգուտ կաթողիկոսարանի, հողեր, որոնց վրա մայրերը զինվոր չեն ծնելու, այլ միայն սեւավորներ: Ես մեղադրում եմ քեզ, վեհափա՛ռ...

- Ինչպե՛ս ես հանդգնում, դու՛...,- վճռեց կռվի մեջ մտնել Աղբիանոսը:

- Ես եկել եմ կռվելու եւ ոչ վիճելու,- զայրալից խոսեց Ջոն իշխանը,- հոգեւորները փորձված են

վեճերի մեջ, ինչպես Մանավազյանների ու Որդունիների հետ...

- Իշխանն իրավացի է,- Ջոնին միացավ Մանակ իշխանը:

- Տե՛ր արքա,- տեղից բարձրացավ Մար իշխանը: Նրան արդեն կանգնեցնել անհնար էր,- մի՛ ստիպիր մեզ պարապ ժամանակ վատնել: Վեհափառին ինչ՝ նրա ձայնը Դարանոյքից է գալիս,- ապա զայրացավ, ու մեկնեց ամենքի համար անսպասելի հանգստացավ,- ի՛նչ կա, վաղը կռիվ կգնան հոգեւորները: Ես նրանց համար սուր չեմ մերկացնի: Թող նրանք իրենց գավազաններով ու աղոթքներով կռվեն...

- Տե՛ր արքա, մեզ մարտի տար,- կատաղեց Դատը,- բա՛վ է, ես տանել չեմ կարող հոգեւորների ծաղրը: Կռվում ես հոգեւոր չեմ տեսնում: Իսկ հողերն ու ընծաները նրանց է հասնում: Հող հայրենիի ու գահի համար արյուն հեղողներին մոռանում ես, ինչպես մոռացաք գուգազավորներին, անգամ նրանց զորապետին՝ Հայկին, մոռացաք, չե՞ որ առանց նրա Վաղարշապատը չէին գրավի: Բա՛վ է, տեր արքա, երկիրը սրով ես շապտապանում ես ոչ աղոթքով...

- Ամո՞թ քեզ, Դատ իշխան, որ վեհափառի ներկայությամբ այդքան հանդգնում եմ,- Աղբիանոսը չկարողացավ շարունակել: Դատն ավելի կատաղեց:

- Իսկ դու, սրբազան, լավ կանես լռես: Դու քո անկարողությունը ցույց տվեցիր Որդունիների ու Մանավազյանների մոտ: Տյա՛րք, ես մի բան չեմ հասկանում, ինչու՞ իր առաքելությունն անկատար թողած հոգեւորին տվեցին ըմբոստ նախարարների հողերը: Ես հող ու հարստություն չեմ ակնկալում, սակայն կուլ գնալ հոգեւորներին...

Սա արդեն հանդգնություն էր արքայի հանդեպ, սակայն ինչպես երեւում էր Դատը չէր ավարտել: Նա ուզում էր շարունակել, արքան բարձրացրեց մականը: Լռեցին: Անգամ Դատը զսպվեց: Արքայական իշխանության խորհրդանշանը զսպիչ ուժ ուներ, լռեցին:

Արքան հոգու խորքում կամենում էր այս վեճը: Նրան էլ էին ձանձրացրել հոգեւորների աշխարհիկ միտումները, ամեն գործի խառնվելը: Վճռեց վերջ տալ վեճին:

- Կմնաս վերջապահում,- ասաց Դատին: Արքայի խոսքերում պարսավանք ու վիրավորական ոչինչ չկար, ամենքն էլ դա հասկացան: Արքան հանգիստ էր, անգամ գոհ:

- Հրամանդ ի կատար,- խոնարհվեց Դատը:

- Տե՛ր արքա, մի՞թե Ռշտունիքը անպաշտպան պիտի թողնենք,- վեհափառը ցանկանում էր ցույց տալ, որ վիրավորվել էր,- մի՞թե վայել է քրիստոնյա արքայիդ անպաշտպան թողնել ժողովուրդը:

- Բա՛վ է,- համարյա գոռաց արքան,- գնում ենք փրկելու Ռշտունիքը:

- Վերջապե՛ս,- Ռշտունու ականջին փսփսաց Դատաբեն:

- Շարժվում ենք անհապաղ,- շարունակեց արքան,- առջեւում կլինի մատենիկ գունդը, ապա աշխարհագորդը: Վրու՛յր, կարգադիր շեփոր փչեն:

- Կուլ գնացինք հոգեւորներին, տանուլ տվեցինք պատերազմը,- Դատն էլ չկարողացավ զսպել իրեն:

Բերդում չարագուշակ հնչեց շեփորը:

- Սկսվեց,- տնքաց Հայկը,- դե՛, ժողովուրդ, մեր ժամն էլ եկավ: Ավագներ, ջոկերը իրար չմոտեցնեք: Վաշտապետներ՛, ձեր վաշտերի արանքում դետքեր դրեք: Աստված մի արասցե, ծուղակ լինի:

- Հայկ, լեզուդ չորանա, բա դա ասելու բան է,- մոմռացրեց Խաժակը:

- Դու Խաժակից էլ անցար,- խոսեց Վանեն: Նա էլ էր անհանգստացած:

Չինվորները մտան երթային կարգի մեջ: Դատաբեն գնդից գունդ էր անցնում, շտապեցնում էր, հայիոյում, սպանում: Վերջապես ամեն բան կարգավորվեց, արքան բարձրացրեց մականը:

- Չորագո՛ւնդ, իմ հետեւից, վարգով առա՛ջ,- գորքերի վրա տարածվեց Դատաբեի հրամանը:

Այստեղ կատարվեց այն, ինչ հաշվի չէին առել Դատաբեն, Մանեհճիրն ու Վռամշապուհը, արքան ու կաթողիկոսը ետ դարձան, բերդ մտան:

- Թու՛, ես ձեր...- հայիոյեց Մանեհճիրը,- տեսա՞ր աղվեսներին:

- Ոչինչ, մի բան կմոգոնենք,- մոմռացրեց Դատաբեն, սակայն նա դա արեց միայն իրեն ու ընկերոջը հանգստացնելու համար:

Այդ պահին Ջոն իշխանի մոտ հավաքվեցին Մարը, Ներսեհը, Դատը, քիչ անց եկավ Մանակ իշխանը:

- Հը՛, ի՞նչ կասես, Ջոն իշխան, քմ ասածը չստացվեց: Արքան ինքն է վճռել...

- Վախենում եմ մեզ ծուղակեն,- հազարապետն էր, չգիտես ինչպես հայտնվել էր երիտասարդների մոտ:

- Դու՞ էլ ես այդ մասին խորհում, տեր Գևունյաց,- հարցրեց Դատը:

- Ի՞նչ է, մենակ դու՞ք աչքեր ունեք,- զայրացավ ծեր հազարապետը, - ես ձեր տարիքում լավ կռվող եմ եղել:

- Եթե մեզ բան պատահեց, կմնանք գուգազի հույսին:

- Պարզի՛ր միտքդ, տե՛ր Կորդովաց:

- Շատ պարզ, մատենիկ գունդը չենք կարող ձգել ձորի երկարությամբ, իսկ աշխարհագորդը ուզես,

չուզես՝ կտոր-կտոր է լինելու, ձգվելու են ձորի երկարությամբ: Մեզ վրա կհարձակվեն անհայտացած պարսից վաշտերը:

- Ասել է թե, արդ, նրանք աճապարում են միանալու մեզ շրջապատողներին,- Ջոն իշխանի միտքը շարունակեց Դատը:

- Տեր Աստված, հնար տուր անփորձանք դուրս գանք այս անիծյալ ձորից,- քրթմնջաց հազարապետը:

- Հարկ է կանչել Հայկ գորապետին, ամեն բան ասել նրան...

- Այդ ռամիկին,- Մարը հեզնոտ նայեց Ջոն իշխանին:

- Այո՛, այլ՛, այդ ռամիկին, այդ խիզախ ու իմաստուն մարդուն:

- Փորձը փորձանք չդառնա, կանչի՛ր քո Հայկին,- ասաց Մանակը:

Քիչ անց Ջոն իշխանի թիկնապահի հետ մոտեցավ Հայկը:

- Լսի՛ր, Հայկ գորապետ,- սկսեց Ջոն իշխանը,- այն, ինչ կասեմ, միայն կասկած է,- լռեց, մտքերը հավաքելու, չհասցրեց շարունակելու:

- Կորդովաց տերը կասկածում է, որ մեզ ծուղակելու են,- հանգիստ նայելով իշխանին, ասաց Հայկը:

- Դու բա՞ն գիտես:

- Ես գորական չեմ, սակայն երեխան անգամ կհասկանա, Էստեղ ծուղակի տեղ է, Էստեղ մի վաշտով գնդի ճամփա կփակվի,- նայեց նախարարներին,- մենք ռամիկ մարդ ենք, մենք ձայն չունենք երկրի գործերում, կռվի մեջ,- հանկարծ ձայնը իմաստնացավ,- դուք, որ ճանաչում եք Բզնունյաց ու Ռշտունյաց տերերին, ինչպե՞ս համաձայնվեցիք մտնել նրանց հրամանի տակ: Ողջ երկիրն է ճանաչում նրանց...

- Օ՛Ֆ,- տևեաց Մարը,- եթե անգամ ռամիկը գիտե այդ մասին, զուր ենք հասել այստեղ: Էն գլխից պարտվել ենք: Իսկ դու «գորապետ», կոչումը շեշտելով, հարցրեց Մարը,- ի՞նչ ես առաջարկում:

- Ասեմ, ոչ երկնչել եմ, մենք ռամիկ ենք, երկրին ու հող հայրենիին չենք դավաճանի, եթե դավաճանեն, կդավաճանեն Ռշտունին ու Բզնունին...

- Լռի՛ր, դու, ինչպե՞ս ես հանդգնում,- կատաղեց Մարը,- դու՛, դու՛...

Իշխանները հանկարծ իրենց տեսան աշխարհագորայիններով շրջապատված: Սրանք այնքան արագ էին մոտեցել, որ նախարարների թիկնապահները դուրս էին մնացել շղթայից: Շինականները հանգիստ տեսք ունեին, սակայն...

- հանգի՛ստ, իշխան, սուրդ հանգիստ թող: Ինձ մի վախեցրու էդ երկաթի կտորով: Ես իմ վախը թաղել եմ Արտաշատի առվի մեջ,- Հայկի հայացքն այնքան սառն էր, որ իշխանը կարկամեց:

Նա առաջին անգամ էր հանդիպում Հայկին: Առաջին անգամ էր տեսնում իշխանի հետ ազատ խոսող, ավելին՝ չվախեցող շինականի:

- ի՞նչ կա, Հայկ եղբայր, հո նեղը չե՞ս ընկել,- ծուռ ժպտաց Խաժակը:

Նուժյգը մոտեցրեց Հայկին ու Մարին,- Աստված սիրես, իշխան, հեռու մնա փորձանքից: Մենք եկել ենք պարսիկներին զարկելու...

- Վե՛րջ տվեք, ձեր գորապետին ոչ ոք չի նեղացրել,- խոսեց Ներսեհ իշխանը, ապա մեղմեց,- գնացեք, շինական եղբայրներ, մի պղտորեք հոգիներդ մարտից առաջ:

Ծոփքի Շահե Ներսեհ իշխանի տեսքն այնքան պատկառազու էր, որ գուգազավորները լայնացրեցին շղթան, սակայն չհեռացան:

- Հայկ գորապետ,- ասես ոչ մի միջադեպ էլ չէր եղել, խոսեց Ջոն իշխանը,- ես համամիտ եմ քեզ հետ, գունդդ ձգիր որքան հնար կա, սակայն ոչ իժաշարուկի, այլ ջոկատ-ջոկատ, իրարից հավասար հեռավորության վրա, որպեսզի հարձակման դեպքում հնար լինի օգնելու իրար:

- Հրամանդ իշխան, ես քեզ հասկացա:

- Վահանավորներին ու զրահավորներին դիր ջոկերիդ կողքերից, նետերից պաշտպանելու համար: Պատրաստ եղեք անակնկալների:

Քանի իշխանը խոսում էր, Հայկն այնքան հանգստանում էր, հարգանքով լցվում դեպի երիտասարդ իշխանը, որին ամենքն էլ հարգում էին խելահեղ խիզախության, ռազմի գործի քաջատեղյակության համար: Հայկը չէր մոռացել, որ Վաղարշապատի մոտ իրեն փրկեցին իշխանի թիկնապահները: Ականջին հնչում էր.

- Կորյուն, Հայկին փրկի՛ր, վիրավոր է...

- Գնա՛, Հայկ եղբայր,- իշխանը մտերմիկ ժպտաց,- թող Վահագն Աստված լինի մեզ ամենքիս գորավիզ: Գնա, իմ արիական եղբայր:

Հայկը հեռացավ քառատրոփ, գուգազավորները հետեւեցին նրան: Իշխանները հասան ճանապարհի ոլորանին, կանգ առան, նայեցին ձորի եզրին: Վերելից քարեր թափելով, կարելի էր վնասել գորքերին: Սակայն, այստեղ պարսիկները ծուղակ չէին սարքի, հայերը ետ դառնալու տեղ ունեին:

Ամենքն էլ հասկացան այդ պարագան:

- Տյա՛րք, քիչ էլ գնանք ձորը կլայնանա: Այնտեղ էլ մեզ կծուղակեն: Մի խոսքով՝ մինչեւ պարսիկները

մնում է քառորդ փարսախ: Ես էլ այնտեղ ծուղակ կսարքեմ:

- Ձորը իր տան պես գիտե Դատաբեն,- նետեց դեռ չհանգստացած Մարը,- պատժել էր պետք ռամիկին, տիրագլուխ են դարձել, անկարգ ու անզուսպ: Դատը նժույզը մոտեցրեց ընկերներին, ասես չէր էլ լսել Մարին: - Յարկ է գնդերը մոտեցնել իրար, դյուրին կլինի հարվածը ետ մղել, իսկ գուգազավորներին բաժանելը խելացի միտք է, եթե փրկվենք, կփրկվենք ռամիկի շնորհիվ...

- Յերի՞ք կռավեք,- զայրացավ Ներսեհը,- ձեզ որ լսենք, ետ պիտի դառնանք:

- Ամենախելացի բանը դա կլիեր,- զարմացնելով բոլորին, ասաց Ջոն իշխանը,- ափսո՛ս, կորցրեցինք այդ հնարավորությունը:

- Ինչու՞,- հարցրեց Մանակը:

- Բացատրելու կարիք չկա...

Իշխանի խոսքերը կորան հեռվից գլորվող աղմուկ-աղաղակների մեջ:

Ձորի պռիկնց քարեր, գերաններ գլորվեցին: Ձորը լցվեց դժոխային աղմուկով:

- Սկսվե՛ց,- ծիծաղեց Ներսեհը,- արդ, հասկանալի է, մեզ խաբեցին: Ահա եւ պարսիկները, շատ էիք փափագում տեսնել,- ցույց տվեց լանջն ի վար արշավող հեծյալներին:

- Ի գե՛ն, հայե՛ր, մեզ ծուղակել են,- որոտաց Դատի ձայնը,- զինվորնե՛ր, եղբայրնե՛ր, մի՛ երկնչեք անօրեն պարսիկներին:-

- Ե՛տ, ե՛տ,- գոռում էին սեպուհները: Սակայն ինչպես ետ դառնաս, երբ երկու կողմից սեղմել են պարսկական գնդերը, կոտորում են անխնա, այնպես, որ երեք ժամից ձորում ոչ մի հայ զինվոր չի մնա եւ Ազնուրաց Ձորը կկոչվի Մեռյալների Ձոր...

Յայերին մի ելք էր մնում, կռվելով ետ դառնալ ու պաշտպանվել Ձորաց Պահակում, սակայն պարսիկները գերաններով ու քարերով փակել էին նահանջի ճամփան: Վիճակը օրհասական դարձավ:

Այդ պահին Յայկի սուրհանդակը՝ Վաղինակը, մոտեցավ իշխաններին: Սրանք, առաջին պահին բանի տեղ չդրին նրա խոսքերին, սակայն աստիճանաբար նրանց գիտակցությունը առաջարկ էր որոնում:

Ձորապետը հանդուգն առաջարկ էր անում:

- Յայկ զորապետն ասաց՝ չզարմանաք, գուգազավորները կգան ձեզ վրա, այլ ելք չկա, հարկ է կուտակվել ձեզ մոտ, այստեղ զարկել պարսիկներին, ճեղքել պաշարման շղթան:

- Բան դուրս չի գա,- մոմռացրեց Ներսեհը:

- տե՛ր իմ, զորապետն ասաց, իրոք, բան դուրս չի գա: Նա ուրիշ ելք ունի: Գետի միջով մի հարյուրակ մարդ կուղարկի ետ: Նրանք կանցնեն պարսիկների թիկունքը, կքանդեն կապանը, կբացեն ճանապարհը, ապա միացյալ ուժերով, կզարկենք, ետ կերթանք Ձորաց Պահակ: Գուգազավորները ետ կդառնան ու կպահեն ելքը, մինչեւ անցնի մատենիկ գունդը: Նորից ճամփան պարսիկների առաջ փակելը դժվար չի լինի:

- Ե՛վ հասարակ, եւ՛ իմաստուն ելք: Այլ ելք չունենք,- ժպտաց Ջոն իշխանը,- տեսա՞ք, որ մնացինք ռամիկի հույսին:

- Դժվար է, սակայն ինչու՞ չփորձենք,- ասաց Ներսի իշխանը:

- Այո՛, այլ ելք չկա: Ցավ է ինձ, այն հուշում է ռամիկը,- Մարն էր:

- Բա՛վ է, իշխան,- զայրացավ Դատը,- խելքը գլխի մեջ է եւ ոչ զինանշանին: Վճռեք,- տեսնելով, որ չեն առարկում, դարձավ սուրհանդակին,- ասա՛ Յայկ զորապետին, թող սկսի:

Սուրհանդակի գնալուց հետո վիճակը ավելի վահացավ, ասես պարսիկները շատվորացան, սաստկացրեցին ճնշումը: հայերը հասկացան՝ հարձակվողներին էին միացել անհայտացած պարսից վաշտերը:

- Մնաց կյանքներս թանկ ծախսենք: Մեր արիական նախնիք գերի չէին հանձնվում: Կռվում էին մինչեւ վերջ: Յավատարիմ եմ արիական արյան կանչին,- ասաց Մար իշխանը,- մնաք բարյավ, սիրասուն եղբայրներ,- ասաց ու, անցնելով թիկնապահների գլուխը, նետվեց կռվի ամենաթեժ տեղը: Մարը գնաց արիանալու՝ անմահանալու...

- Վնում եմ Մարին սատարելու,- ասաց Ջոն իշխանը, թիկնապահից վերցրեց ծանր նիզակը: Դեռ չէր հասցրել տեղից շարժվել, երբ հեռվից սարսափելի աղմուկ-աղաղակներ լսվեցին: Իշխանը պահեց նժույզը:

- Մա՛ր, դիմացի՛ր, Յայկն է գալիս,- հասկանալով, որ դրանք գուգազավորներն են, գոռաց, գնաց Մարի կողմը:

Պարսիկները չէին սպասում այդպիսի հանդգնության ռամկական գնդից, մի պահ զարմացան, թուլացրեցին ճնշումը: Յայկը օգտվեց պարսից վարանմունքից մի հարվածով ցրիվ տվեց մատենիկ գնդի ու գուգազավորների արանքում կուտակված պարսիկներին, միացավ զինվորներին: Սրանք ուրախ աղաաղներով դիմավորեցին ռամկական վաշտերը:

- Տյա՛րք, դիմացեք, գալիս ենք,- գոռում էր Վրենը, ծանր մկունդով ջարդելով պարսիկների գլուխները: Նա այնքան բարձրահասակ էր, որ երկու գլուխ բարձրից էր նայում մարդկանց, զարկում էր միայն գլուխներին: Վարդանն ու Սոկրատը գալիս էին կողքերից, պաշտպանում էին նրան:

- Տևաշեններ, խաղաղ օրերին ծիծաղում էիք, թե ու՞մ է պետք հասակդ, կնիկդ գոտկատեղիցդ է: Դե՛, տեսեք՝ ինչ եմ բերում պարսիկների գլխին: ՕՖ, ես մեկն էլ,- տնքաց ու մկունդը թափով իջեցրեց պարսիկ սեպուհի գլխին: Սա փշրված գլխով մի կող շարտվեց,- հոգուդ մեռնեմ: Դավթակ դարբին, ինչ մկունդ է պատրաստել, հերիք է բարձրացնեմ, իրեն իրեն թափ է առնում, ջարդե՛ք դրանց «կճուճները» ես դրանց եկած ճամփան...

Նրանցից մի փոքր աջ կռվում էր Հայկ գորապետը, մի ստվար խմբի գլուխ անցած, սակայն նրա մարդիկ արագ նվազում էին: Դա ուրախացնում էր պարսկներին:

- Հայ շներ, կռվել չգիտեք, էլ ուր եք ելել պարսից առյուծների դեմ,- գոռում էր մի սիպահ: Նրա զարկերից այս էլ քանի հայ է ընկնում, այն էլ գետի մեջ: Պարսիկը հռչում է «ջարդելով» հայերին, սակայն դա խաբկանք է:

Ներսեհը նիզակով հրեց Ջոն իշխանին:

- Դու Հայկին նայիր, ասես ողջ կյանքում մարտ է վարել: Կեցցե՛ս, շինական եղբայր:

Կորդովաց տերը հասկացավ, որ Հայկի մարդիկ չեն սպանվում կամ վիրավորվում, այլ իրենք են գետ նետվում, ետ են գնում դեպի կապան:

Շուտով քրի պղտորվելուց հասկացան՝ Հայկի տղաները սկսել են քանդել կապանը: Պարսիկներն էլ հասկացան, սակայն ուշացումով: Դա հնար տվեց հայերին, իրենց գործն անել:

- Չորավա՛ր, գետին նայիր: Նրանք քանդում են կապանը,- գոռաց Դատաբեն:

- Հետո ի՞նչ,- զայրացավ Վռամշապուհը, ապա հասկացավ դրա հետեւանքները:

- Հետոն հետո կերեւա,- հայիոյեց Ռշտունին,- անշնորհքներ, բա դուք զո՞րք եք, բանակը բերեմ օրը ցերեկով ծուղակեմ ու դուք չկարողանաք կոտորել... Այրաց առյուծներ, թու՛, ես ձեր ուղարկողի...

- Իշխա՛ն, չափդ ճանաչիր,- գոռաց Վռամշապուհը:

- Չափս ես ուզու՞մ,- Մանեհճիրը ձեռքը դրեց սրին,- մենք սրանց պատճառով դավաճան դառնանք, որ սրանք հաղթանակ վայելեն... Ես թքել եմ ձեզ վրա էլ, ձեզ ուղարկողի էլ...

- Ես կիրամայեմ կապանի գնդերը ետ դառնան ու զարկեն կապանը քանդողներին,- ասաց գլուխը կորցրած գորավարը:

- Հայերը հենց իսկ դրան են սպասում,- խեթեց Ռշտունին,- հենց քո զինվորների շալակն էլած հայերը կգնան ու ծոծրակներդ կտեսնեք, սակայն հաղթանակ չեք տեսնի: Տե՛ր Աստված, որտեղից այսքան հաստագլուխ ավանակներ Պարսկաստանում, թու՛, ձեր մերը...

- Չուր ես թթու դրել պահեստի վաշտերդ: Թող զարկեն կապանի մոտ կուտակված հայերին,- հրամանի պես նետեց Բզնունին:

Այլ պարագայում գորավարը կվիրավորվեր, սակայն ժամը չէր այդ մասին խորհելու: Հայերը կարող էին դուրս պրծնել ծուղակից:

- Համհա՛րգ, հրաման մեզանից՝ պահեստի վաշտերը նետել առաջ, զարկել կապանի մոտի հայերին: Շտա՛պ, ավանա՛կ,- գոռաց գորավարը:

Հայերը սպասում էին այդ հարվածին: Պահը կարող էր վճռական դառնալ նրանց համար, եթե այդ պահին Հայկը շուռ չտար գուգազավորների մի մասը, չզարկեր մոտեցող պարսիկներին:

- Հայկը ի ծնե գորավար է,- հիացավ Ներսեհը:

Ջոն իշխանը ի պատասխան՝ ժպտաց: Այդպես կարող էր մարդ ուրախանալ հարազատ եղբոր մասին գովասանք լսելիս:

Արդ, գաղտնիք չէր Հայկի քայլը: Հայերին մնում էր հուսահատ կատաղությամբ նետվելու պարսիկների վրա, կռվելով անցնել կապանը:

Վռամշապուհը ցանկանում էր հայերին հեռացնել կապանից, քշել ձորի կենտրոնական մասը, այնտեղ ջարդել:

Պարսից առաջամարտիկները սկսեցին կռվել կապանը քանդող հայ քաջերի հետ: Վռամշապուհը մի փոքր հանգստացավ:

- Կարգավորվեց մարտակարգը,- ասաց դառնալով Դատաբենին:

- Եթե հայերը չդիմեն օրհասական քայլի ու բոլոր ուժերով չընկնեն կապանը պահող վաշտերի վրա...

- Ես այնտեղ կնետեմ մեր բոլոր ուժերը:

- Ինչպես չես հասկանում, հայերը դառնալով դեպի կապան, մի բռունցք կկազմեն, նրանց համար միակ էլքը սա է՝ փրկությունը: Իսկ դու չես կարող քո բոլոր ուժերը այնտեղ նետել, շարժվելու տեղ էլ չկա: Հայերը կռվելով երկու ուղղությամբ, մասնատել են քո ուժերը, ահա որտեղ է քո սիսալը,- լռեց, նայեց ուշադիր,- ինչպես էի մոռացել նրան: Հրաման տուր նետահարեն այն բարձրահասակին, որ ամբողջովին գրահված է: Այս ամենը նրա մոգոնածն է, թող նետահարեն նրան:

- Դժվար է, սպարապետը Հայկին ընտիր զարհներ է ընծայել,- քմծիծաղ տվեց Մանեհճիրը,- ով գիտե, թող փորձեն:

Այդ պահին Հայկը մոտեցավ իշխաններին:

- Եթե չճեղքենք շղթան, դուրս չգանք կապանով, կորած ենք: Մինչև երերկո ոչ մի հայ զինվոր չի

մնա ձորում: Հարկ է անցնել կապանը, թեկուզ դիակների վրայով, թեկուզ սողալեով, միայն թե՛ անցնել: Վճռե՛ք:

- Իրավացի է Հայկ եղբայրը,- ասաց Դատը,- փորձենք, այլ ելք էլ չունենք:

Հայկական շեփորների ազդանշանով վաշտերը, գուգազավորները ետ դարձ արին, խելահեղ թափով ընկան պարսիկների վրա: Հայերի վերջապահում էր Ջոն իշխանը: Դա ճակատամարտի ամենավտանգավոր հատվածն էր, այն կամովին էր ընտրել իշխանը:

Նրա վճռի մեջ մահն անցնողի խելահեղություն կար: Արիական ասպետին վայել անձնագոհություն:

Կռիվը թեժացավ, պարսիկներին թվաց, թե հայերին օգնության են հասել: Նրանք սխալվում էին, այդ հուսահատությունն էր աննախադեպ կատաղություն ծնել մարդկանց մոտ:

Կատարվեց այն հրաշքը, որին ձգտում էին հայերը: Այստեղ, մի փոքրիկ հատվածում կատաղի մարտ սկսվեց, ուր ոչ կարգ կար, ոչ կանոն, միակ բանը հայերի համար, գերագույն նպատակը, թեկուզ կոկորդ կրծելով, թեկուզ սողալով գնալ առաջ, միայն առաջ: Կռվում էին միայն սրսրեով, մկունդներով, նիզակ շարժելու համար ու տեղ չկար: Հայերը քայլ առ քայլ մոտենում էին իրենց ընկերներին, կապանի կողմից կռվող ընկերներին:

Սա հերոսություն էր, ավելի ստույգ՝ խելահեղություն, ոչ մեկից այլ համախումբ հայերի, մի բան, որչառ քիչ է պատահում հայերին, մի բան, որ կարելի է հրաշք համարել... Համախումբ հերոսացում, վայել մեր արիական նախնյաց...

Վերջապես կապանը քանդող հայերը ընկան պարսիկների վրա թիկունքից: Հայերն իրենց ընկերներին ընդունեցին գոռում-գոչյուններով: Սկսվեց կռվի վերջերգը, ավելի մեծ ու անհեթեթ կոտորած, սպանող, սպանում էին ու սպանվում, մորթվում էին ու մորթում: Սպանվածները գետնին չէին ընկնում, դիակները մի քանի շերտով ծածկել էին գետինը:

Մի զինվորից սրատված, աղիներն էր հավաքում, կեղտոտ ձեռքերով խցկում էր պատռվածքի մեջ: մեկ այլ տեղ, պարսիկ ու հայ իրար գրկած, այնքան էին հոգնել, որ չէին կարողանում վերջին զարկը տալ: Հոգնածությունը նրանց մեջ ատելություն չէր թողել, մնացել էր մարդկային անհեթեթ սպանելու մոլուցքը, իսկ ձեռքերը չէին բարձրանում, թուլացել էին:

ամենքն էլ վիրավոր էին: Հայկը կռվում էր Մարի կողքին: Իրար էին սատարում, իրարից ախոյան խլում: Երկուսն էլ կռվում էին ինքնամոռաց, կատաղի: Հանկարծ ծանոթ ձայն է լսում, գոռոց, թե ճիչ: Հայկը ետ է նայում: Պարսիկը սրախողխող էր արել Խաժակին, արդ, չգիտես ինչու, գլուխի է կտրում, փորձում է խոթել մաղախի մեջ: Հիմա՛ր, դու քո գլուխը փրկելու մասին խորհիր: Մարնու Հայկը երկու կողմերից սրատում են պարսիկին: Ի՞նչ էր ուզում պարսիկ զինվորն ապացուցել, ինչի՞ համար էր կտրում գլուխը, ի՞նչ ապացուցելու, ու՞մ ցուցադրելու...

Արյան արբեցում էր: Հանկարծ ճչաց Մարը, սրի հարված ստացավ, ուսով հենվեց Հայկին: Դատը երկու ձեռքով բռնած սրով խելահեղ այս ու այն կողմ սրատելով, մոտեցավ նրանց: Թիկնապահները հազիվ էին հասնում իրենց իշխանին: Հայկը, Վրենի հետ Մարին դուրս քաշեցին առաջին շարքից, հանձնեցին իշխանի թիկնապահներին: Գուգազավորներից զրկվեցին Հայրապետն ու Սեթը, իրար օգնելու հնար չկար, չես հասկանում ով է վիրավոր, անվնաս: Ամենքն էլ ցողված են արյամբ, սեփական ու թշնամու, իսկ արյունը, ի՞նչ փուլթ պարսիկի է, թե հայի, կարմիր է: Կարմրել են մարդիկ, գեները, անգամ նժույզները: Չարմանալին այն է, որ դեռ նժույզների վրա զինվորներ կան: Արյան հոտից կատաղած նժույզները, իրենց հերթին կատաղած, սմբակածեծ են անում մարդկանց, կծում են, խրխնջում, քացի տալիս:

Երեկոն կամաց-կամաց իջնում էր խելահեղ ձորի վրա, որի վրա արդեն անգղներ են պտտվում, արյան հոտը նրանց էլ է հասել: Սպասում են իրենց ժամին, այնքան ժամանակ, մինչեւ համոզվեն, որ մարդը մեռած է, այնժամ կկտցահարեն աչքերը: Նրանց համար ամենքաղցրը մարդու աչքերն են, դա հետո, իսկ արդ, կռվում են...

Առաջին շարքերում իշխաններն են, Հայկ գորապետը, նրա ընկերները: Այ, բերեցին Ջոն իշխանին, վիրավոր է, բերեցին վահանների վրա...

- Կապրի՛,- ասաց բուժը,- սա իշխանի որերորդ վրեքն է, չգիտեմ: Նրա վրա ավելի շատ սպի կա, քան աստղ երկնքում: Երկաթ է, ես նրան մանկուց գիտեմ, երկաթ է, նա անմահ է մեր հեթանոս աստվածների պես...

- Փա՛նք Աստծո՛ւ,- ասաց Դատ իշխանը, ձեռքով սրբեց դեմքի արյունը:

Հանկարծ այս աղմուկ-աղաղակի մեջ Հայկը զարմացած նայեց կռվողներին:- Տղա՛յք, դու՞ք,- զրկախառնվեց կապանը քանդող քաջերի հետ:

- Հայկ գորապետ, հասա՛նք,- ասաց գուգազավորներից մեկը, ընկավ ուշաթափ, ընկավ Հայկի գիրկը:

- Հե՛յ, ե՛տ դարձեք, զարկեք անօրեններին, չթողեք մոտենան, ճանապարհ բաց է: Պահե՛ք ելքը, մինչեւ անցնեն վիրավորները:

Արդ, նա է գորավարը: Իշխաններից ոչ մեկի մտքով չանցավ չլսել նրան:

- Դու՛ք,- Հայկը դարձավ տղաներին,- մագլցեք ժայռերը, քարեր պոկեք, երբ վերջին զինվորն անցնի

կապանը, քարերը կթափեք: Շտապե՛ք, ձեզ մատաղ, փրկված ենք...

- Փրկվա՛ծ ենք,- տարածվեց մարտադաշտում: Պարսիկներն հասկացան կատարվածը: Լուրը հասավ Վռամշապուհին:

- Հայերը քանդել են, բացել են կապանը, միացյալ զորքերով նահանջում են:

- Առա՛ջ, արյաց քաջեր, փակե՛ք ճամփան,- գուր էին ջանքերը, հայերը, որ այսքան զոհերի գնով բացել էին կապանը, այլևս չէին զիջի փրկության ճամփան: Սկսեցին կապանից անցկացնել վիրավորներին, ապա անցան զինվորները: Նրանց հետեւից անցան աշխարհագորայինները: Վերջին մարդը, որ անցավ կապանը, Հայկն էր:

Պարսկական մի վաշտ նետվեց անպաշտպան կապանի ելքը, հանկարծ նետերի պարսեր թռան, զինվորները կանգ առան, պաշտպանվեցին վահաններով: Նույն պահին ձորի պռնկից քարեր թափվեցին նրանց վրա, վայնասուն բարձրացավ:

- Առա՛ջ, Ձորաց Պահակ,- հրամայեց Հայկը:

Պարտության լուրը Ձորաց Պահակ խուժեց հարյուրավոր վիրավորներով:

Արքան ու կաթողիկոսը աշտարակից նայում էին բերդ մտնող զինվորներին, սրանք բերդ մտնելով, փլխվում էին սալահատակին: Բերդականները ջուր, գինի, ուտելիք էին տալիս: Ուտելիքից հրաժարվում էին, սակայն գինին խմում էին ազահաբար: Խմում էին մոռացման տալու քիչ առաջ տեսած մահերն ու ահերը:

Արքան շատ էր տեսել պարտված զինվորներ, սրանք ինչ-որ նոր բան ունեին իրենց մեջ, սրանք կատաղի էին, անզուսպ, ինչ-որ տեղ նաեւ հպարտ: Անվիճելի էր՝ պատրաստ էին նորից մարտի դաշտ իջնել... Այդպիսին եղել են մեր արիական նախնիք, վկա՝ Արեւ Աստված:

Հայ զինվորները գալիս էին մեկ-մեկ, խմբերով, գալիս էին մռայլ, հաճախ նաեւ դատարկ հայացքներով, որտեղ կամաց-կամաց տեղավորվում էին խեղված, վիրավոր, տանջահար: Չինվորների աչքերում անչափելի դատարկության մեջ գլորվում էր հայոց ճակատագիրը եւ չկար մեկը, դեմ ելներ, կուրծքը դեմ տար, կանգնեցներ այդ թավալգլոր անկումը...

Անվերջանալիորեն ձգված, գալիս էին կոտորված վաշտերի ու դասակների մնացորդներ: Ահա եւ վերջին զինջորը, ամենքն էլ ճանաչեցին նրան, մռայլ, բարձրահասակ զորականին, որն էր հայոց անկարտ հոգին, տանջահար, վիրավոր ու այդ ամենի հետ նաեւ հպարտ, նաեւ զարմանալիորեն խրոխտ ու սպառնալից: Ամեն հայ, որ կռվել էր նրա կողքին, զգաստացավ, սպասեց, որ այդ հոգին բռնկվեր սրբազան վրեժով այս անմեղ զոհերի մեղավորների դեմ եւ պիտի կորածներ մարդկանց հոգիները կոծանման դատապարտած մեծություններ, ավա՛ղ, դեռ հասյալ չէր... Ո՞վ էր նա: Արքան ու կաթողիկոսը հարգանքով, նաեւ երկյուղածությամբ դիտում էին նրան, չէին ճանաչում: Իշխա՞ն էր, թե՞ սեպուհ, ու՞մ պիտի պատիվ տային երկրի տերերը: Այս խորխտ մարդուն, որ պարտվել էր, սակայն չի վախենում ետ նայուց, ո՞վ է նա...

Ահա բերում են վիրավոր ու տանջահար Ջոն ու Մար իշխաններին, ահա Դատը, ամբողջովին արյան մեջ, փշրված զարհներով: Ահա Նրեսեիը, նայում է մռայլ, սակայն ընկճված չէ, իսկ նա՝ վերջին զորականը, որ բերդ մտավ, քայլում է հպարտ...

- Ես եմ մեղավոր, ինչու՞ հավատացի Դատաբեհն, քառասուն հազարանոց բանակը բերեցի, գցեցի ծուղակ,- արքան գլուխն առել էր ափերի մեջ,- ի՞նչ է լինելու, ասեք,- նայեց Վարդ սեպուհին,- որտե՞ղ է պարսից գունդը, չի՞ գալիս Ձորաց Պահակ:

- Տե՛ր արքա,- սեպուհը տնքաց ուսի վերքից,- քիչ անց այստեղ կլինեն:

- Մի՞թե չենք կարող պահել լեռնանցքը: Մի՞թե սակավ են զինվորները,- հարցն ուղղված էր սեպուհին, որ այս պահին դարձավ արքայի խորհրդականը,- խոսի՛ր:

- Բերդը չենք կարող պահել, զինվորները վիրավոր են, նաեւ պարտված, հարկ է ետ քաշվել:

- Ո՛չ պարտված,- գայրացավ հազարապետը,- իսկ ետ քաշվելը, կարգի բերելը անհրաժեշտ է, մինչեւ հասնի սպարապետը:

- Իսկ ո՞վ պիտի պաշտպանի երկիրը,- արքան ու կաթողիկոսը ետ նայեցին:

Թիկնապահի ուսին հենված, կանգնել էր Ջոն իշխանը, նրա կողքին էին Ներսեիը, Դատը, Մանակը, Մարը եւ այն զորապետը, վերջինը բերդ մտած զորապետը: Հարցը արքան էլ տհաճ լինեք, արքան չկարողացավ թաքցնել գոհունակությունը:

- Հա՞յկ զորապետ...

- Այո՛, տեր արքա,- արքային ընդհատեց Դատը,- հայկ զորապետը, արիական ասպետ է Հայկը: Եթե նա չլինեք, ոչ մի զինվոր դուրս չէր գա ձորից:

- Ես կյանքովս եմ նրան պարտական,- Մարն էր եւ ոչ մի խոսք ավելի...

Արքան զարմացավ, քանզի գիտեր Մարին որպես ռամկատյաց ու գոռոզ: Նա գիտեր Դատի հպարտությունը, Ներսեի իշխանասիրությունը ու բարձր կարծիքը ազատանու ասպետական ոգու մասին: Եվ այդ ամենը խոսում են այնպիսի մարդիկ, որոնք հայոց գահի պաշտպաններն են: Ասել է թե Հայկը առվից դուրս գալով, դառնալով անտառների վերակացուների վերակացու, բացելով Վաղարշապատի դռները, արդ, փակել է հայոց զորքերը լիակատար կոտորածից:

Այս ամենն անցավ արքայի մտքով, սակայն նա արքա է, հարկ է վճիռ ընդունի, հարկ է աճապարել, քիչ անց պարսիկները կլինեն բերդի պարիսպների տակ:

- Տե՛ր արքա, ես զորական չեմ, անմիտ եմ ռազմի գործերից, սակայն տեսնում եմ, որ պետք է զորքերը ետ քաշել Այրարատ աշխարհ,- խոսեց կաթողիկոսը:

- Նահանջել, նշանակում է բացել Այրարատ աշխարհի ճամփան: Պարսիկներն արքայական պողոտայով անարգել կհասնեն Այրարատ,- զայրացավ Ջոն իշխանը,- մենք մեր ուսերի վրա առած պարսկներին կտանենք Հայոց ոստան, իսկ այնտեղից ու՞ր կհրամայես նահանջել, հոգեւոր տեր...

- Լռի՛ր, Կորդովաց տեր, Աստված սիրես, լռի՛ր...

- Սպասի՛ր, տեր արքա, այդպես հրատապ վճիռ մի՛ դիր,- սա արդեն սպասվածից ավելի էր: Նախարարը փորձում էր խելքի բերել արքային: Լռեցին, լռեց նաեւ արքան,- տեր արքա, ինչպես միշտ, իրավացի է Կորդովաց տերը: Այդչափ հախուռն նահանջելը հղի է վտանգներով, հարկ է այստեղ փակել պարսից ճամփան, իսկ այդ ժամանակ Ոստանում նոր զորքեր կգումարենք: Չորքեր կարգիր Ձորաց Պահակը պաշտպանելու համար, հակառակ պարագայում, կկորցնենք ամեն բան:

Արքան հայացքը պտտեցրեց ներկաների վրա:

- Իրավացի ես, տեր Հաշտենից, իսկ ու՞մ կարգեմ բերդապահ,- զգացվեց, որ արքան վախենում էր մեկ սխալ էլ թույլ տալ, քանզի հոգում իրեն էր մեղավոր համարում այս պարտության համար, զոհերի համար:

- Տե՛ր արքա, վերադարձան խուզարկուները: Խնդրում են ունկնդրես,- զեկուցեց սենեկապետը:

- Թող ներս գան,- անհամբեր գլխով արեց արքան:

Ներս մտան երկու զինվոր: Երկուսն էլ վիրավոր էին, խոսելու իրավունք խնդրեց ավագը, տարեց մի զինվոր:

- Տեր արքա, պարսիկները ուր որ է՝ կհատենեն Ձորաց Պահակ: Մենք հազվեհազ փրկվեցինք: Պարսից մի քանի վաշտեր ու փղերի դասակը մնացել են Ռշտունիքում: Ծովակի հյուսիսային ափով գնում են Այրարատ աշխարհ: Նրանք երկիրը գրավելը շաբաթների գործ են համարում,- խուզարկուն լռեց: Որպես ռազմի գործերի գիտակ, զարմացած նայեց արքային: Թերեւս զինվորը դիմացինի մասին ոչ բարձր կարծիք ուներ: Խուզարկուն, որ երկար տարիներ անցկացրել էր սպարապետի հետ, արքայի կողմից տված ու չտված հարցերից հասկացավ, թե արքան որքան անիմա է ռազմի գործերում:

- Բզնունյաց ափով գնում ենք Այրարատ,- ասաց արքան:

- Աստված պահապան,- խաչակնքեց կաթոիկոսը:

Ձորաց Պահակը պաշտպանելու համար մնաց Ջոն իշխանը: Ընկերները բաժանման դառնությունը սրտերում գրկեցին իրենց ընկերոջը: Ջոն իշխանը ամուր գրկախառնվեց Հայկի հետ, համբուրվեցին որպես եղբայրներ: Ահա եւ վերջին զինվորը հեռացավ բերդից: Ջոն իշխանը մռայլ նայում էր հեռացողներին: Չեկուցեցին, որ պարսիկները մոտենում են բերդին:

- Չնետահարե՛ք, թող մոտենան, խուզարկուներ են,- ասաց իշխանը:

- Տեր իմ, բերդը երկար չի դիմանա: Պարսից գունդը վերջ ի վերջո կգրավի բերդը: մենք ամենքս էլ վիրավոր ենք: Գնդի կեսը ընկավ մարտում:

- Դու՛, Առնակ հայրիկ, չե՞ս ճանաչում սանիդ: Դու ինձ սովորեցրել ես ռազմի գործը, ստույգ է, մենք սակավ ենք այս հեղեղի դեմն առնելու, չմոռանանք, որ մեր երկրում ենք: Արդ, մենք կկռվենք սեփական խելքով,- թույլ ժպտաց,- կանչեք Համբարձումին, Գառնիկին, Վարդգեսին, Արտաշեսին ու Արթենին: Նրանք կգնան շեներն ու այնքան մարդ կբերեն, որ պարսիկները ստիպված կլինեն իրենց ատամները փշրել բերդի պարիսպների վրա:

Սեպուհը գոհ ժպտաց, սիրով նայեց սանին, զուր չէին իշխանին արիական ասպետ կոչում...

Այդ պահին մոտեցան պարսից խուզարկուները: Նրանց առաջ հռչակավոր Ձորաց Պահակ բերդն էր, որ շատ անգամներ էր փակել պարսից զորքերի ճամփան: Նրանք փորձված զինվորներ էին, հասկացան՝ բերդի լռությունը խաբուսիկ էր: Ռազմի դաշտում միշտ էլ ահասարսուռ դրոյունին խաբուսիկ լռություն է նախորդում: Չինվորները վահանները գխներին բռնած, կանգ առան մեկ նետընկեց հեռավորության վրա:

- Փարսմա՛ն, չմոտենա՛նք, հայերի նետերը հեռահար են: Նրանց աղեղները մերոնց երկու չափն են, չմոտենանք:

Սակայն Փարսմանը՝ խուզարկուների ավագը, չանսած ընկերոջ զգուշացումը, մի քայլ արեց առաջ:

- Հանգիստ,- ասաց Ջոն իշխանը, ձեռքը դրեց նետածիզի ուսին: Այդ շարժումից դեմքը ծամածռվեց ցավից,- անիծյալ պարսիկ... Արյունը ներկեց վիրակապը:

- Տե՛ր իմ, պարսից վաշտերը դուրս եկան ոլորակից,- ձայնեցին բարձր աշտարակից:

- Ի զե՛ն,- գոռաց իշխանը, մոռացավ ցավը,- թե ժացրեք կրակը կուպրի ու արծիճի կաթսաների տակ:

- տե՛ր իմ, տղաները դուրս եկան բերդից,- զեկուցեց սեպուհ Առնակը:

- Լա՛վ է, կդիմանանք մինչեւ օգնությունը հասնի:

Սեւ ծուխ կապեց բերդի աշտարակները: Սկսվեց կռիվը մի բուռ վիրավոր, տանջահար զինվորների

ու պարսից գնդի միջեւ:

Թագուհին աչքը չէր կարողանում կտրել մագաղաթից: Ի՞նչ գրեր սիրեցյալին, գրեր, որ Դատաբեն դավաճանել է, բացել Ձորաց պահակը, գրեր, որ Ռշտունյաց ու Բզունյաց տերերը կապ են ունեցել Շապուհի հետ: Գրեր հայոց զորքերի ջարդվելու մասին կամ այն մասին, որ արքան ու կաթողիկոսը այս պահին ճողեոպրում են Այրարատ... Ո՛չ, թագուհին այդ մասին չի գրի, վտանգավոր է: Կարող է սուրհանդակին կալանեն, գաղտնիքը կբացվի: Նա այլ ելք էր փնտրում:

Երկար խորհելուց հետո նրա պրպտուն միտքը հուշեց ելքը, նամակ գրել պալատականներից մեկն ու մեկի անունից: Դա անվտանգ էր, սակայն հարկ էր նմանեցնել ձեռագիրը: Ափսոս, նամակում չի կարող իր սիրո մասին գրել: Իսկ կնիքը դժվար չի պատվիրել: Մոտ քաշեց հազարապետի նամակը, երկար նայեց ձեռագրին: Վերցրեց փետուրը, գրեց:

«Սիրելի Բակուր բղեշխին, տիրոջն Աղձնյաց աշխարհի: Գիտցի՛ր, հարգում եմ քեզ եւ հավատում,- գոհ մնաց, գրել էր իր սիրո մասին, ուզում եմ քեզ հայտնել այն մասին, որ արքան ու կաթողիկոսը գտնվում են Բզունիքում: Այնտեղ չարաչար պարտվել են Վռամշապուհ պարսիկից: Ժամն է, շտապի՛ր օժվելու Աղձնյաց արքա: Հայոց աստվածները հուշում են՝ ժամն է: Օժվիր Աղձնյաց արքա: Ես քեզ կօգնեմ: Արքան կարծում է իրեն նվիրված մարդ եմ: Խեղճ ու անճար մարդ, ինչպիսի թյուրիմացություն... Մնացածը կաեսի սուրհանդակս: Մնամ քեզ նվիրված բարեկամ, Հազարապետ Մեծ Հայքի, տեր Գնունյաց»:

Թագուհին գոհ էր:

«Եթե սուրհանդակը կալանվեց, կգնա հազարապետի գլուխը, վա՛տ չէ, քանզի նա Բակուրի ոխերիմ թշնամին է... Օ՛, Վիշապաքաղ Վահագն, ես, որ այսքան հնարամիտ եմ ու գեղանի, մի՞թե չեմ պատկանելու այն մարդուն, որին սիրում եմ...»:

Սթափվեց, ծափ տվեց:

Ներս մտավ Գիսանեն:

- Կանչի՛ր ոսկերիչ Կարապետին,- թագուհին գիտեր, որ Հրանտին չէր կարող այդպիսի գործ հանձնարարել, ազնիվ մարդ է, կմերժեր:

Երեկոյան Գնունյաց կնիքը պատրաստ էր: Թագուհին կանչել տվեց սեպուհ Օհանին: Ուշ երեկոյան ներկայացավ մի տարեց, բարձրահասակ զորական, խոնարհվեց ծունկ ծալելով:

«Այսպիսի ասպետներ քիչ են մնացել հայոց աշխարհում: Սեպուհը ինձ նվիրված մարդ է: Նրան իմ մարմինը պետք չէ, ծեր է, ոսկին էլ չի հետաքրքրում, հարուստ է: Ասում են՝ այս տարիքում արիական ասեպատական կարգն է պահում, խոսքը, թեկուզ կյանքի գնով կատարում է: Անմրցակից սրամարտիկ է,- հանկարծ զգաց, աշխատում էր չնայել զորականի սպիտակ մագերին, շիկնեց, քանզի խորհածն ավելի անհամեստ էր: Չէր կարող այլ կերպ նայել այրմարդու... Վախեցավ, զգաց՝ իր հայացքի տակ փոխվեց նաեւ սեպուհի հայացքը: Իրեն նայեց որպես կնոջ: Դա ցանկալի էր, նաեւ՝ ոչ: Չմոռանանք, թագուհին կին էր, այն էլ երես առած կին: Նա ցանկանում էր կառչել խելահեղ արագությամբ թռչող, հեռացող կանացիությունից...»

- Օհա՛ն սեպուհ, դու խոստացար կատարել խնդրանքս, գնալ Աղձնիք:

- Այո՛, տիրուհի, թեկուզ այս պահին:

- Նամակ կտանես Բակուր բղեշխին, պատասխան կբերես: Լիահույս եմ՝ գաղտնիքս ու պատիվս կպահես: Եթե նամակն ընկնի ուրիշի ձեռքը...- թագուհին լռեց, գլուխը թափ տվեց,- մեծ անպատվություն կլինի Մեծ Հայքի թագուհու համար:

- Նաեւ ինձ համար, քանզի խոսք եմ տվել: Մի՞թե դա սակավ է:

- Չմոռանանք նամակը ձեռք զցելու համար կան մարդիկ, որ պատրաստ են քեզ կտոր-կտոր անելու:

- Հասկանում եմ, տիրուհի, նախ՝ դա այնքան էլ դյուրին գործ չէ: Նամակը կամ տեղ կհասնի, կամ կոչնչանա: Երդվում եմ պատվովս: Ես արիական եմ, տիրուհի՛:

Սեպուհի հայացքը սառն էր, նաեւ կարծր: Խոսելով արիականության մասին, շտկել էր ուսերը: Աչքերի մեջ կրակներ էին հայտնվել: Թագուհին հոգով զգաց սեպուհի մեջ տեղի ունեցած փոփոխությունը, վախեցավ, քանզի տեսավ իրենց տարբերությունը: Ինքը կրքերի գերի էր, սեպուհը նրա առաջ կանգնել էր որպես մեղադրանք իր վատահամբավ կյանքի: Նա զգաց՝ սեպուհին ավելին ասել չէր կարելի: Այլ ելք չուներ, չէր կարող ուրիշի ուղարկել: Վերջերս նրա մարդիկ հանելուկային պայմաններում անհայտանում էին...

- Դու՛, սեպուհ, հավատարմությամբ ես ծառայում ինձ, չգիտեմ ինչով, ինչպես վարձահատույց լինեմ,- թագուհին այս խոհերի վրա այնպես թովիչ ժպտաց, ուրիշին, մի փոքր ավելի երիտասարդի, թակարդ կզցեր, սակայն սեպուհը անցել էր այն տարիքից, երբ կնոջ սերը կարող էր դեմ հանել պարտքին ու ասպետական խոսքին: Այդ էր պատճառը, որ թագուհու խոսքերը միայն ժառը քմծիծաղ առաջացրեցին:

- Մայրի՛կ, մայրի՛կ, Ասպամ մորաքույրն է գալիս,- փսփսաց Ծովիկը:

- Վա՛, քոռանամ: Աղջի՛ բերևիցդ խոսք չթոցնես: Մերոնց ասա տուն չգան:

- Բարի օր, Աստղիկ մորաքույր: Եկա իմանալու, լու՛ր ունես մերոնցից,- տեսելով ,որ սա չի պատասխանում, շարունակեց,- ախր գիշերս սեւ հավք տեսա, սեւը չարեն է: Վախենում եմ հաժակիս համար, բան պատահած չլինի՞: Սեւ հավքը չարեն է:

- Չէ՛, լուր չկա: Ով գիտե որտեղ են մեր գլխի տերերը: Գային տուն, ախր կռվի մեջ են: Խեղճ Յայկա կես մարդ է դարձել: Օր ու գիշեր հանգիստ չունի, պատերազմն էլ սկսվեց,- գլուխը կախեց:

Ինչ ասեր խեղճ կինը: Խաժակը զարկվել էր եւ ոչ միայն Խաժակը: Յայկի օգնականներից զարկվել էին՝ Դավթակը, Սեթը, Յայրապետը, Արշամը, Տիրայրը...

Ախր ես աղջիկը շատ մեղք է, քաղաքում ոչ ոք չունի: Արշամաշատից է, հայտնի չէ ինչու է Արտաշատ ընկել: Աստղիկը փորձված կին է, գիտե՛ հողի կինը վախենալուց կարող է պտուղը փչացնել: Չէ՛, չի ասի: Լրաբերը Բուրակն էր: Յայկի անունից խնդրեց լուրն այնպես հայտնել, որ կանայք հանկարծակիի չգան: Մի խոսքով, Աստղիկը ընկել էր երկմտանքի մեջ, ասե՛ր, չասե՛ր: Չարկվածներից միայն Դավթակն էր տարեց մարդ, մնացածներն ամենքն էլ երիտասարդներ էին: Խեղճ Աստղիկ, հենց բացում էր բերանը, աչքը ընկնում էր Ասպրամի փորին, լեզուն կապ էր ընկնում: Ավագ որդին լավ խորհուրդ տվեց:

- Թող տեր Յովհաննեսն ասի, բա ինչու՞ է քահանա դարձել...

- Ապրե՛ս, խելացի հուշեցիր, գնա, ասա, թող գա,- ասաց որդուն, գիտենալով, որ գահանան չէր մերժի զորապետ Յայկի կնոջ խնդրանքը: Չսխալվեց, քիչ անց ներս մտավ քահանան, խաչակնքեց ամենքին:

- Տեր Աստված ձեզ հեռու պահի փորձանքներից, թող ձեր գլխտ տերերը ետ դառնան պատերազմից,- տեսնելով Ասպրամին, ինչ-որ բան մոմռացրեց քթի տակ,- որդյակ իմ, կոկորդս չորացել է, մի գավաթ գինի բեր: Գիտեմ, զորապետ Յայկի գինին լավ է: Արպի՛ գլխավորդ, փրկեց զորքերը: Արտաշատի պատիվն է Յայկը:

Գինին խմեց մեծ կումերով, սրբեց բեղ ու մորուքը:

- Լուրեր եմ առել,- հոգոց հանեց,- Աստծո կամքն է՝ փորձում է մեզ, քանզի դեռ շատ կան մեր մեջ կռապաշտներ, դարձի չեն եկել,- քահանան նայեց Ասպրամին: Սա վատ լուրի կանխագագացումից սփրթնեց: Քահանան գիտե՛ր՝ լուրը ձգձգել էլ անհարկի էր,- դիմացիր, որդյակ, Աստված դիմացավ, մեզ էլ պատվիրեց դիմանալ...

- Խաժակիս բա՛ն է պատահել, մի՛ տանջվիր, վիրավո՞ր է...

- Չարկվե՛լ է,- կարճ կապեց քահանան: Նայեց գավաթի մեջ,- զարկվել են դարբին Դավթակը, Արշամը, Սեթը... Քահանան կարող էր պարծենալ հիշողությամբ: Նա առանց մոռանալու թվեց զոհվածներին: Մի՞թե այդ ամենը մխիթարանք էր, սփոփանք այս երիտասարդ կնոջ համար, որի կյանքը մեկեն կանգ առավ: Դեռ դժնված երեխային պաշտպանելու համար, բռնեց փորը:

- Խաժակս,- ասաց ու քսվելով պատին, սահեց ցած: աստղիկը հագիվ հասցրեց բռնել նրա գլուխը:

- ծոի՛կ, ջու՛ր բեր,- գոռաց աղջկա վրա: Սա ճչաց, դուրս նետվեց ջուր բերելու: Ջուր բերեց որդին, կուլան տվեց քահանային: Սա ջուր ցողեց Ասպրամի դեմքին: Կինը կամաց-կամաց բացեց աչքերը, նրանցում իմաստ չկար, կյանք չկար: քահանան էլ էր մռայլվել, քանզի պիտի հոգար դժբախտ կնոջ մասին : Ի՞նչ պիտի աներ դժբախտ կինը, ոչ ոք չունեք քաղաքում: Վատ չէր լինի վերադառնա Արշամաշատ: Կապրի ծնողների հետ, մեկ էլ տեսար մի դուռ բացվեց... Ասպրամը բռնել էր փորը:

- Աստղիկ մայրիկ, խփում է ոտիկներով... Իմ որբուկը, իմ խեղճ ու կրակ գավակը: Ասում են՝ Դավթակը, Յայրապետը, Տիրայրը, հետո էլ արքան, հետո էլ կաթողիկոսը... Ամենքին էլ զարկել են... Շապուհը եկել է Պարսից աշխարհից, սպանել է Խաժակիս: Օձ ու վիշապ է Շապուհը... Յանկարծ հռհռաց,- ամենքն էլ մեռել են, չկան: Մայրիկ, ախր ասում էիր արտաշատցու մի գնա, փորձանք մարդիկ են, ամեն տեղ քիթ են խոթում...

- Ջուր խմիր,- Աստղիկը ջրով թասը մոտեցրեց Ասպրամին:

- Խմեմ, որ ի՞նչ... Որդուս անունը կղնեմ Խաժակ, չէ՛, Զրիստոս կղնեմ, որ մեռնելուց հետո հարություն առնի...

- Դիմացի՛ր, որդյա՛կ,- մեղմ ասաց քահանան,- հոգիդ տվայտանքի մեջ է: Յանստացի՛ր, որդյա՛կ, դու գավակ ունես կրծքիդ տակ:

Եթե մեկը բարձրանար Թոնդուրեկի գագաթն ու սպասեր ամպերի ցրվելուն, արագ շարժվող մի հսկա փոշու ամպ կտեսներ արքայական պողոտայով շարժվող:

Լայն վարձով, գորագնդից առաջ ընկած նծույգավարում էր Մեծ Հայքի սպարապետ Վաչե Մամիկոնյանը: Երկար մազերը քրտնել էին, սաղավարտը կախ էր տվել թամբի կեռից, սպիտակամազ գլուխը տվել քամուն: Մազերը ծափծափում էին ուսերին: Դեմքը մռայլ էր, սպիտակ հոնքերը կուտակվել էին աչքերի վրա: Ինչպես չմռայվեր ծեր սպարապետը, երբ մանկամիտ, ռազմի գործին անիմա մարդիկ երկիրը հասցրեցին անդնդի պռնկին:

«Օ՛, աստվածներ, ինչու՞ եք իշխանություն տալիս մանկամիտ մարդկանց, որոնք անգամ սեփական կանանց չեն կարողանում կառավարել, չգիտեն կյանքի ու մահվան գինը: Բա՛վ է, հերիք փորձեք փորձվածներին... Մի՞թե հաճո են ձեզ յսքան զոհերը, այս խայտառակությունը, քառասունհազարանոց բանակը տանել ծուղակը զցել, թու՛, ես ձեր...»:

- Տե՛ր Մամիկոնեցի,- լսեց, ուսի վրայով ետ նայեց:

- Բա՞ն ունիս ասելու:

- Դադար տուր նծույգներին, ընկնում են,- ասաց Վահան Ամատունին:

- Թե՞ հեծյալներին,- դառն քմծիծաղ տվեց սպարապետը,- կնիկարմատներ են սրանք, ոչ հեծյալ:

- Տե՛ր սպարապետ, երկաթից չենք, հոգնել են հեծյալները, նծույգները: Հետիոտն էլ ետ է ընկել:

Սպարապետը աչքի տակով նայեց Ամատունուն: Սրա ժայռաբեկոր, ահարկու տեսքը բնավ հոգնածության մասին չէր վկայում:

Քաշեց սանձը, նծույգը անցավ քայլքի:

- Որտե՞ղ պիտի հանդիպենք Հայր Արտավազդին:

- Թոնդուրեկի մոտ,- ասաց մոտեցած Տարոնեն:

Մոտեցավ Արշավիրը:

- Ահա՛ հարցիդ պատասխանը, հենց հանդիպեցինք Մարդպետաց տիրոջը, հանգիստ կտանք զորքերին:

Ամատունին տեսնելով, որ համոզելն անհույս է, ետ ընկավ:

- Հոգիներս կհանի, տեսեք, ինչպես է երկարել գունդը,- իրոք գունդը երկարել էր, վերջը չէր երելում: Հեծյալները ցանկանում էին պահել երթային կարգը, սակայն հնար չկար: Ամեն հեծյալ գալիս էր, ուշադիր հետեւելով նծույգին, հանկարծ չընկներ:

Չորագնդի մեջ էին Մամիկոնյան, ամատունյաց, Արշարունյաց, Սյունյաց զորքերը: Հետիոտնը կես օրով ետ էր ընկել:

- Էստեղ մեզ կհասնի Մարդպետաց տերը,- ասաց Տարոնեն,- արդ, մի քանի նծույգ է ընկել, Էսպես որ գնա...

- Դու՛ ես մեղավոր,- ծիծաղեց Ամատունին,- դու նծույգ նստեցիր, մենք պրծանք: Տնաշեն, ոտքով գնայիր, տեղ կհասնեիր մեզանից վաղ:

- Իրավացի ես, տեր Ամատունյաց,- ծիծաղեց Տարոնեն,- սակայն ստիպողական եմ նծույգ նստեք, երիտասարդ չեմ:

- Ի՞նչ, դու՞ էլ ես բողոքում,- ծիծաղեց իր հերթին Արշավիրը,- ողջ աշխարհում քեզ պես ուժեղ մարդ չկա,- դարձավ Ամատունուն,- գիտես, ինչպես է նծույգ ընտրել,- տեսնելով, որ լսում են, հռհռաց,- Էս տնաշենը նստում է թամբին, ոտքերով սեղմում է կենդանու կողերը, խեղճ կենդանին չոքում է, ասում է. «Էս մեկը տկար է, ուրիշը բերեք: Մեր Տարոնեին փիղն է վայել, փիղը»:

- Փի՞ղ ասացիր,- մռայլվեց Ամատունին,- Տարոնե՛, քանի՞ փիղ հաշվեցիր պարսից գնդում:

- Հնար չկար, վրա տվեցին: Մի տասը-տասնհինգ փիղ կա: հսկա բներ են, վրաններն էլ աշտարակներ են դրել նետածիզների համար: Գլխացավանք կդառնան կռվի պահին:

- Հա՛, դժվար կլինի,- Սյունին էր, միացավ Խոսակցությանը:

- Դյուրինը մածուն ուտելն է,- հայիոյեց Ամատունին:

- Տես ոնց է լեզուն բացվել,- քենակալի կողմը հրեց Անդովկը,- լեզուն բացվել է մեր քչախոսի:

- Կռիվ է գնում, բա էլ ե՞րբ խոսի,- ծիծաղեց Արշավիրը, սակայն նրա ուշքն ու միտքը ձղերն էին: Նա էլ էր հնար փնտրում փղերին կռվից հեռու պահելու կամ ոչնչացնելու համար:

«Կարելի է թունավորել, սակայն պարսիկները փղերին ավելի աչալուրջ են հսկում, քան իրենց զորավարին»:

Այդ պարագայի վրա խորհում էր նաեւ Տարոնեն:

- Հնար փնտրիր, Տարոնե՛, եկ է՛ սպարապետը հարց է տալու ամենքիս,- ասաց Անդովկը:

Տարոնեն ընկավ խոհերի մեջ: Վաղուց էր սովորել խորհել սպարապետի փոխարեն: Դա գիտեր սպարապետը, մեկ էլ տեսար մարտից առաջ հարցրեց.

- Հա՛, էլի սպարապետ ես դարձել, ի՞նչ հնար գտար:

Անցան Թոնդուրեկի մոտով: Սպարապետը բարձրացրեց ձեռքը, զորքերը կանգ առան:

- Էստեղ կանգ կառնենք, Թամբերը չհանե՛լ,- նայեց սեպուհներին, սրանք մոտեցան, կանգնեցին խոնարհ,- գինվորներին գինի՛ տվեք:

Նայեց լեռների կողմը, եթե մի փոքր էլ բարձրանար, կտեսներ Արարատների ձյունապատ զագաթները: Զգիտես ինչու, հայոց սուրբ լեռները տեսնելու ցանկություն ունեցավ, սակայն ստիպված

Եր այլ բան խորհել:

«Տեսնես որտե՞ղ են արքան ու կաթողիկոսը: Ինչու՞ ուշացավ Արտավազը: Նա էլ հո արքա չէ: Տե՛ր Աստված, բան պատահած չլինի՞: Ես նրանից, կնոջիցս ու որդուցս գատ ոչ ոք չունեմ, մեկ էլ Տարոնեն: Նա մի աշխարհ արժե, հարկ է տղային ամուսնացնել»:

Վռամը լավաշի մեջ փաթաթված խորոված բերեց, մի գավաթ գինի: Նայեց լավաշի մեջ, իր սիրած թոքի խորոված էր: Գինին քաշեց գլուխը, սկսեց խորոված ուտել:

- Տե՛ր սպարապետ,- Մարդպետաց տերն է ժամանում,- լսվեց թիկնապահներից մեկի ձայնը: Չորքերը մոտենում էին:

Սպարապետը մոտեցավ, գրկախառնվեց ընկերոջ հետ:

- Լավ էլ ժամանակին հասա, Էստեղ Նստել խորոված ես անուշ անում: Ա՛յ տղա: Վռա՛մ, մի մեծ գավաթ գինի բեր, բա մենք հին ընկեր չե՞նք, չես էլ հյուրասիրում,- զգացվեց, որ Յոր տրամադրությունը լավ էր, պարզ դարձավ միայն նրանից, որ չսկսեց հեթանոս ու քրիստոնյա ջոկջոկել, խմեց գինին, ապա նոր միայն նշան արեց, մոտեցան բազմաթիվ որդիներն ու փեսաներնը, առան սպարապետի աջն ու ողջագուրվեցին սպարապետի փեսաների հետ: Սրանք ամենքն էլ մտերիմներ էին, ինչպես նրանց նահապետները: Հին սովորույթով տոհմական տները մտերիմ էին մեծով-փոքրով, կին ու երեխաներով:

- Որտե՞ղ է արքան, լուր ունե՞ս: Պարսից գունդը ո՞ր ճանապարհով է գալիս:

- Նախ՝ առաջինը, արքան Բզունիյաց ծովակի այս ափով գնում է Այրարատ: Պարսից գունդը դեմ է առել Չորաց Պահակին, որ պաշտպանվում է Կորդովաց տերը, ապա ետ է քաշվել Ազնուրաց Չորով, արդ, Ռշտունիքով գնում է հայոց Չորով, Առբերենով...

- Հասու չեմ, ինչպե՞ս է Ջոն իշխանը պահել բերդը:

- Խելացի գորական է իշխանը: Նա կոչել է Բզունիքի բնակիչներին: Մեծ գունդ է հավաքել, պահել է բերդը: Պարսիկները ստիպված ետ են դարձել, արդ, գնում են լեռներով: Իշխանը նրանց զրկել է արքայական պողոտայով զբոսնելու հաճույքից:

- Կեցցե՛ս, իշխանիկ: Խելացի է Կորդովաց տերը, ավսո՛ւս...

- Ի՞նչն է ափսոս,- զարմացավ Հայրը:

- Արքան հասու չէ այս ամենին, չի տեսնում գահի հեևարան դարձած մեր ընտանիքը, ըստ արժանվույն չի գնահատում: Չի հասկանում, որ Ջոն իշխանն ու նրա նմանները անմնացորդ նվիրված են հայոց գահին...

- Այո, Վաչե՛, հարկ է շատվորանան Ջոնները, Հայկերը, Վաչենները, դա է մեր փրկությունը: Պետք է հառնեն հայարիները, սա է փրկության հուսկ վերջին կռվանը: Հեթանոս-քրիստոնյա, քրիստոնյա-հեթանոս հայեր, մինչեւ ե՞րբ...

- Սպասի՛ր, մեզ ժամանակ չի տրված իմաստաբանելու: Եթե հաջողվի բռնացնել պարսիկներին ծովակը շրջանցելիս, գործերս հաջող կգնա: Չորքերս հոգնած են, մենք Էստեղ էլ վրա կտանք: Հա, փղերի գործն է դժվար:

- Դրանք մեր գլխին փորձանք կդառնան,- մոմացրեց Հայրը,- խորհել է պետք:

- Մի բան կմոգոնենք, չենք թողնի գինվորներին գցեն փղերի ոտքերի տակ: Քի՞չ ենք փղերի հանդիպել,- աչքով արեց Տարոնեին,- Վարդան սեպուհ, շեփոր հնչեցրու, շարժվում ենք: Բա՛վ է, ինչ հանգստացանք, շարվենք մեր ճակատագրին ընդառաջ: Հը՛, հնամենի ընկեր, քի՞չ ենք ճակատագիր կոչված վարձակին քթից բռնած պար տվել...

Չորքերը արագ երթով արշավեցին Մանազկերտ, այնտեղից Ծումբ, դեպի Գնունիք թեքվելու: Պողոտան մի քանի փարսախի վրա էր, իսկ պողոտայով մինչեւ Այրարատ, մինչեւ հայոց Ոստան, մի օրվա վարձի ճանապարհ էր:

Երեկոյանում էր, երբ արքայական զորքերը, անցնելով Արճեշը, կանգ առան հանգստի: Արեւը մայր էր մտնում, ծովը խաղաղ էր, անգամ մանր կոհակներ չկային: Միայն տեղ-տեղ ձուկ էր դուրս թռչում ջրից ու շրմալով ընկնում ջուրը, որից օղականման կոհակներ էին առաջանում, կամաց-կամաց գալիս էին դեպի ափ, կտրում խճերին չհասած:

Արեւի վերջին ճառագայթները մի պահ խայտացին ջրերի մեջ, փայլեցին, մեղմորեն մարեցին:

Երեկոն անցավ գիշերվա գիրկը: Գիշերային գով բարձրացավ ծովի վրա: Սկսեցին կոհակներ առաջանալ, քշվել դեպի ափ: Ձկների խաղը դադարեց: Արքան վճռել էր արագ երթով հասնել Չարիշատ, այնտեղից պողոտայով մտնել Այրարատ աշխարհ: Սպասում էին խուզարկուներին, ուզում էին ճշտել պարսից գնդի տեղը: Տեղեկություններ չկա նաեւ Ջոն իշխանից:

Նախարարները հավաքվել էին ծովափին, Նստել խճերին դրված թամբերի վրա, իրիկնահաց էին վայելում: Դատը քրթմնջում էր, խաղալով սրի հետ: Դուրս էր քաշում, թափով նետում պատյանի մեջ, որից սուրը զնգում էր: Հրաժարվեց, ոչինչ չկերավ: Վերջապես խոսեց զայրացած:

- Երախտամոռ մարդիկ ենք, Կորդովաց տիրոջը մենակ թողեցինք: Հարկ էր ամենքս էլ մնայինք, թող արքան գևար Այրարատ: Թու՛, ասես ապօրածին լինենք, ասես վարձակներից ենք սերված եւ ոչ մեր փառապանծ ծնողներից, սր ասպետական հոգի են դրել մեր մեջ: Մոռացել ենք սուրբ ընկերությունը: Մենակ թողեցինք մեր ընկերոջը:

- Ի՞նչ է, մնալով կհաթեի՞նք,- գայրացավ Մանակը,- բան գտար խոսելու: Աստված սիրես, հանգիստ թող սուրբ: Այդ զևագոց զգվանք է պատճառում, մարտում այնքան ենք լսել, դեռ գլխիս մեջ է մարտի աղմուկը:

Մանակը տարիքով մարդ էր, սակայն սիրում էր լինել երիտասարդների հետ, սրանք էլ նրան ընդունում էին, որպես հավասար ընկեր: Կատակում էին հետը, իշխանը բնավ չէր վիրավորվում եւ անպատասխան չէր թողնում սրանց կատակները:

- Սպասե՛ք, սմբակածե՛ծ եմ լսում: Սուրհանդակ է գալիս,- ասաց Դատը, ոտքի ելավ: Նայեցին, արքայի թիկնապահները առաջացան դեպի հեծյալը, միասին մոտեցան արքային: Հեծյալը Տարոնեն էր, խոնարհվեց արքային, մեկնեց սպարապետի նամակը:

Ընթերցման ժամանակ, քանի գնում արքայի դեմքը պայծառանում էր: Վերջապես ավարտեց նամակը, դարձավ նախարարներին:

- Վաչե սպարապետը խնդրում է սպասել Չարիշատի մոտ, այնտեղ գումարվելու, պարսիկներին զարկելու համար:

Լուրն առնելով, վրանից դուրս եկավ կաթողիկոսը: Ձեռքերը երկինք կարկառեց:

- Բարձրյալը լսեց աղոթքը մեր, սպարապետին ուղարկեց մեզ սատարելու: Անսպառ է Աստծո ողորմածությունն այսօր, վաղը, հավիտյանս հավիտենից: Ամեն: Նա մեզ հետ է,գի հավատում ենք նրան, Որդուն ու Անմահ Հոգուն...

- Ե՞րբ տեղ կհասնի սպարապետը,- Տարոնեին դիմեց արքան:

- Թերեւս այս պահին մոտենում են Չարիշատին: Չորքերը շատ արագ են գալիս: Նրա հետ են Մարդպետաց տերը: Սպարապետը չհասցրեց այդ մասին գրել, նամակը գրելուց հետո ժամանեց Մարդպետաց տերը:

- Համհա՛րզ, շեփո՛ր,- արքան բարձրացավ տեղից,- վեհափառ, դու գալի՞ս եւ մեզ հետ,- հարցրեց արքան, թերեւս չէր ցանկանում, որ կաթողիկոսը իրենց հետ լիներ:

- Հովվապետը հարկ է լինի հոտի հետ, անգամ ամենադժնդակ պահերին,- նա մոռացել էր Դարանոյք ճողոպրելու պարագան,- մենք գալիս ենք զորքերի հետ: Չինվորներին հարկ չկար շտապեցնելու, ամենքն էլ զգաստացան, մոտենում էր հայոց սպարապետը:

- Հը՛, զորապե՛տ, գույնդ տեղն ընկավ,- ծիծաղեց Վանեն,- սպարապետը գալիս է, ամեն բան կկարգավորվի: Վրեժներս կառնենք Խաժակի, Դավթակի, Տիրայրի, մեր հարյուր-հարյուրավոր եղբայրների վրեժը...

- Ախր խայտառակ եղանք, եթե սպարապետը էստեղ լիներ, չէինք մտնի էդ անիծյալ ճորը: Արքան մարդ չի ճանաչում, իսկ սպարապետը բավական է մարդուն մի անգամ տեսնի, խոսի հետը: Ա՛յ, օրինակ, Հայկի հետ մի անգամ խոսել էր ու...

- Եթե Հայկը չլիներ, էստեղ ճորում էլ կմնայինք,- Ղեւնդն էր:

- Լա՛վ, լեզուներիդ մի՛ տվեք,- սրտնեղեց Հայկը,- հետեւեք արագացնեն...

Հայկը հասկացավ, սպարապետի ժամանումը հույսով էր լցրել մարդկանց սրտերը, սկսել էին խոսել վրեժի մասին: Այդ խոսքը հասավ նաեւ զինվորներին, սրանցից անցավ իշխաններին, ապա խոսեցին արքայի շրջապատում: Դա արեց հազարապետը, սա վերջին կռվից հետո փոխվել էր, հակվել ռամիկի կողմը:

Արքան հանկարծակի եկավ, կանգնեցրեց նժույզը:

- Այ՛ո, տեր Գևունյաց, հարկ է, որ այս պարագան ամենքն էլ հասկանան: Վրեժը սուրբ է: Ա՛յ, կմիանանք սպարապետին ու կառնենք վրեժը մեր զոհերի համար... Վրեժը սուրբ էր արիական մեր նախնյաց համար: Մեր նախնիք մինչեւ չհաղթեին թշնամուն, մինչեւ ծնկի չբերեին, մինչեւ չպատժեին, չէին խորհի ներելու մասին:

Քիչ անց երեւեաց Չարիշատը: Արքան ուրախացավ, քանզի ուսերից ընկնում էր պատասխանատվության ծանր բեռը: Հիշեց իշխաններից մեկի խոսքն այն մասին, որ Մեծ Հայքի սպարապետ Վաչեն երբեք չի պարտվել: Նա մեծ զորավար է, մարտից առաջ գիտեր մարտի ելքն ու հետեւանքները:

- Այո՛, սպարապետը զորավար է: Մենք դեռ չենք լսել ճակատամարտի մասին, որտեղ սպարապետը պարտված լինի,- կանգ առան Չարիշատի պարիսպների տակ, արքան հրամայեց կանչել սուրհանդակին:

Տարոնեն չհասցրեց խոսել, միայն ձեռքով ցույց տվեց հեռվում երեւացող փոշու ամպը:

- Մամիկոնեից տերն է ժամանում:

- Սպարապետը երբեք չի ուշանում, եթե ասել է, կգա, կհասնի,- ասաց հազարապետը:

Արքան չցանկացավ քաղաք մտնել: Նա ուզում էր ժամ առաջ խոսել սպարապետի հետ: Ժամանած

գորքերը կանգնեցին արքայից կես ասպարեզի վրա:

- Կեցցե՛ արքան,- որոտացին գնդերը:

Սպարապետը իջավ նժույգից, խոնարիվեց արքային: Վեհափառը գրկեց սպարապետին:

- Արքա, արդ, հանգիստ եմ հավատքի ու ազգիս համար:

- Վաղ ես ուրախանում, վեհափառ, պատերազմը նոր է սկսվում: Վռամշապուհը իր գորագնդով գնում է Առբերանով, գրավել է Թոռնավանը, սրի քաշել բնակիչներին: Չորագունդը ծանրագեն է, փղերի դասակ ունի: Նրա հետ են Ռշտունյաց ու Բզունյաց գորքերը:

- Տ՛եր Մամիկոնեից, ինչպե՞ս եղավ, որ Վռամշապուհը թողեց Չորաց Պահակը, Հասու չեմ, պարզիր այս պարագան,- հարցրեց հազարապետը:

- Կորդովաց տերն այնպես է փակել լեռնանցքը, որ թռչունն անգամ չէր կարող թռչել բերդի վրայով: Նա գուգազ է հանել Բզունիներից, ետ վանել պարսիկների բոլոր գրոհները:

- Կեցցե՛ս, Ջոն իշխան,- ոգեւորվեց արքան,- իշխանը արժանի է մեծ պարգևի...

- Նրա պատվին գոհացողական պատարագ կմատուցվի եկեղեցում,- ճարահատյալ ասաց կոթողիկոսը, թեեւ չէ մոացել իշխանի անհարգալից վերաբերմունքը հոգեւոր դասի նկատմամբ:

Կաթողիկոսը սկսել էր ուշքի գալ պարտությունից հետո: Նրան էլ կաշկանդում էր սպարապետի ներկայությունը: Նույն վիճակում էր նաեւ արքան: Նա տհաճ խոսակցություն էր սպասում սպարապետի հետ, իսկ երբ խորհում էր Հոր հետ կայանալիք խոսակցության մասին, սարսափում էր, քանզի ոչ ոք չէր ասի այն, ինչ իրավմամբ կասեր Հայրը: Վերջում էլ կփնթփնթար՝ հեթանոս,- քրիստոնյա, քրիստոնյա-հեթանոս հայեր...

Սպարապետը տեսավ, որ Տարոնեն նշաններ է անում, մոտ կանչեց:

- Տե՛ր իմ, վերադարձան Թոռնան ու Վանեն: Պարսից գունդը կանգ է առել Առեստի մոտ, արքայական ձկնորսարանից քիչ հեռու, բլրակների վրա: Կարծյոք, միտք չունեն առաջ շարժվելու: Մեզ նկատել են, մարտի են պատրաստվում...

- Հասկացա, ի՞նչ ես խորհում Մեծ Հայքի սպարապետի փոխարեն,- հարցրեց սպարապետը, զարմացնելով հազարապետին, սա մոտ էր կանգնած, լսում էր նրանց:

- Ճակատամարտը անխուսափելի է: Փղերն էլ գլխացավանք կդառնան: Վաղուց է պարսիկները հայոց հող չեն մտել փղերով: Հարկ է լավ խորհել:

- Լա՛վ, այդ մասին հետո,- դարձավ արքային,- տեղ արքա, պարսիկները կանգ են առել Առեստում, ձկնորսարանի մոտ:

Ներկաները զգաստացան, հասկացան՝ կանգնած են մեծ ճակատամարտի շեմին: Ինչպես երեւում էր, Վռամշապուհը վճռել էր ճակատամարտ տալ:

- Շատվոր են, փղերն էլ գումարած,- խոսեց հազարապետը,- մեզանից հինգ-վեց անգամ շատ զինվոր ունեն:

- Դու ժակատամարտից զատ այլ ելք տեսնու՞մ ես,- հարցրեց սպարապետը:

Արքան ու կաթողիկոսը լարվեցին: Ինչ պատասխաներ հազարապետը, ապա սպարապետը կայսեր իր խոսքը, դա էր լինելու վաղվա գալիքը: Երկուստեք լարվեցին, չհամարձակվեցին միջամտել: Արաքն մի անգամ ցույց էր տվել իր «Չորավարական» շնորհքը, ճաշակել էր պտուղները:

- Ո՛չ,- հոգոց հանեց հազարապետը,- այլ ելք չկա, պողոտան բաց է...

- Այո՛, այո՛,- նրան միացան Ներսեհն ու Մանակը, Դատը գլխով արեց:

Ամենքն էլ ուզում էին ճակատել, կարոտ էին վերժի:

- Եթե շարժվենք անհապաղ, տեղ կհասնենք գիշերով, ճակատել չենք կարող, սակայն հնար կտանք ծուղակներ սարքելու,- խոսեց Դատ իշխանը,- նրանք վարպետ են նմանօրինակ բաների:

Արքան ցնցվեց, ասես իշխանը հիշեցնում էր վերջին կռվի պարտության պատճառը, իսկ իշխանը բնավ միտք չունեց վիրավորելու նրան: Դատի խոսքերը ըստ արժանվույն գնահատեց սպարապետը:

- Իշխանիկն իրավացի է: Ուզում է ասել, որ տեղանքը ընտրել են պարսիկները, սակայն մենք էլ քնած չենք: Արշավիրն ու Անդրվկը հետախուզում են թշնամուն, անհրաժեշտության դեպքում, կանցնեն պարսից թիկունքը:

- Վճռի՛ր, սպարապե՛տ, զորական հարցերում ամենքս էլ ենթակա ենք քեզ...

- Մի ճակատամարտ տվեցինք քո խելքով, բավական է,- բարձրաձայն ասաց Մանակը: Մի քանիսը, որ մոտ էին կանգնած իշխանին, զգուշացրեցին, սակայն Մանակը ինչպես երեւում էր, հաստակող էր, քմծիծաղ տվեց,- փա՛ռք աստծո, հասկացան, որ մարտ վարելու համար խելք է հարկավոր ունենալ...

Արքան կծեց շրթունքը, զսպեց իրեն, չցանկացավ գժտվել իշխանի հետ, որ իրեն փառքով էր պսակել ձորի մարտում: Սպարապետն էլ չլսելու տվեց իշխանի խոսքերը: Կաթողիկոսը ցանկացավ միջամտել, սակայն նրան կանխեց մինչ այդ լուռ նստած Հայրը:

- Հարկ է շարժվենք, հնար տանք զինվորներին հանգստանալու մարտից առաջ,- նա էլ ասես չէր լսել իշխանի խոսքերը:

- Հրամայի՛ր, սպարապե՛տ, մենք քո զինվորներն ենք,- ասաց արքան: